ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2016

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

«Եվ նա, ով ընդունում է բոլոր բաները գոհությամբ. *պիտի փառավորվի. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ հարյուրապատիկ, այո, ավելի շատ» ԽՎԼՈՒ 78.19, շեշտադրումն ավելացված է:*

«Ես զգացել եմ, օրհնությունների համար երախտագիտության աճի այդ վերապրումը և Աստծո սիրո մեծացումը ողջ Եկեղեցում: Թվում է այն արագանում է Եկեղեցու անդամների մեջ այնպիսի ժամանակներում և վայրերում, որտեղ նրանց հավատքի փորձություններ կան, որտեղ նրանք ստիպված են աղերսել Աստծուն օգնության համար, որպեսզի շարունակեն դիմանալ»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, «Երախտագիտություն Հանգստյան օրը», *Լիահոնա,* նոյ. 2016, 101:

Որտե՞ղ են ինները, Ուոլթեր Ռեյն

Տես Ղուկաս 17.11–19, որտեղ Հիսուսը վերհիշում է, որ բորոտներին բուժելուց հետո, միայն մեկը վերադարձավ շնորհակալություն հայտնելու:

© WALTER RANE, ՉԲԱԶՄԱՑՆԵԼ

Բովանդակություն Նոյեմբեր 2016

Հատոր 17 • Համար 4

Կանանց ընդհանուր նիստ

6 **Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ**
Ջին Բ. Բինգհեմ

9 **Բժշկող Տերը**
Քերոլ Մ. Սթեֆենս

12 **Վեր կացեք զորությամբ, Սիոնի քույրեր**
Բոնիի Լ. Օսկարսոն

15 **Չորրորդ հարկ, վերջին դուռ**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Շաբաթ առավոտյան նիստ

19 **Օ՜հ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

22 **«Եկ հետևիր ինձ»՝ կիրառելով քրիստոնեական սերն ու ծառայությունը**
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

25 **Հոգու անկեղծ փափագը**
Քերոլ Ֆ. Մակքոնկի

27 **«Մի ընտրյալ տեսանող կբարձրացնեմ ես»**
Երեց Քրեյգ Ա. Քրիչենսեն

30 **Տեր Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցնում է աղոթել**
Երեց Խուան Ա. Ուսեդա

32 **Արդյո՞ք ես բավականաչափ լավն եմ: Արդյոք ես կհասնե՞մ սելեստիալ արքայություն**
Երեց Ջ. Դեվն Քորնիշ

35 **Աստծո վկա**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

Շաբաթ ցերեկային նիստ

39 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

40 **Անվեհեր Հիսուսի վկայությունում**
Երեց Քվենթին Լ. Քուք

44 **Նայել Գրքին, նայել Տիրոջը**
Երեց Գարի Ե. Սթիվենսոն

48 **«Իմ սիրո մեջ հաստատուն մնացեք»**
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

52 **Մեր հոգևոր զարգացման և ուսման համար**
Երեց Վ. Մարկ Բասեթ

55 **Եղեք պատվասեր Քրիստոսի համար**
Երեց Կազուհիկո Յամաշիտա

57 **Կիսվել վերականգնված ավետարանով**
Երեց Դալլին Հ. Օուքս

Քահանայության գերագույն ժողով

61 **Եկեղեցու պատվիրակները**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

68 **Գրքում կա զորություն**
Երեց Լեզռան Ռ. Քըրթիս Կրտսեր

71 **Սովորենք Ալմայից և Ամուղեկից**
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

75 **Որ նա նույնպես կարողանա ամրանալ**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

78 **Սկզբունքներ և խոստումներ**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Կիրակի առավոտյան նիստ

80 **Երջանկություն տանող կատարյալ ուղին**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

81 **Ուրախություն և հոգևոր գոյատևում**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

85 **Հաղորդությունը կարող է օգնել մեզ սուրբ դառնալ**
Երեց Պիտեր Մըրս

88 **Փրկագնման մեծ ծրագիրը**
Լինդա Շ. Ռիվզ

90 **Ո՞ւմ մոտ գնանք**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

93 **Երկրպագության օրհնությունները**
Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս

96 **Արդար Դատավորը**
Երեց Լին Գ. Ռոբինս

99 **Հանգստության օրը երախտագիտության օր է**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Կիրակի ցերեկային նիստ

102 **«Եթե ինձ գիտենայիք»**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

106 **Քրիստոսի վարդապետությունը**
Բրայըն Ք. Էշթոն

110 **Ծառայեք**
Երեց Քարլ Բ. Քուք

113 **Զգույշ կաց, միգուցե մոռանաս**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ

116 **Եվ կջնջի Աստված բոլոր արտասուքը**
Երեց Էվան Ա. Շմուց

119 **Չկա ավելի մեծ երջանկություն, քան իմանալ, որ նրանք գիտեն**
Երեց Կ. Բրեթ Նաթրես

121 **Ապաշխարություն. ուրախալի ընտրություն**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

64 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները**

125 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

126 **Եկեղեցու նորությունները**

186-րդ կիսամյա գերագույն համաժողով

Շաբաթ երեկո, սեպտեմբերի 24, 2016, կանանց գերագույն ժողով
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Քույր Լինդա Ք. Բըրթն Բացման աղոթք՝ Դենիս Լինդբերգ Փակման աղոթք՝ Բոննի Հ. Քորդոն Երաժշտություն՝ Երիտասարդ Կանանց երգչախումբ Յուտայի Օգդեն, Հանթսվիլ և Մորգան ցցերից, խմբավար՝Շերլին Վորթեն, երգեհոնահար՝ Բոննի Գուդլիֆ. "Arise, O Glorious Zion," *Hymns,* no. 40, arr. Warby, unpublished, "If I Listen with My Heart," DeFord, arr. Warby, unpublished, «Աստծո Սրբեր», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 6, arr. Kasen, pub. by Jackman, «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 38:

Շաբաթ առավոտ, հոկտեմբերի 1, 2016, գերագույն նիստ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ Բացման աղոթք՝ Ջոյ Դ. Ջոնս Փակման աղոթք՝ Երեց Մարկուս Բ. Նեշ Երաժշտությունը՝Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահար՝Քլեյ Քրիսչենսեն, «Հաճելի է» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 13, "With Songs of Praise," *Hymns,* no. 71, «Փառք քեզ Տե՛ր, Մարգարեի համար» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 36, «Փրկիչն Իսրայելի», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 5, "Take Time to Be Holy," Longstaff, arr. Longhurst, pub. by Jackman; "If the Way Be Full of Trial, Weary Not," Sweney, arr. Wilberg, unpublished.

Շաբաթ հետկեսօր, հոկտեմբերի 3, 2016, գերագույն նիստ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ Բացման աղոթք՝Երեց Դենիել Լ. Ջոնսոն Փակման աղոթք՝Երեց Ալլեն Դ. Հեյնի Երաժշտությունը՝Պրովոյի Միսիոներական Ուսուցման Կենտրոնի միացյալ երգչախումբ, ղեկավարներ՝Ռայան Էգետ և Էլմո Քեկ, երգեհոնահար՝ Լինդա Մարգետս և Բոնի Գուդլիֆ. «Ջոզեֆ Սմիթի առաջին աղոթքը» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 14, arr. Kasen, pub. by Jackman; "Baptism," *Children's Songbook,* 100, arr. Gates, pub. by Jackman; "Called to Serve," *Hymns,* no. 249, «Կգնամ, ուր կուզես դու, Տեր» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 46, arr. Wilberg, unpublished; "Hope of Israel," *Hymns,* no. 259, arr. Schank, unpublished.

Շաբաթ երեկո, հոկտեմբերի 1, 2016, քահանայության նիստ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ Բացման աղոթք՝Երեց Փոլ Բ. Փայփեր Փակման աղոթք՝Երեց Բրուս Դ. Փորթեր Երաժշտությունը՝Մելքիսեդեկյան քահանայության երգչախումբ Յուտայի Վեստ Վելի Սիթիի և Մանգայի ցցերից, խմբավար Քեննի Վայզեր, երգեհոնահար՝ Ռիչարդ Էլիոտ, "Ye Elders of Israel" (Men), *Hymns,* no. 319, arr. Spiel, unpublished; «Մեր տան մեջ» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 44, arr. Manookin, pub. by Jackman; «Եկեք ուրախանանք» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 32 "You Can Make the Pathway Bright," *Hymns,* no. 228, arr. Zabriskie, pub. by Holy Sheet Music:

Կիրակի առավոտ, հոկտեմբերի 2, 2016, գերագույն նիստ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ Բացման աղոթք՝Երեց Քրիստոֆել Գոլդեն Փակման աղոթք՝ Դեվին Գ. Դյուրան Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոտ, "My Redeemer Lives," *Hymns,* no. 135; "In Hymns of Praise," *Hymns,* no. 75, arr. Wilberg; "On This Day of Joy and Gladness," *Hymns,* no. 64, arr. Wilberg, unpublished, «Աստծո զավակն եմ» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 58 "My Heavenly Father Loves Me," *Children's Songbook,* 228, arr. Hofheins and Christiansen, unpublished; "Come, Ye Thankful People," *Hymns,* no. 94, arr. Wilberg, pub. by Oxford.

Կիրակի հետկեսօր, հոկտեմբերի 2, 2016, գերագույն նիստ
Նախագահող՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ Բացման աղոթք՝ Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլա Փակման աղոթք՝ Երեց Էրիկ Վ. Կոպիչկե Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Բոնի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս, «Ճշմարտությունը» *Հիմներ և մանկական երգեր,* էջ 31, arr. Longhurst, pub. by Jackman; "Lead, Kindly Light," *Hymns,* no. 97, arr. Wilberg, pub. by Jackman; "High on the Mountain Top," *Hymns,* no. 5; "I'll Follow Him in Faith," Perry, arr. Murphy, unpublished; «Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 10, arr. Elliott.

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library mobile app-ում: Գերագույն համաժողովի մասին տեղեկությունները հաշմանդամություն ունեցող անդամների համար հասանելի ձևաչափերով առկա են disability.lds.org-ում:

Տնային և այցելող ուսուցիչների ուղերձներ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

Կազմի վրա
Առջևում. Լուսանկարը՝ Էշլի Լարսենի:
Ետին կազմ. Լուսանկարը՝ Էյլ Բորգեսի

Համաժողովի լուսանկարները
Գերագույն համաժողովի տեսարանները լուսանկարները՝ Քոդի Բելլի, Էյլ Բորգեսի, Ռենդի Քոլլիերի, Վեստոն Քոլթոնի, Նեյթ Էդվարդսի, Էշլի Լարսենի, Լեսլի Նիլսոնի, Մաթ Ռիերի և Քրիստինա Սմիթի կողմից, բնակելի շենքի լուսանկարը Դանիել Գ. Դորնելեսի, Հարիետ Ուխդորֆի ընտանիքի և միսիոներների լուսանկարը տրամադրել է Ուխդորֆների ընտանիքը:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 2016 ՀԱՏՈՐ 17 ՀԱՄԱՐ 4
ԼԻԱՀՈՆԱ 13291 201
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Որբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ

Խմբագիր. Ջոզեֆ Վ. Սիտատի
Խմբագրի օգնականներ. Ռանդալ Ք. Բաններ, Քերոլ Ֆ. Մակքոնկի
Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Ջին Բ. Բինգհեմ, Լեգռան Ռ. Քըրթիս Կրտս., Քրիստոֆել Գոլդեն, Դուգլաս Դ. Հոլմս, Էրիկ Վ. Կոպիչկե, Լարի Ռ. Լորենս, Քերոլ Մ. Սթեֆենս

Գլխավոր տնօրեն. Փիտեր Ֆ. Էվանս
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ադամ Ս. Օլսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրապարակման օգնական. Մեգան Սեյց
Գրողներ և խմբագրողներ. Բեթանի Բարթոլոմյու, Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Էնն Սելու, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Թեթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Սնդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քուլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Մարք Վ. Ռոբիսոն, Ռաքել Սմիթ, Բրեդ Թիըր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քուլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Գլեն Աղեր, Քոննի Բոթորտի Բրիջ, Ջուլի Բըրոեթ, Բրայըն Վ. Գիջի, Գիննի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Ռաֆերթի, Դերեկ Ռիչարդսոն

Նախատպագրություն. Ջոշուա Դեննիս, Սմմոն Հարիս
Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Տրոյ Կ. Վելինգա

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
October 2016 Vol. 17 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Այրինգ, Հենրի Բ., 39, 75, 99
Անդերսեն, Նիլ Լ., 35
Բալլարդ, Մ. Ռասսել, 90
Բասեթ, Մարկ Վ., 52
Բեդնար, Դեյվիդ Ա., 102
Բինգհեմ, Ջին Բ., 6
Դեյվիս, Դին Մ., 93
Էշթոն, Բրայըն Կ., 106
Հեյլս, Ռոբերտ Դ., 22
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 61
Մակքոնկի, Քերոլ Ֆ., 25
Մըրս, Պիտեր Ֆ., 85
Մոնսոն, Թոմաս Ս., 78, 80
Յամաշիտա, Կազուհիկո, 55
Նաթրես, Կ. Բրեթ, 119
Նելսոն, Ռասսել Մ., 81
Ծմուց, Էվան Ա., 116
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 15, 19, 71
Ուսեդա, Խուան Ա., 30
Ռասբանդ, Ռոնալդ Ա., 133
Ռենլանդ, Դեյլ Գ., 121
Ռիվա, Լինդա Ս., 88
Ռոբբինս, Լին Գ., 96
Սթեֆենս, Քերոլ Մ., 9
Սթիվենսոն, Գարի Ի., 44
Քըրթիս, Լեգռան Ռ., Կրտսեր, 68
Քորնիշ, Ջ. Դեվն, 32
Քուք, Քարլ Բ., 110
Քուք, Քվենթին Լ., 40
Քրիսչենսեն, Քրեյգ Ս., 27
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 48
Օուքս, Դալլին Հ., 57
Օսկարսոն, Բոննի Լ., 12

Թեմաների ցուցիչ

Ակտիվացում, 71, 75
Աղոթք, 25, 30, 35, 57
Աշակերտություն, 90, 93, 102, 116
Ապաշխարություն, 9, 32, 40, 48, 71, 88, 106, 121
Առաջնորդություն, 71, 75
Աստվածային էություն, 19, 48, 119
Բարություն, 6
Բժշկում, 9
Գթություն, 6, 93
Դատել, 6, 96
Դարձ, 35, 57, 68
Եկեղեցու կոչումներ, 40, 99, 110
Երաժշտություն, 85
Երախտագիտություն, 19, 75, 99
Երկնային Հայր, 48, 102
Երկրպագություն, 93
Ջոհաբերություն, 96
Ընտանիք, 119
Ընտրություն, 15
Իմաստության խոսք, 78
Ինքնագնահատում, 32
Իսրայելի տուն, 35
Ծառայություն, 22, 55, 61, 71, 75, 99, 102, 110
Ծնողներ, 22, 96, 119
Կանայք, 12
Կասկած, 90, 113
Կարգապահություն, 61, 96
Հաղորդության ժողով, 85
Հաղորդություն, 85, 99, 106
Հայտնություն, 52
Հանգստության օր, 93, 99
Հաշմանդամություն, 55
Հավատ, 9, 12, 15, 25, 27, 30, 52, 90, 93, 102, 106, 110, 113, 116
Հավատարմություն, 90
Հարություն, 19
Հնազանդություն, 48, 57, 80
Հույս, 93, 116
Զախորդություն, 6, 9, 12, 22, 40, 55, 68, 81, 99, 113, 116
Մայրություն, 119
Մարգարեներ, 27
Մարգարեություն, 27
Միություն, 110
Միսիոներական աշխատանք, 15, 35, 55, 57, 80
Մկրտություն, 106
Մորմոնի Գիրք, 27, 44, 52, 68, 71, 119
Նախապատրաստություն, 85
Ուխտեր, 12, 99
Ուսուցանել, 12, 22
Ուրախություն, 55, 81, 88, 116, 121
Ուրացություն, 68
Ջոզեֆ Սմիթ, 12, 27, 35, 44, 93, 96, 99, 113
Սեր, 22, 48, 57, 61, 99, 113
Սուրբ Հոգի, 9, 25, 27, 30, 44, 68, 85, 106
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 52, 68, 119
Վերականգնում, 12, 27, 35, 44
Վերջին Օրերի Սրբերի, 6, 9, 12, 22, 25, 30, 32, 35, 40, 44, 48, 55, 80, 81, 85, 88, 90, 93, 96, 102, 106, 110, 113, 116, 139, 121
Վկայություն, 27, 40, 44, 68, 133
Վստահություն, 15, 52
Տաճարներ, 12
Տնային ուսուցում, 61
Տոկունություն, 15, 106, 116
Փրկության ծրագիր, 12, 19, 80, 81, 88, 90
Քահանայություն, 61, 75
Քավություն, 9, 19, 22, 32, 40, 48, 88, 96, 106, 116, 119, 121
Օրինություններ, 78, 110

184-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

Գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվեց երկու անկեղծ ուղերձով: Կիրակի առավոտյան նա վկայեց երջանկության մեծ ծրագրի մասին, որ Աստված ունի բոլոր մարդկանց համար: Նա ուսուցանեց, որ Հիսուս Քրիստոսը փրկության ծրագրի կարևորագույն մասն է, նաև ուսուցանեց Աստծո ծրագրած երջանկությունը ձեռք բերելու գործում ունեցած մեր դերի մասին: (Տես էջ 80:) Քահանայության գերագույն նիստի ժամանակ Նախագահ Մոնսոնը շեշտեց այն օրհնությունները, որոնք գալիս են Տիրոջ պատվիրաններին հնազանդվելուց և Իմաստության խոսքին հավատարիմ մնալուց (տես էջ 78):

Հարյուր հազարավոր կանայք, երիտասարդ կանայք և նույնիսկ ութ տարեկան աղջիկներ հավաքվել էին Համաժողովների կենտրոնում և աշխարհով մեկ սփռված մեր եկեղեցիներում, որպեսզի կանանց գերագույն ժողովով բացեն գերագույն համաժողովի վեց նիստերը:

Շաբաթ ցերեկային նիստի ընթացքում չորս Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականների շնորհվեց պատվավոր իշխանավորի կոչում, մեկ Տարածքային Յոթանասունական ազատվեց պաշտոնից, և կանչվեցին ևս երկու Տարածքային Յոթանասունականներ (տես էջ 39): Կիրակի օրը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյլ Գ. Ռենլանդը մեծարեց Երեց Պեր Գ. Մալմին՝ Յոթանասունի անդամին, ով կյանքից հեռացավ 2016 թվականի հուլիսի 26-ին (տես էջ 121):

Եկեղեցու գերագույն համաժողովները տեղի են ունենում վեց ամիսը մեկ անգամ, և սկսվելով Սոլթ Լեյք Սիթիի (Յուտա) 21000 տեղանոց համաժողովների կենտրոնից հասնում են միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում: Համաժողովը թարգմանվեց և առցանց հասանելի դարձավ 80 լեզուներով և Եկեղեցու ամսագրերում հրատարակվեց 34 լեզուներով: ■

Այս թողարկման օգտագործման վերաբերյալ առաջարկների համար տես պատմության ցուցիչը 125 էջի վրա:

THE CHURCH OF JESUS CHRIST OF LATTER-DAY SAINTS CON
15
16
17
18
19

Ջին Բ. Բինգհեմ
Երեխաների խմբի գերագույն նախագահության
առաջին խորհրդական

Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ

Մենք կարող ենք ավետարանի լույսը բերել մեր տուն, մեր դպրոց կամ աշխատավայր վայր, եթե ուրիշների մեջ լավը փնտրենք և նրանց մասին դրական մտքերով կիսվենք։

Ի պատասխան ապրիլի գերագույն համաժողովի[1] ժամանակ Քույր Լինդա Ք. Բըրթընի հղած հրավերի, ձեզանից շատերը ներգրավվեցին գթության բարի ու մեծահոգի ծառայության մեջ՝ կենտրոնանալով ձեր տեղական տարածքներում փախստականների կարիքները հոգալու վրա։ Մարդկանց անհատապես օգնելու ձեր ջանքերից մինչև համայնքներում ավելի մեծ ծրագրերին մասնակցելը հանդիսանում է ուրիշների նկատմամբ ձեր ունեցած սիրո արդյունքը։ Երբ դուք կիսվեցիք ձեր ժամանակով, տաղանդներով ու միջոցներով, ձեր և փախստականների սրտերը թեթևացան։ Տվողի և ստացողի միջև հույսի ու հավատքի, նույնիսկ ավելի մեծ սիրո ձևավորումը հանդիսանում է իսկական գթության անխուսափելի արդյունքը։

Մարգարե Մորոնին մեզ ասում է, որ գթությունն անհրաժեշտ հատկանիշ է նրանց համար, ովքեր ապրելու են Երկնային Հոր հետ սելեստիալ արքայությունում։ Նա գրում է. «Եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում»։[2]

Իհարկե, Հիսուս Քրիստոսը հանդիսանում է գթության կատարյալ մարմնավորում։ Նախաերկրային կյանքում մեր Փրկիչը լինելու Նրա առաջարկը, մահկանացու կյանքի ընթացքում Նրա գործողությունները, Քավության Նրա աստվածային պարգևը և մեզ մեր Երկնային Հոր մոտ վերադարձնելու Նրա շարունակական ջանքերը հանդիսանում են գթության մեծագույն դրսևորումներ։ Նրա գործողության կիզակետում կա մի բան՝ սերը Իր Հոր հանդեպ, որը դրսևորվում է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ տածած Իր սիրով։ Երբ Նրան հարցրեցին, թե որն է ամենամեծ պատվիրանը, Հիսուսը պատասխանեց.

«Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը։

Սա է առաջին և մեծ պատուիրանը։

Երկրորդն էլ սորան նման. սիրիր քո ընկերին քո անձի պէս»։[3]

Մեր մերձավորի հանդեպ սեր զարգացնելու և ցուցաբերելու ամենահիմաստալից եղանակներից մեկը մեր մտքում և խոսքում մեծահոգի լինելն է։ Մի քանի տարի առաջ սիրելի ընկերներիցս մեկը նշեց. «Դատապարտելուց խուսափելը կարող է լինել գթության ամենահրաշալի ձևը»։[4] Սա ճիշտ է նաև այսօր։

Վերջերս երեք տարեկան Ալիսան, իր քույրերի ու եղբայրների հետ ֆիլմ դիտելիս, զարմացած հայացքով ասաց. «Մայրի՛կ, այդ հավը տարօրինակ է թվում»։

Նրա մայրը նայեց էկրանին ու ժպիտով պատասխանեց. «Սիրելիս, դա սիրամարգ է»։

Այդ անգիտակ երեք տարեկան փոքրիկի նման, մենք երբեմն նայում ենք ուրիշներին՝ չունենալով լիարժեք կամ ճշգրիտ ըմբռնում նրանց մասին։ Մենք կարող ենք կենտրոնանալ մեր շրջապատում գտնվող մարդկանց տարբերությունների ու նրանց թերությունների վրա, մինչդեռ մեր Երկնային Հայրն Իր հավերժական պատկերով ստեղծված զավակներին տեսնում է հրաշալի ու փառահեղ ներուժով օժտված։

Ինչ-որ մեկը հիշում է, որ Նախագահ Ջեյմս Է. Ֆաուստն ասել է. «Որքան մեծանում եմ, այնքան ավելի քիչ եմ դատում»։[5] Դա ինձ հիշեցնում է Պողոս Առաքյալի ուսմունքների մասին.

«Երբոր երեխայ էի՝ երեխայի պէս էի խօսում, երեխայի պէս էի մտածում, երեխայի պէս էի համարում. բայց երբոր [մեծացա], այն երեխայութեան բաները խափանեցի։

Որովհետև հիմա հայելու մէջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ դէմառդէմ. հիմա փոքր ի շատէ եմ տեղյակ, բայց այն ժամանակն այնպէս կգիտենամ՝ ինչպէս գիտուեցած եմ»։[6]

Երբ մենք ավելի հստակ տեսնենք մեր թերությունները, ավելի քիչ հակված կլինենք ուրիշներին «հայելու մէջ օրինակով» տեսնել։ Մենք կկամենանք օգտագործել ավետարանի լույսը, որպեսզի ուրիշներին տեսնենք այնպես, ինչպես Փրկիչն է տեսնում՝ կարեկցանքով, հույսով ու գթությամբ։ Կգա օրը, երբ մենք կատարելապես կըմբռնենք այն, թե նրանք ինչ են զգացել ու մտածել, և երախտապարտ կլինենք, երբ ողորմածություն ցուցաբերեն մեր նկատմամբ, հենց այնպես,

ինչպես մենք ենք այս կյանքի ընթացքում գթառատ մտքեր ու խոսքեր հղել ուրիշներին:

Մի քանի տարի առաջ մի խումբ երիտասարդ կանանց հետ ես նավարկության գնացի: Մուգ կապույտ լճերը, շրջապատված ծառաշատ բլուրներով ու քարքարոտ լեռներով, աննկարագրելիորեն գեղեցիկ էին: Ջուրն իր մեջ արտացոլում էր արևի շողերը, երբ մենք թիավարում էինք, իսկ արևը ջերմությամբ փայլում էր, մինչ մենք հանգիստ առաջ էինք ընթանում լճի երկայնքով:

Այնուամենայնիվ, շուտով ամպերը ծածկեցին երկինքը, և ուժեղ քամի բարձրացավ: Առաջ ընթանալու համար մենք պետք է թիակներն ավելի խորը ընկղմեինք ջրի մեջ և առաջանայինք առանց կանգ առնելու: Ֆիզիկապես ծանր ջանքեր գործադրելուց մի քանի հոգնեցուցիչ ժամ անց մենք վերջապես հասանք մեծ լճի մի հատվածի և, ի զարմանս և ուրախություն մեզ, պարզեցինք, որ քամին փչում էր այն ուղղությամբ, ուր մենք ուզում էինք գնալ:

Մենք շատ արագ օգտվեցինք այս հնարավորությունից: Մենք մի փոքր անջրանցիկ բրեզենտ հանեցինք ու դրա երկու ծայրերը կապեցինք թիակների կոթերից, իսկ մյուս ծայրերը՝ իմ ամուսնու ոտքերից, որոնք նա տարածեց նավի եզրերով: Քամին առաջնորդում էր ինքնաշեն առագաստը, և մենք արագ առաջ գնացինք:

Երբ մյուս նավերում գտնվող երիտասարդ կանայք տեսան, թե մենք ինչպես էինք հեշտությամբ առաջ ընթանում, շուտով իրենք ևս հնարեցին իրենց առագաստները: Մեր սրտերը թեթևացան, լցվելով ուրախությամբ, հանգստությամբ և երախտագիտությամբ, որ հաղթահարեցինք օրվա դժվարությունը:

Ընկերոջ հաճոյախոսությունը, ծնողի ուրախ ողջույնը, քրոջ կամ եղբոր հավանություն տվող շարժումը, աշխատակցի կամ դասընկերոջ աջակցող ժպիտը կարող են լինել այդ հրաշալի քամին, որոնք այդ քամու նման «առաջ են մղում մեր առագաստները», երբ մենք պայքարում ենք մեր կյանքի դժվարությունների դեմ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Մենք չենք կարող հրամայել քամուն, բայց կարող ենք հարմարեցնել առագաստները: Առավելագույն երջանկության, խաղաղության ու բավարարվածության համար թող որ մենք *ընտրենք* դրական վերաբերմունքը»:[7]

Բառերը մարդկանց և՛ բարձրացնելու, և՛ նվաստացնելու զարմանալի զորություն ունեն: Հավանաբար մեզանից բոլորը կարող են հիշել վատ բառեր, որոնք մեզ հուսահատության են մատնել, և սիրով ասված այլ բառեր, որոնց շնորհիվ մեր հոգին սավառնել է երկնքում: Ընտրել միայն դրական բաները, որ ասում ենք ուրիշներին, բարձրացնում ու ամրացնում է մեր շրջապատում գտնվողներին և օգնում է նրանց քայլել Քրիստոսի հետքերով:

Երբ հաճախում էի երեխաների խումբ, ջանասիրաբար ասեղնագործում էի մի հասարակ խոսք, որն ասում էր. «Ավետարանի լույսը իմ տուն կբերեմ»: Մի օր կեսօրին մենք՝ երեխաների խմբի աղջիկներս, ասեղնագործում էինք կտորի վրա, երբ մեր ուսուցիչը մեզ մի պատմություն պատմեց մի աղջկա մասին, ով ապրում էր բլուրի մյուս կողմում՝ հովիտում: Ամեն օր կեսօրից հետո հովիտի հակառակ կողմում՝ բլուրի վրա, նա տեսնում էր մի տուն, որն ուներ փայլող, ոսկե պատուհաններ: Նրա տունը փոքր էր ու մի քիչ հին, իսկ աղջիկը երազում էր ապրել այդ գեղեցիկ տան մեջ, որն ուներ ոսկե պատուհաններ:

Մի օր այդ աղջկան թույլ տվեցին հովիտում իր հեծանիվը քշել: Նա անհամբերությամբ քշեց այն, մինչև հասավ ոսկե պատուհաններով տանը, որով նա այդքան ժամանակ հիացել էր: Բայց երբ նա իջավ հեծանիվից, տեսավ, որ տունը լքված ու խարխլված վիճակում էր, բակում մոլախոտ էր աճել, իսկ պատուհանները սովորական էին ու կեղտոտ: Վշտահար սրտով, աղջիկն իր դեմքը դարձրեց դեպի տուն: Ի զարմանս իրեն՝ նա տեսավ փայլող, ոսկե պատուհաններով մի տուն, որը գտնվում էր բլուրի հակառակ կողմում՝ հովիտում, և շուտով հասկացավ, որ դա հենց իր տունն է:[8]

Երբեմն, այս երիտասարդ աղջկա նման, մենք նայում ենք, թե ուրիշներն ինչ ունեն կամ ինչպիսին են, և մեզ թվում է, թե մենք ավելի ցածր ենք նրանց համեմատ: Մենք կենտրոնանում ենք Pinterest-ում կամ Instagram-ում ցուցադրված մարդկանց կյանքի վրա կամ ընկնում ենք մեր դպրոցում, աշխատանքային վայրում տիրող մրցակցության մեջ: Այնուամենայնիվ, երբ մի պահ կանգ ենք առնում «[մեր] օրհնությունները հաշվելու [համար]»,[9] տեսնում ենք լիարժեք պատկերը և հասկանում ենք Աստծո բարությունն Իր *բոլոր* զավակների հանդեպ:

Անկախ նրանից մենք 8, թե 108 տարեկան ենք, մենք կարող ենք ավետարանի լույսը մեզ

շրջապատող միջավայր բերել, լինի այն Մանհեթենի բարձրահարկ շենքում գտնվող բնակարանում, Փոքր Ասիայի փայտե գերաններով կառուցված տանը, թե Մոնղոլիայի վրաններից մեկում: Մենք կարող ենք ընտրել տեսնել լավը ուրիշների մեջ, ինչպես նաև մեզ շրջապատող միջավայրում: Երիտասարդ և տարիքով մեծ կանայք ամենուրեք կարող են գթություն ցուցաբերել, երբ ընտրում են օգտագործել այնպիսի բառեր, որոնք վստահություն և հավատք են ներշնչում ուրիշների մեջ:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը պատմել է մի երիտասարդ տղայի մասին, ում դպրոցական տարիներին դասընկերները ծաղրում էին: Մի քանի տարի անց նա տեղափոխվեց, անցավ զինվորական ծառայության, ստացավ կրթություն և դարձավ Եկեղեցու ակտիվ անդամ: Նրա կյանքի այս ժամանակահատվածն ընդգծվեց հրաշալի ու հաջողություններով լի փորձառություններով:

Մի քանի տարի անց նա վերադարձավ իր հայրենի քաղաքը: Այնուամենայնիվ, մարդիկ չցանկացան ընդունել նրա աճն ու հաջողությունը: Նրանց համար նա դեռ մնացել էր նույն անձնավորությունը, և նրանք նույն կերպ էին վարվում նրա հետ: Վերջապես այս լավ մարդու բոլոր նվաճումները խամրեցին, և նա չկարողացավ օգտագործել իր զարգացրած հրաշալի տաղանդները, որպեսզի օրհներ նրանց, ովքեր կրկին ծաղրեցին ու մերժեցին իրեն:[10] Ինչպիսի՜ կորուստ և՛ իր, և՛ համայնքի համար:

Պետրոս Առաքյալն ուսուցանել է. «Ամենից առաջ սէրը սերտ ունեցէք իրար հետ, որ սէրը ծածկում է մեղքերի շատութիւնը»:[11] Սերը *սերտ* ունենալ նշանակում է «ի սրտե սիրել», որը հնարավոր է ցուցաբերել ուրիշի սխալներն ու թերությունները մոռանալու, այլ ոչ թե զայրույթով լցվելու կամ ուրիշներին ու մեզ անցյալի անկատարությունների մասին հիշեցնելու միջոցով:

Երբ մենք փորձում ենք ավելի շատ նմանվել մեր Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին, ապա մեզ համար պարտականություն ու պատիվ է ի սրտե ընդունել *յուրաքանչյուր մարդու* մեջ տեղի ունեցող կատարելագործումները: Որքան ուրախալի է տեսնել ինչ-որ մեկի երջանկությունը, ով հասկացել է Հիսուս Քրիստոսի Քավությունն ու իրական փոփոխություններ է կատարում իր կյանքում: Միսիոներները, ովքեր զգացել են այն ուրախությունը, որը գալիս է, երբ նորադարձները մտնում են մկրտության ջրերը և այնուհետև տաճարի դռներից ներս, հանդիսանում են այն օրհնության վկաները, որը գալիս է ուրիշներին փոխվելու հնարավորություն և խրախուսանք տալու շնորհիվ: Անդամները, ովքեր ողջունում են այն նորադարձներին, ովքեր կարծես քիչ հավանականություն ունեն գնալու Աստծո արքայություն, մեծ բավականություն են ստանում, երբ օգնում են այդ նորադարձներին զգալ այն սերը, որ Տերն ունի իրենց հանդեպ: Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունը կայանում է հավերժական առաջընթացի մեջ. մեզ ոչ միայն *թույլ են տալիս* դառնալ ավելի լավը, այլ խրախուսում և նույնիսկ *պատվիրվում* են շարունակել բարեփոխվել և ի վերջո կատարելագործվել:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խորհուրդ է տվել. «Դուք գթություն եք դրսևորում հարյուրավոր եղանակներով: . . . [Միմյանց] դատելու [կամ] քննադատելու փոխարեն եկեք ունենանք Քրիստոսի մաքուր սերը կյանքի այս ճանապարհով ճամփորդող մեր ընկերների հանդեպ: Եկեք գիտակցենք, որ յուրաքանչյուրն անում է լավագույնը՝ իր կարողությունների սահմաններում, ճանապարհին հանդիպող դժվարությունները հաղթահարելու համար, իսկմիմյանց օգնելու համար եկեք անենք այն ամենը, ինչը *մեր* ուժերի սահմանում է»:[12]

Այն անձնավորությունը, ով գթություն ունի, համբերատար է, բարի ու գոհունակ: Գթությունն ուրիշներին առաջին տեղում է դնում, խոնարհ է, կառավարում է ինքն իրեն, ուրիշների մեջ փնտրում է լավը և ուրախանում է նրանց հաջողություններով:[13]

Որպես Սիոնի քույրեր (և եղբայրներ), արդյո՞ք պարտավորվում ենք «*բոլորս* միասին ձգտել . . . անել այն, ինչն ազնիվ է ու մարդկային,

որպեսզի ուրախացնենք ու օրհնենք [Փրկիչի] անունով»:[14] Կարո՞ղ ենք արդյոք սիրով ու մեծ հույսերով փնտրել ու ընդունել այլ մարդկանց մեջ եղած գեղեցկությունը՝ թույլ տալով ու խրախուսելով նրանց առաջընթացը: Կարո՞ղ ենք ուրախանալ ուրիշների նվաճումներով՝ միաժամանակ աշխատելով մեր սեփական կատարելագործման համար:

Այո՛, մենք *կարող* ենք ավետարանի լույսը բերել մեր տուն, մեր դպրոց կամ աշխատավայր, եթե ուրիշների մեջ լավը փնտրենք և նրանց մասին դրական մտքերով կիսվենք ու չկենտրոնանանք անկատարությունների վրա: Ինչպիսի երախտագիտությամբ է լցվում սիրտս, երբ մտածում եմ ապաշխարության մասին, որը Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով հասանելի դարձավ բոլորի համար, ովքեր անխուսափելիորեն մեղք են գործել այս անկատար ու երբեմն դժվար աշխարհում:

Ես վկայում եմ, որ եթե հետևենք Նրա կատարյալ օրինակին, մենք կստանանք գթության պարգևը, որն այս կյանքի ընթացքում մեզ մեծ ուրախություն կպարգևի և մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանքի խոստացված օրհնությունը կբերի: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Լինդա Ք. Բրրթը, «Ես օտարական էի,» *Լիահոնա,* Մայիս 2016, 13–15
2. Մորոնի 10.21
3. Մատթէոս 22.37–39
4. Sandra Rogers, “Hearts Knit Together,” in *Hearts Knit Together: Talks from the 1995 Women’s Conference* (1996), 7.
5. James E. Faust, in Dallin H. Oaks, “‘Judge Not’ and Judging,” *Ensign,* Aug. 1999, 13.
6. Ա Կորնթացիս 13.11–12
7. Thomas S. Monson, “Living the Abundant Life,” *Liahona,* Jan. 2012, 4.
8. Adapted from Laura E. Richards, *The Golden Windows: A Book of Fables for Young and Old* (1903), 1–6.
9. «Օրհնություններդ հաշվիր» *Լիահոնա,* համար 8
10. See Jeffrey R. Holland, “The Best Is Yet to Be,” *Liahona,* Jan. 2010, 18–19.
11. 1 Պետրոս 4.8
12. Թոմաս Ս. Մոնսոն, «Գթությունը երբեք չի խափանվում», *Լիահոնա,* Նոյ. 2010, 125
13. Տես 1 Կորնթացիս 13.5–6
14. “As Sisters in Zion,” *Hymns,* no. 309; շեշտադրումն ավելացված է

Քերոլ Մ. Սթեֆենս
Սփոփող Միության գերագույն Նախագահության առաջին խորհրդական

Բժշկող Տերը

Դուք չպիտի միայնակ տանեք մեղքի պատճառած վիշտը, ուրիշների արարքների պատճառով առաջացած ցավը կամ մահկանացու կյանքի ցավալի իրողությունները:

Ինձ ամենապարգևատրող հնարավորություններից մեկը ճանապարհորդելն է ամբողջ աշխարհում, որպեսզի սովորեմ իմ քույրերից: Չկա ավելի լավ բան, քան ձեզ հետ ձեռք ձեռքի, դեմ առ դեմ և սիրտ սրտի լինելուց:

Այդպիսի փորձառություններից մեկի ժամանակ Սփոփող Միության ղեկավարը հարցրեց. «Կա՞ արդյոք մի առանձնահատուկ բան, որի վրա կանայք պիտի կենտրոնանան»:

Ես պատասխանեցի «Այո», քանի որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի «Մի կարևոր խնդրանք իմ քույրերին» ելույթը մնացել էր իմ մտքում: Նախագահ Նելսոնն ուսուցանել է. «Մենք կարիք ունենք կանանց, ովքեր հիմնավոր հասկացողություն ունեն Քրիստոսի վարդապետության վերաբերյալ»:[1]

Նեփիին նկարագրել է Քրիստոսի վարդապետությունը հետևյալ կերպ:«Քանզի դուռը, որով դուք պիտի մտնեք *ապաշխարությունը* և ջրով *մկրտությունն է,* և ապա գալիս է ձեր մեղքերի թողությունը կրակով և *Սուրբ Հոգով* : . . .

«Եվ այժմ . . . ես կհարցնեի, թե արդյո՞ք ամեն ինչ արված է: Ահա, ես ասում եմ ձեզ՝ ոչ, քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ *հավատքով* նրա հանդեպ, ամբողջովին ապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս:

Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով և *համբերեք* մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը, դուք կունենաք հավերժական կյանք:

. . . Սա է ճանապարհը, և չկա ոչ մի այլ ճանապարհ, ոչ էլ անուն երկնքի տակ տրված, որով մարդ կարողանա փրկվել Աստծո արքայությունում: Եվ այժմ, ահա, *սա է Քրիստոսի վարդապետությունը*»:[2]

Մենք ինչո՞ւ պիտի հիմնավոր հասկացողություն ունենանք այս սկզբունքների մասին:

Ես հաճախ հանդիպում եմ Վերջին Օրերի Սուրբ կանանց, ովքեր հուսահատ օգնություն են փնտրում, սակայն նրանք չեն դիմում Նրան, ով կարող է տալ հավիտենական օգնություն: Շատ հաճախ նրանք ձգտում են հասկացողության՝ հետազոտելով «մեծ ու ընդարձակ շենքում»:[3]

Երբ մեծացնենք Քրիստոսի վարդապետության մեր ըմբռնումը,

մենք շուտով կհայտնաբերենք, որ զարգացնում ենք ավելի խորը հասկացողություն «երջանկության մեծ ծրագրի» վերաբերյալ:[4] Մենք նաև կճանաչենք, որ ծրագրի հենց սրտում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսն է:

Երբ մենք սովորում ենք, թե ինչպես կիրառել Քրիստոսի վարդապետությունը մեր անձնական հանգամանքներում, մեր սերը մեր Փրկիչի հանդեպ աճում է: Եվ մենք ընդունում ենք, որ «անկախ մեր միջև զգալի տարբերություններից, մենք բոլորս նույն անսահման Քավության կարիքն ունենք»:[5] Մենք գիտակցում ենք, որ Նա է մեր հիմքը. «մեր Քավիչի վեմը, . . . որը հաստատուն հիմք է, . . . որի վրա, եթե [մենք] կառուցենք, [մենք] չենք ընկնի»:[6]

Ինչպե՞ս կարող է այս վարդապետությունը օրհնել մեզ, երբ մենք ձգտենք խաղաղության և հասկացողության ու ջանանք համբերել ուրախությամբ մեր մահկանացու կյանքի առանձնահատուկ ճամփորդություններում:

Կարո՞ղ եմ առաջարկել, որ մենք սկսենք, ինչպես Նեփին է ասում՝ «անխախտ հավատքով նրա հանդեպ, ամբողջովին ապավինելով նրան, որը հզոր է փրկելիս»:[7] Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը հնարավորություն է տալիս մեզ դիմակայել ցանկացած մարտահրավերի:

Մենք հաճախ, փաստորեն, գտնում ենք, որ մեր հավատքը խորացել է և մեր փոխհարաբերությունը Երկնային Հոր ու Նրա Որդու հետ մաքրվել է ձախորդության ընթացքում: Թույլ տվեք կիսվել երեք օրինակով:

Առաջինը՝ Բժշկող Տերը զորություն ունի փոխելու մեր սրտերը և տալու մեզ մշտական սփոփանք մեր իսկ մեղքի պատճառած վշտից: Երբ Փրկիչը ջրհորի մոտ ուսուցանեց սամարացի կնոջը, Նա գիտեր նրա լուրջ մեղքերի մասին: Սակայն «Տերը նայում է սրտին»,[8] և Նա գիտեր, որ կինն ուներ հոժարակամ սիրտ:

Երբ կինը եկավ ջրհորի մոտ, Հիսուսը՝ կենդանի ջրի մարմնավորումը, պարզապես ասաց. «Ինձ ջուր տուր խմեմ»: Մեր Փրկիչը նույն ձևով կխոսի մեզ հետ մի ձայնով, որը մենք ճանաչում ենք, երբ գալիս ենք նրա մոտ, քանի որ Նա գիտի մեզ: Նա հանդիպում է մեզ այնտեղ, որտեղ մենք ենք: Եվ այն պատճառով, թե ով է Նա, և ինչ է Նա արել մեզ համար, Նա հասկանում է մեզ: Որովհետև Նա զգացել է մեր ցավը, Նա կարող է մեզ տալ կենդանի ջուր, երբ մենք որոնում ենք այն: Նա սովորեցրեց այդ սամարացի կնոջը, երբ Նա ասաց. «Եթէ Աստուծոյ պարգևը գիտենայիր, եւ թէ ով է նա, որ քեզ ասում է, թե Տուր ինձ խմել, ապա դու նորանից կխնդրէիր, եւ նա կենդանի ջուր կտար քեզ»: Ի վերջո հասկանալով, կինը պատասխանեց հավատքով և խնդրեց. «Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չծարաւիմ:»

Փրկիչի հետ այս փորձառությունն ունենալուց հետո սամարացի կինը «իր կուժը թողեց, եւ գնաց քաղաք, եւ մարդկանց ասեց.

«Եկէք տեսէք մի մարդ, որ ինձ ասեց բոլորը ինչ որ գործել եմ, արդեօք նա՞ է Քրիստոսը»:

Նա ստացել էր վկայություն, նա սկսել էր ճաշակել կենդանի ջրից և կամեցավ վկայել ուրիշներին Նրա աստվածայնության մասին:[9]

Երբ մենք գալիս ենք Նրա մոտ խոնարհ և հոժարակամ սրտով, նույնիսկ, եթե մեր սրտերը ծանրացել են սխալներից, մեղքերից և օրինազանցություններից, Նա կարող է փոխել մեզ, «քանզի նա հզոր է փրկելիս»:[10] Եվ փոխված սրտերով, մենք կարող ենք սամարացի կնոջ նման գնալ մեր քաղաքները, տները, դպրոցները և աշխատավայրերը՝ վկայելու Նրա մասին:

Երկրորդը՝ Բժշկող Տերը կարող է սփոփել և զորացնել մեզ, երբ մենք ցավ ենք զգում ուրիշների անարդար արարքների պատճառով: Ես շատ զրույցներ եմ ունեցել կանանց հետ, ովքեր ծանր բեռների տակ կքված են եղել: Նրանք տառապում են խախտված ուխտերի, կոտրված սրտերի և կորած վստահության պատճառով: Շատերը շնության և խոսքի, սեռական և զգացմունքային բռնության զոհեր են, հաճախ՝ ուրիշ մարդկանց կախվածությունների արդյունքում:

Այս փորձառությունները, չնայած ոչ իրենց սեփական մեղքով, թողել են հանցանքի և ամոթի շատ զգացումներ: Չհասկանալով, թե ինչպես

կառավարել ուժեղ հույզերը, որոնք իրենք զգում են, շատերը փորձում են թաղել դրանք ավելի խորը՝ ճնշելով դրանք իրենց ներսում:

Հույսը և բժշկությունը չեն գտնվում գաղտնիության խավար անդունդում, այլ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի լույսի և սիրո մեջ:[11] Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խորհուրդ է տվել. «Եթե դուք ինքներդ զերծ եք լուրջ մեղքից, զուր մի տառապեք ուրիշի մեղքերի հետևանքի համար . . . Դուք զուցե կարեկցանք զգաք . . . սակայն դուք չպետք է ձեզ վրա վերցնեք պատասխանատվության զգացում: Երբ դուք անեք այն ամենը, ինչ խելամիտ է՝ օգնելու նրան, ում դուք սիրում եք, դրեք բեռը Փրկիչի ոտքերի մոտ . . . Երբ այդպես վարվեք, դուք ոչ միայն խաղաղություն կգտնեք, այլև ցույց կտաք ձեր հավատքը Փրկիչի զորության հանդեպ, ձեր սիրելի մարդուց մեղքի բեռը վերցնելով՝ նրա ապաշխարության և հնազանդության միջոցով»:

Նա շարունակում է. «Լիակատար բժշկությունը կգա առ Հիսուս Քրիստոս ձեր հավատքի և Նրա զորությամբ և կարողությամբ՝ Իր Քավության միջոցով, բժշկելով այն սպիները, որոնք անարդար են և անարժան:»[12]

Քույրեր, եթե դուք հայտնվեք այս իրավիճակում, բժշկումը կարող է լինել երկարատև գործընթաց: Կպահանջվի, որ դուք աղոթքով առաջնորդություն և համապատասխան օգնություն որոնեք, ներառյալ՝ խորհրդատվություն պատշաճ ձեռնադրված քահանայություն կրողներից: Երբ սովորեք անկեղծ հաղորդակցվել, դրեք համապատասխան սահմաններ և գուցե փնտրեք մասնագիտական խորհրդատվություն: Այդ գործընթացում հոգևոր առողջության պահպանումը էական է: Հիշեք ձեր աստվածային ինքնությունը՝ դուք Երկնային Ծնողների սիրելի դուստրն եք: Վստահեք ձեզ համար ունեցած ձեր Հոր հավերժական ծրագրին: Ամեն օր շարունակեք մեծացնել ձեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի վարդապետության վերաբերյալ: Ամեն օր գործադրեք հավատք, որպեսզի խորությամբ խմեք Փրկիչի ջրհորի կենդանի ջրից: Ապավինեք օժտման զորությանը, որը հնարավոր է դառնում մեզանից յուրաքանչյուրի համար՝ արարողությունների և ուխտերի միջոցով: Եվ թույլ տվեք Փրկիչի բժշկող զորությունը և Նրա Քավությունը մտնի ձեր կյանք:

Երրորդը՝ Բժշկող Տերը կարող է սփոփել և հաստատել մեզ, երբ մենք տանում ենք «մահկանացու կյանքի ցավալի իրողություններ,[13] ինչպես օրինակ՝ աղետ, մտավոր տկարություն, հիվանդություն, խրոնիկ ցավ և մահ: Ես վերջերս ծանոթացա Ջոզի անունով մի հիանալի երիտասարդ կնոջ հետ, ով տառապում է երկբևեռ խանգարումից: Ահա մի փոքրիկ պատմություն դեպի ապաքինում նրա ուղևորությունից, որով նա կիսվեց ինձ հետ:

«Խավարի վատթարագույն օրերը ես և իմ ընտանիքը համարում էինք «հատակի օրեր»: Այն սկսվում է զգայական գերբեռնվածությամբ, սուր զգայունակությամբ և ամեն տեսակի ձայնի կամ լույսի հակազդեցությամբ: Դա մտավոր տանջանքի գագաթնակետն է: Հատկապես մի օրը ես երբեք չեմ մոռանա:

Դա հիվանդության սկզբնական շրջանում էր և դեպքը դարձավ հատկապես երկյուղալի: Երբ շնչահեղձ էի լինում, ես հիշում եմ հեկեկոց, դեմքիս վրայով հոսող արցունքներ: Բայց նույնիսկ այդպիսի ուժեղ տառապանքը խամրում էր այն ցավի համեմատությամբ, որը հետևում էր, երբ ես նկատում էի, որ խուճապը համակում էր մայրիկիս, ով այնպես հուսահատորեն փորձում էր ինձ օգնել:

Իմ խախտված մտքի հետ եկավ նրա կոտրված սիրտը: Բայց մենք քիչ բան գիտեինք, որ չնայած խորացող խավարին, մի հզոր հրաշք զգալուց մեզ ուղղակի մի քանի պահ էր բաժանում:

Մինչ դա շարունակվում էր մի երկար ժամ՝ մայրս կրկին ու կրկին շշնջում էր. «Ես կանեի ամեն բան՝ քեզանից սա վերցնելու համար»:

Այդ ընթացքում խավարը խտանում էր, և երբ ես համոզվեցի, որ այլևս չեմ դիմանում, հենց այդ ժամանակ ինչ-որ սքանչելի բան տեղի ունեցավ:

Մշտագո և հրաշալի մի ուժ հանկարծակի պարուրեց իմ մարմինը: Ապա «իմ սեփական ուժից վեր մի ուժով»,[14] ես հայտարարեցի մայրիկիս մեծ համոզվածությամբ կյանքը փոխող յոթ խոսքեր՝ ի պատասխան իմ ցավը վերցնելու նրա կրկնվող ցանկությանը: Ես ասացի. «Պետք չէ որ դու անես դա, ինչ-որ Մեկն արդեն արել է:»

Թուլացնող մտավոր հիվանդության խավար անդունդից Ջոզին ուժ հավաքեց՝ վկայելու Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին:

Այդ օրը նա լիովին չբժշկվեց, բայց ստացավ հույսի լույսը ուժգնացած խավարի պահին: Եվ այսօր, հենվելով Քրիստոսի վարդապետության հիմնավոր ըմբռնման վրա և ամեն օր թարմանալով Փրկիչի կենդանի ջրով, Ջոզին շարունակում է իր ուղևորությունը դեպի ապաքինում և գործադրում է անսասան հավատք Բժշկող Տիրոջ հանդեպ: Նա իր ճանապարհին օգնում է ուրիշներին: Եվ նա ասում է. «Երբ խավարը թվում էմշտական , ես ապավինում եմ Նրա գորովագութ ողորմություններին: Դրանք ծառայում են որպես առաջնորդող լույսեր, երբ ես նավարկում

եմ դժվար ժամանակների միջով:»[15]

Քույրեր, ես վկայում եմ, որ.

Դուք չպետք է շարունակեք կրել մեղքից առաջացած վշտի բեռը միայնակ:

Դուք չպետք է կրեք ուրիշների անարդար գործերից առաջացրած ցավը միայնակ:

Դուք չպետք է տանեք մահկանացու կյանքի ցավալի իրողությունները միայնակ:

Փրկիչն աղերսում է.

«Այժմ չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ:

. . . Եթե դուք գաք ինձ մոտ, դուք կունենաք հավերժական կյանք: Ահա, իմ ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, . . . ես կընդունեմ»:[16]

«[Նա] կանի ամեն բան՝ ձեզանից սա վերցնելու համար:» Փաստորեն [Նա] «արդեն արել է»: Հիսուս Քրիստոսի՝ Բժշկող Տիրոջ անունով, ամեն: ■

Բոնի L. Օսկարսոն
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

Վեր կացեք զորությամբ, Սիոնի քույրեր

Որպեսզի լինենք դարձի եկած ուխտ պահողներ, մենք պետք է ուսումնասիրենք ավետարանի հիմնական վարդապետությունները և ունենանք անսասան վկայություն դրանց ճշմարտացիության վերաբերյալ:

Ինչպիսի՜ ուրախություն է համաժողովների այս կենտրոնում հավաքվել աղջիկների, երիտասարդ կանանց և Եկեղեցու կանանց հետ: Մենք լավատեղյակ ենք նաև, որ կան քույրերի հազարավոր այլ խմբեր, ովքեր հավաքվել են ողջ աշխարհում՝ դիտելու այս իրադարձությունները, և ես երախտապարտ եմ այն հնարավորության և միջոցների համար, որոնք թույլ են տալիս մեզ այս երեկո միմյանց հետ միանալ միաբանությամբ և նպատակով:

2006 թվականի հոկտեմբերին Նախագահ Գորդոն Բ. Հինքլին մի ելույթ ունեցավ, որի վերնագիրն էր «Վեր կացեք, ով Աստծո մարդիկ», որն անվանվեց 1911[1] թվականին գրված մի հիմնի խոսքերով: Այն Եկեղեցու տղամարդկանց ուղղված կոչ էր՝ գործի անցնելու, վեր կենալու և կատարելագործվելու համար: Այդ ելույթը արձագանքեց իմ մտքում, երբ ես աղոթեցի՝ իմանալու համար, թե ինչով կիսվեմ ձեզ հետ:

Քույրեր, մենք ապրում ենք «վտանգավոր ժամանակներում»:[2] Մեր օրերի պայմանները չպետք է զարմացնեն մեզ: Դրանց մասին կանխագուշակվել է հազարամյակներ առաջ՝ որպես նախազգուշացում և հորդոր, որպեսզի մենք կարողանանք նախապատրաստվել: Մորոնիի 8-րդ գլուխը տալիս է ապշեցուցիչ ճշգրտության նկարագրություն մեր օրերի պայմանների մասին: Այս գլխում Մորոնին ասում է, որ նա տեսել էր մեր օրերը, և այն ներառում է պատերազմներ և պատերազմների համբավներ, մեծ աղտոտվածություններ, մարդասպանություններ, ավազակություն և մարդիկ, ովքեր ասում են մեզ, որ չկա ճիշտ կամ սխալ Աստծո աչքում: Նա նկարագրում է մարդկանց, ովքեր լցված են հպարտությամբ, տարված թանկարժեք հագուստ կրելով, և ովքեր ծաղրում են կրոնը: Նրան ցույց տրվեցին մարդիկ, ովքեր այնպես էին կլանված աշխարհիկ բաներով, որ նրանք թույլ էին տալիս, որ «սոված և կարիքավորը և մերկը և հիվանդը և չարչարվածն անցնի իրենց կողքով[3] առանց նկատվելու:

Մեզ՝ այս ժամանակներում ապրողներիս, Մորոնին ուղղում է մի հոգեխույզ հարց: Նա ասում է. «Ինչո՞ւ

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյ. 2015:
2. 2 Նեփի 31.17, 19–21, շեշտադրումն ավելացված է:
3. 1 Նեփի 11.36:
4. Ալմա 42.8:
5. Դեյլ Գ. Ռենլանդ, «Վերջին Օրերի Սրբերը շարունակում են ճիգ թափել,» *Լիահոնա,* մայիս 2015:
6. Հելաման 5.12:
7. 2 Նեփի 31.19:
8. Ա Թագավորաց 16.7:
9. Տես Հովհաննես 4.5–30, 39–42:
10. Ալմա 34.18:
11. Անհատներին, զույգերին և ընտանիքներին լրացուցիչ օգնության համար, տես OvercomingPorngraphy.org և mentalhealth.lds.org էջը:
12. Ռիչարդ Գ.Սքոթ, «Ազատվել ծանր բեռներից», *Լիահոնա,* նոյ. 2002:
13. Տես Փոլ Բ. Փայփեր, «Մահկանացու կյանքի բացահայտված իրողություններ», *Լիահոնա,* հուն. 2016, 44:
14. “Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220.
15. For more about Josie’s journey toward healing, see Morgan Jones, “Bipolar Disorder Can’t Stop LDS Woman from Spreading Light, Joy through the 444 Project,” *Deseret News,* Mar. 21, 2016, deseretnews.com/article/865650409/Bipolar-disorder-cant-stop-LDS-woman-from-spreading-light-joy-through-The-444-Project.
16. 3 Նեփի 9.13–14:

եք դուք ամաչում վերցնել ձեզ վրա Քրիստոսի անունը»:[4] Այս մեղադրականը ճշգրիտ նկարագրում է մեր երկրագնդի աճող աշխարհիկ վիճակը:

Ջոզեֆ Սմիթ — Մատթեոսը նկարագրում է, որ վերջին օրերին նույնիսկ «կմոլորեցնեն ընտրվածներին, որոնք ընտրված են ուխտի համաձայն»:[5] Նրանք, ովքեր ուխտից են, ներառում են աղջիկներին, երիտասարդ կանանց և Եկեղեցու քույրերին, ովքեր մկրտվել են և ուխտեր կապել իրենց Երկնային Հոր հետ: Նույնիսկ *մենք* կեղծ ուսմունքներով մոլորվելու վտանգի տակ ենք:

Քույրեր, ես չեմ հավատում, որ պայմանները գնալով կբարելավվեն: Եթե ներկա միտումները նշաններ են, մենք պետք է նախապատրաստված լինենք փոթորիկների համար, որոնք առջևում են: Հեշտ կլիներ մեր ձեռքերը վեր պարզել հուսահատությունից, բայց որպես ուխտի ժողովուրդ, մենք երբեք չպետք է հուսահատվենք: Ինչպես Երեց Գարի Սթիվենսոնն է ասել. «Երկնային Հոր առատ փոխհատուցումը վտանգավոր ժամանակներում ապրելու համար այն է, որ մենք ապրում ենք նաև ժամանակների լրիվության ժամանակաշրջանում»:[6] Ես սիրում եմ այդ սփոփող հայտարարությունը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է մեզ մեկ տարի առաջ. «Եկեղեցու, դրա վարդապետության և մեր ապրելաձևի դեմ հարձակումներն աճելու են: Այդ պատճառով, մենք կարիք ունենք կանանց, ովքեր Քրիստոսի վարդապետության հիմնաքարն ունեն, և ովքեր այդ հասկացողությունը կօգտագործեն ուսուցանելու և օգնելու՝ աճեցնել մեղքին դիմադրող սերունդ: Մենք կարիք ունենք կանանց, ովքեր կարող են նկատել խաբեությունը իր բոլոր դրսևորումներում: Մենք կարիք ունենք կանանց, ովքեր գիտեն, թե ինչպես ձեռք բերեն այն ուժը, որն Աստված մատչելի է դարձնում ուխտը պահողներին, և ովքեր արտահայտում են իրենց համոզմունքները վստահությամբ ու գթությամբ: Մենք կարիք ունենք կանանց, ովքեր մեր Մայր Եվայի քաջությունն ունեն և հեռանկարը»:[7]

Այս ուղերձը վերահավաստում է ինձ, որ չնայած մեր օրերի վիճակին, մենք ուրախանալու և լավատես լինելու շատ պատճառներ ունենք: Ես հավատում եմ իմ ողջ սրտով, որ մենք՝ քույրերս, ունենք ներքին ուժ և հավատք, որոնք թույլ կտան մեզ դիմակայել վերջին օրերում ապրելու մարտահրավերներին: Քույր Շերի Դյուն գրել է. «Ես հավատում եմ, որ այն պահին, երբ մենք սովորենք գործադրել դարձի եկած, ուխտ պահող կնոջ լիարժեք ազդեցությունը, Աստծո արքայությունը կփոխվի մի գիշերում»:[8]

Կպահանջվի կենտրոնացած ջանք՝ դարձի գալու և մեր ուխտերը պահելու համար: Այդ անելու համար մենք պետք է լինենք աղջիկներ և կանայք, ովքեր ուսումնասիրում են ավետարանի հիմնական վարդապետությունները և ունեն անսասան վկայություն դրանց ճշմարտացիության վերաբերյալ: Կան երեք ոլորտներ, որոնք, կարծում եմ, հիմնարար են՝ ուժեղ վկայությունների համար, և որոնք ես կարևոր եմ համարում մեր հասկացողության համար:

Առաջինը՝ մենք պետք է գիտակցենք Աստծո՝ մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեր հավատքի և փրկության համար կենտրոնական լինելը: Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է և մեր Քավիչը: Մենք պետք է ուսումնասիրենք և հասկանանք Նրա Քավությունը և այն ամեն օր կիրառելու սկզբունքը. ապաշխարությունը յուրաքանչյուրիս համար մեծագույն օրհնություններից մեկն է, որ մենք ունենք՝ ուղու վրա մնալու համար: Մենք պետք է տեսնենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր գլխավոր ընդօրինակման կերպար և օրինակ, որին մենք պետք է նմանվենք: Մենք պետք է անընդհատ ուսուցանենք մեր ընտանիքներին և դասարաններին մեր Հոր փրկության մեծ ծրագրի մասին, որը ներառում է Քրիստոսի վարդապետությունը:

Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք վարդապետության, կազմակերպության և իշխանության բանալիների վերականգման անհրաժեշտությունը այս վերջին օրերում: Մենք պետք է ունենանք վկայություն, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը աստվածայնորեն ընտրված էր և նշանակված Տիրոջ կողմից առաջ բերելու այս վերականգնումը և ընդունենք, որ նա է կազմակերպել Եկեղեցու կանանց, ըստ այն կազմակերպության, որը գոյություն էր ունեցել Հին դարերում Քրիստոսի Եկեղեցում:[9]

Եվ երրորդը՝ մենք պետք է ուսումնասիրենք և հասկանանք տաճարային արարողություններն ու ուխտերը: Տաճարը մեր ամենասրբազան հավատալիքների մեջ կենտրոնական տեղ է գրավում, և Տերը խնդրում է, որ մենք հաճախենք, խորհրդածենք, ուսումնասիրենք և գտնենք անձնական իմաստավորում և անհատական կիրառում: Մենք կսկսենք հասկանալ, որ աստվածայնության զորությունը մեր կյանքում դրսևորվում է տաճարային արարողությունների միջոցով,[10] և որ տաճարային արարողությունների շնորհիվ մենք կարող ենք զինվել Աստծո զորությամբ, և Նրա անունը կլինի մեզ վրա, Նրա փառքը՝ մեր շուրջը և Նրա հրեշտակները մեզ հոգ կտանեն:[11] Հետաքրքիր է, արդյոք մենք լիովին վստահում ենք այդ խոստումների զորությանը:

Քույրեր, նույնիսկ այս լսարանի ամենափոքրերը կարող են վեր կենալ հավատքով և խաղալ նշանակալի դեր Աստծո արքայությունը

կառուցելիս: Երեխաները սկսում են ձեռք բերել իրենց իսկ վկայությունները՝ կարդալով կամ լսելով սուրբ գրությունները, ամեն օր աղոթելով և ճաշակելով հաղորդությունը իմաստալի ձևով: Բոլոր երեխաները և երիտասարդ կանայք կարող են քաջալերել ընտանեկան երեկոներ անցկացնել և լինել լիարժեք մասնակիցներ: Դուք կարող եք առաջինը ծնկի իջնել, երբ ձեր ընտանիքը հավաքվի ընտանեկան աղոթք ասելու: Եթե նույնիսկ ձեր տները կատարյալից հեռու են, ավետարանով հավատարիմ ապրելու ձեր անձնական օրինակները կարող են ազդել ձեր ընտանիքի և ընկերների կյանքի վրա:

Եկեղեցու երիտասարդ կանայք պետք է իրենց տեսնեն որպես հիմնական մասնակիցներ քահանայության կողմից ղեկավարվող փրկության աշխատանքում և ոչ թե որպես ուղղակի դիտորդներ կամ աջակցողներ: Դուք կրում եք կոչումներ և կարգվել եք նրանց կողմից, ովքեր կրում են քահանայության բանալիները՝ գործելու որպես զորությամբ և իշխանությամբ օժտված ղեկավարներ այս աշխատանքում: Երբ դուք մեծարում եք ձեր կոչումները դասարանի նախագահություններում և հոգեպես նախապատրաստվում, միասին խորհրդակցում, հասնում օգնության՝ ծառայելով ձեր դասարանի անդամներին, և միմյանց սովորեցնում ավետարանը, դուք զբաղեցնում եք ձեր տեղը այս աշխատանքում և ինչպես դուք, այնպես էլ ձեր հասակակիցները կօրհնվեն:

Բոլոր կանայք պետք է տեսնեն իրենց որպես հիմնական մասնակիցներ քահանայության աշխատանքում: Կանայք այս Եկեղեցում նախագահներ են, խորհրդականներ, ուսուցիչներ, խորհուրդների անդամներ, քույրեր և մայրեր և Աստծո արքայությունը չի կարող գործել, եթե մենք չբարձրանանք և կատարենք մեր պարտականությունները հավատով: Երբեմն մենք ուղղակի պետք է ավելի մեծ տեսլական ունենանք նրա վերաբերյալ, ինչը հնարավոր է:

Վերջերս ես Մեքսիկոյում հանդիպեցի մի քրոջ, ով հասկանում է, թե ինչ է նշանակում մեծարել իր կոչումը հավատքով: Մարֆիսա Մալդոնադոն երեք տարի առաջ կանչվեց ուսուցանելու երիտասարդների կիրակնօրյա դպրոցի դասարանում: Երբ կանչվեց, նա 7 հաճախող ուսանող ուներ, բայց այժմ նա ունի 20 ուսանող, ովքեր կանոնավորապես հաճախում են: Ես զարմացած հարցրեցի, նրան, թե ինչ արեց այդպիսի թվային աճի համար: Նա համեստորեն ասաց. «Օ, ես մենակ չէի: Դասարանի բոլոր անդամներն օգնեցին»: Նրանք միասին նայեցին քիչ ակտիվ անդամների անունները ցուցակում և սկսեցին միասին այցելելև հրավիրել նրանց ետ գալ եկեղեցի: Նրանք նաև մի մկրտություն ունեցան իրենց ջանքերի շնորհիվ:

Քույր Մալդոնադոն բացեց մի սոցիալական լրատվական էջ ուղղակի իր դասարանի անդամների համար, որը կոչվեց «Զավակն եմ Աստծո», և շաբաթը մի քանի անգամ նա տեղադրում է հոգևոր մտքեր և սուրբ գրության հատվածներ: Նա կանոնավոր գրում է իր ուսանողներին՝ հանձնարարություններ և քաջալերանք տալով նրանց: Նա զգում է, որ կարևոր է հաղորդակցվել նրանց հետ այն ուղիներով, որոնք նրանք լավագույնն են համարում և դա ստացվում է: Նա պարզապես ինձ ասաց. «Ես սիրում եմ իմ ուսանողներին»: Ես զգացի այդ սերը, երբ նա պատմեց ինձ նրանց ջանքերի մասին, և նրա օրինակը հիշեցրեց ինձ, թե հավատքով և գործունյա մարդը ինչ կարող է իրականացնել այս աշխատանքում Տիրոջ օգնությամբ:

Մեր երիտասարդությունը ամեն օր դժվարին հարցերի հետ է առնչվում, և մեզանից շատերը ունեն սիրելիներ, ովքեր մաքառում են՝ պատասխաններ գտնելու համար: Լավ լուրն այն է, որ *կան* պատասխաններ այդ տրվող հարցերին: Լսեք մեր ղեկավարների վերջին ուղերձները: Մեզ հորդորվում է ուսումնասիրել և հասկանալ մեր Երկնային Հոր երջանկության ծրագիրը: Մեզ հիշեցվել է ընտանիքի վերաբերյալ հռչակագրի[12] սկզբունքները: Մեզ խրախուսվում է ուսուցանել և օգտագործել այդ միջոցները որպես չափորոշիչներ՝ մեզ պահելու նեղ և անձուկ արահետի վրա:

Մոտ մեկ տարի առաջ ես այցելեցի փոքր երեխաներ ունեցող մի մոր, ով որոշել էր նախապաշտպանական մոտեցում ձեռնարկել՝ իր երեխաներին պատվաստելով բազմաթիվ բացասական ազդեցությունների դեմ, որոնց նրանք ենթարկվում էին առցանցում և դպրոցում: Նա ընտրում է մի թեմա ամեն շաբաթ, հաճախ այնպիսին, որը մեծ քննարկում է առաջացրել առցանց և սկսում է իմաստալի քննարկումներ շաբաթվա ընթացքում, երբ նրա երեխաները կարող են հարցեր առաջադրել, իսկ նա կարող է հավաստիանալ, որ նրանք ստանում են հավասարակշռված և ազնիվ հեռանկար հաճախ դժվար հարցերի վերաբերյալ:Նա դարձնում է իր տունը ապահով վայր՝ հարցեր բարձրացնելու և իմաստալի ավետարանական հրահանգավորում ստանալու համար:

Ես անհանգստանում եմ, որ մենք ապրում ենք վիրավորանք հասցնելուց խուսափելու այնպիսի մթնոլորտում, որ մենք երբեմն ընդհանրապես խուսափում ենք ճիշտ սկզբունքներ ուսուցանելուց: Մեզ չի հաջողվում ուսուցանել մեր երիտասարդ կանանց, որ մայր դառնալուն պատրաստվելը ծայրահեղ կարևոր է, որովհետև մենք չենք ուզում վիրավորել նրանց, ովքեր ամուսնացած չեն, նրանց, ովքեր չեն կարող երեխաներ ունենալ կամ երևալ որպես ապագա ընտրությունները սահմանափակողներ: Մյուս կողմից, մենք գուցե թերանանք շեշտադրել կրթության կարևորությունը, որովհետև մենք չենք ուզում ուղարկել ուղերձ, որ դա ավելի կարևոր է, քան ամուսնությունը: Հայրը սահմանել է, որ ամուսնությունը լինի տղամարդու և կնոջ միջև, որովհետև մենք չենք ուզում վիրավորել նրանց, ովքեր նույն սեռի հանդեպ հրապուրանք են զգում:Եվ մենք գուցե անհարմար համարենք սեռական հարցեր կամ առողջ սեռական կյանքի վերաբերյալ քննարկում ծավալել:

Իհարկե քույրեր, մենք պետք է զգայուն լինենք, բայց եկեք օգտագործենք նաև ողջախոհություն և

փրկության ծրագրի մեր ըմբռնումը՝ լինելով համարձակ և շիտակ, երբ հարցը վերաբերում է ավետարանի հիմնական սկզբունքները մեր երեխաներին և երիտասարդներին ուսուցանելուն, որոնք նրանք պետք է հասկանան՝ նավարկելու աշխարհում, որում նրանք ապրում են: Եթե մենք չենք ուսուցանում մեր երեխաներին և երիտասարդներին ճշմարիտ վարդապետություն և հստակ չենք ուսուցանում նրանց, աշխարհը կսովորեցնի նրանց սատանայի ստերը:

Ես սիրում եմ Հիսուս Քրիստոսի ավետարանը, և ես հավետ երախտապարտ եմ ուղղության, զորության և ամենօրյա օգնության համար, որ ստանում եմ որպես Աստծո ուխտյալ դուստր: Ես վկայում եմ, որ Աստված օրհնել է մեզ որպես կանանց, ովքեր ապրում են այս վտանգավոր ժամանակներում այն ամբողջ ուժով, պարգևներով և զորությամբ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի նախապատրաստենք աշխարհը Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին: Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք բոլորս տեսնել մեր իսկական ներուժը և վեր կենանք՝ դառնալու հավատքով և քաջարի կանայք, ինչպիսին մեր Հայրը երկնքում մեր կարիքն ունի, որ լինենք: Հիսուս Քրիստոսի անունով ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես “Rise Up, O Men of God,” *Hymns,* no. 324.
2. Բ Տիմոթեոս 3.1:
3. Մորմոն 8.39, տես նաև հատվածներ 26–38:
4. Մորմոն 8.38:
5. Ջոզեֆ Սմիթ — Մատթեոս 1.22:
6. Գարի Ի. Սթիվենսոն, «Պարզ և թանկարժեք ճշմարտություններ», *Լիահոնա,* նոյ. 2015, 92:
7. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին », *Լիահոնա,* նոյ. 2015, 97:
8. Sheri Dew, *Women and the Priesthood: What One Mormon Woman Believes* (2013), 163.
9. Տես *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 7:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.20:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.22:
12. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Չորրորդ հարկ, վերջին դուռ

Աստված «վարձահատույց է լինում նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն», այնպես որ շարունակեք թակել: Քույրեր մի հանձնվեք: Ձեր ողջ սրտով փնտրեք Աստծուն:

Իմ սիրելի քույրեր, իմ սիրելի ընկերներ, որքան օրհնված ենք, որ կրկին անգամ հավաքվել ենք այս համաշխարհային համաժողովին՝ մեր սիրելի մարգարե և Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի առաջնորդությամբ և ղեկավարությամբ: Նախագահ, մենք սիրում ենք ձեզ ու աջակցում ենք ձեզ: Մենք գիտենք, որ դուք սիրում եք Եկեղեցու քույրերին:

Ես սիրում եմ մասնակցել զերագույն համաժողովի այս հրաշալի նիստին, որը նվիրված է Եկեղեցու մեր քույրերին:

Քույրեր, երբ տեսնում եմ ձեզ, չեմ կարող չմտածել այն կանանց մասին, ովքեր մեծապես ազդել են իմ կյանքի վրա. տատիկս ու մայրս, ովքեր առաջինն ընդունեցին հրավերը՝ գալ ու տեսնել, թե ինչի մասին է Եկեղեցին:[1] Նրանց մեջ է իմ սիրելի կինը՝ Հարիեթը, որին ես սիրեցի առաջին հայացքից: Նրանց մեջ է Հարիեթի մայրը, ով միացավ Եկեղեցուն քաղցկեղի պատճառով իր ամուսնուն կորցնելուց շատ չանցած: Ապա՝ քույրս, դուստրս, թոռնուհիս, ծոռնուհիս և այդ բոլոր մարդիկ մեծ ու դրական ազդեցություն են ունեցել իմ կյանքում: Նրանք ոգեշնչել են ինձ՝ դառնալ ավելի լավ մարդ և ավելի զգայուն ղեկավար Եկեղեցում: Որքան կտարբերվեր իմ կյանքը նախկինից առանց նրանց:

Հավանաբար ինձ առավել խոնարհեցնում է այն, որ այդ նույն ազդեցությունը միլիոնավոր անգամներ վերարտադրվում է ամբողջ Եկեղեցում՝ ձեզ նման հավատքի կանանց ունակությունների, տաղանդների, բանականության և վկայության շնորհիվ:

Այժմ, ձեզանից ոմանք գուցե իրենց արժանի չհամարեն այդ բարձր գովեստին: Միգուցե դուք մտածեք, որ չափազանց աննշան եք ուրիշների վրա մեծ ազդեցություն թողնելու համար: Միգուցե, դուք նույնիսկ չեք համարում ձեզ «հավատքի կին», քանի որ, երբեմն, պայքարում եք կասկածների ու վախի դեմ:

Ցանկանում եմ այսօր խոսել բոլոր նրանց հետ, ովքեր երբևէ այդ զգացումն են ունեցել, և հնարավոր է, որ դա ներառում է բոլորիս՝ մեր կյանքի այս կամ այն փուլում: Ցանկանում եմ խոսել հավատի մասին, թե ինչ է

դա, ինչ կարող է այն անել և չանել, և մենք ինչ պիտի անենք, որպեսզի ակտիվացնենք հավատի զորությունը մեր կյանքում։

Ի՞նչ է հավատը։

Հավատն ուժեղ համոզմունք է մի բանի հանդեպ, որին մենք հավատում ենք՝ այնքան ուժեղ մի համոզմունք, որը մղում է մեզ անելու բաներ, որոնք հակառակ դեպքում չէինք անի։ «Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը՝ և չերևացող բաների ապացույցն է»։[2]

Թեև դա հասկանալի է հավատացյալ ժողովրդի համար, այն հաճախ անհասկանալի է անհավատների համար։ Նրանք շարժում են իրենց գլուխներն ու ասում. «Ինչպե՞ս կարող է որևէ մեկը վստահ լինել մի բանի վերաբերյալ, ինչը չի կարող տեսնել»։ Նրանց համար դա ապացույց է, որ կրոնն անտրամաբանական մի բան է։

Նրանք չեն նկատում, որ կան տեսնելու ավելի շատ եղանակներ, քան մեր աչքերը, զգալու ավելի շատ եղանակներ, քան մեր ձեռքերը, և կան լսելու ավելի շատ եղանակներ, քան մեր ականջները։

Դա նման է մի փոքր աղջկա, ով քայլում էր իր տատիկի հետ։ Թռչունների ծլվլոցը զեղեցիկ էր հնչում փոքրիկ աղջկա ականջին, և նա տատիկի ուշադրությունն էր հրավիրում ամեն մի ձայնի։

«Դու լսո՞ւմ ես դա», — անընդհատ հարցնում էր փոքրիկ աղջիկը։ Բայց նրա տատիկը լսողության խնդիր ուներ և չէր լսում ձայները։

Ի վերջո, տատիկը ծնկի իջավ ու ասաց. «Կներես սիրելիս, տատիկը լավ չի լսում»։

Վրդովված դրանից, փոքրիկ աղջիկը տատիկի դեմքն առավ իր ձեռքերի մեջ, նայեց նրա աչքերին ու ասաց. «Տատիկ, ուշադիր լսի՛ր»։

Այս պատմությունից կարող են դասեր քաղել և՛ հավատացյալը և՛ անհավատը։ Պարզապես, եթե չենք կարող լսել ինչ-որ բան, չի նշանակում, որ լսելու ոչինչ չկա։ Երկու հոգի կարող են լսել միևնույն ուղերձը կամ կարդալ միևնույն հատվածը և նրանցից մեկը կարող է զգալ Հոգու ներկայությունը, իսկ մյուսը՝ ոչ։

Մյուս կողմից, երբ օգնում ենք մեր սիրելի մարդկանց լսելու Հոգու ձայնը և տեսնելու Հիսուս Քրիստոսի ավետարանի անսահման, հավերժական և լիակատար գեղեցկությունը, ապա «ուշադիր լսիր» բառերն այդքան էլ օգտակար տարբերակ չեն։

Հավանաբար, *ուղիղ կերպ* լսելն ավելի լավ խորհուրդ կարող է լինել բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մեծացնել հավատքը։ Պողոս Առաքյալը խրախուսում է մեզ փնտրել այն ձայնը, որը խոսում է մեր հոգու հետ, այլ ոչ թե մեր ականջի հետ։ Նա ուսուցանել է. «Բայց շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար.եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»։[3] Կամ, միգուցե մենք պետք է մտածենք Սենթ Էքզյուպերիի Փոքրիկ Իշխանի խոսքերի մասին, ով ասել է. «Մարդը սրտով է հստակ տեսնում։ Ամենագլխավորն աչքերով տեսանելի չէ»։[4]

Հավատքի զորությունն ու սահմանափակումները

Երբեմն դժվար է հավատ զարգացնել հոգևոր բաների հանդեպ և ապրել այս նյութական աշխարհում։ Սակայն արժե ջանք գործադրել, քանի որ հավատքի զորությունը մեր կյանքում կարող է շատ մեծ լինել։ Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ հավատի շնորհիվ աշխարհներ են կազմվել, ջրեր են բաժանվել, մեռածներ են կենդանացել, գետեր ու սարեր են տեղաշարժվել իրենց ընթացքից։[5]

Սակայն ոմանք կարող են հարցնել. «Եթե հավատն այդքան զորեղ է, ինչո՞ւ ես չեմ ստանում իմ սրտաբուխ աղոթքի պատասխանը։ Ես չեմ ուզում ծովը բաժանել կամ սարը տեղաշարժել։ Ես պարզապես ուզում եմ, որ իմ հիվանդությունը բուժվի կամ իմ ծնողները հաշտվեն, կամ իմ հավերժական զուգընկերը հայտնվի իմ դռան առջև՝ մի ձեռքին ծաղկեփունջը, մյուս ձեռքին ամուսնության մատանին։ Ինչո՞ւ չեմ կարող իմ հավատքով հասնել *դրան*»։

Հավատքը զորեղ է և հաճախ այն հանգեցնում է հրաշքների։ Բայց անկախ նրանից, թե որքան մեծ է մեր հավատքը, կա երկու բան, որոնց հավատքն ընդունակ չէ։ Առաջինը, այն չի կարող խախտել մեկ այլ մարդու ազատ կամքի ընտրությունը։

Մի կին աղոթում էր, որ իր անառակ դուստրը վերադառնար Քրիստոսի հոտը և վիհատվում էր, որ իր աղոթքները մնում էին անպատասխան։ Դա հատկապես ցավալի էր, երբ նա լսում էր, որ ուրիշ անառակ զավակներ ապաշխարել էին և հեռացել իրենց ուղուց։

Խնդիրն աղոթքների կամ հավատքի պակասության մեջ չէր: Նա պետք է միայն հասկանար, որ որքան էլ ցավալի լիներ մեր Երկնային Հոր համար, Նա չէր կարող ստիպել որևէ մեկին ընտրել արդարության ճանապարհը: Աստված չստիպեց Իր զավակներին հետևել Իրեն նախամահկանացու կյանքում: Իսկ այս մահկանացու կյանքում Նա առավել ևս չի ստիպի մեզ:

Աստված կհրավիրի և կհամոզի: Աստված սիրով և ոգեշնչմամբ անընդհատ կփորձի համոզել մեզ: Բայց Աստված երբեք չի պարտադրի, որը կխաթարի մեր հավերժական զարգացման Նրա մեծ ծրագիրը:

Երկրորդ բանը, որ հավատքը չի կարող անել, դա մեր կամքը Աստծուն պարտադրելն է: Մենք չենք կարող ստիպել Աստծուն կատարելու մեր ցանկությունները՝ անկախ նրանից, թե մեր կարծիքով, որքան արդար ենք մենք կամ որքան անկեղծ ենք աղոթում: Հիշեք Պողոսի պատմությունը, ով բազմաթիվ անգամներ աղաչում էր Տիրոջն ազատել իրեն անձնական տանջանքներից, որը նա կոչում էր «մարմնի խայթ»: Բայց դա Աստծո կամքը չէր: Ի վերջո, Պողոսը հասկացավ, որ իր փորձությունն օրհնություն էր, և նա շնորհակալություն հայտնեց Աստծուն, որ Նա չպատասխանեց իր աղոթքներին իր ուզած ձևով:[6]

Վստահություն և հավատք

Ոչ, հավատքի նպատակը Աստծո կամքը *փոխելը* չէ, այլ մեզ արտոնելն է *գործելու* ըստ Աստծո կամքի: Հավատքը վստահություն է՝ վստահություն, որ Աստված տեսնում է այն, ինչ մենք չենք կարող տեսնել, և Նա գիտի այն, ինչ մենք չգիտենք:[7] Մեր հասկացողությանը և դատողությանն ապավինելը, երբեմն, բավական չէ:

Ես սովորել եմ սա, երբ օդաչու էի՝ այն օրերին, երբ ստիպված էի թռչել թանձր մառախուղի և ամպերի միջով և տեսնել միայն մի քանի մետր: Ես ստիպված էի ապավինել այն գործիքներին, որոնք ասում էին ինձ, թե որտեղ եմ գտնվում և ուր պիտի գնամ: Ես ստիպված էի լսել օդային երթևեկության վերահսկիչի ձայնը: Ես ստիպված էի հետևել այն մարդու առաջնորդությանը, ով ուներ ավելի ճշգրիտ տեղեկություններ, քան ես: Մի մարդու, ում չէի տեսել, բայց ում ես սովորել էի վստահել: Մի մարդու, ով կարող էր տեսնել այն, ինչ ես չէի կարող տեսնել: Ես ստիպված էի վստահել և գործել, որպեսզի ապահով ժամանեի նշանակման վայրը:

Հավատքը նշանակում է, որ մենք ոչ միայն վստահում ենք Աստծո իմաստությանը, այլև Նրա սիրուն: Դա վստահություն է, որ Աստված մեզ կատարելապես սիրում է, որ այն ամենն, ինչ Նա անում է՝ Նրա տված և ժամանակավոր պահված ամեն օրհնություն, մեր հավերժական երջանկության համար է:[8]

Այս տեսակի հավատքի շնորհիվ, երբ մենք միգուցե չհասկանանք, թե ինչու են որոշ բաներ կատարվում կամ ինչու որոշ աղոթքներ չեն ստանում իրենց պատասխանը, մենք կիմանանք, որ վերջում ամեն բան կհասկանանք: «Աստուծուն սիրողներին ամեն բաները գործակից [կլինեն] դէպի բարին նորանց»:[9]

Ամեն ինչ արդար կլինի: Ամեն ինչ լավ կլինի:

Մենք կարող ենք համոզված լինել, որ պատասխանը կգա և կարող ենք վստահ լինել, որ ոչ միայն գոհ կլինենք պատասխանով, այլ նաև կլցվենք մեր՝ Իր զավակների հանդեպ Երկնային Հոր շնորհով, ողորմածությամբ, առատաձեռնությամբ ու սիրով:

Պարզապես շարունակեք բախել

Մինչ այդ, մենք կքայլենք մեր ունեցած հավատքով[10] և անընդհատ կձգտենք մեծացնել մեր հավատքը: Երբեմն դա հեշտ ձգտում չէ: Այն մարդիկ, ովքեր անհամբեր են, նվիրված չեն կամ անհոգ են, կարող են հավատքը ոչ նյութական համարել: Այն մարդիկ, ովքեր հեշտությամբ հիասթափվում կամ շեղվում են, դժվար թե հավատք ձեռք բերեն: Հավատքը տրվում է խոնարհ, ջանասեր և համբերող մարդկանց:

Այն տրվում է բոլոր նրանց, ովքեր վճարում են հավատարմության գինը:

Այդ ճշմարտությունը լուսաբանվում է երկու երիտասարդ միսիոներների փորձառության մեջ, ովքեր ծառայում էին Եվրոպայում, մի տարածքում, որտեղ նորադարձների մկրտությունները քիչ էին: Կարծում եմ, որ նրանք ողջամտորեն մտածում էին, որ իրենց կատարած գործերը մեծ փոփոխություն չէին ունենա տարածքի համար:

Բայց այդ երկու միսիոներներն ունեին *հավատք,* և նրանք նվիրված էին: Նրանց դիրքորոշումն այն էր, որ եթե ոչ ոք չլսեր նրանց ուղերձը, ապա դա չէր նշանակի, որ նրանք լավագույնս չէին ջանացել:

Մի օր նրանք զգացին, որ պետք է մոտենան լավ պահպանվող չորս հարկանի մի բազմաբնակարան շենքի: Նրանք սկսեցին առաջին հարկից և թակեցին բոլոր դռները՝ ներկայացնելով Հիսուս Քրիստոսի և Նրա Եկեղեցու Վերականգնման փրկության իրենց ուղերձը:

Առաջին հարկի ապրողներից ոչ ոք չլսեց նրանց:

Որքան հեշտ կլիներ ասել. «Մենք փորձեցինք: Արի կանգ առնեք այստեղ և գնանք փորձենք մեկ այլ շինության մեջ»:

Սակայն այդ երկու միսիոներներն ունեին *հավատք* և պատրաստ էին *աշխատել,* հետևաբար, նրանք թակեցին երկրորդ հարկի բոլոր դռները:

Կրկին անգամ ոչ ոք չլսեց նրանց:

Բազմաբնակարանային շենքը Գերմանիայում, որտեղ երկու հավատարիմ միսիոներ թակեցին բոլոր դռները:

Երրորդ հարկում նույն բանն էր: Չորրորդ հարկում նույնպես, մինչև որ վերջապես նրանք թակեցին չորրորդ հարկի վերջին դուռը:

Երբ այդ դուռը բացվեց, մի երիտասարդ աղջիկ ժպտաց նրանց և խնդրեց սպասել, մինչ կխոսեր իր մայրիկի հետ:

Նրա մայրը, ով դեռևս 36 տարեկան էր, վերջերս էր կորցրել ամուսնուն և տրամադրություն չուներ խոսելու մորմոն միսիոներների հետ: Եվ ասաց դստերը, որ ճանապարհ դներ նրանց:

Սակայն դուստրը խնդրեց նրան: Այս երիտասարդներն այնքան բարի են, ասաց նա: Եվ դա մեզանից միայն մի քանի րոպե կպահանջի:

Այսպիսով, մայրը դժկամությամբ համաձայնվեց: Միսիոներները կիսվեցին իրենց ուղերձով և մի գիրք հանձնեցին մորը կարդալու համար՝ Մորմոնի Գիրքը:

Նրանց հեռանալուց հետո մայրը որոշեց, որ գոնե մի քանի էջ պետք է կարդար:

Մի քանի օրում նա կարդաց ամբողջ գիրքը:

Դրանից շատ չանցած, այս ընտանիքը մտավ մկրտության ջրերը:

Երբ այդ փոքր ընտանիքը հաճախեց Ֆրանկֆուրտում (Գերմանիա) գտնվող իրենց ճյուղը, մի երիտասարդ սարկավագ նկատեց դուստրերից մեկի գեղեցկությունը ու ինքն իրեն մտածեց. «Այս միսիոներները հրաշալի են աշխատում»:

Այդ երիտասարդ սարկավագի անունը Դիտեր Ուխդորֆ էր, իսկ այդ գրավիչ երիտասարդ աղջիկը, ով խնդրել էր մորը լսել միսիոներներին, ուներ մի գեղեցիկ անուն՝ Հարիեթ: Նրան սիրում են բոլորը, երբ ուղեկցում է ինձ իմ ճանապարհորդությունների ժամանակ: Ավետարանի հանդեպ իր սիրո և իր վառ անհատականության շնորհիվ նա օրհնել է շատերի կյանքը: Նա իսկապես իմ կյանքի շողն է:

Որքան հաճախ եմ խորին երախտագիտությամբ լցվել այն երկու միսիոներների հանդեպ, ովքեր կանգ չառան առաջին հարկում: Որքան հաճախ է սիրտս լցվել երախտագիտությամբ նրանց *հավատքի* և *աշխատանքի* հանդեպ: Որքան հաճախ եմ շնորհակալություն հայտնել, որ նրանք շարունակեցին մինչև չորրորդ հարկը՝ մինչև վերջին դուռը:

Այն կբացվի ձեր առաջ:

Տևական հավատքի մեր որոնումներում, Աստծո և նրա նպատակների հետ կապ հաստատելու մեր ջանքերում, եկեք հիշենք Տիրոջ խոստումը՝ «Դուռը թակեցէք եւ կ'բացուի ձեզ»:[11]

Արդյո՞ք մենք կհանձնվենք մեկ կամ երկու դուռ, մեկ կամ երկու հարկ թակելուց հետո:

Թե՞ կշարունակենք փնտրել, մինչև հասնենք չորրորդ հարկի վերջին դռանը:

Աստված «վարձահատույց է լինում նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են իրեն»,[12] բայց այդ վարձքը սովորաբար առաջին դռան հետևում չէ: Այնպես որ մենք պիտի շարունակեք թակել: Քույրե՛ր, մի հանձնվեք: Ձեր ողջ սրտով փնտրեք Աստծուն: Հավատք գործադրեք: Քայլեք արդարությամբ:

Ես խոստանում եմ, որ եթե դուք անեք դա և կատարեք ձեր հանձնարարությունը, դուք կստանաք ձեր փնտրած պատասխանը: Դուք կգտնեք հավատք: Եվ մի օր դուք կլցվեք այնպիսի մի լույսով, որն «ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»:[13]

Իմ սիրելի քույրեր՝ Քրիստոսով ինձ միացած, Աստված իրական է:

Նա ապրում է:

Նա սիրում է ձեզ:

Նա ճանաչում է ձեզ:

Նա հասկանում է ձեզ:

Նա տեղյակ է ձեր սրտի լուռ աղաչանքներին:

Նա չի հրաժարվել ձեզանից:

Նա չի լքի ձեզ:

Իմ վկայությունն ու իմ առաքելական օրհնությունն է յուրաքանչյուրիդ համար, որ ձեր սրտերում և մտքերում զգաք այդ վեհ ճշմարտությունը: Սիրելի ընկերներ, սիրելի քույրեր, ապրեք հավատքով և «[Մեր] Աստված կավելացնի Ձեզ վրա հազարապատիկ և ձեզ կօրհնի, ինչպես որ ասել է»:[14]

Ես իմ հավատքը, համոզմունքը և իմ վստահ ու անսասան վկայությունն եմ արտահայտում, որ սա Աստծո աշխատանքն է: Մեր սիրելի Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Քույր Հերիեթ Ուխդորֆը (կենտրոնում) երիտասարդ տարիքում իր մոր, քրոջ և լիաժամկետ միսիոներների հետ:

Քույր Ուխդորֆը ուղեկցում է Նախագահ Ուխդորֆին նրա այցերի ընթացքում և օրհնում է կյանքեր, կիսվելով ավետարանի հանդեպ իր սիրով:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Դիտեր Ֆ. Ուխդորֆի, «Վկայելու հնարավորությունը», *Լիահոնա,* նոյ. 2004, 74, *Քույր Էթերնալ* (2005):
2. Եբրայեցիս 11.1, Նոր միջազգային տարբերակ (1984):
3. Ա Կորնթացիս 2.14, Նոր միջազգային տարբերակ (2011).
4. Antoine de Saint-Exupéry, *The Little Prince,* trans. Richard Howard (2000), 63.
5. Տես Եբրայեցիս 11.3, 5, 29, 35, Եթեր 12.30, Մովսես 7.13:
6. Տես Բ Կորնթացիս 12.7–10:
7. Տես Եսայիա 55.8–9:
8. Տես 2 Նեփի 26.24:
9. Տես Հռովմեացիս 8.28:
10. Տես Բ Կորնթացիս 5.7:
11. Մատթեոս 7.7
12. Եբրայեցիս 11.6, Նոր միջազգային տարբերակ (1984):
13. Վարդապետություն և Ուխտեր 50.24
14. Երկրորդ օրինաց 1.11, Նոր միջազգային տարբերակ (2011):

Շաբաթ առավոտյան նիստ | 1 հոկտեմբերի, 2016թ.

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին նախագահության երկրորդ խորհրդական

Օ՜հ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը

Մենք շրջապատված ենք լույսի ու ճշմարտության այնպիսի զարմանալի առատությամբ, որ մտածում եմ, թե արդյո՞ք մենք իսկապես գնահատում ենք մեր ունեցածը:

Որքա՜ն օրհնված ենք մենք, որ կարող ենք կրկին անգամ հավաքվել այս համաշխարհային համաժողովին՝ մեր սիրելի մարգարե և Նախագահ, Թոմաս Ս. Մոնսոնի առաջնորդությամբ և ղեկավարությամբ: Նախագահ, մենք սիրում ենք Ձեզ ու մեր ողջ սրտով աջակցում ենք Ձեզ:

Որպես օդաչու իմ մասնագիտական կյանքում ես մեծապես ապավինում էի համակարգչային համակարգերի ճշգրտությանն ու հուսալիությանը, սակայն հազվադեպ էի աշխատում իմ անձնական համակարգչով: Աշխատանքիս վայրում, լինելով ղեկավար պաշտոնում, ես ունեի օգնականներ ու քարտուղարներ, ովքեր սիրով օգնում էին ինձ աշխատանքիս մեջ:

Այդ ամենը փոխվեց, երբ 1994թ-ին ես կանչվեցի ծառայելու որպես բարձրագույն իշխանավոր: Ծառայությանս բերումով սպասավորելու հրաշալի հնարավորություններ ունեի, սակայն այն ընդգրկում էր նաև Եկեղեցու գրասենյակային հսկայական աշխատանք՝ ավելին, քան երբևէ կարող էի պատկերացնել:

Իմ կյանքում առաջին անգամ ստիպված էի խորասուզվել այդ տարօրինակ, հետաքրքիր և անհասկանալի աշխարհում:

Սկզբում համակարգիչն ու ես չէինք հաշտվում իրար հետ:

Հասկացող մարդիկ փորձեցին սովորեցնել ինձ, թե ինչպես օգտվել համակարգչից: Բառացիորեն կանգնելով իմ ետևում, նրանք ուսերիս վրայով իրենց մատներն արագորեն սահեցնելով ստեղների վրայով, հարվածային սիմֆոնիա էին նվագում:

«Տեսնո՞ւմ եք», — հպարտորեն ասում էին նրանք: «Այդպես պետք է անեք»:

Ես չէի տեսնում: Այդ փոփոխությունը շատ բարդ էր:

Ես շատ դժվար էի սովորում աշխատել համակարգչի վրա:

Շատ ժամանակ, կրկնություն, համբերություն, մեծ հույս ու հավատ, կնոջս կողմից մեծ հավաստիացում և մեծ քանակությամբ դիետիկ գազավորված ըմպելիք պահանջվեց այն սովորելու համար:

Այժմ, 22 տարի անց, ես շրջապատված եմ համակարգչային տեխնոլոգիայով: Ես ունեմ է-փոստի հասցե, Twitter-ի և Facebook-ի էջ: Ես ունեմ սմարթֆոն, թաբլեթ, դյուրակիր համակարգիչ և թվային ֆոտոխցիկ: Եվ թեև իմ հմտություններն այդքան էլ չի կարելի համեմատել յոթ տարեկան երեխայի ունեցած հմտությունների հետ, կարծում եմ, որ յոթանասունն անց մարդու համար այնքան էլ վատ չէ:

Սակայն, մի հետաքրքիր բան եմ նկատել: Որքան շատ եմ յուրացնում տեխնոլոգիան, այդքան ավելի քիչ եմ սկսում գնահատել այն:

Մարդկության պատմության հիմնական ժամանակաշրջանում հաղորդակցությունը զարգացել է ձիու վարգին համընթաց: Նամակ ուղարկելն ու ստանալը տևում էր օրեր և նույնիսկ ամիսներ: Այսօր մեր նամակները ճամփորդում են

հազարավոր կիլոմետրեր երկնքով կամ հազարավոր մետրեր օվկիանոսի տակ, որպեսզի հասնեն աշխարհի մյուս ծայրում գտնվող մարդուն, և եթե նույնիսկ մի քանի վայրկյան ուշանում է, մենք զայրանում ու անհամբեր ենք դառնում:

Կարծես մարդկային բնույթն է այդպես, երբ մենք ավելի շատ ենք ճանաչում որևէ բան, նույնիսկ հրաշագործ ու ակնածանք ներշնչող, մենք կորցնում ենք հարգանքի զգացումը և դրան վերաբերվում որպես սովորական մի բանի:

Արդյո՞ք մենք քիչ ենք գնահատում հոգևոր ճշմարտությունները:

Ժամանակակից տեխնոլոգիաները և հարմարությունները քիչ գնահատելը համեմատաբար փոքր խնդիր է: Սակայն, դժբախտաբար, մենք երբեմն նմանատիպ վերաբերմունք ենք ունենում Հիսուս Քրիստոսի ավետարանի հավերժական և հոգին ընդարձակող վարդապետության նկատմամբ: Հիսուս Քրիստոսի Եկեղեցում մեզ շատ է տրված: Մենք շրջապատված ենք լույսի ու ճշմարտության այնպիսի զարմանալի առատությամբ, որ մտածում եմ, թե արդյո՞ք մենք իսկապես գնահատում ենք մեր ունեցածը:

Հիշեք այն վաղ օրերի աշակերտներին, ովքեր քայլել և խոսել են Փրկիչի հետ Նրա երկրային ծառայության ժամանակ: Պատկերացրեք այն երախտագիտությունն ու ակնածանքը, որոնցով հավանաբար պիտի ողողվեր նրանց սրտերն ու լցվեր նրանց մտքերը, երբ տեսան, որ Նա բարձրացել է գերեզմանից, երբ նրանք շոշափեցին Նրա ձեռքերի սպիները: Նրանց կյանքն այլևս նույնը չպիտի լիներ:

Հիշեք այս տնտեսության վաղ օրերի Սրբերին, ովքեր ճանաչում էին Մարգարե Ջոզեֆ Սմիթին և լսել էին վերականգնված ավետարանի մասին նրա քարոզը: Պատկերացրեք նրանց զգացումները, երբ իմացան, որ երկնքի ու երկրի միջև վարագույրը կրկին անգամ պատռվել է՝ լույս ու գիտելիք սփռելով աշխարհի վրա մեր սելեստիալ տնից:

Բայց ամենից շատ, հիշեք, թե ինչ եք զգացել, երբ առաջին անգամ դուք իմացաք ու հասկացաք, որ իսկապես Աստծո զավակն եք, որ Հիսուս Քրիստոսն իր ցանկությամբ տառապեց *ձեր* մեղքերի համար, որ նորից մաքուր լինեք, որ քահանայության զորությունն իրական է և կարող է ձեզ կապել ձեր սիրելիների հետ՝ ժամանակի և հավերժության համար, որ այսօր կա ապրող մարգարե երկրի վրա: Արդյո՞ք դա հրաշալի ու զարմանահրաշ չէ:

Այդ ամենը հաշվի առնելով, ինչպե՞ս է հնարավոր, որ մենք բոլորս ոգևորությամբ չենք հաճախում մեր Եկեղեցու երկրպագության ժողովներին: Կամ հոգնում ենք սուրբ գրությունների ուսումնասիրությունից: Ենթադրում եմ, որ սա կարող է լինել միայն այն դեպքում, եթե մեր սրտերը *անզգայացել են* և երախտագիտություն ու հարգանք չեն տածում Աստծո շնորհած սրբազան ու վեհ պարգևների հանդեպ: Մենք հեշտ ու արագ կարող ենք բացել կյանք փոխող ճշմարտությունները, բայց հաճախ մենք քնում ենք աշակերտության ճանապարհին: Հաճախ Եկեղեցու մեր անդամների թերությունների պատճառով շեղվում ենք, փոխանակ հետևելու մեր Վարդապետի օրինակին: Մենք քայլում ենք ադամանդապատ ուղիով, սակայն հազիվ ենք զանազանում դրանք հասարակ քարերից:

Ծանոթ ուղերձ

Երբ երիտասարդ էի, ընկերներս հարցնում էին հավատքիս մասին: Հաճախ ես սկսում էի բացատրել տարբերությունները, օրինակ՝ Իմաստության խոսքը: Երբեմն, մատնանշում էի նմանություն քրիստոնեական այլ եկեղեցիների հետ: Այդ ամենը նրանց վրա տպավորություն չէր թողնում: Բայց, երբ ես խոսում էի Իր զավակների համար Երկնային Հոր մեծ ծրագրի մասին, նրանք ուշադիր լսում էին:

Հիշում եմ, երբ մեր հավաքատանը՝ Ֆրանկֆուրտում (Գերմանիա), դասարանում փորձում էի նկարել փրկության ծրագիրը գրատախտակին: Ես շրջաններ էին նկարում, որոնք խորհրդանշում էին նախաերկրային կյանքը, մահկանացու կյանքը և այս կյանքից հետո մեր Երկնային Հոր մոտ վերադարձը:

Պատանեկության տարիներին սիրում էի կիսվել այդ ոգևորիչ ուղերձով: Երբ իմ պարզ բառերով բացատրում էի այդ սկզբունքները, սիրտս երախտագիտությամբ էր լցվում Աստծո հանդեպ, ով սիրում էր Իր զավակներին և Փրկիչի հանդեպ, ով մահից ու դժոխքից փրկեց բոլորիս: Ես հպարտանում էի սիրո, ուրախության և հույսի այդ ուղերձով:

Ընկերներիցս ոմանք ասում էին, որ այդ ուղերձը ծանոթ է իրենց, թեև այդպիսի բաներ չէին ուսուցանվել նրա կրոնի դասերին: Կարծես դա մի բան էր, որի ճշմարիտ լինելու մասին նրանք միշտ իմացել էին, , կարծես ես պարզապես լույս էի սփռում մի բանի վրա, որն արդեն մշտապես և խորապես ամրապնդվել էր նրանց սրտերում:

Մենք ունենք պատասխանները:

Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր մարդ իր սրտում ունի կյանքին վերաբերող հիմնարար հարցեր: Որտեղի՞ց եմ գալիս: Ինչո՞ւ եմ այստեղ: Ի՞նչ տեղի կունենա իմ մահից հետո:

Այս տեսակի հարցեր մարդիկ ունեին դեռևս հին ժամանակներից: Փիլիսոփաները, գիտնականները և իմաստուններն իրենց կյանքն ու ունեցվածքը վատնել են այդ

հարցերի պատասխանները գտնելու ակնկալիքով:

Ես երախտապարտ եմ, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը պատասխանում է կյանքի ամենաբարդ հարցերին: Այդ պատասխաններն ուսուցանվում են Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Դրանք ճշմարիտ, պարզ, շիտակ են և հեշտ են ընկալվում: Դրանք ոգեշնչված են և մենք ուսուցանում ենք դրանք մեր երեք տարեկան երեխաներին՝ շողակաթի դասարանում:

Եղբայրներ և քույրեր, մենք հավերժական էակներ ենք, առանց սկզբի ու վերջի: Մենք միշտ գոյություն ենք ունեցել:[1] Բառացիորեն, մենք հանդիսանում ենք աստվածային, անմահ, ամենազոր ծնողների զավակները:

Մենք սերում ենք Տեր Աստծո երկնային արքունիքից: Մենք պատկանում ենք Էլոհիմի՝ Ամենաբարձրյալ Աստծո թագավորական տանը: Մեր նախաերկրային կյանքում մենք քայլել ենք նրա հետ: Մենք լսել ենք Նրա ձայնը, նրա վկայությունն իր վեհության մասին և իմացել Նրա ուղիները:

Մենք մասնակցել ենք Մեծ Խորհրդին, որտեղ մեր սիրելի Հայրը ներկայացրել է Իր ծրագիրը մեզ համար, որ մենք կգանք երկիր, կստանանք մահկանացու մարմիններ, կսովորենք զանազանել չարը բարուց և աճել այնպես, որն այլ կերպ հնարավոր չէր լինի:

Երբ մենք անցանք վարագույրի միջով ու մտանք այս մահկանացու կյանք, մենք իմացանք, որ այլևս չենք հիշի նախկին կյանքը: Կլինեն ընդդիմություն, ձախորդություններ ու գայթակղություններ: Բայց նաև գիտեինք, որ ֆիզիկական մարմիններ ունենալը առաջնային կարևորություն ուներ մեզ համար: Որքա՜ն էինք ուզում, որ արագ սովորենք ճիշտ ընտրություններ կատարել, դիմակայել սատանայի գայթակղություններին և ի վերջո վերադառնալ երկինք՝ մեր Սիրելի Ծնողների մոտ:

Մենք գիտեինք, որ կգործենք մեղքեր ու սխալներ, միգուցե, նույնիսկ լուրջ սխալներ: Բայց նաև գիտեինք, որ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, խոստացել էր գալ երկիր, ապրել անմեղ կյանքով և ինքնակամ ցած դնել Իր կյանքը հավերժական զոհաբերությամբ: Մենք գիտեինք, որ եթե մեր սիրտը նվիրենք Նրան, վստահենք Նրան և մեր սրտի ողջ կորովով ձգտենք քայլել աշակերտության ուղիով, մենք կկարողանանք մաքրվել և կրկին անգամ մտնել մեր սիրելի Երկնային Հոր ներկայությունը:

Այսպիսով, Հիսուս Քրիստոսի զոհաբերության հանդեպ հավատքով, դուք և ես մեր ազատ կամքով ընդունեցինք Երկնային հոր ծրագիրը:

Դա է պատճառը, որ մենք այստեղ ենք, այս գեղեցիկ երկիր մոլորակի վրա, որովհետև Աստված տվեց մեզ հնարավորություն և մենք ընդունեցինք այն: Սակայն մեր մահկանացու կյանքը ժամանակավոր է և կվերջանա մեր ֆիզիկական մարմնի մահանալուց հետո: Սակայն ձեր և իմ էությունը չի կործանվի: Մեր հոգիները կշարունակեն ապրել ու սպասել Հարությանը՝ մի անվճար պարգև բոլորին մեր սիրելի Երկնային Հոր և Նրա Որդի՝ Հիսուսի Քրիստոսի կողմից:[2] Հարության ժամանակ մեր հոգիներն ու մարմինները կվերամիավորվեն և զերծ կլինեն ցավից ու ֆիզիկական թերություններից:

Հարությունից հետո կգա դատաստանի օրը: Թեև՝ վերջում բոլորը կփրկվեն ու կժառանգեն փառքի արքայություն, այն մարդիկ, ովքեր վստահում են Աստծուն և ձգտում են հետևել Նրա օրենքներին ու արարողություններին, կժառանգեն կյանք այն հավերժություններում, որոնք աներևակայելի են իրենց փառքով ու ճնշող՝ իրենց վեհությամբ:

Դատաստանի այդ օրը կլինի ողորմածության և սիրո օր՝ մի օր, երբ կոտրված սրտերը կբուժվեն, երբ վշտի արցունքները կփոխարինվեն երախտագիտության արցունքներով, երբ ամեն բան արդար կդառնա:[3]

Այո՛, կլինի խորը վիշտ մեղքի պատճառով: Այո՛, մեր սխալների, հիմարությունների և կամակորությունների պատճառով կլինի ափսոսանք ու նույնիսկ տառապանք, որոնք պատճառ կհանդիսանան, որ մենք կորցնենք ավելի մեծ ապագայի մեր հնարավորությունը:

Սակայն ես վստահ եմ, որ մենք ոչ միայն չենք բավարարվի Աստծո դատաստանով, մենք նաև կապշենք ու կզարմանանք մեր՝ Իր զավակների հանդեպ Նրա անսահման շնորհով, ողորմածությամբ, առատաձեռնությամբ ու սիրով: Եթե մեր ցանկություններն ու գործերը բարի են, եթե մենք հավատում ենք կենդանի Աստծուն, ապա կարող ենք անհամբերությամբ սպասել նրան, ինչը Մորոնին անվանել է. «Եհովայի՝ Հավերժական Դատավորի հաճելի դատարանի առջև»:[4]

Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նորա բոլոր բարութեան համար, որ ինձ արաւ

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, իմ սիրելի ընկերներ, արդյո՞ք դա մեր սրտերն ու մտքերը չի լցնում զարմանքով ու ակնածանքով մեր Երկնային Հոր երջանկության մեծ ծրագրի հանդեպ, որը Նա պատրաստել է մեզ համար: Արդյո՞ք չենք ապրում անասելի ուրախություն, երբ իմանում ենք մեր փառահեղ ապագայի մասին, որը նախապատրաստված է բոլոր նրանց համար, ովքեր սպասում են Տիրոջը:

Եթե այդպիսի զարմանք ու ուրախություն չեք զգացել, ես հրավիրում եմ ձեզ փնտրել, ուսումնասիրել ու խորհել վերականգնված ավետարանի պարզ, բայց խորիմաստ ճշմարտությունները: «Թող հավերժության հանդիսավոր բաները հանգչեն ձեր մտքերում»:[5] Թող դրանք վկայեն ձեզ փրկության աստվածային ծրագրի մասին:

Եթե նախկինում այդ բաները զգացել եք, ես հարցնում եմ ձեզ

այսօր. «Այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում»:[6]

Վերջերս հնարավորություն ունեցա ճամփորդել Բելֆաստ (Հյուսիսային Իռլանդիա): Այնտեղ ես տեսա Բելֆաստի զինանշանը, որի վրա հետևյալ կարգախոսն էր՝ «Pro tanto quid retribuamus» կամ «Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նորա բոլոր բարութեան համար, որ ինձ արաւ»:[7]

Ես հրավիրում եմ բոլորիս մտածել այս հարցի շուրջ: Ինչպե՞ս կհատուցենք Աստծուն այն լույսի ու ճշմարտության համար, որը Նա հեղում է մեզ վրա:

Մեր սիրելի Հայրը պարզապես խնդրում է, որ մենք ապրենք այն ճշմարտությամբ, որը մենք ստացել ենք և հետևենք Նրա տված ուղուն: Հետևաբար, եկեք լինենք խիզախ, վստահենք Հոգու առաջնորդությանը և եկեք խոսքով ու գործով մեր ընկերների հետ կիսվենք Աստծո երջանկության ծրագրի զարմանալի ու ակնածանք ներշնչող պատգամով: Թող որ մեր շարժառիթը լինի Աստծո և Նրա զավակների հանդեպ սերը, քանի որ նրանք մեր եղբայրներն ու քույրերն են: Մեր այդ քայլով կարող ենք սկիզբը դնել այն հատուցման, որի համար մենք այդքան շատ ենք ստանում:

Մի օր «ամեն ծունկ կծալվի ու ամեն լեզու կխոստովանի», որ Աստծո ճանապարհներն արդար են, և Նրա ծրագիրը կատարյալ է:[8] Թող որ այդ օրը մեզ համար լինի այսօր: Եկեք հին օրերի Հակոբի հետ հռչակենք. «Օ՜հ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը»:[9]

Այդ մասին եմ ես վկայում եմ մեր Երկնային Հոր հանդեպ խորին երախտագիտությամբ և թողնում եմ իմ օրհնությունը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.29:
2. Տես Հովհաննես 5.28–29:
3. Տես Հայտնություն 21.4:
4. Մորոնի 10.34:
5. Վարդապետություն և Ուխտեր 43.34:
6. Ալմա 5.26:
7. Տես Սաղմոս 116.12:
8. Մոսիա 27.31:
9. 2 Նեփի 9.13, տես նաև 8–12, 14–20 հատվածները:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորում

«Եկ հետևիր ինձ»՝ կիրառելով քրիստոնեական սերն ու ծառայությունը

Որպես Փրկիչի վերջին օրերի աշակերտներ, մենք մոտենում ենք Նրան, երբ սիրում ու ծառայում ենք Աստծո զավակներին:

Ռոբելյան մրցանակի դափնեկիր Էլի Վիզելը բաց սրտի վիրահատությունից հետո ապաքինվում էր հիվանդանոցում, երբ նրան այցելեց իր հինգ տարեկան թոռնիկը: Երբ տղան նայեց իր պապիկի աչքերին, զգաց նրա ցավը: Նա հարցրեց. «Պապիկ, եթե ես քեզ ավելի շատ սիրեմ, արդյո՞ք քո [ցավը կպակասի»:[1] Այսօր, ես նմանատիպ հարց եմ հղում յուրաքանչյուրիս. «Եթե մենք Փրկիչին ավելի շատ սիրենք, արդյո՞ք մեր տառապանքը քիչ կլինի»:

Երբ Փրկիչը կոչ արեց իր աշակերտներին հետևել Իրեն, նրանք ապրում էին Մովսեսի օրենքով,կիրառելով «աչքի տեղ աչք, և ատամի տեղ ատամ» օրենքը,[2] սակայն Փրկիչը եկավ իրականացնելու այդ օրենքն իր Քավության շնորհիվ: Նա նոր վարդապետություն ուսուցանեց. «Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. Բարի արէք ձեզ ատողներին. Եւ աղօթք արէք ձեզ չարչարողների եւ ձեզ հալածողների համար»:[3]

Աշակերտներին ուսուցանվեց շրջվել բնական մարդու ուղիներից դեպի Փրկիչի սիրող ու հոգատար ուղիները և փոխարինել հակառակությունը ներողամտությամբ, բարությամբ ու կարեկցանքով: «Իրար սիրելու»[4] պատվիրանը դժվար է պահել: Երբ աշակերտները մտահոգություն հայտնեցին մեղավորների ու ժողովրդի որոշակի խավերի հետ շփվելու վերաբերյալ, Փրկիչը համբերությամբ ուսուցանեց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[5] Կամ ինչպես Մորմոնի Գրքի մարգարեն է բացատրել. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»:[6]

Որպես Փրկիչի վերջին օրերի աշակերտներ, մենք մոտենում ենք Նրան, երբ սիրում ու ծառայում ենք

Աստծո զավակներին: Անելով դա մենք չենք խուսափում նեղություններից, չարչարանքներից և մարմնական տանջանքներից, բայց մենք ավելի քիչ կտառապենք հոգեպես: Նույնիսկ մեր փորձություններում մենք կունենանք ուրախություն ու խաղաղություն:

Քրիստոնեական մեր սերն ու ծառայությունը սկսվում է մեր տներում: Դո՛ւք ծնողներ, կանչված եք լինելու սիրող ուսուցիչներ ու միսիոներներ ձեր երեխաների և երիտասարդության համար: Նրանք ձեր լսողներն են: Դուք պատասխանատվություն եք կրում նրանց դարձի համար: Իրականում, մենք բոլորս ենք ձգտում դարձի գալ, որը նշանակում է լցվել Փրկիչի սիրով:

Երբ հետևում ենք Հիսուս Քրիստոսին, Նրա սերը նպաստում է, որ մենք աջակցենք միմյանց մեր մահկանացու ճամփորդության ժամանակ: Մենք դա չենք կարող անել մենակ:[7] Ես նախկինում պատմել եմ այս «կվակերական» ասացվածքը. «Դու բարձրացրու ինձ, ես բարձրացնեմ քեզ և մենք կբարձրանանք միասին հավերժորեն»:[8] Որպես աշակերտներ մենք սկսում ենք անել դա մեր մկրտությունից սկսած, երբ ցույց ենք տալիս, որ հոժար ենք «կրելու մեկս մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն»:[9]

«Ուսուցանել միմյանց արքայության վարդապետությունը»[10] սեր ցույց տալու և ծառայելու մի այլ եղանակ է: Ծնողներ, տատիկներ ու պապիկներ, մենք հակված ենք ողբալու աշխարհի վիճակը, որ դպրոցները բարոյական դաստիրակություն չեն ապահովում: Բայց կան շատ բաներ, որոնք *մենք* կարող ենք անել: *Մենք* կարող ենք օգտվել պատեհ առիթներն օգտագործելու հնարավորությունից և ուսուցանել մեր ընտանիքներին, այսինքն՝ այժմ: Մի կորցրեք այդպիսի հնարավորությունը: Երբ պահը գալիս է և ունեք հնարավորություն կիսվելու ավետարանի և կյանքի դասերի մասին ձեր մտքերով, ամեն ինչ դադարեցրեք, նստեք և զրուցեք ձեր զավակների ու թոռների հետ:

Մենք չպիտի մտահոգվենք, որ ավետարանի մասնագիտացված ուսուցիչներ չենք: Դասավանդման

ոչ մի խումբ կամ ձեռնարկ այդքան օգտակար չէ, որքան սուրբ գրությունների մեր անձնական ուսումնասիրությունը, աղոթքը, խորհելը և Հոգու առաջնորդություն փնտրելը: Սուրբ Հոգին ձեզ կառաջնորդի: Ես խոստանում եմ ձեզ, որ ծնող լինելու կոչումն ընդգրկում է ուսուցանելու այն պարգևը, որը ճիշտ է ձեզ և ձեր երեխաների համար: Հիշեք, որ մեզ վրա ճիշտ ներգործելու Աստծո զորությունը Նրա սերն է: «Մենք սիրում ենք նրան, քանի որ առաջինը Նա սիրեց մեզ»:[11]

Դո՛ւք երիտասարդներ, մեր ավետարանի ամենարդյունավետ ուսուցիչներն եք: Դուք հաճախում եք Եկեղեցի սովորելու համար և գնում ձեր տները՝ ուսուցանելու ձեր ընտանիքներին, հարևաններին և ընկերներին: Մի վախեցեք: Հավատ ունեցեք վկայելու այն, ինչն ըստ ձեզ ճիշտ է: Հիշեք, թե ինչպես են լիաժամկետ միսիոներներն աճում, քանի որ նրանք հավատարմորեն ապրում են սրբագործված կյանքով՝ օգտագործելով իրենց ժամանակը, տաղանդները և, բերելով իրենց վկայությունները, ծառայում ու օրհնում են ուրիշներին: Երբ կիսվեք ավետարանի մասին ձեր վկայությամբ, ձեր հավատը կաճի և ձեր վստահությունը կմեծանա:

Քրիստոնեության ամենաազդեցիկ ծառայություններից մի քանիսը մատուցվում են ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրությամբ, ընտանեկան աղոթքներով և ընտանեկան խորհրդի ժողովներով: Ավելի քան հարյուր տարի Եկեղեցու ղեկավարները կոչ են անում մեզ յուրաքանչյուր շաբաթ ժամանակ հատկացնել մեր ընտանիքներին: Բայց մեզանից շատերը դեռևս կորցնում են այդ օրհնությունները: Ընտանեկան երեկոները դասախոսություններ չեն հոր և մոր կողմից: Դա մեր ընտանիքին հատկացված ժամանակն է, որտեղ կիսվում ենք հոգևոր պարզ հասկացողություններով և փորձառություններով, օգնում ենք մեր երեխաներին սովորել հոգ տանել, կիսվել, միասին ուրախ ժամանակ անցկացնել, միասին վկայություն բերել, աճել ու զարգանալ միասին: Երբ ամեն երկուշաբթի անցկացնենք ընտանեկան երեկոներ, միմյանց հանդեպ մեր սերը ավելի կամրապնդվի և մենք ավելի քիչ կտառապենք:

Եկեք հիշենք, որ ամենակարևոր աշխատանքը, որ անում ենք մեր ընտանիքներում, Սուրբ Հոգու զորության միջոցով է: Երբ բարկացած բարձրացնում ենք մեր ձայնը, Հոգին հեռանում է մեզանից և մեր ընտանիքներից: Երբ սիրով ենք խոսում, Հոգին ուղեկցում է մեզ: Եկեք հիշենք, որ մեր երեխաներն ու թոռները մեր սերը չափում են այն ժամանակով, թե որքան ենք մենք նրանց հատկացրել: Բոլորից առավել, մի կորցրեք համբերությունը և մի հանձնվեք:

Սուրբ գրություններում կարդում ենք, որ երբ Երկնային Հոր հոգևոր զավակներից ոմանք չեն ցանկանում հետևել Նրա ծրագրին, երկինքները լացում են:[12] Որոշ ծնողներ, ովքեր

սիրել ու դաստիարակել են իրենց երեխաներին, նույնպես լաց են լինում, երբ նրանց հասուն զավակները չեն ցանկանում հետևել Տիրոջ ծրագրին: Ի՞նչ կարող են ծնողներն անել: Մենք չենք կարող աղոթքով հետ պահել որևէ մեկի ազատ կամքը: Հիշեք անառակ որդու հորը, ով համբերատար սպասեց իր որդուն, անընդհատ հետևելով նրան, որ «[զա] ինքն իրան»: Եվ «երբ նա դեռ հեռու էր», հայրը վազեց նրա մոտ:[13] Մենք կարող ենք աղոթել առաջնորդության համար, թե երբ զրուցել, երբեմն ինչ ասել և երբ հանդարտվել: Հիշեք, որ մեր երեխաներն ու ընտանիքի անդամներն արդեն կատարել էին Փրկիչին հետևելու իրենց ընտրությունը նախամահկանացու կյանքում: Երբեմն միայն իրենց կյանքի փորձառություններով են այդ զգացմունքները կրկին արթնանում նրանց մեջ: Ի վերջո, Տիրոջը սիրելու և հետևելու ընտրությունը պետք է նրանցը լինի:

Կա մեկ այլ հատուկ ձև, որով աշակերտները ցույց են տալիս իրենց սերը Փրկիչի հանդեպ: Այսօր ես հարգանքի տուրք եմ մատուցում բոլոր նրանց, ովքեր Տիրոջը ծառայում են՝ լինելով խնամակալներ: Տերը շատ է սիրում ձեզ: Ձեր լուռ ու անընկատ ծառայությամբ դուք հետևում եք Նրան, ով խոստացել է. «Հայրը, որը տեսնում է ծածկապես, ինքը կհատուցի քեզ հայտնապես»:[14]

Հիշում եմ իմ հարևանին, ում կինը հիվանդացել էր Ալցհեյմերի հիվանդությամբ: Յուրաքանչյուր կիրակի նա օգնում էր կնոջը հագնվել Եկեղեցու ժողովների համար, սանրում էր նրա վարսերը, դիմահարդարում էր և նույնիսկ հագցնում նրա ականջողերը: Իր այդ ծառայությամբ նա օրինակ էր ծառայում մեր ծխի տղամարդկանց ու կանանց և, ի դեպ, ողջ աշխարհին: Մի օր նրա կինն ասաց նրան. «Ես պարզապես ցանկանում եմ տեսնել ամուսնուս կրկին ու լինել նրա հետ»:

Նա պատասխանեց. «Ես եմ քո ամուսինը»:

Իսկ նա մեղմորեն պատասխանեց. «Դե լավ է»:

Ես չեմ կարող խոսել խնամակալության մասին և չհիշատակել իմ

կյանքի ամենակարևոր խնամակալին, Փրկիչի հատուկ աշակերտին՝ իմ հավերժական զուգընկերոջը: Իր կարեկից հոգատարության ու սիրո միջոցով նա տվել է ամեն ինչ: Հիշում եմ նրա ձեռքերի մեղմ ու աջակցող հպումները: Ես չէի լինի այստեղ առանց նրա: Իսկ նրա հետ ես կկարողանամ համբերել մինչև վերջ ու լինել նրա հետ հավերժական կյանքում:

Եթե դուք շատ եք տառապում, ուրիշների հետ կամ մենակ, ես կոչ եմ անում, որ թույլ տաք Փրկիչին լինելու ձեր խնամակալը: Հենվեք նրա լայն բազկին:[15] Ընդունեք Նրա հավաստիացումը. «Ձեզ որբ չեմ թողնի, կգամ ձեզ մոտ», խոստանում է Նա:[16]

Եղբայրներ և քույրեր, եթե դեռևս ամբողջությամբ չենք նվիրվել, եկեք ավելի շատ հակվենք խնամակալությանը, բարությանը և սիրուն: Եկեք հրաժարվենք այն պատերազմից, որը հաճախ ընթանում է բնական մարդու սրտում և հռչակենք Քրիստոսի հոգատարությունը, սերը և խաղաղությունը:[17]

«Եթե դուք եկել եք Աստծո փառքի գիտությանը [և բարությանը]»[18] և նաև «քավությանը, որը պատրաստված էր ողջ մարդկության համար աշխարհի հիմնադրումից սկսած»,[19] «դուք մեկդ մյուսին վնասելու միտք չեք ունենա, այլ խաղաղությամբ ապրելու: . . . Եվ դուք չեք հանդուրժի, որ ձեր զավակները . . . զանց անեն Աստծո օրենքները, և կռվեն ու վիճեն միմյանց հետ: . . . Բայց դուք կսովորեցնեք նրանց . . . սիրել միմյանց և ծառայել մեկմեկու»:[20]

Իր խաչելությունից անմիջապես առաջ Փրկիչնուսուցանեց Իր առաքյալներին. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. Ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք»[21] և «եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»:[22]

Ես վկայում եմ, որ Փրկիչի իրական վերաբերմունքը մեր հանդեպ ցուցադրված է Թորվալդսենի «*Քրիստոս*» արձանի մեկնած ձեռքերում: Նա շարունակում է պարզել իր ձեռքերը[23] և գլխով նշան անել՝ «Եկ, հետևիր Ինձ»: Մենք հետևում ենք Նրան, եթե սիրում ու ծառայում ենք միմյանց և պահում Նրա պատվիրանները:

Ես իմ հատուկ վկայությունն եմ բերում, որ Նա ապրում է և սիրում է մեզ կատարյալ սիրով: Սա Նրա Եկեղեցին է: Թոմաս Ս. Մոնսոնը Նրա մարգարեն է երկրի վրա մեր օրերում: Իմ աղոթքն է, որ մենք սիրենք մեր Երկնային Հորը և Նրա Որդուն ու տառապենք ավելի քիչ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. In Elie Wiesel, *Open Heart,* trans. Marion Wiesel (2012), 70.
2. Մատթեոս 5.38:
3. Մատթեոս 5.44, տես նաև 3 Նեփի 12.44:
4. Հովհաննես 13.34:
5. Մատթեոս 25.40:
6. Մոսիա 2.17:
7. Տես Ա Կորընթացիս 12.12:
8. Վերցված է «Barefoot Boy» վիպակից, որը գրվել է J. G. Whittier-ի յոթանասուներորդ տարեդարձի առթիվ, *The Poetical Works of John Townsend Trowbridge* (1869), 227:
9. Մոսիա 18.8:
10. Վարդապետություն և Ուխտեր 88.77:
11. Ա Հովհաննես 4.19:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.26, Մովսես 7.37:
13. Ղուկաս 15.17, 20:
14. 3 Նեփի 13.4, տես նաև Մատթեոս 6.4:
15. Տես «Lean on My Ample Arm» *օրհներգ,* հմր. 120 անգլերեն հիմնարանում:
16. Հովհաննես 14.18:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 98.16:
18. Մոսիա 4.11:
19. Մոսիա 4.7:
20. Մոսիա 4.13–15:
21. Հովհաննես 13.34:
22. Հովհաննես 14.15, տես նաև Հովհաննես 15.10:
23. Տես Հակոբ 6.4:

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության
առաջին խորհրդական

Հոգու անկեղծ փափագը

Որդու անունով և Սուրբ Հոգու զորությամբ մեր Հորն ուղղված անգին աղոթքի յուրաքանչյուր վայրկյանը կարող է սրբազան լինել։

Մենք երբեք մենակ չենք մահկանացու կյանքի պայքարում մեր հանձնարարությունը կատարելիս, դժվարությունները հաղթահարելիս, հակառակորդին դիմակայելիս և մեր հարցերին պատասխան փնտրելիս։ Հիսուս Քրիստոսն առակի միջոցով ուսուցանել է. «թէ պետք է ամեն ժամանակ աղօթք անել և չձանձրանալ»։ Նա պատմեց մի դատավորի մասին, ով չէր վախենում Աստծուց և ոչ ոքից չէր ամաչում։ Մի այրի շարունակ գալիս էր նրա մոտ՝ խնդրելով արդար լինել ու պատժել իր թշնամուն։ Դատավորը որոշ ժամանակ չկամեցավ ոչինչ անել։ Սակայն նրա անկեղծ ու մշտական խնդրանքի արդյունքում դատավորը վերջապես մտածեց. «Որովհետև այս որբևայրին յոգնեցնում է ինձ, իրաւունք անեմ նորան, որ վերջապէս չգայ ինձ ձանձրացնէ»։

Այնուհետև Հիսուսը բացատրեց.

«. . . Աստուած մի՞թէ իր ընտրյալների համար իրաւունք չի անիլ, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դէպի նա . . . :

«Ասում եմ ձեզ թէ շուտով իրաւունք կանէ նորանց համար»։

Ու հետո Տերը տվեց այս հարցը. «Սակայն մարդի Որդին գալիս՝ արդեօք հաւատք կգտնէ՞ երկրի վերայ»։[1]

Աղոթքն անհրաժեշտ է հավատք զարգացնելու համար։ Երբ Տերը կրկին գա, արդյոք Նա կգտնի՞ մի ազգ, ով գիտի՝ ինչպես աղոթել հավատքով և պատրաստ է ստանալ փրկություն։ «Վասնզի ամեն ով որ Տիրոջ անունը կանչէ կապրի»։[2] Մենք սիրառատ Երկնային Հոր զավակներն ենք, և կարող ենք անհատապես հաղորդակցվել Նրա հետ, երբ աղոթում ենք «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս»[3] և այնուհետև գործել Սուրբ Հոգու հուշումների միջոցով ստացած մեր պատասխաններին համաձայն։ Մենք հավատքով աղոթում ենք, հավատքով լսում և հնազանդվում, որպեսզի կարողանանք սովորել լինել մեկ Հոր և Որդու հետ։[4]

Հավատքով ասված աղոթքը բացում է երկնքից ուղարկված փառավոր օրհնությունները ստանալու ճանապարհը։

«Խնդրեցէք և կտրուի ձեզ. որոնեցէք և կգտնէք, դուռը թակեցէք և կբացուի ձեզ։

«Որովհետև ամեն խնդրող առնում է, և որոնողը գտնում է. և դուռը թակողին կբացուի»։[5]

Եթե մենք ակնկալում ենք ստանալ, մենք պետք է խնդրենք, որոնենք ու թակենք։ Ճշմարտությունը որոնելիս՝ Ջոզեֆ Սմիթը կարդաց սուրբ գրություններում. «Եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ և չէ նախատում, և կտրուի նորան»։[6] Որպես նրա հավատքով ասված աղոթքի պատասխան, երկինքները բացվեցին։ Հայր Աստվածն ու Իր Որդին՝ Հիսուս Քրիստոսը, փառքով վայր իջան ու խոսեցին Ջոզեֆ Սմիթի հետ՝ սկսելով ժամանակների լրության տնտեսությունը։ Մեզ համար պատասխանները ներառում են՝ հրաշքով ապաքինում, զորեղ պաշտպանություն, աստվածային գիտելիք, ազատարար ներում և թանկագին խաղաղություն, որոնք ստանում ենք, երբ հավատքով հղում ենք մեր «հոգու անկեղծ փափագը»։[7]

Մենք աղոթում ենք մեր Հորը Հիսուս Քրիստոսի անունով, Սուրբ Հոգու զորությամբ, այսպիսով մեր աղոթքի մեջ ընդգրկելով Աստվածգլխի բոլոր երեք անդամներին։

Մենք աղոթում ենք մեր Երկնային Հորը և միայն Նրան, քանի որ Նա «[Աստվածն է երկնքում], որն անսահման է և հավերժական, հավիտենականությունից հավիտենականություն . . . ձևավորողը երկնքի և երկրի և բոլոր բաների, որոնք դրանց մեջ են»։ Լինելով մեր Արարիչը, Նա մեզ պատվիրաններ տվեց, որպեսզի մենք «[սիրենք և ծառայենք] իրեն՝ միակ կենդանի և ճշմարիտ Աստծուն, և որ նա միակ էակը պիտի լինի, որին [մենք] պետք է երկրպագենք»։[8]

Եթե դուք հավատով աղոթեք Երկնային Հորը, «նա կսփոփի ձեզ ձեր չարչարանքների մեջ, . . . և [դուք կվայելեք] նրա սերը»։[9] Նախագահ Հենրի Բ. Այրինգը կիսվել է այն մասին, որ իր հոր աղոթքները քաղցկեղի դեմ անհաջող պայքարում ուսուցանել են նրան Աստծո ու Իր զավակների միջև եղած սերտ հարաբերության մասին.

«Երբ ցավն ուժգնանում էր, մենք առավոտյան տեսնում էինք նրան

իր անկողնու մոտ ծնկի իջած: Նա այնքա՜ն թույլ էր անկողին վերադառնալու համար: Նա մեզ ասում էր, որ աղոթում էր, որպեսզի հարցներ Երկնային Հորը, թե ինչու պետք է այդքան տառապեր, երբ միշտ ջանացել էր բարի լինել: Նա ասաց, որ ստացավ մի ջերմ պատասխան. «Աստված խիզախ որդիների կարիք ունի»:

«Եվ այսպիսով, նա ծառայեց մինչև վերջ՝ վստահ, որ Աստված սիրում ու լսում է իրեն և կբարձրացնի իրեն: Նա օրհնված էր, որ գիտեր ու երբեք չէր մոռացել, որ սիրառատ Աստված մեզանից մի աղոթքի հեռավորության վրա է գտնվում»:[10]

Մենք աղոթում ենք Հիսուս Քրիստոսի անունով, որովհետև մեր փրկությունը Քրիստոսում է, և «ուրիշ անուն էլ չկայ երկնքի ներքև մարդկանց տրուած, որով կարելի լինի մեզ փրկուիլ»:[11] Մենք գալիս ենք Հոր մոտ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով,[12] որովհետև Նա մեր Բարեխոսն է Հոր առաջ և պաշտպանում է մեր դատը»:[13] Նա տառապեց, հեղեց Իր արյունն ու մահացավ, որպեսզի փառավորի Հորը ու Նրա ողորմածությամբ լի ներման խնդրագիրը, հղված մեզանից յուրաքանչյուրի համար, բացում է այս կյանքում խաղաղության ու գալիք կյանքում հավերժական կյանքի ձեռքբերման ճանապարհը: Նա չի ուզում, որ մենք ավելի երկար տառապենք կամ ավելի շատ փորձություններ ունենանք, քան անհրաժեշտ է մեզ: Նա ուզում է, որ մենք դիմենք Իրեն ու թույլ տանք, որ Նա թեթևացնի մեր բեռը, ամոքի մեր սիրտն ու մաքրի մեր հոգին Իր սրբազործող զորությամբ: Մենք չենք ուզում Իր անունն իզուր ասել անգիր արած ու կրկնվող բառերով: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով ասված անկեղծ աղոթքը մեր խորը սիրո, հավերժական երախտագիտության և Նրա նման աղոթելու, Նրա նման գործելու և Նրան նմանվելու մեր բուռն ցանկության արտահայտումն է:

Մենք աղոթում ենք Սուրբ Հոգու զորությամբ, որովհետև «ով խնդրում է Հոգով, խնդրում է համաձայն Աստծո կամքի»:[14] Երբ հավատքով ենք աղոթում, Սուրբ Հոգին կարողանում է առաջնորդել մեր միտքը, այնպես որ մեր խոսքերը ներդաշնակ են լինում Աստծո կամքի հետ: «Մի խնդրեք, որ վատնեք ձեր ցանկությունների վրա, այլ խնդրեք անսասան հաստատունությամբ, որ դուք չենթարկվեք ոչ մի գայթակղության, այլ որ դուք ծառայեք ճշմարիտ և կենդանի Աստծուն»:[15]

Միակ կարևոր բանն այն չէ, որ մենք գիտենանք ինչպես աղոթել, այլ հավասարապես կարևոր է, որ իմանանք ինչպես ստանալ պատասխան մեր աղոթքին, լինենք խորաթափանց, զգոն և կարողանանք պարզորոշ տեսնել ու հասկանալ Աստծո կամքն ու նպատակը մեզ համար»:[16]

Նախագահ Այրինգն ասել է. «Իմ աղոթքները ստացել են պատասխան: Այդ պատասխաններն ամենահստակն էին, երբ այն, ինչ ես էի ուզում, հանդարտեցվում էր Աստծո կամքն իմանալու անհաղթահարելի ցանկությամբ: Այդ ժամանակ է, որ սիրառատ Երկնային Հոր պատասխանը կարող է լսվել մտքում մեղմ, հանդարտ ձայնով և կարող է հաստատվել սրտում»:[17]

Երբ Փրկիչը եկավ Գեթսեմանի այգի, Նրա հոգին չափազանց վշտահար է, նույնիսկ ի մահ: Լինելով տանջանքների մեջ՝ միակ անձնավորությունը, ում կարող էր դիմել, Իր Հայրն էր: Նա խնդրեց. «Եթէ կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի»: Բայց ավելացրեց. «Սակայն ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու»:[18] Չնայած որ անմեղ էր, Փրկիչն առաջ գնաց, «տանելով ցավեր, չարչարանքներ և փորձություններ ամեն տեսակի՝ ներառյալ Իր ժողովրդի հիվանդություններն ու թուլությունները: «[Նա] տառապում է ըստ մարմնի, որպեսզի վեր առնի իր վրա իր ժողովրդի մեղքերը, որ նա կարողանա ջնջել նրանց օրինազանցությունները՝ համաձայն իր ազատման զորության»:[19] Նա երեք անգամ աղոթեց. «[Հայր], քո կամքը լինի»:[20] Բաժակը չհեռացվեց: Խոնարհ, հավատքով լի աղոթքի միջոցով Նա զորացավ, որպեսզի առաջ գնար ու իրականացներ մեր փրկությունը նախապատրաստող Իր աստվածային առաքելությունը, որպեսզի մենք կարողանայինք ապաշխարել, հավատալ, հնազանդվել ու ստանալ հավերժության օրհնությունները:

Աղոթքի միջոցով ստացած մեր պատասխանը կարող է չլինի այն, ինչ մենք կցանկանայինք: Սակայն անհանգստության պահին մեր աղոթքները դառնում են սիրո ու գորովագութ ողորմության հենարան: Աղերսանքի պահին կարող ենք զորություն ստանալ, որպեսզի առաջ գնանք ու իրականացնենք այն, ինչը նախասահմանվել է մեզ համար: Վտանգավոր ժամանակներում ապրող Իր Սրբերին Տերն ասում է. «Թող ձեր սրտերը մխիթարվեն . . . , քանզի ամեն մարմին իմ ձեռքում է. Հանգիստ եղեք և իմացեք, որ ես եմ Աստված»:[21]

Անկախ նրանից, մենք աղոթում ենք անհատապես, մեր ընտանիքներով, եկեղեցում, տաճարում կամ ուր էլ որ լինենք, անկախ նրանից, մենք աղոթում ենք կոտրված սրտով ու

փշրված հոգով՝ փնտրելով ներում, երկնային իմաստություն կամ պարզապես հարատևելու զորություն, մեր սրտերը *միշտ* լցված են՝ ուղղված առ Աստված, անդադար աղոթքով՝ մեր և մեր շրջապատում գտնվողների բարօրության համար: Անկեղծ ցանկություններն՝ արտահայտված առատ օրհնությունների և կյանքի դասերի համար երախտագիտության հոգով, մեր սրտում սերմանում են ամուր հավատք Քրիստոսի հանդեպ, «հույսի պայծառություն», «սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ»:[22]

Աղոթքն Աստծո պարգև է: Մենք երբեք չպետք է մեզ մոլորված կամ մենակ զգանք: Ես վկայում եմ, որ Որդու անունով և Սուրբ Հոգու զորությամբ մեր Հորն ուղղված անգին աղոթքի յուրաքանչյուր վայրկյանը կարող է սրբազան լինել: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսեն
Յոթանասունի Նախագահություն

«Մի ընտրյալ տեսանող կբարձրացնեմ ես»

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, ոչ միայն երկնքի պատուհանը, այլ նաև հավերժության դուռն է բաց մեզ համար:

Երբ Մորոնին առաջին անգամ եկավ Ջոզեֆ Սմիթի մոտ, նա զգուշացրեց, որ Ջոզեֆի «անունը՝ որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի մեջ»:[1] Մենք տեսել ենք այդ մարգարեության իրականացումը: Բարու և չարի միջև կռվում Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով ավետարանի վերականգնումը ոգեշնչել է հավատացյալներին, ովքեր հետևում են նրան, ինչպես նաև զայրույթ առաջացրել հակառակորդների մոտ, ովքեր մոլեգնորեն պայքարում են Սիոնի և Ջոզեֆի դեմ: Այս պայքարը նոր չէ: Այն սկսվեց, երբ երիտասարդ Ջոզեֆը ոտք դրեց Սրբազան Պուրակ և այսօր ակնհայտորեն շարունակվում է համացանցում:

Տերն անձամբ է ասել Ջոզեֆ Սմիթին.

«Աշխարհի ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին, և հիմարները կծաղրեն քեզ, և դժոխքը կմոլեգնի քո դեմ.

Մինչդեռ սրտով մաքուրները և իմաստունները և ազնվահոգիները և առաքինիները, շարունակ խորհուրդ և իշխանություն և օրհնություններ պիտի փնտեն քո ձեռքի տակ»:[2]

Այսօր ես իմ վկայությունն եմ առաջարկում բոլոր նրանց, ովքեր ձգտում են ավելի լավ հասկանալ Ջոզեֆ Սմիթ Կրտսերի՝ Վերականգնման Մարգարեի սրբազան առաքելությունը:

Մենք չպետք է երկնչենք վկայել Ջոզեֆի՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող լինելու առաքելության մասին, քանի որ Տերը միշտ գործել է մարգարեների միջոցով:[3] Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված ճշմարտությունների շնորհիվ մենք շատ ավելին գիտենք մեր Երկնային Հոր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին: Մենք գիտենք Նրանց աստվածային հատկանիշների, իրար և մեր հետ ունեցած Նրանց հարաբերությունների և փրկագնման մեծ ծրագրի մասին, որը մեզ թույլ է տալիս վերադառնալ Նրանց ներկայություն:

Նախագահ Բրիգամ Յանգը Ջոզեֆի մասին ասել է. «Դեռ այս երկրի հիմնադրումից առաջ հավերժության խորհուրդներում սահմանվել էր, որ աշխարհի վերջին տնտեսությունում նա լինելու է այն անձնավորությունը, ով մարդկանց հասցնելու է Աստծո խոսքը և ստանալու է Աստծո Որդու Քահանայության բանալիների

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Luke 18:1–8; see also Joseph Smith Translation, Luke 18:8 (in Luke 18:8, footnote *a*).
2. Հռովմայեցիս 10.13:
3. Մորոնի 10:4:
4. Տես Հովհաննես 17.21–23: Փրկիչն աղոթեց, որպեսզի մենք մեկ դառնայինք Հոր և Որդու հետ և կատարելագործվեինք: Մենք Հոր և Որդու հետ միասնություն ենք ձեռք բերում, երբ հավատում ենք Քրիստոսի խոսքերին ու գործում հավատքով:
5. Մատթեոս 7.7–8:
6. Հակոբոս 1.5:
7. “Prayer Is the Soul’s Sincere Desire,” *Hymns,* no. 145.
8. Վարդապետություն և Ուխտեր 20.17, 19:
9. Հակոբ 3.1–2:
10. Henry B. Eyring, “Families and Prayer,” *Liahona,* Sept. 2015, 4.
11. Գործք Առաքելոց 4.12:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.19–20:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.3–5:
14. Վարդապետություն և Ուխտեր 46.30:
15. Մորմոն 9.28:
16. Melvin J. Ballard, “Our Channels of Power and Strength,” *Improvement Era,* Sept. 1923, 992; quoted in M. Russell Ballard, *Yesterday, Today, and Forever* (2015), 133.
17. Henry B. Eyring, “Write upon My Heart,” *Liahona,* Jan. 2001, 100.
18. Մատթեոս 26.39, տես նաև 38-րդ հատվածը:
19. Ալմա 7.11, 13:
20. Տես Մատթեոս 26.39–44:
21. Վարդապետություն և Ուխտեր 101.16:
22. 2 Նեփի 31.20:

ու զորության լրիվությունը: Տիրոջ աչքը նրա վրա էր, . . . [քանի որ] հավերժության մեջ նրա համար նախասահմանվել էր վերահսկել այս վերջին տնտեսությունը»:[4]

Որպեսզի կատարեր այս հրաշալի աշխատանքը, Ջոզեֆ Սմիթը լույս աշխարհ եկավ սիրով լի մի ընտանիքում, որի անդամները կրում էին կյանքի ամենօրյա բեռներն ու փորձությունները: Մինչ Ջոզեֆը հասունանում էր, Աստծո հանդեպ նրա զգացումները «խորն էին ու հաճախ շատ սուր»,[5] սակայն նա շփոթված էր կրոնական հակասական գաղափարների պատճառով, որոնք ուսուցանվում էին իր ժամանակի քարոզիչների կողմից: Բարեբախտաբար, երիտասարդ Ջոզեֆը թույլ չտվեց, որ իր ունեցած հարցերն իրեն հետ պահեին իր հավատքին համաձայն գործելուց: Նա պատասխաններ էր փնտրում Աստվածաշնչում և գտավ այս խորհուրդը. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ և չէ նախատում, և կտրուի նորան»:[6]

Ջոզեֆը մտաբերում է. «Սուրբ գրքի ոչ մի հատված երբևէ այդպիսի ուժով չի ազդել մարդու սրտի վրա, ինչպես այդ ժամանակ եղավ ինձ հետ: Այն ասես մեծ ուժով ներթափանցեց սրտիս զգացմունքների խորքերը: Ես նորից ու նորից վերընթերցեցի այն»:[7]

Ջոզեֆը պարզ հավատքով գործեց համաձայն այս հոգևոր զգացումների: Նա մի մեկուսի վայր գտավ, ծնկի իջավ «և սկսեց [իր] սրտի ցանկությունները հայտնել Աստծուն»:[8] Մեծ զորություն կա Ջոզեֆի նկարագրության մեջ այն մասին, ինչ տեղի ունեցավ.

«Ես տեսա արևի պայծառությունը գերազանցող լույսի մի սյուն, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ ինձ վրա:

. . . Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է*

Իմ Սիրելի Որդին։Լսի՛ր Նրան»:[9]

Ջոզեֆ Սմիթը տեսավ Աստծուն՝ Հավերժական Հորը, և Հիսուս Քրիստոսին՝ աշխարհի Փրկիչին ու Քավիչին: Սա Ջոզեֆի *Առաջին* տեսլիքն էր: Հաջորդ տարիների ընթացքում Ջոզեֆն Աստծո պարգևով ու զորությամբ թարգմանեց Մորմոնի Գիրքը: Բազմաթիվ այլ երկնային էակներ այցելեցին նրան՝ վերականգնելով դարեր առաջ կորած ճշմարտությունն ու իշխանությունը: Այս աստվածային հաղորդակցությունները, որոնք տեղի ունեցան Ջոզեֆ Սմիթի հետ, մեզ համար մատչելի դարձրեցին երկնքի օրհնություններն ու հավերժական փառքը: Ջոզեֆի կյանքը հանդիսանում է վկայություն այն մասին, որ եթե մեզանից մեկն իմաստության պակաս ունի, կարող է հավատքով խնդրել Աստծուց, և կստանա պատասխան՝ երբեմն երկնային էակների միջոցով, սակայն ավելի հաճախ՝ Սուրբ Հոգու զորությամբ, որը կասի մեզ այդ բաները մեր մտքում ու մեր սրտում:[10] Սուրբ Հոգու միջոցով է, որ մենք կարող ենք «իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[11]

Մեզանից շատերի համար Ջոզեֆ Սմիթի մասին վկայությունը սկսվում է, երբ կարդում ենք Մորմոնի Գիրքը: Առաջին անգամ ես սկզբից մինչև վերջ կարդացի Մորմոնի Գիրքը որպես առավոտյան սեմինարիայի երիտասարդ ուսանող: Իմ ճկուն երևակայությամբ ես որոշեցի կարդալ այն՝ ենթադրելով, որ ես Ջոզեֆ Սմիթն եմ, ով առաջին անգամ բացահայտում է Մորմոնի Գրքի ճշմարտությունները: Այն այնքան մեծ ազդեցություն ունեցավ իմ կյանքում, որ ես շարունակում եմ Մորմոնի Գիրքն այդ ձևով կարդալ: Հաճախ մտածում եմ, որ դա խորացնում է իմ երախտագիտության զգացումը Մարգարե Ջոզեֆի և այս թանկագին գրքում վերականգնված ճշմարտությունների համար:

Օրինակ, պատկերացրեք Ջոզեֆի զգացումները, երբ նա թարգմանում էր մկրտություն՝ մեղքերի թողության համար հատվածները: Ջոզեֆը, ում պատվիրել էին չմիանալ գոյություն ունեցող որևէ եկեղեցու, ի սկզբանե հարցեր ուներ այս փրկող արարողության մասին: Նրա հարցերը մեկ անգամ ևս առաջնորդեցին նրան դեպի աղոթքը, և այդ աղոթքի շնորհիվ նա տեսավ Հովհաննես Մկրտիչին, ով վերականգնեց Ահարոնյան Քահանայությունն ու մկրտելու լիազորությունը:[12]

Կամ պատկերացրեք, թե Ջոզեֆն ինչ կարող էր զգալ, երբ առաջին անգամ իմացավ, որ Հիսուս Քրիստոսն այցելել է Արևմտյան կիսագնդի ժողովրդին, որ Նա ուսուցանել է նրանց, աղոթել է նրանց հետ, բժշկել է նրանց մեջ եղած հիվանդներին, օրհնել է նրանց երեխաներին, շնորհել է քահանայության զորությունը և հաղորդություն է սպասավորել նրանց:[13] Ջոզեֆն այդ ժամանակ գուցե չէր գիտակցում, սակայն այն ամենը, ինչ նա սովորեց Քրիստոսի հնադարյան Եկեղեցու արարողությունների ու կազմակերպության մասին, նախապատրաստեց նրան ավելի ուշ աջակցել Տիրոջը այդ նույն Եկեղեցին հիմնադրել երկրի վրա:

Մորմոնի Գրքի թարգմանության ընթացքում Ջոզեֆն ու իր կինը՝ Էմման, սգում էին իրենց նորածին որդու մահը: Այդ ժամանակ քարոզիչները սովորաբար ուսուցանում էին, որ այն երեխաները, ովքեր մահանում են նախքան իրենց մկրտվելը, հավերժ նզովված են: Հաշվի առնելով սա՝ պատկերացրեք, թե Ջոզեֆն

ինչ էր զգում մարգարե Մորմոնի հետևյալ խոսքերը թարգմանելիս. «Փոքր երեխաները կարիք չունեն ապաշխարության, ոչ էլ մկրտության: . . . [Քանզի] փոքր երեխաները կենդանի են Քրիստոսով, նույնիսկ աշխարհի հիմնադրումից ի վեր»:[14]

Հավանաբար երիտասարդ Ջոզեֆի համար Մորմոնի Գրքի ամենացնցող հատվածը եղել է 2 Նեփի երրորդ գլուխը: Այս գլուխը պարունակում է մի հնադարյան մարգարեություն «ընտրյալ տեսանողի» մասին, ում Տերը բարձրացնելու է վերջին օրերին. մի տեսանող, ում անունը Ջոզեֆ կլինի՝ իր հոր անվամբ: Այս ապագա մարգարեն «բարձր կգնահատվի» և «մեծ արժեքի գործ» կանի իր եղբայրների համար: Նա «կլինի մեծ, ինչպես Մովսեսը» և նրան կտրվի «զորություն՝ առաջ բերելու [Աստծո] խոսքը»:[15] Մտածեք Ջոզեֆ Սմիթի զգացումների մասին, երբ նա հասկացավ, որ այս մարգարեությունն *իր* մասին է: Նա պարզապես պատմություն չէր թարգմանում. նա թարգմանում էր վերջին օրերի մասին մի տեսիլք՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման հրաշալի տեսիլքը, և *դա իրականանալու էր հենց Ջոզեֆի օգնությամբ:*

Այսօր՝ 200 տարի անց, հեշտ է տեսնել, թե ինչպես է այս մարգարեությունն իրականացել: Մենք գիտենք այն մեծ գործերի մասին, որ Ջոզեֆը կատարեց որպես Տիրոջ մարգարե: Բայց հիշեք, որ երբ Ջոզեֆը թարգմանում էր այս մարգարեությունը, նա մարգարեների կանխագուշակած գործերից մի քանիսն էր իրականացրել: Նա դեռ 20 տարեկան մի երիտասարդ էր: Եկեղեցին դեռ չէր կազմավորվել: Չկային ծխեր, ճյուղեր, միսիոներներ ու տաճարներ: Քչերն էին իմացել Ջոզեֆ Սմիթի մասին, իսկ նրանք, ովքեր իմացել էին, ակտիվորեն հակառակվում էին նրան: Իսկ այժմ տեսեք այն մեծ աշխատանքը, որ Տերն առաջ է բերել Իր ծառա Ջոզեֆի ձեռքով՝ չնայած նրա դեմ ուղղված հակառակությանը: Մի՞թե այս մարգարեության իրականացումը չի հանդիսանում Ջոզեֆ Սմիթի մարգարեական կանչի համոզիչ ապացույցը:

Բոլոր նրանց, ովքեր Ջոզեֆ Սմիթի մասին իրենց վկայությունը ենթարկում են կասկածի, տագնապում են նրա կյանքի ու ծառայության մասին սխալական, մոլորեցնող կամ կեղծ տեղեկությունների պատճառով, ես հրավիրում եմ ուշադրություն դարձնել պտուղներին՝ այն բազմաթիվ օրհնություններին, որոնք մենք ստացել ենք Ջոզեֆ Սմիթի՝ Վերականգնման Մարգարեի հրաշալի առաքելության շնորհիվ:

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, հայտնություններն ու մարգարեներն արդեն անցյալին բնորոշ բաներ չեն: «Հրաշքների օրը»՝ տեսիլքների, բժշկումների և հրեշտակների սպասավորման օրը, չի դադարել:[16]

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, մեզ բոլորիս հասանելի է սուրբ քահանայության զորությունն ու մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և հաղորդության օրհնությունները:

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, մենք ունենք տաճարի օրհնություններն ու արարողությունները, որոնք մեզ կապում են Աստծուն, դարձնում են Իր ժողովուրդը և բացահայտում են «աստվածայնության զորությունը»՝ հնարավոր դարձնելով մի օր «տեսնել Աստծո, այսինքն՝ Հոր երեսը, և ապրել»:[17]

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, մենք գիտենք, որ ամուսնությունն ու ընտանիքը հանդիսանում են Աստծո երջանկության ծրագրի անհրաժեշտ մասը: Մենք գիտենք, որ տաճարային արարողությունների և ուխտերի շնորհիվ մեր ընտանեկան նվիրական

հարաբերությունները կարող են հավերժական լինել:

Քանի որ Ջոզեֆը մարգարե էր, ոչ միայն երկնքի պատուհանը, այլ նաև հավերժության դուռն է բաց մեզ համար: Մենք կարող ենք ճանաչել «միայն ճշմարիտ [Աստծուն]. և նորան, որ [Նա ուղարկել է]՝ Յիսուսին Քրիստոսին»:[18] Հավերժական կյանքը կարող է մերը լինել:

Եվ ամենակարևորը, քանի որ Ջոզեֆը մարգարե էր, մենք ունենք բազմաթիվ վկայություններ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և աշխարհի Փրկիչը: Մենք ունենք Հիսուս Քրիստոսի հատուկ վկաների չընդհատվող մի շղթա՝ ներառյալ մեր այսօրվա մարգարե Թոմաս Ս. Մոնսոնը, Առաջին Նախագահության խորհրդականներն ու Տասներկու Առաքյալների Քվորումը: Նրանց վկայությանն եմ ավելացնում իմ խոնարհ, սակայն հավաստի վկայությունը. Հիսուս Քրիստոսն ապրում և առաջնորդում է Իր Եկեղեցին: Ջոզեֆ Սմիթը Վերականգնման Մարգարեն է: Աստծո քահանայությունն ու զորությունը կրկին երկրի վրա են: Ես աղոթում եմ, որ մենք քաջությամբ հայտարարենք մեր վկայությունն ու երախտագիտությունը Տիրոջ այս հրաշալի մարգարեի, տեսանողի ու հայտնողի մասին: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.33:
2. Վարդապետություն և Ուխտեր 122.1–2:
3. Տես Ամովս 3.7:
4. Brigham Young, "Remarks," *Deseret News,* Oct. 26, 1859, 266; see also *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 544.
5. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.8:
6. Հակոբոս 1.5:
7. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.12:
8. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.15:
9. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1:16–17:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 8.2:
11. Մորոնի 10.5:
12. Տես Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.68–72:
13. Տես 3 Նեփի 11–20:
14. Մորոնի 8.11–12:
15. Տես 2 Նեփի 3.6–15:
16. Տես Մորոնի 7.35–37; Հավատո հանգանակներ 1.7:
17. Վարդապետություն և Ուխտեր 84.21–22:
18. Հովհաննես 17.3:

Երեց Խուան Ա. Ուսեդա
Յոթանասուն

Տեր Հիսուս Քրիստոսը մեզ սովորեցնում է աղոթել

Դուք իսկապես աղոթո՞ւմ եք աղոթելու ժամանակ, թե պարզապես աղոթք եք ասում:

1977 թվականին ես ծառայում էի լիաժամկետ միսիայում Կուսկոյում (Պերու): Ես և զուգընկերս հավանություն ստացանք Կուսկոյի գոտու բոլոր միսիոներներին տանելու փառահեղ Մաչու Փիքչու ավերակներ:

Ավերակներ կատարած մեր այցելության ավարտին միսիոներներից մի քանիսը ցանկացան գնալ Ինկաների կամուրջ, որը լեռնային արահետի մի մաս էր: Ես անմիջապես սրտումս զգացի, որ Հոգին դրդում էր ինձ չգնալ այնտեղ: Արահետը գտնվում էր մի սարի կողքի հատվածում, որտեղ զառիթափ տարածությունների խորությունը հասնում էր 610 մետրի: Մի քանի տեղ արահետի լայնությունը միայն բավական էր մեկ առ մեկ անցնելու համար: Ես և զուգընկերս ասացինք նրանց, որ մենք չպետք է գնանք Ինկաների կամուրջ:

Այնումենայնիվ, միսիոներները պնդեցին, որ գնանք: Աղերսանքները դարձան ավելի ուժգին, և չնայած Հոգուց ստացած զգացողությանը, ես զիջեցի իմ հասակակիցների ճնշմանը և ասացի, որ կայցելենք կամուրջը, միայն եթե շատ զգույշ լինենք:

Մենք ճամփա ընկանք Ինկաների կամուրջը տանող արահետով. ես գնում էի խմբի վերջից, իսկ սկզբում բոլորը քայլում էին դանդաղ, ինչպես պայմանավորվել էինք: Հետո միսիոներները սկսեցին շատ արագ քայլել և նույնիսկ վազել: Նրանք անտեսեցին ընթացքը դանդաղեցնելու իմ խնդրանքը: Ես պարտավորված զգացի հասնել նրանց ու ասել, որ մենք պետք է ետ դառնանք: Ես նրանցից շատ էի հետ մնացել և պիտի արագ վազեի, որ հասնեի:

Երբ ես հասա շրջադարձին՝ մի չափազանց նեղ անցումի, որը հնարավոր չէր անցնել երկուսով, ես գտա մի միսիոների, ով անշարժ կանգնած էր՝ մեջքով ժայռերին հենված: Ես հարցրի նրան, թե ինչու էր կանգնած այնտեղ: Նա ասաց, որ ներքուստ զգացել էր, որ պետք է մի պահ մնար այդ վայրում, իսկ ես պիտի շտապեի:

Ես զգացի, որ անհրաժեշտ է հասնել նրանց, ովքեր մեզանից առաջ էին, ուստի նա օգնեց ինձ շրջանցնել իրեն, և ես կարողացա արահետով մի փոքր առաջ ընթանալ: Ես նկատեցի, որ հողաշերտը լի էր բուսականությամբ: Ապա ոտքս դրեցի հողաշերտի վրա, և ընկնելիս հասկացա, որ բուսականության տակ հողաշերտը չկար: Ես հուսահատ բռնվեցի արահետի տակ գտնվող մի քանի ճյուղերից: Մի պահ ներքև նայեցի ու տեսա մոտ 600 մետր խորության վրա գտնվող Ուրուբամբա գետը, որը հատում է Ինկաների Սրբազան հովիտը: Այնպես էի զգում, կարծես ուժերս լքել էին ինձ և ընդամենը ժամանակի հարց էր, մինչև ես այլևս չէի կարողանա պահել ինձ: Այդ պահին ես մի կարճ, թախանձագին աղոթք ասացի. «Հայր, օգնի՛ր ինձ»:

Ճյուղերը բավականաչափ ամուր չէին իմ մարմնի քաշը պահելու համար: Ես գիտեի, որ վերջը մոտ էր: *Հենց այդ* պահին, երբ պիտի ընկնեի, ես զգացի մի ամուր ձեռք, որը բռնեց

իմ ձեռքից և վերև քաշեց ինձ: Այդ օգնությամբ ես կարողացա շարունակել պայքարը և վերադառնալ արահետ: Այդ ետ մնացած միսիոները նա էր, ով փրկեց ինձ:

Բայց իրականում մեր Երկնային Հայրը փրկեց ինձ: Նա լսեց իմ ձայնը: Դրանից առաջ ես երեք անգամ լսել էի Հոգու ձայնը, որը պատվիրեց ինձ չգնալ Ինկաների կամուրջ, բայց ես չհնազանդվեցի: Ես ցնցված էի, գունատ և չգիտեի ինչ ասել: Ապա հիշեցի, որ մյուս միսիոներները մեզանից առաջ էին, ուստի փնտրեցինք, գտանք նրանց և պատմեցինք, թե ինչ էր պատահել ինձ հետ:

Մենք վերադարձանք Մաչու Փիքչու մեծ զգուշությամբ և լուռ: Վերադարձինես լուռ էի, և գլխումս մի միտք ծագեց, որ Նա ուշադրություն էր դարձրել իմ ձայնին, իսկ ես անտարբեր էի մնացել Նրա ձայնի հանդեպ: Սրտումս խորը ցավ կար Նրա ձայնին չհնազանդվելու պատճառով և միաժամանակ՝ խորը երախտագիտություն Նրա ողորմածության համար: Նա չկիրառեց Իր արդարադատությունը իմ վրա, սակայն Իր մեծ ողորմածությամբ Նա փրկեց իմ կյանքը (տես Ալմա 26.20):

Օրվա վերջում, իմ անձնական աղոթքի պահին ես սրտանց աղոթեցի «գթութիւնների [Հորը] եւ ամեն մխիթարութեան Աստ[ծուն]» (Բ Կորնթացիս 1.3): Ես աղոթեցի «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս» (Մորոնի 10.4):

Նույն օրը առավոտյան ես աղոթել էի իմ շրթունքներով, իսկ երբ մոտ էի կործանման, ես սրտանց աղոթեցի Նրան: Ես խորհեցի մինչև այդ պահը ապրած իմ կյանքի մասին: Ես հասկացա, որ շատ դեպքերում մեր Երկնային Հայրը այնքան ողորմած էր եղել իմ հանդեպ: Այդ օրը՝ Մաչու Փիքչուում և Կուսկոյում Նա ինձ շատ դասեր ուսուցանեց: Ամենամեծ դասերից մեկն այն էր, որ ես պետք է միշտ, միշտ աղոթեմ «մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք [գործադրելով] առ Քրիստոս»:

Մի առիթով Տեր Հիսուս Քրիստոսը «մի տեղ աղօթք էր անում», և «երբ որ դադարեց, իր աշակերտներից մէկն ասեց նորան. Տէ՛ր, սովորեցրու մեզ աղօթք անելը» (Ղուկաս 11.1): Ապա Նա Իր աշակերտներին աղոթել սովորեցրեց: Եվ այսօր Նա ինձ և ձեզ սովորեցնում է աղոթել, երբ մեր մտքում մենք տեսնում ենք Նրան Գեթսեմանում աղոթելիս և ասելիս. «Սակայն ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» (Ղուկաս 22.42): Երբ դուք աղոթում եք, արդյո՞ք իսկապես ուզում եք, որ «ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»:

Պողոսը նկարագրում է՝ ինչպես է աղոթել Հիսուսը «իր մարմնի օրերումը», հատկապես Գեթսեմանում. «[Երբ] աղօթք եւ աղաչանք սաստիկ աղաղակով եւ արտասուքով մատուցանում էր նորան որ կարող էր ազատել նորան մահից. եւ լսուեցաւ իր բարեպաշտութեան համար» (Եբրայեցիս 5.7): Երբ դուք աղոթում եք, իսկապես աղոթո՞ւմ եք աղոթելու ժամանակ, թե պարզապես աղոթք եք ասում: Արդյո՞ք մակերեսային եք վերաբերվում ձեր աղոթքներին:

Հիսուսը թախանձագին աղոթեց և խոսեց Իր Հոր հետ: «Երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ եւ աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ» (Ղուկաս 3.21): Երբ դուք աղոթում եք, զգո՞ւմ եք, որ կարծես երկինքը բացվում է: Ե՞րբ եք վերջին անգամ զգացել այդ կապը երկնքի հետ:

Հիսուսը նախապատրաստվեց կարևոր որոշումներ կայացնելու՝ աղոթելով Իր Հորը:

«[Նա] ելաւ սարը աղօթք անելու, եւ բոլոր գիշերն անցրեց աղօթք անելով դէպի Աստուած:

«Եւ երբոր առաւօտ եղաւ, կանչեց իր աշակերտները, եւ ընտրեց նորանցից տասնեւերկուսին» (Ղուկաս 6.12–13):

Դուք նախապատրաստվո՞ւմ եք կայացնելու կարևոր որոշումներ՝ աղոթելով ձեր Երկնային Հորը: Դուք նախապատրաստվո՞ւմ եք աղոթքի համար:

Երբ Հիսուսը եկավ Ամերիկյան մայրցամաք, Նա մարդկանց սովորեցրեց աղոթել. «Եվ Հիսուսն ասաց նրանց. Շարունակե՛ք աղոթել, չնայած նրանք չէին դադարել աղոթելը» (3 Նեփի 19.26):

Հիսուսը հրավիրում է մեզ «միշտ աղոթել» (ՎԵՎՈՒ 10.5): Հիսուսը գիտի, որ մեր Երկնային Հայրը լսում և տալիս է այն, ինչը լավագույնն է մեզ համար: Ինչո՞ւ է պատահում այնպես, որ մենք երբեմն չենք ուզում ստանալ: Ինչո՞ւ:

Այդ նույն պահին մենք ասում ենք. «Հայր, որ երկնքում ես», Նա լսում է մեր աղոթքները և զգայուն է մեր և մեր կարիքների հանդեպ: Եվ այսպիսով, այժմ Նրա աչքերն ու ականջները կապված են ձեր հետ: Նա կարդում է մեր մտքերը, և Նա զգում է մեր սրտերը: Դուք չեք կարող Նրանից որևէ բան թաքցնել: Այժմ, հրաշալին այն է, որ Նա կտեսնի ձեզ սիրո ու ողորմության աչքերով, սեր ու ողորմություն, որոնք մենք չենք կարող լիովին հասկանալ: Այնուամենայնիվ, սերն ու ողորմությունը գալիս է Նրանից հենց նույն պահին, երբ ասում եք. «Հայր, որ երկնքում ես»:

Այսպիսով, աղոթքի պահը շատ, շատ սրբազան է: Նա չի ասում. «Ոչ, ես քեզ հիմա չեմ լսի, որովհետև դու գալիս ես ինձ մոտ, երբ դժբախտության մեջ ես»: Միայն մարդիկ են այդպես վարվում: Նա չի ասում. «Օ, դու չես պատկերացնում, թե ինչքան զբաղված եմ հիմա»: Միայն մարդիկ են ասում այդպես:

Իմ հույսն ու իմ աղոթքն է, որ մենք բոլորս աղոթենք, ինչպես Հիսուսն է սովորեցրել մեզ աղոթել: Տեր Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն: ■

Երեց Ջ. Դեվն Քորնիշ
Յոթանասուն

Արդյո՞ք ես բավականաչափ լավն եմ: Արդյոք ես կհասնե՞մ սելեստիալ արքայություն:

Եթե դուք իսկապես ջանք թափեք և ոչ թե ձեզ արդարացնեք կամ ապստամբեք, այլ հաճախ ապաշխարեք և աղերսեք Քրիստոսի շնորհը կամ օգնությունը, դուք միանշանակ «բավականաչափ լավը» կլինեք:

Սիրելի քույրեր և եղբայրներ, ինչպիսի օրհնություն է մեզ համար հավաքվել ուսուցանվելու Տիրոջ ծառաների կողմից: Մի՞թե սքանչելի չէ, թե որքան բազմաթիվ ուղիներով է մեր սիրառատ Երկնային Հայրն առաջնորդում և օրհնում մեզ: Նա իսկապես կամենում է, որ մենք տուն վերադառնանք:

Մի շարք գորովագութ ողորմությունների շնորհիվ, որպես երիտասարդ բժիշկ ավարտելով բժշկական համալսարանը, ես ընդգրկվեցի մանկաբուժական օրդինատուրայի բարձրագույն մրցունակ մի ծրագրում: Երբ ես հանդիպեցի մյուս վերապատրաստվողներին, ինձ թվաց ես բոլորից ամենաքիչ խելամիտն ուամենավատ պատրաստվածն էի: Ես մտածում էի, որ ոչ մի կերպ չէի կարող համեմատվել խմբի մնացած մասի հետ:

Մեր ուսման երրորդ ամսվա սկզբին ես նստած էի հիվանդանոցում՝ բուժքրոջ սենյակում, ուշ գիշերին, մերթ ընդ մերթ արտասվելով և ննջելով, մինչ փորձում էի գրել ընդունման փաստաթղթերը թոքերի բորբոքումով հիվանդ մի փոքրիկ տղայի համար: Ես երբեք այդքան հուսահատված չէի զգացել իմ կյանքում: Ես գաղափար չունեի, թե ինչպես պիտի բուժեի 10 տարեկան տղայի թոքաբորբը: Ես սկսեցի մտածել, թե արդյոք ճիշտ տեղում էի:

Հենց այդ պահին ավագ ղեկավարներից մեկը ձեռքը դրեց ուսիս և հարցրեց ինձ, թե ինչպե՞ս էին

գործերս, և ես արտահայտեցի իմ սրտնեղությունն ու երկյուղը: Նրա պատասխանը փոխեց իմ կյանքը: Նա պատմեց, թե նա և մյուս ղեկավարները որքան հպարտ էին ինձանով և այն կարծիքին էին, որ ես պատրաստվում էի դառնալ գերազանց բժիշկ: Կարճ ասած, նա հավատում էր ինձ այն պահին, երբ անգամ ինքս ինձ չէի հավատում:

Իմ սեփական փորձառության նման, մեր անդամները հաճախ հարցնում են. «Արդյո՞ք ես բավականաչափ լավ մարդ եմ» կամ «Արդյոք ես կհասնե՞մ սելեստիալ արքայություն»: Իհարկե, չկա այնպիսի բան, ինչպես «բավականաչափ լավը լինել»: Մեզանից ոչ մեկը չի կարող երբևէ «վաստակել» կամ «արժանանալ» մեր փրկությանը, բայց բնական է մտածել Տիրոջ առջև ընդունելի լինելու մասին, որը նշված հարցերի իմաստն է, ինչպես ես եմ հասկանում:

Երբեմն, երբ հաճախում ենք եկեղեցի, մենք հուսալքվում ենք, անգամ երբ մեզ անկեղծորեն հրավիրում են կատարելագործվել: Մենք լուռ մտածում ենք. «Ես չեմ կարող անել բոլոր այս բաները» կամ «Ես երբեք չեմ կարող լինել այդքան լավը, ինչպես բոլոր այս մարդիկ են»: Հավանաբար, մենք զգում ենք ճիշտ այնպես, ինչպես ես էի զգում այն գիշեր հիվանդանոցում:

Խնդրո՛ւմ եմ, իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մենք պետք է դադարենք համեմատվել ուրիշների հետ: Մրցակցելով և համեմատվելով՝ մենք մեզ զուր տանջում ենք: Մենք սխալմամբ մեր ինքնարժեքը որոշում ենք մեր ունեցած և չունեցած *բաներով*, ինչպես նաև *ուրիշների կարծիքներով:* Եթե համեմատվելու կարիք ենք զգում, եկեք համեմատենք մեր անցյալը մեր ներկայի հետ և, նույնիսկ նրա հետ, թե ինչպիսին ենք ուզում լինել ապագայում: Միակ կարծիքը, որը կարևոր է, այն է, թե ինչ է Երկնային Հայրը մտածում մեր մասին: Խնդրում եմ անկեղծորեն հարցրեք Նրան, թե Նա ինչ է մտածում ձեր մասին: Նա կսիրի և կուղղի, բայց երբեք չի հուսահատեցնի մեզ. դա սատանայի հնարքն է:

Թույլ տվեք ինձ լինել շիտակ և հստակ: «Արդյո՞ք բավականաչափ լավն եմ» և «Արդյո՞ք ես կհասնեմ» հարցերի պատասխաններն են. «Այո՛: Դուք լավը կդառնաք» և «Այո՛, դուք կհասնեք սելեստիալ արքայություն, քանի դեռ շարունակում եք ապաշխարել և չեք արդարացնում ձեզ, ոչ էլ ապստամբում եք»: Երկնքի Աստվածը անգութ մրցավար չէ, որը մեզ խաղից դուրս գցելու պատճառ է որոնում: Նա մեզ կատարելապես սիրող Հայրն է, ով ամեն բանից վեր ցանկանում է, որ Իր բոլոր զավակները վերադառնան տուն և հավերժ ապրեն Իր հետ որպես ընտանիքներ: Նա իսկապես տվել է Իր Միածին Որդուն, որպեսզի մենք չկորչենք, այլ հավիտենական կյանք ունենանք:[1] Խնդրում եմ հավատացեք և խնդրում եմ հույս և մխիթարություն քաղեք այս հավերժական ճշմարտությունից: Մեր Երկնային Հայրը նախատեսել է մեզ համար, որ մենք դա անենք: Դա Նրա գործն է և Նրա փառքը:[2]

Ինձ դուր է գալիս, թե ինչպես էր Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանում այս սկզբունքը: Ես լսել եմ, թե ինչպես է նա մի քանի առիթներով ասել. «Եղբայրներ և քույրեր, այն ամենը, ինչ Տերն ակնկալում է մեզանից՝ ջանք թափելն է, բայց դուք պետք է *իսկապես* ջանք թափեք»:[3]

«Իսկապես ջանք թափել» նշանակում է անել ամեն հնարավոր բան, հասկանալով, թե ինչում պետք է կատարելագործվենք, հետո կրկին ջանք թափելով: Կրկնողաբար անելով այդ, մենք ավելի ու ավելի շատ ենք մոտենում Տիրոջը, մենք ավելի ու ավելի շատ ենք զգում Նրա Հոգին,[4] և մենք ավելի շատ ենք ստանում Նրա շնորհը կամ օգնությունը:[5]

Երբեմն, կարծում եմ, մենք չենք հասկանում, թե որքան շատ է Տերն ուզում մեզ օգնել: Ես սիրում եմ Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի խոսքերը.

«Մեզանից շատերը պարզորոշ կերպով հասկանում են, որ Քավությունը մեղավորների համար է: Ես այնքան էլ վստահ չեմ, այնուամենայնիվ, որ մենք գիտենք և հասկանում

ենք, որ Քավությունը նաև սրբերի համար է . . .

. . . Քավությունը օգնություն է ապահովում մեզ՝ հաղթահարելու ու կանխելու վատը և անելու ու դառնալու լավը:

. . . Տիրոջ շնորհի միջոցով է, որ մարդիկ ստանում են ուժ և օգնություն՝ կատարելու լավ գործեր, որոնք նրանք այլապես չէին կարողանա կատարել: . . . Այդ շնորհը հնարավորություն պարգևող զորություն է . . . , [Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Շնորհ», շեշտադրումն ավելացված է] . . . կամ երկնային օգնություն է, որի կարիքը մեզանից յուրաքանչյուրը մեծապես ունի, որպեսզի որակավորվի սելեստիալ արքայության համար»:[6]

Այն ամենը, ինչ մենք պետք է անենք այդ երկնային օգնությունը ստանալու համար, դրա համար խնդրելն է, իսկ հետո՝ ըստ ստացած արդար հուշումների գործելը:

Հիանալի լուրն այն է, որ եթե մենք անկեղծորեն ապաշխարել ենք, մեր նախկին մեղքերը մեզ ետ չեն պահի վեհացումից: Մորոնին պատմում է մեզ իր օրերի օրինազանցների մասին. «Բայց, որքան հաճախ որ նրանք ապաշխարում էին ու ներում փնտրում, անկեղծ միտումով, նրանք ներվում էին»:[7]

Եվ Տերն Ինքն է ասել մեղսավորի մասին.

«Եթե նա խոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ, և ապաշխարի իր սրտի անկեղծությամբ, նրան պիտի դու ներես, և ես կներեմ նրան նույնպես:

Այո, և որքան հաճախ որ իմ ժողովուրդն ապաշխարի, ես կներեմ նրանց իրենց զանցանքները՝ իմ դեմ»:[8]

Եթե մենք անկեղծորեն ապաշխարենք, Աստված իսկապես կների մեզ, եթե, նույնիսկ, մենք նույն մեղքը նորից գործենք: Ինչպես Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն է ասել. «Որքան էլ կարծում եք, որ բաց եք թողել հնարավորությունները, որքան էլ զգաք, որ շատ սխալներ եք գործել . . . , ես վկայում եմ, որ դուք *չեք* հեռացել աստվածային սիրո հասանելիությունից: Ձեզ համար հնարավոր չէ սուզվել ավելի խորը, քան Քրիստոսի Քավության անսահման լույսն է շողում»:[9]

Սա ոչ մի դեպքում չի նշանակում, որ մեղքը լավ է: Մեղքը միշտ ունի հետևանքներ: Մեղքը միշտ վնասում է և ցավ պատճառում ինչպես մեղսագործին, այնպես էլ նրանց, ովքեր կրում են նրա մեղքերի ազդեցությունը: Իսկ ճշմարիտ ապաշխարությունը երբեք հեշտ չէ:[10] Դեռ ավելին, խնդրում եմ հասկացեք, որ չնայած Աստված վերացնում է մեր մեղքերի հանցանքը և բիծը, երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք, Նա հավանաբար անմիջապես չի վերացնի մեր մեղքերի բոլոր հետևանքները: Երբեմն դրանք մնում են մեզ հետ մեր մնացած կյանքի ընթացքում: Եվ ամենավատ տեսակի մեղքը կանխամտածված մեղքն է, երբ մարդն ասում է. «Ես կարող եմ մեղանչել այժմ, իսկ հետո ապաշխարել»: Ես համոզված եմ, որ սա լուրջ ծաղր է Հիսուս Քրիստոսի զոհաբերության և տառապանքների հանդեպ:

Տերն Ինքն է հայտարարել. «Քանզի, ես Տերս, չեմ կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել»:[11]

Իսկ Ալման հայտարարել է. «Ահա ես ասում եմ քեզ, ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:[12]

Պատճառներից մեկը, որ Ալմայի միտքը առանձնապես ճշմարիտ է, այն է, որ կրկնելով մեղքը մենք հեռացնում ենք մեզ Հոգուց, դառնում ենք հուսալքված և հետո դադարում ապաշխարել: Բայց ես կրկնում եմ, Փրկիչի Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել և լիովին ներվել, եթե մեր ապաշխարությունն անկեղծ է լինում:

Մենք ավելի շուտ պետք է ապաշխարենք, քան հիմնավորենք: Ոչ մի բան չի ստացվի, երբ արդարացնենք մեր մեղքերը՝ ասելով. «Աստված գիտի, որ ինձ համար խիստ դժվար է, այսպիսով, Նա ընդունում է ինձ ինչպիսին որ կամ»: «Իսկապես ջանք թափելը» նշանակում է՝ մենք շարունակում ենք դա անել, մինչև լիովին մոտենում ենք Տիրոջ չափանիշին, որը հստակորեն սահմանված է այն հարցերում, որոնք մեզ ուղղվում են, որպեսզի ստանանք տաճարային երաշխավորագիր:

Մյուս բանը, որն անկասկած մեզ ետ կպահի երկնքից և կկտրի մեզ օգնությունից, որի կարիքը այժմ ունենք, ապստամբությունն է: Մովսեսի գրքից մենք իմանում ենք, որ սատանան դուրս քշվեց երկնքից ապստամբության համար:[13] Մենք ապստամբության մեջ ենք ամեն ժամանակ, երբ ասում ենք մեր սրտում. «Ես Աստծո կարիքը չունեմ և ես ապաշխարելու կարիք չունեմ»:

Որպես ինտենսիվ թերապիայի մանկաբույժ, ես գիտեմ, որ եթե մարդն անտեղի մերժում է կյանք փրկող բուժումը, դա կարող է տանել նրան անխուսափելի ֆիզիկական մահվան: Նմանապես, երբ մենք ապստամբում ենք Աստծո դեմ, մենք մերժում ենք մեր միակ օգնությունն ու հույսը, ով Հիսուս Քրիստոսն է, ինչն էլ տանում է դեպի հոգևոր մահ: Նա է ուղին, և Նա է մեր միակ հույսը: Մեզանից ոչ մեկը չի կարող անել դա մեր սեփական ուժով: Ճշմարտությունն այն է, որ մեզանից ոչ մեկը երբևէ չի լինի «բավականաչափ լավը», բացառությամբ Հիսուս Քրիստոսի արժանիքների և ողորմածության միջոցով,[14] բայց քանի որ Աստված հարգում է մեր ազատ կամքը, մենք չենք կարող նաև փրկվել առանց մեր կողմից ջանք թափելու: Ահա թե ինչպես է աշխատում հավասարակշռությունը շնորհի և գործերի միջև: Մենք կարող ենք հույս ունենալ առ Հիսուս Քրիստոս, որովհետև նա ուզում է օգնել և փոխել մեզ: Փաստորեն, Նա արդեն օգնում է ձեզ: Ուղղակի կանգ առեք և մտածեք և ընդունեք Նրա օգնությունը ձեր կյանքում:

Ես վկայում եմ ձեզ, որ եթե դուք իսկապես ջանք թափեք և ոչ թե ձեզ արդարացնեք կամ ապստամբեք, այլ հաճախ ապաշխարեք և աղերսեք Քրիստոսի շնորհը կամ օգնությունը, դուք միանշանակ «բավականաչափ լավը», այսինքն՝ Տիրոջ առջև ընդունելի կլինեք. դուք կհասնեք սելեստիալ արքայություն՝ կատարյալ լինելով Քրիստոսով, և դուք կստանաք օրհնությունները և փառքը և ուրախությունը, որ Աստված ցանկանում է Իր թանկագին զավակներից յուրաքանչյուրի, հատկապես ձեզ և ինձ համար: Ես վկայում եմ, որ Աստված ապրում է և կամենում է, որ մենք տուն վերադառնանք: Ես վկայում եմ, որ Հիսուսն ապրում է: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Հովհաննես 3.16:
2. Տես Մովսես 1.39:
3. Նախագահ Հինքլիի այս արտահայտությունը չի հանդիպում տպագրված նյութերում, բայց ունենք հետևյալն արձանագրությունը. «Ուղղակի արեք հնարավորը ձեր կարողության սահմաններում, բայց համոզված եղեք, որ դա ձեր կարողացած լավագույնն է» («Դժվարին ժամանակ՝ սքանչելի ժամանակ», *Teaching Seminary: Preservice Readings* [Church Educational System manual, 2004], 18). Նա նաև ասել է. «Խնդրում եմ մի սղոցեք ձեզ ձախողման մասին մտքերով: Մի դրեք նպատակներ, որոնք վեր են դրանց հասնելու ձեր կարողությունից: Պարզապես արեք ինչ կարող եք անել, ձեր գիտեցած լավագույն ձևով և Տերը կընդունի ձեր ջանքերը» (“Rise to the Stature of the Divine within You,” *Ensign,* Nov. 1989, 96):
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 50.24:
5. Տես Եթեր 12.27:
6. Դեյվիդ Ա.Բեդնար, «Քավությունը և մահկանացու ճամփորդությունը», կամ *Լիահոնա,* ապր. 2012, 14:
7. Մորոնի 6.8:
8. Մոսիա 26.29–30:
9. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Այգու մշակները, *Լիահոնա,* մայիս 2012, 33:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.15–19:
11. Վարդապետություն և Ուխտեր 1.31:
12. Ալմա 41.10:
13. Տես Մովսես 4.3:
14. Տես 2 Նեփի 2.6–8:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորում

Աստծո վկա

Առաջարկում եմ, որ դուք դադարեք մեղավոր զգալ, երբ մտածում եք, թե բավարար չափով չեք կիսվում ավետարանով: Փոխարենը, աղոթեք, որպեսզի «կանգնեք որպես Աստծո [վկա]»: Դա շատ ավելի ուժեղ դրդապատճառ է, քան մեղքը:

Աստծո կարևոր աշխատանքի մեծ մասը հիմնականում աշխարհը չի նկատում: Դեռևս Քրիստոսից առաջ վեցերորդ դարից մեզ հայտնի են այնպիսի փայլուն մտածողներ, ինչպիսիք են՝ Կոնֆուցիոսը Չինաստանից և Բուդդան արևելյան Հնդկաստանից, սակայն Աստծո քահանայության զորությունը Դանիելի վրա էր, մարգարե, ով ապրում էր գերության մեջ Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի օրոք:

Նաբուգոդոնոսոր թագավորը գիշերն իր տեսած երազից անհանգստացած պահանջեց, որ իր մոգերն ու կախարդներն իրեն պատմեին այդ երազը և մեկնաբանեին այն: Բնականաբար, նրանք չկարողացան ասել թագավորին, թե ինչ երազ էր նա տեսել և առարկեցին: «Երկրի վրա չկա մարդ, որ կարողանա [դա անել, ոչ էլ թագավոր, որ դա պահանջի]»:[1] Նաբուգոդոնոսոր թագավորը զայրացավ, որ իր խորհրդատուները չկարողացան դա անել և մոլեգնած հրամայեց բոլորին մահապատժի ենթարկել:

Թագավորի իմաստուններից Դանիելն աղոթեց՝ «ողորմություն խնդրելով Աստուածանից այս գաղտնիքի մասին»:[2]

Հրաշք կատարվեց: Թագավորի երազի գաղտնիքը հայտնվեց Դանիելին:

Դանիելին տարան թագավորի մոտ: «Կարո՞ղ ես արդյոք ինձ իմացնել իմ տեսած երազը և նորա մեկնությունը»:

Դանիելը պատասխանեց.

«Իմաստունները, հմայողները և մոգերը [չեն կարող քեզ իմացնել քո երազը]: . . .

Բայց կա Աստուած երկնքումը՝ [գաղտնիքներ հայտնող, և Նա] հայտնում է . . . Նաբուգոդոնոսոր թագավորին ինչ որ պիտի լինի ետին օրերումը: . . .

Երկնքի Աստուածը, — ասաց Դանիելը, — մեկ թագավորություն է վերկացնելու, [մի քար կտրուած առանց ձեռքի, որը կդառնա մեծ սար և կլցնի ողջ աշխարհը,] որ հավիտեանս չի ավերուիլ . . . [այլ] կմնա հավիտեանս:

. . . Երազը, — Դանիելն ասաց, — հաստատ է և մեկնությունը ստույգ»:[3]

Ստանալով իր երազի բացատրությունն ու մեկնությունը, թագավորը համարձակ հայտարարեց. «Հիրավի որ ձեր Աստվածն է աստվածների Աստվածը և թագավորների Տերը»:[4]

Դանիելին տրված Աստծո զարմանահրաշ հայտնությամբ եկավ Հիսուս Քրիստոսի ավետարանի ապագայի մասին մարգարեությունը, որ պիտի վերականգնվեր երկրի վրա, արքայություն, որ պիտի լցներ ողջ աշխարհը, «որը հավիտեանս չի ավերուիլ . . . [այլ] կմնա հավիտեանս»:

Վերջին օրերին Եկեղեցու անդամների թվաքանակը համեմատաբար քիչ կլինի, ինչպես Նեփին է մարգարեացել, սակայն նրանք կլինեն ողջ երկրի երեսին, իսկ քահանայության զորությունն ու արարողությունները հասանելի կլինեն բոլորին, ովքեր կփափագեն դա, լցնելով երկիրը՝ ինչպես կանխագուշակել է Դանիելը:[5]

1831թ. Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացավ այս հայտնությունը. «Աստծո արքայության [և աշխարհի չորս ծայրերից Իսրայելը հավաքելու] բանալիները վստահված են մարդուն

երկրի վրա, և այնտեղից ավետարանը կգլորվի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը»:[6]

Պատասխանատվություն, որ կիսում ենք մենք

Իսրայելի հավաքումը հրաշք է: Այն նման է հսկայական գլուխկոտրուկի, որի մասերը պետք է դրվեն իրենց տեղերում՝ նախքան Երկրորդ Գալուստի փառահեղ իրադարձությունները կսկսվեն: Ճիշտ, ինչպես մենք գուցե շփոթվենք գլուխկոտրուկի մասերի քանակից, նույն կերպ վաղեմի Սրբերը պիտի որ ողջ աշխարհին վերականգնված ավետարանը տանելու պարտականությունը համարեին գրեթե անհնարին խնդիր: Բայց նրանք սկսեցին այդ գործընթացը, ամեն անգամ մի մարդ ավելացնելով, մի մաս դնելով, գտնելով եզրի մասերը, աշխատելով ճիշտ ձևով կազմել այս աստվածային աշխատանքի շրջանակը: Աստիճանաբար առանց ձեռքի կտրված քարը սկսեց առաջ գլորվել՝ հարյուրներից հազարավորների, տասնյակ հազարավորների, իսկ այժմ տարբեր ազգերի միլիոնավոր ուխտյալ Վերջին Օրերի Սրբեր միացնում են այս զարմանահրաշ և սքանչելի գործի գլուխկոտրուկի մասերը:

Մեզանից յուրաքանչյուրն այդ գլուխկոտրուկի մասերից մեկն է և օգնում է ճիշտ տեղում դնել մյուս կարևոր մասերը: Դուք կարևոր դեր եք խաղում այս մեծ աշխատանքում: Մեր տեսադաշտն այժմ մաքուր է: Մենք կարող ենք տեսնել, որ այդ հրաշքը շարունակվում է, և Տերը մեր ձեռքից բռնած ուղեկցում է, երբ մենք լրացնում ենք դատարկ տեղերը: Այնուհետև «Մեծ Եհովան կասի՝ աշխատանքն ավարտված է»,[7] և Նա կվերադառնա վեհափառությամբ և փառքով:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Այժմ ժամանակն է, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին . . . հոգիներ բերելով Նրա մոտ: . . . Նա կաջակցի մեզ մեր ջանքերում, եթե հավատքով գործենք Նրա աշխատանքն իրականացնելու համար»:[8]

Աստծո կողմից տրված պատասխանատվությունը, որը մի ժամանակ հիմնականում դրված էր լիաժամկետ միսիոներների ուսերին, այժմ բոլորիս պատասխանատվությունն է: Բոլորս էլ ցանկանում ենք կիսվել վերականգնված ավետարանով, և ամեն շաբաթ հազարավոր մարդիկ են երախտագիտությամբ մկրտվում: Նույնիսկ ունենալով այս հրաշալի օրհնությունը, մեր եղբայրների և քույրերի համար մեր մտահոգությունը և Աստծուն գոհացնելու մեր ցանկությունը բերում է կիսվելու և ողջ աշխարհում Աստծո արքայությունն ամրացնելու անասելի հրատապությունը:

Մեղքի սահմանները

Անգամ ավետարանով կիսվելու ուժգին ցանկության հետ դուք գուցե այդքան էլ չգոհանաք ձեր գործադրած ջանքերի արդյունքներից: Գուցե զգաք ինչպես իմ ընկերներից մեկը, ով ասաց. «Եկեղեցու մասին պատմել եմ մեր ընտանիքին և ընկերներին, բայց ընդամենը մի քանիսը հետաքրքրություն ցուցաբերեցին, և ամեն մերժումից հետո ես ավելի անվստահ էի դառնում: Գիտեմ, որ պետք է ավելի շատ ջանքեր գործադրեմ, բայց չգիտեմ ինչ անեմ և միայն հսկայական մեղքի զգացում ունեմ»:

Կփորձեմ ձեզ օգնել:

Մեղքի զգացումը կարևոր դեր է խաղում, դրդելով կատարել մեզ համար անհրաժեշտ փոփոխություններ, բայց մեզ օգնելու մեղքի հնարավորությունները սահմանափակ են:

Մեղքը բենզինով աշխատող մեքենայի մարտկոցի պես է: Այն կարող է լույսով ապահովել մեքենան, գործի դնել շարժիչը, միացնել լուսարձակները, բայց չի կարող



Իսրայելի հավաքումը նման է ահռելի գլուխկոտրուկի, որի մասերը կդրվեն իրենց տեղերում Երկրորդ Գալուստից առաջ: Յուրաքանչյուրս գլուխկոտրուկի մի մաս ենք, և յուրաքանչյուրս օգնում ենք տեղը դնել կարևոր մյուս մասերը:

վառելիքով ապահովել երկարատև ճանապարհի գնալիս: Մարտկոցն ինքնին բավարար չէ: Մեղքը ևս:

Առաջարկում եմ, որ դուք դադարեք մեղավոր զգալ, երբ մտածում եք, թե բավարար չափով չեք կիսվում ավետարանով: Փոխարենը, ինչպես Ալման է ուսուցանել, աղոթեք հնարավորությունների համար, որ «կանգնեք որպես Աստծո [վկա] բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, . . . որ [մյուսները] կարողանան փրկագնվել Աստծո կողմից և համարվեն նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, [և] հավերժական կյանք ունենան»:[9] Դա շատ ավելի ուժեղ դրդապատճառ է, քան մեղքը:

Բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում Աստծո վկա լինելն արտացոլվում է մեր ապրելակերպում և մեր խոսելաձևում:

Պատրաստակամ եղեք կիսվելու առ Քրիստոս ձեր հավատքի մասին: Երբ առիթը գա խոսեք Նրա կյանքի, Նրա ուսմունքների և ողջ մարդկությանը տված Նրա անգուգական պարգևի մասին: Կիսվեք Մորմոնի Գրքից Նրա հզոր ճշմարտություններով: Նա մեզ խոստացել է. «Ով որ ինձ մարդկանց առաջին դավանե, ես էլ նորան կդավանեմ իմ Հոր առաջին, որ երկնքումն է»:[10] Ես խոստանում եմ ձեզ՝ եթե հաճախ և անկեղծորեն աղոթեք հնարավորությունների համար, որ «կանգնեք որպես Աստծո վկա», այդ հնարավորությունները կգան և կհանդիպեք նրանց, ովքեր ավելի շատ լույս և գիտելիք են փնտրում: Եթե արձագանքեք հոգևոր հուշումներին, Սուրբ Հոգին ձեր խոսքերը կհասցնի մեկ ուրիշի սրտին, և մի օր Փրկիչը կդավանի ձեզ Իր Հոր առաջ:

Խմբակային ջանք

Որևէ մեկին Աստծո արքայություն բերելու համար կատարվող հոգևոր աշխատանքը խմբակային ջանք է: Հնարավորության դեպքում օգտագործեք միսիոներների օգնությունը և աղոթեք երկնային օգնության համար: Բայց հիշեք, որ մեկ ուրիշի դարձի գալու ժամանակը ամբողջովին կախված չէ ձեզանից:[11]

Դիեգո Գոմեզի (վերևում, դիմացի տողում, երրորդը աջից) և Կամլա Պերսանդի (աջում իր ընտանիքի հետ մկրտությունից 25 տարի անց) դարձը տեղի ունեցավ շատերի օգնությամբ, ովքեր աջակցում էին նրանց որպես «Աստծո վկաներ»:

Մավրիկոս կղզիներից Կամլա Պերսանդը սովորում էր Ֆրանսիայի Բորդո քաղաքի բժշկական համալսարանում, երբ նրան հանդիպեցինք 1991 թվականի փետրվարին: Ընտանիքով մենք աղոթել էինք, որ կարողանայինք ավետարանով կիսվել ճշմարտությունը փնտրող որևէ մեկի հետ, և մենք նրան ուսուցանեցինք մեր տանը: Ես արտոնություն ունեցա կատարելու նրա մկրտությունը, բայց Եկեղեցուն միանալու հարցում մենք չէինք թողել ամենակարևոր ազդեցությունը Կամլայի վրա: Իր հայրենիքում նրա ընկերները, միսիոներները և անգամ ընտանիքի անդամներն էին եղել «Աստծո վկաներ», և մի օր Ֆրանսիայում, երբ Կամլայի համար ճիշտ ժամանակն էր, նա մկրտվելու որոշում կայացրեց: Այժմ, 25 տարի անց նա վայելում է այդ որոշման օրհնությունները, և նրա որդին միսիոներ է Մադագասկարում:

Խնդրում եմ, մեկ ուրիշի հետ Փրկիչի սիրով կիսվելու ձեր ջանքերը մի դիտարեք որպես քննություն, որը կամ հանձնում եք կամ՝ ոչ, և ձեր գնահատականը թող չորոշվի նրանով, թե ինչպես են ձեր ընկերները պատասխանում ձեր զգացմունքներին կամ միսիոներներին հանդիպելու առաջարկին:[12] Մեր մահկանացու աչքերով մենք չենք կարող տեսնել մեր ջանքերի արդյունքները, ոչ էլ կարող ենք որոշել ժամանակացույցը: Երբ մեկ ուրիշի հետ կիսվում եք Փրկիչի հանդեպ ունեցած սիրով, ձեր թվանշանը միշտ գերազանց է:

Որոշ պետություններ սահմանափակել են միսիոներների աշխատանքը, որի արդյունքում մեր ազնվազարմ անդամները նույնիսկ ավելի մեծ քաջություն են դրսևորում՝ լինելով «Աստծո վկաներ բոլոր ժամանակներում և բոլոր . . . տեղերում»:

Նադեժդան Մոսկվայից հաճախ է մյուսներին նվիրում Մորմոնի Գիրքը՝ կոնֆետներով լի նվերի տուփի մեջ դրած: Նա ասում է. «Ես նրանց ասում եմ, որ դա լավագույն նվերն է, որ կարող եմ տալ»:

Ուկրաինայում մկրտվելուց շատ չանցած Սվետլանան հատուկ զգացողություն ունեցավ ավետարանով կիսվելու մի մարդու հետ, ում հաճախ էր տեսնում ավտոբուսում: Երբ այդ մարդն իջավ իր կանգառում, նա

հարցրեց. «Կուզենայի՞ք ավելին իմանալ Աստծո մասին»: Այդ տղամարդն ասաց. «Այո»: Միսիոներներն ուսուցանեցին Վիկտորին, և նա մկրտվեց: Նա և Սվետլանան ավելի ուշ կնքվեցին Գերմանիայի Ֆրայբերգի տաճարում:

Ուշադիր եղեք, ձեր օրհնություններն անսպասելի կերպով կարող են գալ:

Յոթ տարի առաջ Սոլթ Լեյք Սիթիում ես և Քեթին հանդիպեցինք Դիեգո Գոմեսին և նրա հրաշալի ընտանիքին: Նրանք մեզ հետ այցելեցին տաճարի բաց դռներին, բայց բարեկիրթ ձևով մերժեցին Եկեղեցու մասին ավելին սովորելու մեր առաջարկը: Այս տարվա մայիսին ես անսպասելի զանգ ստացա Դիեգոյից: Իր կյանքում տեղի ունեցած որոշ դեպքեր նրան ծնկի էին բերել աղոթելու: Նա ինքնուրույն գտել էր միսիոներներին, մասնակցել զրույցներին և պատրաստվել մկրտվելու: Այս անցած հունիսի 11-ին ես մտա մկրտության ջրերը իմ ընկեր և ընկերակից աշակերտ Դիեգո Գոմեսի հետ: Նրա դարձն իր ուրույն ժամանակացույցն ուներ և տեղի ունեցավ շատերի աջակցությամբ, ովքեր նրան օգնել էին որպես «Աստծո վկաներ»:

Կոչ երիտասարդներին

Ողջ աշխարհի մեր հրաշալի երիտասարդներ և չափահաս երիտասարդներ, ես հատուկ կոչ եմ անում և առաջարկում եմ ձեզ՝ եղեք «Աստծո վկաներ»: Ձեզ շրջապատող մարդիկ հետաքրքրված են հոգևոր հարցերով: Հիշո՞ւմ եք գլուխկոտրուկը: Դուք չեք մոտենում սեղանին դատարկ ձեռքով, այլ ձեր ձեռքի տակ ունենալով տեխնոլոգիան և սոցցանցերը: Մենք ձեր կարիքն ունենք, Տերը ցանկանում է, որ դուք ավելի շատ ներգրավվեք այս մեծ գործում:

Փրկիչն ասել է. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը»:[13]

Պատահականություն չէ, որ դուք ապրում եք Աֆրիկայում, Ասիայում, Եվրոպայում, Հյուսիսային, Կենտրոնական կամ Հարավային Ամերիկայում, Խաղաղօվկիանոսյան կղզիներում կամ Աստծո այս աշխարհի մեկ այլ վայրում, որովհետև ավետարանը պիտի գնա «ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի»:[14]

«Երկնքի Աստուածը մեկ թագավորություն է վերկացրել, [մի քար կտրուած առանց ձեռքի, որը դարձել է մեծ սար և լցնում է ողջ աշխարհը,] որ հավիտեանս չավերուի . . . [այլ] մնա հավիտեանս:

. . . Երազը հաստատ է և մեկնությունը ստույգ»:[15]

Խոսքս եզրափակում եմ Վարդապետություն և Ուխտերից մի հատվածով. «Կանչեք առ Տերը, որ նրա արքայությունն առաջ գնա երկրի վրա, որ նրա բնակիչները ստանան այն և պատրաստ լինեն գալիք օրերի համար, որի ժամանակ Մարդու Որդին կիջնի երկնքից, իր փառքի պայծառությամբ հանդերձավորված՝ դիմավորելու երկրի վրա . . . Աստծո արքայությանը»:[16] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դանիել 2.10:
2. Դանիել 2.18:
3. Դանիել 2.26, 27, 28, 44, 45; տես նաև հատվածներ 34–35:
4. Դանիել 2.47:
5. Տես 1 Նեփի 14.12–14:
6. Վարդապետություն և Ուխտեր 65.2; տես նաև Վարդապետություն և Ուխտեր 110.11:
7. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 444; տես նաև Բոյդ Կ. Փաքեր, "The Standard of Truth Has Been Erected," *Լիահոնա,* նոյ. 2003, 27:
8. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարի գալուստ համաժողով», *Լիահոնա,* նոյ. 2013, 4:
9. Մոսիա 18.9:
10. Մատթեոս 10.32:
11. Մեկ ամիս առաջ ես Բրազիլիայի Սանտա Մարիայում էի: Եղբայր Ժոան Գրալն ինձ ասաց, որ պատանի հասակում երկու տարի եկեղեցի է հաճախել և ցանկանում էր մկրտվել, սակայն հայրը թույլ չէր տալիս: Մի օր նա ասել էր իր քույրերին, ովքեր նույն ցանկությունն ունեին, որ պետք է ծնկաչոք աղոթել, որ Աստված փափկացներ իրենց հոր սիրտը: Նրանք ծնկի եկան աղոթքով և գնացին դպրոց:

    Երբ այդ օրը տուն վերադարձան, զարմացան տեսնելով, որ հեռավոր քաղաքից իրենց հորեղբայրն էր եկել: Նա տանը զրուցում էր իրենց հոր հետ: Հորեղբոր ներկայությամբ երեխաները կրկին խնդրեցին իրենց հորը, թե արդոք կարող էին մկրտվել: Նրանց հորեղբայրը առաջ եկավ, ձեռքը դրեց փոքր եղբոր ուսին և ասաց. «Ռենալդո, դա ճշմարիտ եկեղեցի է: Թող նրանք մկրտվեն»: Նրանք չգիտեին, որ մի քանի ամիս առաջ հորեղբայրը մկրտվել էր:

    Հորեղբայրը հուշում էր ստացել, որ հյուր գար իր եղբոր տուն, և քանի որ նա «կանգնեց որպես Աստծո վկա», եղբայրը թույլ տվեց, որ երեխաները մկրտվեին: Մի քանի շաբաթ անց, Ռենալդոն և իր կինը մկրտվեցին: Աստված հրաշալի ձևով պատասխանեց այդ երեխաների աղոթքներին մի մարդու միջոցով, ով պատրաստակամորեն դարձավ «Աստծո վկա»:
12. «Դուք հաջողում եք, երբ հրավիրում եք, անկախ նրանից, թե ինչպիսին կլինի արդյունքը» (Քլեյթոն Մ. Քրիսչենսեն, *Ամենօրյա միսիոներների ուժը* [2012], 23; տես նաև everydaymissionaries.org):
13. Մատթեոս 28.19:
14. Մոսիա 15.28:
15. Դանիել 2.44–45,տես նաև հատվածներ 34–35:
16. Վարդապետություն և Ուխտեր 65.5:



Աշխարհի երիտասարդները և երիտասարդ չափահասները հավաքվում են տեխնոլոգիայի և սոցիալական մեդիայի մեկ սեղանի շուրջ:

Շաբաթ ցերեկային նիստ | 1 հոկտեմբերի, 2016թ.

Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին նախագահության առաջին խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատումը

Եղբայրներ և քույրեր, Նախագահ Մոնսոնը խնդրել է, որ ձեր հաստատմանը ներկայացնեմ Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորներին և Տարածքային Յոթանասունականներին:

Առաջարկվում են հաստատման՝ Թոմաս Սպենսեր Մոնսոնը՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, Հենրի Բենյոն Այրինգը՝ որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը՝ որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Ռասսել Մ. Նելսոնը՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և հետևյալ անձինք՝ որպես այդ քվորումի անդամներ. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Ի. Ստիվենսոն և Դեյլ Գ. Ռենլանդ:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են նույն կերպ արտահայտել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալների Քվորումը՝ որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, արտահայտեն նույն կերպ:

Առաջարկվում է, որ մենք իրենց նշանակալից ծառայության համար խորին երախտագիտությամբ ազատենք Երեցներ Դանիել Լ. Ջոնսոնին, Ջաիրո Մազազարդին, Քենտ Ֆ. Ռիչարդսին և Ֆրանսիսկո Ջ. Վինասին, որպես Յոթանասունի բարձրագույն իշխանավորների և շնորհել նրանց պատվավոր կոչում: Նշենք նաև Երեց Գ. Մալմին, ով մահացավ 2016թվի հուլիսի 26-ին: Մեր սերն ու խորին ցավակցությունն ենք հայտնում Քույր Մալմին, նրանց երեխաներին ու թոռներին:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին իրենց կատարած հիանալի ծառայության համար, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում է, որ մենք ազատենք Ալան Ռ. Վոլկերին տարածքային յոթանասունականի կոչումից: Ովքեր ցանկանում են իրենց շնորհակալությունը հայտնել Եղբայր Վոլկերին իր ծառայության համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում է, որ մենք հաստատենք հետևյալ տարածքային յոթանասունականներին՝ Բհանու Կ. Հիրանանդանին և Սանդինո Ռոմանին:

Ովքեր կողմ են, խնդրում ենք, քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել նույն կերպ:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել նույն կերպ:

Նախագահ Մոնսոն, քվեարկությունը կայացավ: Մենք հրավիրում ենք բոլոր նրանց, ովքեր դեմ են քվեարկել այդ առաջարկներից որևէ մեկին, կապ հաստատել իրենց ցցերի նախագահների հետ:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն Եկեղեցու ղեկավարների համար ձեր շարունակական հավատքի և աղոթքների համար: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորում

Անվեհեր՝ Հիսուսի մասին վկայությունում

Մենք չենք կարող թույլ տալ, որ գայթակղության քարերը Հոր և Որդու մասին մեր վկայությունները շփոթեցնող ու բարդ դարձնեն։

Հավերժական կյանքը մեծագույն պարգևն է Աստծո և շնորհվում է նրանց, ովքեր «պահում են [Աստծո] պատվիրանները և համբերում մինչև վերջ»։[1] Մյուս կողմից,հավերժական կյանքը մեր Երկնային Հոր հետ մերժվում է նրանց, «ովքեր անվեհեր չեն Հիսուսի վկայության մեջ»։[2] Կան մի քանի գայթակղության քարեր անվեհեր չլինելու համար, որոնք կարող են խանգարել մեզ հասնել հավերժական կյանքի նպատակին։[3] Գայթակղության քարերը կարող են բարդ լինել. թույլ տվեք պարզաբանել։

Շատ տարիներ առաջ հայրս կառուցեց մի փոքրիկ տնակ այն ագարակի հողատարածքում, որտեղ նա էր մեծացել։ Մարգագետինների ետևում գտնվող տեսարանները բացառիկ էին։ Երբ տնակի պատերը կառուցվեցին, ես այցելեցի նրան։ Զարմացա, որ պատուհանը, որից բացվում էր տեսարանը, ուղղակի կենտրոնացած էր էլեկտրասյան վրա, որը տնից մի փոքր հեռավորության վրա էր։ Ինձ համար դա մի վիթխարի շեղող հանգամանք էր ապշեցուցիչ տեսարանից։

Ես ասացի. «Հայրիկ, ինչո՞ւ թույլ տվեցիր էլեկտրասյունը ուղիղ ձեր պատուհանից բացվող տեսարանի առջևում տեղադրել»։

Հայրս, մի բացառիկ գործունյա և հանգիստ մարդ, բացականչեց որոշակի հուզմունքով. «Քվենթին, այդ էլեկտրասյունը ամենագեղեցիկ բանն է ինձ համար ամբողջ ագարակում»։ Այնուհետև հիմնավորեց ասածը. «Երբ ես նայում եմ այդ սյունին, ես գիտակցում եմ, որ ի տաբերություն այն ժամանակի, երբ ես այստեղ մեծանում էի, ես ստիպված չեմ լինի ջուր կրել դույլերով աղբյուրից մինչև տուն՝ եփելու, ձեռքերս լվանալու կամ լողանալու համար։ Ես ստիպված չեմ լինի մոմ կամ նավթով լամպ վառել գիշերը կարդալու համար։ Ես ուզում եմ տեսնել այդ էլեկտրասյունը պատուհանից բացվող տեսարանի հենց մեջտեղում»։

Էլեկտրասյան վերաբերյալ հորս տեսակետը տարբերվում էր իմ տեսակետից։ Նրա համար այդ սյունը ներկայացնում էր բարելավված կյանք, բայց ինձ համար դա խոչընդոտ էր սքանչելի տեսարանի համար։ Հայրս վեր էր դասում էլեկտրաէներգիան, լույսը և մաքրությունը գեղեցիկ տեսարանից։ Ես անմիջապես հասկացա, որ չնայած սյունը ինձ համար խոչընդոտ էր, հորս համար այն ուներ մեծ պրակտիկ, խորհրդանշական իմաստ։

Ըստ բառարանի, գայթակղության քարը «Խոչընդոտ է հավատքին կամ հասկացողությանը» կամ «արգելք առաջընթացին»։[4] Հոգևոր իմաստով գայթել նշանակում է «մեղքի մեջ ընկնել կամ կամակորություն անել»։[5] Գայթակղության քար կարող է լինել ամեն բան, որը շեղում է մեզ արդար նպատակների հասնելուց։

Մենք չենք կարող թույլ տալ, որ գայթակղության քարերը Հոր և Որդու մասին մեր վկայությունները շփոթեցնող ու բարդ դարձնեն։ Մենք չենք կարող ընկնել այդ թակարդը։ Մեր վկայությունները Նրանց մասին պետք է մաքուր և պարզ մնան, ինչպես իր ագարակի էլեկտրասյան իմ հոր հասարակ պաշտպանությունը։

Որո՞նք են գայթակղության քարերից մի քանիսը, որոնք խառնաշփոթ

են առաջացնում և բարդացնում մեր մաքուր ու պարզ վկայությունը Հոր և Որդու մասին և խանգարում մեզ անվեհեր մնալ այդ վկայության մեջ:

Գայթակղության քարերից մեկը մարդկային փիլիսոփայությունն է

Մենք հետաքրքրված ենք ամեն տեսակի գիտելիքով և հավատում ենք, որ «Աստծո փառքը բանականություն է»:[6] Բայց մենք նաև գիտենք, որ հակառակորդի նախընտրած ռազմավարությունն է հեռու տանել մարդկանց Աստծուց և ստիպել նրանց գայթակղվել՝ մարդկանց փիլիսոփայությունները վեր դասելով Փրկիչից և Նրա ուսմունքներից:

Պողոս Առաքյալը Հիսուս Քրիստոսի համոզված վկաներից էր՝ Փրկիչի հետ ունեցած մի հրաշագործ և կյանք փոխող փորձառության շնորհիվ:[7] Պողոսի առանձնահատուկ անցյալը նրան նախապատրաստել էր շփվելու բազմաթիվ մշակույթների պատկանող մարդկանց հետ: Նա սիրում էր Թեսաղոնիկեցիների «անկեղծ պարզությունը» և Ֆիլիպպեցիների[8] «կարեկից համակրանքը»: Սկզբում նա դժվարացավ լեզու գտնել խելացի և իմաստասեր հույների հետ: Աթենքում՝ Մարսի բլրի վրա, նա փորձեց փիլիսոփայական մոտեցմամբ ուսուցանել, բայց մերժվեց: Կորնթացիներին նա որոշեց ուղղակի ուսուցանել «խաչված Քրիստոսի վարդապետությունը»:[9] Օգտագործելով Պողոս Առաքյալի խոսքերը.

«Եւ իմ խօսքը եւ քարոզութիւնը ոչ թէ մարդկային իմաստութեան պատիր խօսքերովն եղաւ, այլ Հոգու եւ զօրութեան ապացուցութեամբը.

Որ ձեր հաւատքը մարդկանց իմաստութիւնով չլինի՝ այլ Աստուծոյ զօրութիւնովը»:[10]

Փրկիչի առաքելության մասին սուրբ գրությունների ամենահայտնի պատմություններից մի քանիսը գտնվում են Ա Կորնթացիս թղթում: Գլուխներից մեկը՝ 15-րդ գլուխը, համաշխարհային ուշադրության արժանացավ Ջորջ Ֆրեդերիկ Հենդելի *Մեսիա* օրատորիայի միջոցով:[11] Այն պարունակում է խորը վարդապետություն Փրկիչի մասին: *Մեսիայի* երրորդ մասում, անմիջապես «Ալելուիա կրկներգից» հետո, սուրբ գրություններ մեջ մեծ մասը, որոնք օգտագործվում են Ա Կորնթացիս 15-րդ գլխից են: Այդ հատվածներից մի քանիսում Պողոսը հիանալիորեն նկարագրում է Փրկիչի կատարած գործերից մի քանիսը:

«[Բայց] հիմա Քրիստոսը յարութիւն է առել, . . . ինքը ննջածների առաջնեկ եղավ:

«. . . Ուրեմն որովհետև մարդով եղավ մահը, եւ մարդով էլ մեռելների յարութիւնը:

Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են: . . .

Ով մահ, ո՞ւր է քո խայթոցը. Գերեզման, ո՞ւր է քո հաղթութիւնը . . .

Բայց շնորհակալութիւն Աստուծուն, որ տուավ մեզ հաղթութիւնը մեր Տէր Հիսուս Քրիստոսի ձեռովը»:[12]

Մենք գիտենք, որ Ուրացությունը տեղի ունեցավ մասնավորապես, որովհետև մարդկանց փիլիսոփայությունները վեր էին դասվում Քրիստոսի հիմնարար, կարևոր վարդապետությունից: Փրկիչի ուղերձը պարզությամբ ուսուցանելու փոխարեն, շատ պարզ և արժեքավոր ճշմարտություններ փոխվեցին կամ կորան: Փաստորեն, Քրիստոնեությունը որդեգրեց որոշ հունական փիլիսոփայական ավանդույթներ՝ համաձայնեցնելու մարդկանց հավատալիքները իրենց առկա մշակույթի հետ: Պատմաբան Ուիլլ Դյուրանը գրել է. «Քրիստոնեությունը չկործանեց հեթանոսությունը, այլ որդեգրեց այն: Հունական միտքը, մահանալով, վերաբնակված կյանք առավ»:[13] Պատմականորեն և մեր օրերում, ոմանք մերժում են Հիսուս Քրիստոսի ավետարանը, որովհետև նրանց կարծիքով այն չունի բավարար մտավոր իմաստաբանություն:

Վերածննդի արշալույսին շատերն առնվազն ձևացնում էին, որ հետևում են Փրկիչի ուսմունքներին: Շատ երկրներ համարում էին իրենց քրիստոնեական ազգեր: Բայց նույնիսկ այդ ժամանակ մարգարեություն կար ավելի դժվար ժամանակի՝ մեր օրերի մասին:

Հեբեր Ք. Քիմբալը այս տնտեսության առաջին Տասներկու Առաքյալներից մեկն էր և Նախագահ Բրիգամ Յանգի Առաջին Խորհրդականը: Նա նախազգուշացրել է. «Ժամանակը գալիս է, երբ դժվար կլինի տարբերել Սրբի դեմքը Աստծո ժողովրդի թշնամու դեմքից: Այդ ժամանակ . . . ուշադրություն դարձրեք մեծ մաղին, քանզի կլինի մեծ մաղով անցնելու ժամանակ և շատերը կընկնեն»: Նա եզրակացրեց, որ «մի ՍՏՈՒԳԱՐՔ է գալու»:[14]

Մեր օրերում Քրիստոնեության ազդեցությունը շատ երկրներում, ներառյալ Միացյալ Նահանգներում բավականին կրճատվել է: Առանց կրոնական հավատալիքների Աստծո հանդեպ պատասխանատվության զգացում չկա: Ուստի, դժվար է հաստատել համընդհանուր արժեքներ, նրա վերաբերյալ, թե ինչպես ապրել: Փիլիսոփայությունները, որոնք խորապես արմատացած են, հաճախ հակասում են միմյանց:

Դժբախտաբար, սա պատահում է նաև Եկեղեցու որոշ անդամների հետ, ովքեր կորցնում են իրենց կողմնորոշումը և ազդեցության տակ ընկնում պահի տակ. նրանցից շատերը ակնհայտորեն արդարակյաց չեն:

Հեբեր Ք. Քիմբալի մարգարեությանը համահունչ՝ Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է 1982 թվականին. «Մեծ մաղումը տեղի կունենա արդարակյաց վարքի ձախողումների պատճառով, որոնք մնում են չապաշխարված: Մի քանիսը կհանձնվեն, մինչև վերջ դիմանալու փոխարեն: Մի քանիսը կխաբվեն ուրացողների կողմից: Մյուսները կվիրավորվեն, քանի որ բավականաչափ գայթակղության քարեր կան յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար»:[15]

Մեկ այլ գայթակղության քար է՝ հրաժարվելը տեսնել մեղքն իր ճշմարիտ լույսի ներքո

Մեր օրերի առանձնահատուկ և անհանգստացնող կողմերից մեկն այն է, որ շատ մարդիկ զբաղվում են մեղսավոր վարքով, բայց մերժում են այն մեղսավոր համարել: Նրանք չունեն խղճի խայթ կամ պատրաստակամություն՝ ընդունելու իրենց վարքը որպես բարոյական սխալ: Նույնիսկ ոմանք, ովքեր դավանում են հավատք Հոր և Որդու հանդեպ, անիրավաբար այնպիսի դիրք են ընդունում, որ սիրող Երկնային Հայրը չպիտի գործադրի հետևանքներ վարքի համար, որը հակառակ է Նրա պատվիրաններին:

Սա ակնհայտորեն Կորիանթոնի՝ Կրտսեր Ալմայի որդու գրված դիրքն էր Մորմոնի Գրքում: Նա լուրջ անբարոյական վարք էր դրսևորել և Ալման նրան խրատում էր: Մենք օրհնված ենք, որ մեծ մարգարե Ալման, ով անձնապես զգացել էր «ամենախավար անդունդը [և] սքանչելի լույսը»,[16] գրի է առել այն հրահանգը, որը նա տվել է: Ալմա 39-րդ գլխում, մենք կարդում ենք, թե ինչպես էր նա խրատում այդ որդուն ապաշխարության գործընթացի միջոցով և ապա բացատրում, թե ինչպես էր Քրիստոսը գալու՝ վերցնելու մեղքը: Նա հստակ դարձրեց Կորիանթոնի համար ապաշխարության անհրաժեշտությունը, որովհետև «ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել Աստծո արքայությունը»:[17]

Ալմա 42-ը պարունակում է Քավության վերաբերյալ ողջ սուրբ գրությունում ամենահոյակապ վարդապետությունը: Ալման օգնեց Կորիանթոնին հասկանալ, որ դա «անարդարություն չէ, որ մեղսագործը պիտի մատնվի թշվառության մի վիճակի»:[18] Բայց նա նշեց, որ սկսած Ադամից, ողորմած Աստված տվել է «ժամանակահատված ապաշխարության համար», որովհետև առանց ապաշխարության «փրկության մեծ ծրագիրը խափանված կլիներ»:[19] Ալման նաև հաստատեց, որ Աստծո ծրագիրը «երջանկության ծրագիր է»:[20]

Ալմայի ուսմունքները շատ ուսուցանող են. «Քանզի ահա արդարադատությունը ներկայացնում է իր բոլոր պահանջները, և նաև ողորմությունն է հայցում այն բոլորը, ինչն իր սեփականն է, և այսպես, բացի անկեղծորեն զղջացողից, ոչ մեկը չի փրկվում»:[21] Ապաշխարության փառահեղ օրհնություններն իրենց ճշմարիտ լույսով տեսնելը և հավատարմությունը Փրկիչի ուսմունքներին ծայրահեղ կարևոր են: Մնազնիվ չէ հստակ լինել, ինչպես Ալման Կորիանթոնի հետ մեղսավոր ընտրությունների հետևանքների և ապաշխարության վերաբերյալ: Հաճախ է հայտարարվել, որ «Վաղ թե ուշ ամենքը ստիպված կլինեն դիմագրավել հետևանքներին»:[22]

Փրկչի Քավության հիասքանչ և երկնային օրհնությունն այն է, որ ապաշխարության միջոցով մեղսավոր վարքը ջնջվում է: Կորիանթոնի ապաշխարությունից հետո Ալման եզրակացրեց. «Դու այլևս չթողնես, որ այս բաները խռովեն քեզ, և թող միայն քո մեղքերը խռովեն քեզ այնպիսի մի խռովքով, որը կբերի քեզ վար՝ դեպի ապաշխարություն»:[23]

Նշանակետից այն կողմ նայելը գայթակղության քար է

Մարգարե Հակոբը ակնարկում է հնադարյան հրեաներին որպես մի «խստապարանոց ժողովուրդ», ովքեր արհամարհեցին պարզությունը, «սպանեցին մարգարեներին, և փնտրեցին բաներ, որոնք չէին կարող հասկանալ: Ուստի նրանց կուրության պատճառով, կուրություն, որը եկել էր նշանակետից այն կողմ նայելուց, նրանք պիտի անպայման ընկնեին»:[24]

Չնայած կան շատ օրինակներ նշանակետից այն կողմ նայելու վերաբերյալ,[25] մեր օրերում կարևորներից մեկը ծայրահեղությունն է: Ավետարանական ծայրահեղությունը այն է, երբ մենք բարձրացնում ենք որևէ ավետարանական սկզբունք մյուս հավասար կարևոր սկզբունքներից վեր և բռնում մի դիրք, որը տարբեր կամ հակառակ է Եկեղեցու ղեկավարների ուսմունքներին: Օրինակներց մեկն այն է, երբ մարդ կողմնակից է հավելումների, փոփոխությունների կամ հիմնական շեշտադրում է կատարում Իմաստության Խոսքի մի մասի վրա: Մյուսը օրինակը աշխարհի վերջին տարբեր թանկարժեք սցենարներով նախապատրաստվելն է: Երկու օրինակներում էլ մարդկանց խրախուսվում է ընդունել անձնական մեկնաբանությունները: «Եթե մենք առողջության օրենքը կամ որևէ այլ սկզբունք կրոնամոլության ենք վերածում, մենք նայում ենք նշանակետից այն կողմ»:[26]

Խոսելով կարևոր մի վարդապետության մասին, Տերը հայտարարել է. «Ով հայտարարում է ավել կամ պակաս քան սա, նա ինձանից չէ, այլ դեմ է ինձ, ուստի նա իմ եկեղեցուց չէ»:[27] Երբ մենք նախապատվություն ենք տալիս որևէ սկզբունքի մի ձևով, որը նվազեցնում է մեր պարտավորությունը մյուս հավասարապես կարևոր սկզբունքների հանդեպ կամ Եկեղեցու ղեկավարների ուսմունքներից տարբեր կամ հակառակ դիրքորոշում ենք ընդունում, մենք նայում ենք նշանակետից այն կողմ:

Բացի այդ, որոշ անդամներ որոշ գործերի, որոնք մեծամասամբ լավն են, շատ ավելի մեծ կարևորություն են տալիս, քան ավետարանի հիմնական վարդապետությանը: Նրանք փոխարինում են իրենց նվիրվածությունը, առաջնահերթություն տալով այդ գործի հանդեպ իրենց պարտավորությանը, և երկրորդ պլան են մղում Փրկիչի և Նրա ուսմունքների հանդեպ իրենց իրենց պարտավորությունը: Եթե մենք ինչ-որ բան Փրկիչի հանդեպ մեր նվիրվածությունից վեր ենք դասում, եթե մեր վարքագիծն ընդունում է Նրան որպես ուղղակի մեկ այլ ուսուցչի և ոչ թե Աստծո աստվածային Որդու, ապա մենք նայում ենք նշանակետից այն կողմ: Նպատակակետը Հիսուս Քրիստոսն է:

Վարդապետություն և Ուխտերի 76-րդ բաժինը պարզաբանում է, որ «Հիսուսի վկայությունում անվեհեր լինելը»[28] պարզ, հիմնական ստուգարք է նրանց միջև, ովքեր կժառանգեն սելեստիալ արքայության օրհնությունները և նրանց միջև, ովքեր կժառանգեն ավելի ցածր՝ թերեստրիալ արքայության օրհնությունները: Անվեհեր լինելու համար, մենք պետք է կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի զորության և Նրա քավիչ զոհաբերության վրա, որը հաղթահարում է մահը և մեր ապաշխարության միջոցով մեղքից մաքրում է մեզ, ինչպես նաև պետք է հետևենք Քրիստոսի վարդապետությանը:[29] Մենք նաև Փրկիչի կյանքի լույսի և գիտելիքի և ուսմունքների կարիքն ունենք՝ առաջնորդելու մեզ ուխտի արահետում, ներառյալ տաճարի սրբազան արարողությունները: Մենք պետք

է անսասան լինենք Քրիստոսում, սնվենք Նրա խոսքով և համբերենք մինչև վերջ:[30]

Եզրակացություն

Եթե մենք պետք է անվեհեր լինենք Հիսուսի մեր վկայությունում, մենք պետք է խուսափենք գայթակղության քարերից, որոնք թակարդում են և խանգարում շատ առումներով պատվավոր տղամարդկանց և կանանց առաջընթացը: Եկեք որոշենք միշտ լինել Նրա ծառայության մեջ: Երբ գիտելիք ենք որոնում, մենք պետք է խուսափենք մարդկանց փիլիսոփայություններից, որոնք նվազեցնում են Փրկիչի հանդեպ մեր նվիրվածությունը: Մենք պետք է տեսնենք մեղքը իր ճշմարիտ լույսի ներքո և ընդունենք Փրկիչի Քավությունը ապաշխարության միջոցով: Մենք պետք է խուսափենք նայել նշանակետից այն կողմ և կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկիչի և Քավիչի վրա և հետևենք Նրա վարդապետությանը:

Հայրս նայում էր սյանը՝ որպես էլեկտրականության, լույսի և եփելու ու մաքրելու համար առատ ջուր ստանալու միջոցի: Այն ցատկահարթակ էր իր կյանքը բարելավվելու համար:

Մի գրող առաջարկում է, որ գայթակղության քարերը կարելի է դարձնել «ազնիվ բնույթ ձևավորող և դեպի Երկինք տանող ցատկահարթակներ»:[31]

Մեզ համար անվեհեր լինելը Հիսուսի մեր վկայությունում ցատկահարթակ է Փրկիչի շնորհին և սելեստիալ արքայությանն արժանանալու համար: Հիսուս Քրիստոսը միակ անունն է երկնքի տակ, որի միջոցով մենք կարող ենք փրկվել:[32] Ես բերում եմ իմ վստահ վկայությունը ինչպես Նրա աստվածայնության, այնպես էլ Հոր ծրագրում Նրա գերբնական դերի մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 14.7, տես նաև Հովհաննես 17.3:

2. Վարդապետություն և Ուխտեր 76.79:
3. Տես *Հավատքին հավատարիմ. Ավետարանական տեղեկատու* (2004), 52–53:
4. *Merriam-Webster's Collegiate Dictionary,* 11th ed. (2003), "stumbling block."
5. *Merriam-Webster's Collegiate Dictionary,* "stumble."
6. Վարդապետություն և Ուխտեր 93.36:
7. Տես Գործք 9.1–9, 26.13–18:
8. Տես Frederic W. Farrar, *The Life and Work of St. Paul* (1898), 319:
9. Տես Farrar, *The Life and Work of St. Paul,* 319–20:
10. Ա Կորնթացիս 2.4–5:
11. Տես George Frideric Handel, *Messiah,* ed. T. Tertius Noble (1912):
12. Ա Կորնթացիս 15.20–22, 55, 57:
13. Will Durrant, *The Story of Civilization,* vol.3 *Caesar and Christ* (1944), 595.
14. Heber C. Kimball, in Orson F. Whitney, *Life of Heber C. Kimball* (1945), 446.
15. Neal A. Maxwell, "Be of Good Cheer," *Ensign,* Nov. 1982, 68.
16. Մոսիա 27.29:
17. Ալմա 40.26:
18. Ալմա 42.1: Վերջին Օրերի Սրբերի վարդապետությունում կա դրույթ ողջ մարդկության համար, ներառյալ նրանց, ովքեր չեն լսում Քրիստոսի մասին այս կյանքում, երեխաների համար, ովքեր մահանում են մինչև պատասխանատվության տարիքը և նրանց, ովքեր թերզարգացած են (տես Վարդապետություն և Ուխտեր 29.46–50, 137.7–10):
19. Ալմա 42.5:
20. Ալմա 42.8:
21. Ալմա 42.24: Ուշադրություն դարձրեք, որ անձնական դերանունը արդարության համար *«his»* է (արական) իսկ ողորմածության համար անձնական դերանունը *«her»* է (իգական):
22. Robert Louis Stevenson, in Carla Carlisle, "A Banquet of Consequences," *Country Life* , July 6, 2016, 48. Mrs. Carlisle credits Robert Louis Stevenson for the quote. Some give credit to others.
23. Ալմա 42.29:
24. Հակոբ 4.14:
25. Մի հոդվածում, որը ես գրել եմ Եկեղեցու ամսագրերի համար 2003 թվականին, ես շեշտադրել եմ չորս բնագավառներ, որոնք կարող են ստեղծել աստվածաբանական կուրություն և գայթում, որը Հակոբը նկարագրում է որպես՝ ավետարանի ճշմարտությունները մարդկանց փիլիսոփայություններով փոխարինելը, ավետարանական ծայրահեղություն, ամենօրյա նվիրաբերումը հերոսական ժեստերով փոխարինելը և կանոնները վարդապետությունից վեր դասելը (տես «Նշանակետից այն կողմ նայելը *Լիահոնա,* մարտ. 2003, 21–24:
26. Քվենթին Լ. «Նշանակետից այն կողմ նայելը» *Լիահոնա,* մարտ. 2003, 22:
27 Վարդապետություն և Ուխտեր 10.68:
28. Վարդապետություն և Ուխտեր 76.79:
29. Տես 2 Նեփի 31.17–21:
30. Տես 2 Նեփի 31.20–21:
31. Henry Ward Beecher, in Tryon Edwards, *A Dictionary of Thoughts* (1891), 586
32. Տես 2 Նեփի 31.21, Մոսիա 3.17:

Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

Նայել Գրքին, նայել Տիրոջը

Կարո՞ղ եք դուք նայել Մորմոնի Գրքին որպես ձեր հիմնաքարի՝ ձեր ուժի հոգևոր կենտրոնի:

Մերի Էլիզաբեթ Ռոլինս

Մտովի ես պատկերացնում եմ ձեզ որպես աճող սերունդ, որ աշխարհի մի անկյունում դիտում կամ լսում է այս համաժողովի նիստը: Կցանկանայի կիսվել ձեզ հետ մի իրական պատմությամբ, որը կարող է լինել և օրինակ, և դաս: Այն ձեզ ցույց կտա, թե ինչպես ավելի մոտենալ Տիրոջը և ձեռք բերել ավելի մեծ ուժ՝ փորձությունները հաղթահարելու համար:

Սա մի պատմություն է Նյու Յորքում ապրող մի երիտասարդ աղջկա մասին, ով երեք տարին չլրացած կորցրել էր իր հորը, ում նավակը խորտակվել էր մեծ լճում: Նա, մայրը, մեծ եղբայրը և փոքր քույրը տեղափոխվել էին մեկ այլ նահանգի մի նոր քաղաք՝ ապրելու իր մորաքրոջ և մորեղբոր հետ: Ընտանիքի ժամանելուց որոշ ժամանակ անց նրանց քաղաք եկան նոր կազմավորված կրոնի միսիոներներ և անդամներ՝ բերելով ավետարանի Վերականգնման փառահեղ լուրը: Նրանք ուշագրավ պատմություն պատմեցին հրեշտակի մասին, ով հնադարյան արձանագրություններ էր հանձնել Ջոզեֆ Սմիթ անունով մի պատանու, արձանագրություն, որը նա թարգմանեց Աստծո զորությամբ: Այցելուներից երկուսը՝ Օլիվեր Քաուդերին և Ջոն Ուիթմերը, անձամբ տեսել էին հնադարյան արձանագրության փորագրված մետաղյա էջերը իրենց աչքերով, և Ուիթմերը վկայեց, որ իր ձեռքերով բռնել էր ոսկյա թիթեղները: Այդ արձանագրությունը վերջերս էր հրատարակվել, և Եղբայր Ուիթմերը իր հետ բերել էր գիրքը: Գիրքն, իհարկե, կոչվում էր Մորմոնի Գիրք:

Երբ 12-ամյա Մերին լսեց գրքի վերաբերյալ միսիոներների խոսքերը, նա սրտում հատուկ զգացողություն

ունեցավ: Չնայած Մորմոնի Գիրքը բավականին հաստ էր, Մերին մեծ ցանկություն ուներ այն կարդալու: Հեռանալիս, Եղբայր Ուիթմերը գրքի մի թանկարժեք օրինակ տվեց Եղբայր Իսահակ Մորլեյին, ով Մերիի մորեղբոր ընկերն էր և նոր եկեղեցու տարածքային ղեկավարը:

Հետագայում Մերին գրել է. «Ես գնացի [Եղբայր Մորլեյի] տուն . . . և խնդրեցի ցույց տալ ինձ գիրքը. [նա] դրեց այն իմ ձեռքերի մեջ [և] երբ ես նայեցի գրքին, ես այնպիսի մեծ ցանկություն զգացի կարդալու այն, որ չկարողացա զսպել ինձ և խնդրեցի տանել այն տուն և կարդալ այն: . . . Նա ասաց, . . . որ դեռ ժամանակ էլ չի ունեցել անձամբ մի գլուխ այդտեղից կարդալու համար, և եղբայրներից ընդամենը մի քանիսն էին տեսել այն, սակայն ես այնքան ջերմեռանդորեն խնդրեցի, որ նա ի վերջո ասաց. «Զավակս, եթե դու այս գիրքը տուն կբերես վաղն առավոտյան նախաճաշից առաջ, դու կարող ես վերցնել այն»:

Մերին տուն վազեց և այնքան տարված էր գրքով, որ արթուն մնաց գրեթե ողջ գիշեր՝ կարդալով այն: Հաջորդ առավոտ, երբ նա վերադարձրեց գիրքը, Եղբայր Մորլեյն ասաց. «Կարծում եմ, դու շատ բան չես կարդացել այստեղից» և «չեմ հավատում, թե դու մեկ բառ կարող ես ինձ ասել այս գրքից»: Մերին ուղիղ կանգնեց և անգիր ասաց Մորմոնի Գրքի առաջին հատվածը: Ապա պատմեց նրան Նեփի մարգարեի պատմությունը: Ավելի ուշ Մերին գրել է. «Նա ապշած նայեց ինձ վրա և ասաց. «Զավակս, տուն տար այս գիրքը և ավարտիր, ես կարող եմ սպասել»:

Կարճ ժամանակ անց Մերին ավարտեց գրքի ընթերցանությունը և առաջին մարդն էր իր քաղաքում, ով կարդաց ամբողջ գիրքը: Նա գիտեր, որ այն ճշմարիտ է և տրված է Երկնային Հոր կողմից: Մինչ նա նայում էր գրքին, նա նայում էր Տիրոջը:

Մեկ ամիս անց մի հատուկ այցելու եկավ նրա տուն: Ահա, թե ինչ է գրել Մերին այդ օրվա տպավորությունների մասին. «Երբ [Ջոզեֆ Սմիթը] տեսավ ինձ, նա շատ լուրջ նայեց ինձ: . . . Այնուհետև . . . տվեց ինձ մի

մեծ օրհնություն, . . . և գիրքը նվիրեց ինձ և ասաց, որ Եղբայր Մորլեյին կտա մեկ այլ [օրինակ]: . . . Մենք բոլորս էլ զգացինք, որ նա Աստծո մարդ էր, քանի որ խոսում էր զորությամբ և իշխանություն ունեցողի պես»:

Այս երիտասարդ աղջիկը՝ Մերի Էլիզաբեթ Ռոլինսը, իր կյանքում տեսավ շատ այլ հրաշքներ և միշտ պահեց Մորմոնի Գրքի իր վկայությունը:[1] Այս պատմությունը յուրահատուկ իմաստ ունի ինձ համար, քանի որ նա իմ հորաքույրն է եղել չորս սերունդ առաջ: Մերիի օրինակի և իմ կյանքի այլ փորձառությունների միջոցով ես հասկացել եմ, որ մարդը երբեք չափազանց երիտասարդ չէ Մորմոնի Գրքի վերաբերյալ անձնական վկայություն փնտրելու և ստանալու համար:

Ձեր վկայության հիմնաքարը

Մերիի պատմության մեջ անձնական դաս կա ձեզ համար:Երիտասարդ տղամարդիկ, երիտասարդ կանայք և երեխաներ, ձեզանից յուրաքանչյուրը կարող է ունենալ նույն զգացողությունները, որ նա է ունեցել: Երբ դուք կարդում եք Մորմոնի Գիրքը և աղոթում, ցանկանալով իմանալ դրա ճշմարտացիության մասին, դուք նույնպես ձեր սրտում կարող եք ունենալ նույն տպավորությունը, որը Մերին ստացավ: Դուք նաև կբացահայտեք, որ երբ կանգնեք ու վկայեք Մորմոնի Գրքի մասին, դուք կզգաք նույն հաստատող հոգին: Սուրբ Հոգին կխոսի ձեր սրտի հետ: Դուք կարող եք զգալ հաստատող այս նույն հոգին նաև այն ժամանակ, երբ լսեք, թե ինչպես են ուրիշները կիսվում Մորմոնի Գրքի վերաբերյալ իրենց վկայությամբ: Այս հոգևոր վկայություններից յուրաքանչյուրը կարող են հանգեցնել այն բանին, որ Մորմոնի Գիրքը դառնա ձեր վկայության հիմնաքարը:

Թույլ տվեք բացատրել: Մարգարե Ջոզեֆ Սմիթը, ով թարգմանեց Մորմոնի Գիրքը «Աստծո պարգևով և զորությամբ», նկարագրել է Մորմոնի Գիրքը որպես «ամենաճիշտը երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի հիմնաքար»:[2]

1830 թվականի Մորմոնի Գրքի առաջին տպագրությունից հետո ավելի քան 174 միլիոն օրինակ է տպագրվել 110 տարբեր լեզուներով՝ ապացուցելով, որ Մորմոնի Գիրքը շարունակում է լինել մեր կրոնի հիմնաքարը: Սակայն ի՞նչ նշանակություն ունի այն ձեզանից յուրաքանչյուրի համար:

Ճարտարապետության մեջ հիմնաքարը կամարաձև դարպասի առանցքային հատվածն է: Այն կամարի ճիշտ կենտրոնում և ամենաբարձր կետում գտնվող սեպաձև

Մորմոնի Գիրքը, ինչպես կամարի հիմնաքարը, կարող է դառնալ մեր վկայության անկյունաքարը։

քար է։ Քարերի մեջ այն ամենակարևորն է, քանի որ պահում է կամարի կողմերի հավասարակշռությունը՝ կանխելով փլուզումը։ Այն նաև շինարարական այն տարրն է, որը հնարավոր է դարձնում դարպասների բացվելը։

Ավետարանական եզրույթի համաձայն պարզև և օրհնություն է Տիրոջից, որ մեր կրոնի հիմնաքարն այնքան իրական է, որքան Մորմոնի Գիրքը, և դուք կարող եք ձեր ձեռքն առնել այն ու կարդալ։ Կարո՞ղ եք դուք նայել Մորմոնի Գրքին որպես ձեր հիմնաքարի, ձեր ուժի հոգևոր կենտրոնի։

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը մեկնաբանել է Ջոզեֆ Սմիթի այդ ուսմունքները։ Նա ասել է. «Մորմոնի Գիրքը հանդիսանում է մեր կրոնի հիմնաքարը երեք առումներով։ Այն Քրիստոսի մասին մեր վկայության հիմնաքարն է։ Այն մեր վարդապետության հիմնաքարն է։ Այն վկայության հիմնաքարն է»։

Նախագահ Բենսոնն ուսուցանել է. «Մորմոնի Գիրքը սովորեցնում է մեզ ճշմարտությունը [և] վկայում Քրիստոսի մասին։ . . . Սակայն ավելին կա այնտեղ։ Գիրքն ունի զորություն, որը սկսում է հորդել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք լրջորեն ուսումնասիրել գիրքը։ Դուք ավելի մեծ ուժ կգտնեք փորձությունները հաղթահարելու համար։ . . . Դուք զորություն կգտնեք մնալու ուղիղ ու նեղ արահետի վրա»։[3]

Իմ անձնական վկայությունը

Իմ կյանքում Մորմոնի Գիրքը դարձել է իմ վկայության հիմնաքարը տարիների ընթացքում և մի շարք փորձառությունների միջոցով։ Իմ վկայության ձևավորմանը նպաստող մի զորեղ փորձառություն տեղի ունեցավ, մինչ ես երիտասարդ միսիոներ էի և ծառայում էի իմ առաջին տարածքում՝ Կումամոթոյում (Ճապոնիա)։ Ես և զուգընկերս քարոզում էինք՝ անցնելով տնից տուն։ Ես հանդիպեցի մի տատիկի, ով բարյացակամորեն հրավիրեց մեզ իր տան բակ, որ ճապոներեն անվանում են *ջենկան*։ Այդ շոգ օրը նա մեզ սառը ջուր առաջարկեց։ Ես վերջերս էի եկել Ճապոնիա և նոր էի ավարտել Մորմոնի Գրքի ընթերցանությունը և աղոթում էի, որ հաստատ իմանայի, որ այն ճիշտ է։

Քանի որ ես նոր էի եկել Ճապոնիա, այդքան էլ լավ չէի խոսում ճապոներեն։ Ուստի, չեմ կարծում, թե այս կինը շատ բան էր հասկանում իմ ասածներից։ Ես սկսեցի ուսուցանել նրան Մորմոնի Գրքի մասին, նկարագրելով, թե ինչպես Ջոզեֆ Սմիթը հրեշտակից ստացավ թիթեղների վրա փորագրված հնադարյան արձանագրությունները, և թե ինչպես նա թարգմանեց դրանք Աստծո զորությամբ։

Մինչ ես վկայում էի նրան, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, ես ստացա ամենաուժեղ տպավորությունը, և սիրտս լցվեց մխիթարության ջերմ զգացումով և խաղաղությամբ, ինչը սուրբ գրություններում նկարագրվում է այսպես. «կուրծքդ կայրվի քո ներսում»։[4] Այդ զգացողությունը զորեղ կերպով վերահաստատեց, որ Մորմոնի Գիրքն իսկապես Աստծո խոսքն է։ Այդ պահին իմ զգացմունքներն այնքան ուժեղ էին, որ արցունքներ հայտնվեցին իմ աչքերում, և ես խոսեցի այդ ճապոնացի տատիկի հետ։ Ես երբեք չեմ մոռանա այդ օրվա յուրահատուկ զգացողությունը։

Ձեր անձնական վկայությունը

Ձեզանից յուրաքանչյուրը նույնպես կարող է ստանալ անձնական վկայություն այս գրքի վերաբերյալ։ Դուք գիտակցո՞ւմ եք, որ Մորմոնի Գիրքը գրվել է ձեզ համար և ձեր օրերի համար։ Այս գիրքը համարվում է այսպես կոչված ժամանակների լրության տնտեսությունում ապրելու օրհնություններից մեկը։ Չնայած Մորմոնի Գիրքը գրվել է ոգեշնչված, հնադարյան հեղինակների կողմից, որոնցից շատերը մարգարեներ են եղել, նրանք և նրանց օրերի մարդիկ չեն կարողացել օգտվել այդ գրքից ամբողջությամբ։ Դուք այժմ հեշտությամբ կարող եք ձեռք բերել այդ սուրբ գրությունը, որը մարգարեները, քահանաները և թագավորները փայփայել են, ընդունել և պահպանել։ Դուք առավելություն ունեք ձեր ձեռքում պահելու ամբողջական Մորմոնի Գիրքը։ Հետաքրքրականն այն է, որ Մորմոնի Գրքի մարգարեներից մեկը՝ Մորոնին, տեսավ մեր օրերը՝ ձեր օրերը։ Նա նույնիսկ տեսավ ձեզ տեսիլքում՝ հարյուրավոր տարիներ առաջ։ Մորոնին գրել է.

«Ահա, Տերն ինձ ցույց է տվել մեծ և զարմանալի բաներ նրա վերաբերյալ, ինչ պետք է . . . գա, այն օրը, երբ այս բաներն, — նկատի ունենալով Մորմոնի Գիրքը, — առաջ կգան ձեր մեջ։

Ահա, ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, և սակայն դուք ներկա չեք։ Բայց ահա, Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները»։[5]

Որպեսզի օգնեմ ձեզ դարձնելու Մորմոնի Գիրքը ձեր վկայության-հիմնաքարը, ես ձեզ հրավիրում եմ անել հետևյալը։ Ես վերջերս իմացա, որ շատ երիտասարդներ օրական գրեթե յոթ ժամ անց են կացնում հեռուստացույցի, համակարգչի և սմարթֆոնների էկրանների մոտ։[6] Հիշելով սա՝ կընդունե՞ք մի փոքր հրավեր։ Կփոխարինե՞ք ամեն օր էկրանների մոտ անցկացնելու ժամանակը, հատկապես, եթե այն նվիրված է սոցկայքերին, համացանցին, խաղերին կամ հեռուստացույցին, Մորմոնի Գիրքը կարդալու հետ։ Եթե իմ նշած միջոցներից դուք ճիշտ

ISTOCK.COM/ADRIANO PECCHIO

եք օգտվում, ապա հեշտությամբ ժամանակ կգտնեք օրական թեկուզ 10 րոպե Մորմոնի Գիրքն ուսումնասիրելու համար: Եվ դուք կարող եք այնպես կատարել ձեր ուսումնասիրությունը, որ դա ձեզ համար հաճելի լինի և հասկանալի՝ օգտվելով ձեր սարքավորումներից կամ գրքից: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վերջերս ասել է. «Մորմոնի Գրքի ընթերցանությունը մենք երբեք չպիտի դարձնենք դժվարին մի պարտականություն, ինչպես օրինակ՝ ամեն օր դառը դեղահաբը արագ կուլ տալով, նշում անել, որ դա կատարված է»:[7]

Կրտսեր տարիքի երեխաները կարող են կարդալ իրենց ծնողների, պապիկի ու տատիկի կամ սիրելի մեկի հետ: Եթե որևէ գլուխ, հատված կամ մաս բավականին բարդ է թվում ձեզ, անցեք հաջորդին: Ես պատկերացնում եմ ձեզ Մերիի օրինակին հետևելիս: Ես պատկերացնում եմ ձեզ ոգևորված, ժամանակ ու անաղմուկ մի վայր գտնելիս՝ Մորմոնի Գիրքը կարդալու համար: Ես պատկերացնում եմ ձեզ պատասխաններ, առաջնորդություն գտնելիս, Մորմոնի Գրքի և Հիսուս Քրիստոսի վերաբերյալ ձեր անձնական վկայությունը ձեռք բերելիս: Մինչ դուք նայում եք գրքին, դուք նայում եք Տիրոջը:

Դուք կկարդաք այս թանկարժեք գրքի հատվածները և կտեսնեք ձեր սիրելի Փրկիչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, գրեթե յուրաքանչյուր էջում: Ըստ մոտավոր հաշվարկների Նրա անվան որևէ ձևակերպմանը առնվազն մեկ անգամ հանդիպում ենք ամեն 1.7 հատվածում:[8] Քրիստոսն անձամբ վկայեց դրա ճշմարտացիության մասին այս վերջին օրերում՝ հայտարարելով. «Ինչպես կենդանի է ձեր Տերն ու ձեր Աստվածը, այն ճշմարիտ է»:[9]

Ես շնորհակալ եմ հրավերի և խոստումի համար, որը Տերը տվել է Մորոնի մարգարեի միջոցով ձեզանից յուրաքանչյուրին և բոլորին, ովքեր կարդում են Մորմոնի Գիրքը: Վերջում ես ուզում եմ կարդալ այդ հրավերը և խոստումը և ավելացնել իմ վկայությունը. «Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք

հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, [Հիսուս] Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:[10]

Ես վկայում եմ այս վերջին օրերում ավետարանի Վերականգնման և Մորմոնի Գրքի մասին՝ որպես այդ Վերականգնման շոշափելի փաստի: Ճիշտ, ինչպես այս գրքի բառերը ոգեշնչեցին 12-ամյա աղջկան ընդունել Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին գրեթե երկու դար առաջ, ճշմարտությունները, որոնք կգտնեք այնտեղ, կոգևորեն և կոգեշնչեն ձեզ նույն կերպ: Դրանք կամրացնեն ձեր հավատը, կլցնեն ձեր հոգին լույսով և կպատրաստեն ձեզ ապագայի համար, որի մասին դուք պատկերացում անգամ չունեք:

Գրքի էջերում դուք կգտնեք Աստծո անսահման սերն ու ողորմությունը: Մինչ դուք կջանաք հետևել այնտեղ գտած ուսմունքներին, ձեր ուրախությունը, հասկացողությունը կմեծանան և պատասխանները, որոնք դուք փնտրում եք՝ կապված մահկանացու կյանքի ներկայացրած բազմաթիվ մարտահրավերների հետ, կբացվեն ձեզ համար: Մինչ դուք նայում եք գրքին, դուք նայում եք Տիրոջը: Մորմոնի Գիրքը պարունակում է Աստծո խոսքը: Այս մասին ես վկայում եմ իմ ողջ սրտով ու հոգով, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես “Mary Elizabeth Rollins Lightner,” *Utah Genealogical and Historical Magazine,* July 1926, 193–95:
2. Մորմոնի Գրքի նախաբանը:
3. Ezra Taft Benson, “The Book of Mormon —Keystone of Our Religion,” *Ensign,* Nov. 1986, 5, 7
4. Վարդապետություն և Ուխտեր 9.8:
5. Մորմոն 8.34–35:
6. Տես American Academy of Pediatrics, “Media and Children,” aap.org:
7. Russell M. Nelson, “Strengthen the Shepherds” (address given at the general conference leadership meetings, Sept. 28, 2016):
8. Susan Easton Black, *Finding Christ through the Book of Mormon* (1987), 16–18:
9. Վարդապետություն և Ուխտեր 17.6:
10. Մորոնի 10.4, տես նաև հատվածներ 3, 5:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորում

«Իմ սիրո մեջ հաստատուն մնացեք»

Աստծո սերն անսահման է, և այն կհարատևի ընդմիշտ, սակայն, թե ինչ է դա նշանակում յուրաքանչյուրիս համար, կախված է նրանից, թե մենք ինչպես ենք արձագանքում Նրա սիրուն։

Աստվածաշունչն ասում է մեզ. «Աստված սեր է»:[1] Նա սիրո կատարյալ մարմնավորում է, իսկ մենք մեծապես ապավինում ենք այդ սիրո կայունությանն ու համընդհանուր հասանելիությանը: Ինչպես Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է ասել. «Աստված միշտ սիրում է ձեզ, արդյոք դուք զգում եք, թե ոչ, դուք արժանի եք սիրո: Նա պարզապես միշտ սիրում է ձեզ»:[2]

Աստվածային սերը նկարագրելու և դրա մասին խոսելու շատ եղանակներ կան: Եզրույթներից մեկը, որը հիմա հաճախ լսում ենք, այն է, որ Աստծո սերը «անվերապահ է»: Որոշ իմաստով դա ճիշտ է, սակայն *«անվերապահ»* բնորոշում չկա սուրբ գրության մեջ: Սուրբ գրության մեջ Նրա սերն ավելի շուտ նկարագրվում է որպես՝ «մեծ ու հրաշալի սեր»,[3] «կատարյալ սեր»,[4] «քավիչ սեր»,[5] և «հավիտենական սեր»:[6] Սրանք ավելի լավ եզրույթներ են, քանի որ *«անվերապահ»* բառը կարող է սխալ տպավորություն ստեղծել աստվածային սիրո մասին, ինչպես օրինակ՝ Աստված հանդուրժում ու ներում է մեր կատարած ամեն քայլ, քանի որ Նրա սերը անվերապահ է, կամ Աստված ոչինչ չի պահանջում մեզանից, քանի որ Նրա սերը անվերապահ է, կամ *բոլորը* փրկվում են երկնային արքայությունում, որովհետև Նրա սերը անվերապահ է: Աստծո սերն անսահման է, և այն կհարատևի ընդմիշտ, սակայն ինչ է դա նշանակում յուրաքանչյուրիս համար, կախված է նրանից, թե մենք ինչպես ենք արձագանքում Նրա սիրուն:

Հիսուսն ասել է.

«Ինչպես իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի. Իմ սիրո մեջ հաստատուն մնացեք:

«Եթե իմ պատուիրանները պահեք, կմնաք իմ սիրո մեջ, ինչպես ես իմ Հոր պատուիրանները պահեցի և մնում եմ Նրա սիրո մեջ»:[7]

«Հաստատուն մնալ» Փրկիչի սիրո մեջ՝ նշանակում է ստանալ նրա շնորհը և կատարելագործվել դրանով:[8] Նրա շնորհը ստանալու համար մենք պիտի հավատանք Հիսուս Քրիստոսին և պահենք Նրա պատվիրանները, ներառյալ՝ ապաշխարենք մեր մեղքերը, մկրտվենք՝ մեր մեղքերից ազատվելու համար, ստանանք Սուրբ Հոգին և շարունակենք ապրել հնազանդության ուղիով: [9]

Աստված միշտ կսիրի մեզ, բայց Նա չի կարող փրկել մեզ, երբ մեղքի մեջ ենք:[10] Հիշեք այն խոսքերը, որոնք Ամուղեկն ասաց Զիզրոմին, որ Փրկիչը կփրկագնի իր ժողովրդին ոչ թե իրենց մեղքերի *մեջ,* այլ *իրենց* մեղքերից,[11] դրա պատճառն այն է, որ մեղքերով հանդերձ, մենք անմաքուր ենք, իսկ «ոչ մի անմաքուր բան չի կարող ժառանգել երկնքի արքայությունը»[12] կամ բնակվել Աստծո ներկայության մեջ: «Եվ նա Հոր կողմից զորություն ունի տրված, փրկագնելու նրանց իրենց մեղքերից՝ ապաշխարության շնորհիվ. այդ նպատակով նա ուղարկել է իր հրեշտակներին՝ հայտարարելու ապաշխարության պայմանների ավետիքը, որը բերում է դեպի Քավիչի զորությունը, դեպի իրենց հոգիների փրկությունը»:[13]

Մորմոնի գրքից մենք սովորում ենք, որ Քրիստոսի տառապանքների՝ Նրա սիրո մեծագույն դրսևորման նպատակն էր «առաջ բերելու գթասրտությունը, որը հաղթում է արդարադատությանը և առաջ բերում միջոցներ մարդկանց համար, որ նրանք կարողանան ունենալ հավատք ի ապաշխարություն»:

«Եվ այսպես ողորմությունը կարող է բավարարել արդարադատության պահանջները, և օղակում է նրանց ապահովության բազուկների մեջ, մինչդեռ նա, ով չի գործադրում հավատք ի ապաշխարություն,



ենթակա է արդարադատության պահանջների ամբողջ օրենքին. հետևաբար, միայն նրա համար, ով ունի հավատք ապաշխարության համար, իրագործվում է փրկագնման մեծ և հավերժական ծրագիրը»:[14]

Ուստի ապաշխարությունը Նրա պարգևն է մեզ, որը ձեռք է բերվել շատ թանկ գնով:

Ոմանք կառարկեն, ասելով, որ Աստված օրհնում է բոլորին՝ առանց խտրականության, մեջբերելով, օրինակ՝ Հիսուսի խոսքերը Լեռան Քարոզից. «[Աստված] իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վերայ, և անձրև է բերում արդարների և անիրաւների վերայ»:[15] Իրոք, Աստված Իր բոլոր զավակների վրա հեղում է բոլոր հնարավոր օրհնությունները, այն բոլոր օրհնությունները, որոնք թույլ կտան հեղել սերն ու օրենքը, արդարությունն ու գթասրտությունը:

Ես ասում եմ ձեզ, սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին և աղոթք արեք ձեզ չարչարողների ու ձեզ հալածողների համար.

Որ որդիք լինիք ձեր Հորն, որ երկնքում է»:[16]

Այնուամենայնիվ, Աստծո ավելի մեծ օրհնությունները պայմանավորված են հնազանդությամբ: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մեկնաբանել է. «Աստծո սիրո հրաշալի ծաղկեփունջը՝ ներառյալ հավերժական կյանքը, ընդգրկում է օրհնություններ, որոնց մենք պիտի արժանի լինենք և չի պարունակում իրավունքներ, որոնք մենք պիտի ակնկալենք՝ առանց արժանավոր լինելու: Մեղսավորները չեն կարող Նրա կամքն իրենց կամքին ենթարկել և պահանջել Նրանից օրհնել իրենց մեղքի մեջ [տես Ալմա 11.37]: Եթե նրանք ցանկանում են վայելել Նրա հրաշալի ծաղկեփնջի յուրաքանչյուր ծաղիկը, նրանք պիտի ապաշխարեն»:[17]

Համբերատար մարդուն անմեղ ու անբասիր համարելուց բացի, ինչպես նաև խոստանալուց բացի, որ նա «կբարձրացվի վերջին օրը»,[18] գոյություն ունի Աստծո սիրո մեջ մնալու երկրորդ կարևոր կողմը: Մնալով Նրա սիրո մեջ, մենք հնարավորություն

կունենանք գիտակցել մեր ողջ ներուժը, որպեսզի դառնանք ճիշտ Նրա նման:[19] Ինչպես Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն է ասել. «Բայց Աստծո շնորհը չի վերադարձնում մեզ պարզապես մեր նախկին անմեղ վիճակին: . . . Նրա նպատակը շատ ավելի վեհ է: Նա ցանկանում է, որ Իր որդիներն ու դուստրերը դառնան Իր նման:[20]

Մնալ Աստծո սիրո մեջ այս իմաստով, նշանակում է լիովին ենթարկվել Նրա կամքին: Նաև նշանակում է՝ ընդունել Նրա ուղղումը, երբ անհրաժեշտ է, «որովհետև Տերը իրան սիրածին խրատում է»:[21] Դա նշանակում է՝ սիրեցեք ու ծառայեք միմյանց, ինչպես Հիսուսը սիրեց ու ծառայեց մեզ:[22] Դա նշանակում է սովորել «մնալ սելեստիալ արքայության օրենքում», որպեսզի կարողանանք «մնալ սելեստիալ փառքում»:[23] Որպեսզի Նա կարողանա մեզ դարձնել այն, ինչ կարող ենք դառնալ: Ըստ մեր Երկնային Հոր խնդրանքի, մարդը պիտի տեղի տա «Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ, և դառնա ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի, հոժար՝ ենթարկվելու բոլոր բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը»:[24]

Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Վերջին դատաստանը մեր *կատարած* բարի ու չար գործերի ընդհանուր պարզ գնահատականը չէ: Դա մեր այն գործերի ու մտքերի վերջնական արդյունքի արտահայտությունն է, թե ինչ ենք մենք *դարձել*»:[25]

Հելեն Քելլերի պատմությունը նման է այն առակին, թե աստվածային սերն ինչպես կարող է փոխել հոժարակամ հոգուն: Հելենը ծնվել է 1880 թվականին Միացյալ Նահանգների Ալաբամա նահանգում: Մեկ ու կես տարեկանում նա հանկարծակի հիվանդացավ անհայտ հիվանդությամբ, ինչի արդյունքում մնաց խուլ ու համր: Նա չափազանց խելացի էր և ընկնում էր հուսահատության մեջ, երբ փորձում էր հասկանալ ու շփվել իր շրջապատի հետ: Երբ Հելենը տեսավ իր ընտանիքի անդամների շարժվող շրթուքները և հասկացավ, որ նրանք օգտագործում են իրենց բերանը խոսելու համար, «նա ցասման մեջ ընկավ, քանի որ ի վիճակի չէր միանալ նրանց խոսակցությանը»:[26] Երբ Հելենը վեց տարեկան էր, նրա մոտ հաղորդակցման կարիքը և նրա հուսահատությունն այնքան արագ էին աճում, որ «ցասման պոռթկումները տեղի էին ունենում ամեն օր, երբեմն էլ ամեն ժամ»:[27]

Հելենի ծնողները Աննի Սալիվան անունով մի ուսուցիչ վարձեցին

իրենց դստեր համար։ Ինչպես որ մենք, հանձինս Հիսուս Քրիստոսի, ունենք մեկին, ով հասկանում է մեր թուլությունները,[28] Աննի Սալիվանը նույնպես մաքառում էր իր լուրջ դժվարությունների հետ և հասկանում էր Հելենի թուլությունները։ Հինգ տարեկանում Աննին վարակվեց մի հիվանդությամբ, որն առաջացրեց աչքի եղջրաթաղանթի ցավոտ սպիացում ու նա կուրացավ։ Երբ Աննին ութ տարեկան էր, նրա մայրը մահացավ, իսկ հայրը լքեց նրան ու նրա կրտեր եղբորը՝ Ջեմմիին, և նրանց ուղարկեցին «անկելանոց», որտեղ պայմաններն այնքան ողբալի էին, որ Ջեմմին մահացավ ընդամենը երեք ամիս անց։ Իր համառ հաստատակամության շնորհիվ Աննին ընդունվեց Պերկինսի կույրերի և թույլ տեսողություն ունեցողների դպրոցը, որտեղ նա փայլուն հաջողությունների հասավ։ Վիրահատական միջամտության շնորհիվ նրա տեսողությունը մի փոքր լավացավ, ուստի նա կարողացավ կարդալ տպատառերը։ Երբ Հելեն Քելլերի հայրը կապնվեց Պարկինսի դպրոցի հետ, ուսուցիչ փնտրելով իր դստեր համար, Աննին ընտրվեց։[29]

Սկզբում դա այնքան էլ հաճելի փորձառություն չէր։ Հելենը «խփում էր, կսմթում ու քացի տալիս իր ուսուցչին, և ջարդեց նրա ատամներից մեկը։ Աննին ի վերջո կարողացավ հսկողության տակ առնել իրավիճակը, Հելենի հետ տեղափոխվելով Քելլերների փոքրիկ քոթեջը։ Համբերատարությամբ և կոշտ համառությամբ նա վերջապես գրավեց երեխայի սիրտը և շահեց վստահությունը»։[30] Նույն ձևով, երբ մենք սկսում ենք ավելի շատ վստահել, քան դիմադրել մեր աստվածային Ուսուցչին, Նա կարողանում է աշխատել մեզ հետ՝ լուսավորելու և բարձրացնելու մեզ դեպի նոր իրականություն։[31]

Որպեսզի օգներ Հելենին բառեր սովորել, Աննին իր մատներով հեգում էր ծանոթ առարկաների անունները Հելենի ձեռքի ափի մեջ։ «Հելենին դուր էր գալիս այս «մատնախաղը», բայց նա չէր հասկանում, մինչև այն հայտնի պահը, երբ Աննին հեգեց «ջ-ու-ր» բառը, միաժամանակ լցնելով ջուրը Հելենի ափի մեջ։ Հելենն ավելի ուշ գրել է.

«Հանկարծ ես զգացի ինչ-որ մոռացված բանի մշուշապատ գիտակցում, ինչ-որ կերպ լեզվի առեղծվածը բացահայտվեց ինձ համար։ Ես գիտեի, որ «ջ-ու-ր»-ը նշանակում էր ինչ-որ հրաշալի սառը բան, որը հոսում էր իմ ձեռքի վրայով։ Այդ կենդանի բառը արթնացրեց իմ հոգին, լույս, հույս և ուրախություն տվեց նրան, ազատ արձակեց նրան։ . . . Ամեն բան անուն ուներ, իսկ յուրաքանչյուր անունը ծնունդ էր տալիս նոր մտքի։ Երբ մենք տուն վերադարձանք, յուրաքանչյուր առարկա, որը ես շոշափում էի, կարծես, թրթռում էր կյանքով»։[32]

Երբ Հելեն Քելլերը չափահաս դարձավ, նա հայտնի դարձավ լեզուների հանդեպ սիրով, գրողի իր հմտությամբ և հռետորի իր պերճախոսությամբ։

Հելեն Քելլերի կյանքը պատմող կինոնկարում նրա ծնողները ներկայացված են այնպես, կարծես, բավարարված են Աննի Սալիվանի աշխատանքով, քանի որ նա ընտելացրել էր իրենց վայրի աղջկան այն աստիճանի, որ Հելենն իրեն քաղաքավարի էր պահում ճաշի ժամանակ, բոլորի նման ուտում էր և ծալում էր անձեռոցիկը ճաշի վերջում։ Բայց Աննին գիտեր, որ Հելենը շատ ավելիին էր ընդունակ, և որ ինքը նշանակալի ներդրում ուներ կատարելու։[33] Չնայած մենք կարող ենք լիովին բավարարված լինել այն ամենով, ինչ արել ենք մեր կյանքում, և որ մենք պարզապես այն ենք, ինչ կանք, մեր Փրկիչը հասկանում է այն հիանալի ներուժը, որը մենք ընկալում ենք միայն «հայելու մէջ օրինակով»։[34] Մեզանից յուրաքանչյուրը կարող է հիացմունք զգալ, երբ մեր ներուժը ի հայտ է գալիս մեր ներսում։ Դա շատ նման է այն ուրախությանը, որը զգաց Հելեն Քելլերը, երբ բառերը հայտնվեցին նրա կյանքում, լույս տալով նրա հոգուն և ազատություն տալով նրան։ Մեզանից յուրաքանչյուրը կարող է սիրել ու ծառայել Աստծուն և հնարավորություն ունենալ օրհնել իր բարեկամին։ «Այլ ինչպէս գրուած է. Ինչ որ աչք չտեսաւ և ականջ չլսեց և մարդի սիրտը չընկաւ, այն պատրաստեց Աստուած իրան սիրողների համար»։[35]

Եկեք դիտարկենք Աստծո անգին սիրո գինը։ Հիսուսը ցույց տվեց, որ որպեսզի հատուցի մեր մեղքերի համար և փրկագնի մեզ հոգևոր ու ֆիզիկական մահից, Նրա տառապանքը ստիպեց, «նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով, — և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ»։[36] Նրա հոգեվարքը Գեթսեմանում և ապա խաչի վրա ավելի դաժան էր, քան ցանկացած մահկանացու կարող էր տանել։[37] Այնուամենայնիվ, Իր Հոր և մեր հանդեպ ունեցած Իր սիրո շնորհիվ Նա տոկաց և, որպես արդյունք, Նա կարող է մեզ առաջարկել անմահություն և հավերժական կյանք։

Շատ խորհրդանշական է, որ «արյուն [եկավ] յուրաքանչյուր ծակոտիից»,[38] երբ Հիսուսը տառապում էր Գեթսեմանիում. մի վայրում, որտեղ ձիթապտղի մամլիչներն էին։ Փրկիչի ժամանակ ձիթայուղ արտադրելու համար ձիթապտուղները նախ փշրում էին՝ դրանց վրա մեծ քար գլորելով։ Ստացված տրորվածքը լցնում էին փափուկ, լայն գործվածքով զամբյուղների մեջ, որոնք կիտվում էին մեկը մյուսի վրա։ Դրանց ծանրությունից քամվում էր առաջին ու ամենալավ ձեթը։ Ապա ճնշումը մեծացնելու համար դեզի վրա տեղադրում էին մեծ հեծան կամ գերան, որպեսզի ավելի շատ ձեթ ստանան։ Ի վերջո, վերջին կաթիլները քամելու համար հեծանը ծանրացնում էին քարերով, որպեսզի ստեղծեին առավելագույն ջախջախիչ ճնշումը։[39] Եվ այդ, ձեթն այնպես էր հորդում, ինչպես սկզբում էր հոսում։

Ես հիշում եմ Մատթեոսի նկարագրությունը, երբ Փրկիչը մտավ Գեթսեմանի այն ճակատագրական գիշերը, որ Նա «սկսեց տրտմիլ և վշտանալ . . .

«Եվ մի քիչ առաջ գնալով իր երեսի վերայ ընկաւ, աղոթք էր անում և ասում. Իմ Հայր, եթէ կարելի է, Թող այս բաժակն ինձանից անցնի. Սակայն ոչ թե ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու»։[40]

Հետո ես պատկերացրի, թե վիշտն ինչպես էր ուժեղանում, Նա երկրորդ անգամ թեթևացում խնդրեց և, ի վերջո, հավանաբար Իր տառապանքի գագաթնակետին, խնդրեց երրորդ անգամ: Նա տարավ հոգեվարքը, մինչև արդարությունն իրականացավ արյան վերջին կաթիլով:[41] Նա արեց այդ, որպեսզի փրկագնի ինձ և ձեզ:

Ինչ թանկագին պարգև է աստվածային սերը: Այդ սիրով լցված, Հիսուսը հարցնում է. «Չե՞ք վերադառնա ինձ մոտ և ապաշխարեք ձեր մեղքերից, և դարձի չե՞ք գա, որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ»:[42] Նա քնքշորեն հավաստիացնում է. «Ահա, իմ ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, նրան ես կընդունեմ. և օրհնված են նրանք, ովքեր գալիս են ինձ մոտ»:[43]

Մի՞թե դուք չեք սիրի Նրան, ով առաջինն է ձեզ սիրել:[44] Ուրեմն պահեք Նրա պատվիրանները:[45] Մի՞թե դուք բարեկամ չեք լինի Նրան, ով Իր կյանքն է դրել Իր բարեկամների համար:[46] Ուրեմն պահեք Նրա պատվիրանները:[47] Մի՞թե դուք չեք ապրի Նրա սիրո մեջ և ստանաք այն ամենը, ինչ նա շռայլորեն առաջարկում է ձեզ: Ուրեմն պահեք Նրա պատվիրանները:[48] Ես աղոթում եմ, որ մենք լիարժեք ապրենք Նրա սիրո մեջ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ա Հովհաննես 4.8: Փառավոր և քաջալերող, ինչպես Հիսուս Քրիստոսի սերն է, բայց դա նրա միակ բնորոշ հատկանիշը չէ: Նրա «բնութագիրը, կատարելությունն ու հատկությունները», (*Lectures on Faith* [1985], 38) նաև արդարությունը, ճշմարտությունն ու հաստատունությունը. Նա նույն Աստվածն է երեկ, այսօր և ընդմիշտ (տես *Lectures on Faith* 41): Առանց այս և այլ հատկանիշների ու որակների, որոնց Նա տիրապետում է բացարձակ կատարելությամբ, Նա Աստված չի լինի:
2. Թոմաս Ս. Մոնսոն, «Մենք երբեք միայնակ չենք քայլում», *Լիահոնա,* նոյ. 2013, 124:
3. Վարդապետություն և Ուխտեր 138.3:
4. Ա Հովհաննես 4.18, Մորոնի 8.16:
5. Ալմա 5.26:
6. Երեմիա 31.3:
7. Հովհաննես 15.9–10:
8. Տես Մորոնի 10.32–33:
9. Տես 2 Նեփի 31.11–21, 3 Նեփի 27.16–20, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 20.29–34:
10. Տես Ալմա 11.32–37, տես նաևԱլմա 42.13, 15, 22–27:
11. Տես Հելաման 5.10–11:
12. Ալմա 11.37, տես նաև Մովսես 6.57:
13. Հելաման 5.11:
14. Ալմա 34.15–16:
15. Մատթեոս 5.45, տես նաև 3 Նեփի 12.45:
16. Մատթեոս 5.44–45, տես նաև 3 Նեփի 12.44–45
17. Russell M. Nelson, “Divine Love,” *Liahona,* Feb. 2003, 16. Եվ կրկին. «Ոչ թէ ամեն ինձ Տ՞եր, Տե՞ր ասողը կմտնէ երկնքի արքայությունը.այլ նա որ կատարում է իր Հոր կամքը, որ երկնքում է» (Մատթեոս 7.21, տես նաև 3 Նեփի 14.21):

   Մեզ նաև ուսուցանում են.

   «Կա օրենք, երկնքում անդարձորեն հրամանագրված, այս աշխարհի հիմնադրումից առաջ, որի վրա հիմնված են բոլոր օրհնությունները,

   «Եվ եթե մենք ինչ-որ օրհնություն ենք ստանում Աստծուց, դա այն օրենքին հնազանդվելով է, որի վրա հիմնված է այն»: (Վարդապետություն և Ուխտեր 130.20–21):

   Ոմանք մոռանում են, որ Աստված «չի կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել» (Վարդապետություն և Ուխտեր 1.31): Միաժամանակ Նա հավաստիացնում է մեզ, որ «նա, ով ապաշխարում և կատարում է Տիրոջ պատվիրանները, պիտի ներվի» (Վարդապետություն և Ուխտեր 1.32):
18. 3 Նեփի 27.22:
19. Տես 3 Նեփի 27.27, տես նաև Մատթեոս 5.48, 3 Նեփի 12.48:
20. Դիտեր Ֆ. Ուխդորֆ «Շնորհի պարգևը», *Լիահոնա,* մայիս 2015, 108:
21. Եբրայեցիս 12.6, տես նաև Եբրայեցիս 12.5, 7–11, Հովհաննես 15.1–8:
22. Տես Հովհաննես 15.12:
23 Վարդապետություն և Ուխտեր 88.22:
24 Մոսիա 3.19:
25. Դալլին Հ. Օուքս “The Challenge to Become,” *Liahona,* Jan. 2001, 40; emphasis in original.
26. “Helen Keller,” perkins.org/history/people/helen-keller.
27. “Helen Keller,” perkins.org/history/people/helen-keller.
28. Տես Եբրայեցիս 4.15:
29. Տես “Anne Sullivan,” perkins.org/history/people/anne-sullivan.
30. “Helen Keller,” perkins.org/history/people/helen-keller.
31. Տես, օրինակ՝ Վարդապետություն և Ուխտեր 93.28. «Նա, ով պահում է նրա պատվիրանները, ստանում է ճշմարտություն և լույս, մինչև որ փառավորվի ճշմարտությամբ և իմանա բոլոր բաները»:
32. “Helen Keller,” perkins.org/history/people/helen-keller.
33. Տես William Gibson, *The Miracle Worker* (motion picture, 1962).
34. Ա Կորնթացիս 13.12:
35. Ա Կորնթացիս 2.9:
36. Վարդապետություն և Ուխտեր 19.18:
37. Տես Մոսիա 3.7:
38. Մոսիա 3.7:
39. Տես Richard Neitzel Holzapfel and others, *Jesus Christ and the World of the New Testament* (2006), 18; Richard Neitzel Holzapfel and others, *Jehovah and the World of the Old Testament* (2009), 281:
40. Մատթեոս 26.37, 39:
41. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.19:
42. 3 Նեփի 9.13:
43. 3 Նեփի 9.14:
44. Տես Ա Հովհաննես 4.19:
45. Տես Հովհաննես 14.15:
46. Տես Հովհաննես 15.13:
47. Տես Հովհաննես 15.14:
48. Տես Հովհաննես 15.10:

Երեց Վ. Մարկ Բասեթ
Յոթանասունի քվորում

Մեր հոգևոր զարգացման և ուսման համար

Աստծո գաղտնիքները մեզ հայտնի են դառնում միայն Նրա կամքով և Սուրբ Հոգու զորությամբ։

Երբ փոքր տղա էի, ծնողներս մի նվեր ստացան, որը շատ հետաքրքրաշարժ իր էր իմ և կրտսեր եղբորս՝ Դեյվիդի համար։ Նվերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին Մորոնի հրեշտակի հանձնած ոսկե թիթեղների մանրապատկեր նմուշն էր։ Որքան հիշում եմ, նմուշ թիթեղները 10 մետաղական էջ ունեին, որոնց վրա բառեր կային գրված։ Սակայն էջերը չէին, որ գրավել էին մեր ուշադրությունը։

Մենք մեծացել էինք՝ լսելով Վերականգնման պատմությունները։ Մենք գիտեինք և Երեխաների խմբում երգում էինք ոսկե թիթեղների մասին, որոնք խորը թաքնված էին լեռան լանջում, և որոնք Մորոնի հրեշտակը հանձնել էր Ջոզեֆ Սմիթին[1]։ Քանի որ մեր երիտասարդ մտքի հետաքրքրությունը շարժվել էր, կար մի բան, որը մենք իսկապես շատ էինք ուզում տեսնել. ի՞նչ էր գրված նմուշ թիթեղների երկու փոքր մետաղական երիզներով ապահով կնքված բաժնում։

Թիթեղները մի քանի օր դրված էին փոքր մի սեղանիկի վրա, մինչև մեր հետաքրքրասիրությունը հասավ գագաթնակետին։ Չնայած մենք հստակ հասկանում էինք, որ դրանք Մորոնիի հանձնած փաստացի թիթեղները չէին, մենք ցանկանում էինք դիտել կնքված մասը։ Այնպես որ, ես և եղբայրս, օգտագործելով պանրի դանակներ, հին գդալներ և հնարավորամեն բան, մի քանի առիթներով փորձեցինք բացել թիթեղների կնքված մասը այնքան, որ բավական լինի թաքուն

կարդալ պարունակությունը, բայց ոչ այնքան, որ կոտրենք փոքրիկ երիզները։ Համենայն դեպս, մենք բավականաչափ խելացի էինք, որ չթողեցինք մեր չարաճճի պատանեկության հետաքրքրասիրության հետքերը։ Ի հիասթափություն և ի հուսախաբություն մեզ, «թիթեղները թաքուն դիտելու» այդ փորձերը միշտ անհաջող էին։

Ես դեռևս չգիտեմ, թե ինչ էր թաքցված այդ կնքված մասում, եթե իրապես ինչ-որ բան կար։ Բայց մեր պատմության ամաչեցնող մասն այն է, որ առ այսօր, ես չգիտեմ, թե ինչ էր գրված մետաղական էջերի այն մասում, որը նախատեսված էր կարդալու համար։ Ես միայն կարող եմ պատկերացնել, որ այդ էջերը պարունակում էին Վերականգնման պատմություններ և վկայություններ Ջոզեֆ Սմիթի, Երեք և Ութ Վկաների մասին, ովքեր տեսել էին Մորոնիի հանձնած իրական թիթեղները։

Այս երկրի Արարումից ի վեր, մեր սիրառատ Երկնային Հայրը մարգարեների միջոցով ուղղություն, առաջնորդություն և հրահանգներ է տրամադրել Իր զավակներին։ Նրա խոսքերը փոխանցվել են մարգարեների միջոցով և պահվում են որպես սուրբ գրություններ՝ մեր զարգացման և ուսման համար։ Նեփին այս կերպ է նկարագրել այն.

«Քանի որ հոգիս հրճվում է սուրբ գրություններով և սիրտս խորհում է դրանք, և ես գրում եմ իմ զավակների ուսման և օգտի համար։

Ահա, հոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և սիրտս շարունակ խորհում է այն բաների շուրջ, որոնք տեսել եմ ու լսել»[2]։

Ի լրումն սուրբ գրությունների, անցած տնտեսությունների և ժամանակների լրության այս վերջին տնտեսության ժամանակ, Տիրոջ Եկեղեցու արժանի անդամները օրհնվել են Սուրբ Հոգու մշտական ընկերակցությամբ, որը օգնում է մեր հոգևոր զարգացման և ուսման հարցում։

Իմանալով իմ կրտսեր եղբոր բարեխիղճ էությունը, ենթադրում եմ, որ հավանաբար, նա կարդացել է մեր ծնողների տան այդ թիթեղների նմուշի բոլոր խոսքերը։ Սակայն ես

անտեսեցի այդ պարզ և թանկարժեք ճշմարտությունները և փոխարենը ջանք էի գործադրում փնտրել այն բաները, որոնք նախատեսված չէին հայտնի դարձվելու։

Ցավոք, մեր զարգացումն ու ուսումը կարող է երբեմն դանդաղել կամ նույնիսկ դադարել «թաքնվածը կարդալու» ոչ պատշաճ ցանկությամբ։ Նման փնտրտուքները կարող են տանել այն բաների ետևից, որոնք նախատեսված չեն հասկացվելու մեր ժամանակներում, անտեսելով զեղեցիկ ճշմարտությունները, որոնք նախատեսված են մեզ համար և մեր հանգամանքների համար, ճշմարտություններ, որոնք, ըստ Նեփիի նկարագրության, նախատեսված են մեր ուսման և օգտի համար։

Նեփիի եղբայր Հակոբը ուսուցանել է. «Ահա, մեծ և զարմանալի են Տիրոջ գործերը։ Որքա՜ն անքննելի են նրա խորհուրդների խորքերը. և անհնարին է, որ մարդ իմանա նրա բոլոր ուղիները»[3]։

Հակոբի խոսքերը մեզ սովորեցնում են, որ մեզ մոտ չի ստացվի «թաքնվածը կարդալ», ոչ էլ կարող ենք ստիպել, որ Աստծո գաղտնիքները հայտնվեն մեզ։ Փոխարենը, Աստծո խորհուրդները մեզ հայտնի են դառնում միայն Նրա կամքով և Սուրբ Հոգու զորությամբ[4]։

Հակոբը շարունակում է.

«Եվ ոչ մի մարդ չգիտի նրա ուղիների մասին, մինչև այն հայտնի չդարձվի նրան. ուստի, եղբայրնե՛ր, մի՛ արհամարհեք Աստծո հայտնությունները։

Քանզի ահա, նրա խոսքի զորությամբ մարդը եկավ երկրի երեսի վրա. . . . Օ՜հ, ուրեմն ինչո՞ւ ի զորու չէ հրամայելու երկրագնդին, կամ իր ձեռքերի ստեղծագործությանը երկրի երեսի վրա, ըստ իր կամքի և հաճության։

Ուստի, եղբայրներ, մի՛ փնտրեք խորհուրդ տալ Տիրոջը, այլ խորհուրդ վերցնել նրա ձեռքից»[5]։

Որպեսզի հասկանանք Աստծո գաղտնիքները կամ այն բաները, որոնք հնարավոր է հասկանալ միայն հայտնության միջոցով, մենք պետք է հետևենք Նեփիի օրինակին, ով ասել է. «Լինելով չափազանց

երիտասարդ, այնուամենայնիվ, լինելով հաղթանդամ կազմվածքով, և նաև ունենալով մեծ իղձեր՝ իմանալու Աստծո խորհուրդները, ուստի, ես կանչեցի առ Տերը. և ահա, նա այցելեց ինձ և այնպես փափկացրեց իմ սիրտը, որ ես հավատացի բոլոր այն խոսքերին, որոնք ասվել էին հորս կողմից»[6]։ Դրանից հետո Տերն Ինքը բացատրեց, որ Նեփին հավատք էր գործադրել, ջանասիրաբար և սրտի խոնարհությամբ փնտրել էր և պահել Իր պատվիրանները[7]։

Գիտելիք փնտրելու Նեփիի օրինակը ներառում էր՝ (1) անկեղծ ցանկություն, (2) խոնարհություն, (3) աղոթք, (4) վստահություն մարգարեին, (5) հավատքի, (6) ջանասիրության և (7) հնազանդության գործադրում։ Փնտրելու այդ ուղին հակապատկերն է «թաքնվածը կարդալու» իմ ջանքերի կամ փորձերի, որ ստիպողաբար հասկանամ բաներ, որոնց բացահայտումը նշանակված է՝ համաձայն Տիրոջ ժամանակացույցի և Սուրբ Հոգու զորության։

Ժամանակակից դարաշրջանում մենք սկսել ենք ակնկալել, որ գիտելիքը կարելի է և պետք է ստանալ անմիջապես. երբ տեղեկությունը հեշտությամբ չի հայտնվում կամ հասանելի չի դառնում, այն հաճախ բաց են թողնում կամ նրա հանդեպ անվստահություն հայտնում։ Տեղեկատվության առատության արդյունքում ոմանք ակամայից ավելի շատ են վստահում անհայտ ծագումով առկա աղբյուրներին, քան ապավինում են անձնական հայտնություն ստանալու Տիրոջ սահմանած օրինակին։ Հակոբը, հնարավոր է, մեր ժամանակն էր նկարագրում, երբ ասում էր. «Բայց ահա, [նրանք] մի խստապարանոց ժողովուրդ էին. և նրանք արհամարհեցին պարզության խոսքերը. . . . և փնտրեցին բաներ, որոնք չէին կարող հասկանալ։ Ուստի, նրանց կուրության պատճառով, կուրություն, որը եկել էր նշանակետից այն կողմ նայելուց, նրանք պիտի անպայման ընկնեին. քանզի Աստված վերցրել է նրանցից իր պարզությունը և հանձնել նրանց շատ բաներ, որոնք նրանք չեն կարող հասկանալ, քանի որ նրանք ցանկանում էին դա»[8]։

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը խորհուրդ է տվել, որը տարբերվում է այդ մոտեցումից։ Նրա խոսքերը ուղղված են միսիոներներին, սակայն հավասարապես կիրառելի են հոգևոր ճշմարտություն փնտրող բոլոր մարդկանց համար։ «Եթե. . . . միսիոներները հավատ գործադրեն առ Հիսուս Քրիստոս, — ասել է նա, — նրանք

կվստահեն Տիրոջը բավականաչափ, որ հետևեն Նրա պատվիրաններին անգամ այն ժամանակ, երբ ամբողջությամբ չեն հասկանում դրա անհրաժեշտությունը: Նրանց հավատը կդրսևորվի ջանասիրության ու աշխատասիրության միջոցով»[9]:

Ապրիլյան գերագույն համաժողովին Երեց Դալլին Հ. Օուքսը բացատրել է. «Եկեղեցին մեծ ջանքեր է գործադրում, որ թափանցիկ լինի իր ունեցած պատմական արձանագրություններով: Սակայն մեր ունեցած ամեն տեղեկություն հրապարակելուց հետո, ի վերջո, մեր անդամների որոշ հիմնական հարցերը երբեմն մնում են անպատասխան, որոնք, հնարավոր է, չպարզաբանվեն ուսումնասիրության միջոցով: Որոշ բաներ կարելի է սովորել միայն հավատքով»[10]:

Հին մարգարեները ուսուցանել են այս նույն սկզբունքը, ցույց տալով, որ ժամանակի ընթացքում մարդու բնույթը չի փոխվել, և սովորելու Տիրոջ օրինակը ժամկետներ չունի: Մտածեք Հին Կտակարանի այս ասացվածքի մասին. «Տիրոջն ապաւինիր քո բոլոր սրտովը, եւ քո հասկացողութեանը մի վստահիր»[11]:

Խոսելով Տիրոջ անունից՝ Եսայիան բացատրել է. «Այլ ինչպէս որ բարձր է երկինքը երկրից, նոյնպէս էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներիցը եւ իմ խորհուրդները ձեր խորհուրդներիցը»[12]:

Նեփին ավելացրել է մեկ այլ վկայություն, երբ հայտարարել է. «Ո՜վ Տեր, ես քեզ եմ ապավինել, և ես քեզ եմ ապավինելու հավիտյան»[13]:

Տիրոջ հանդեպ հավատը և վստահությունը պահանջում է մեզ ընդունել, որ Նրա իմաստությունը վեր է մեր սեփականից: Մենք պետք է նաև ընդունենք, որ Նրա ծրագիրը ապահովում է հոգևոր զարգացման և ուսման առավելագույն ներուժը:

Մեզանից երբեք չի պահանջվել «բաների մասին կատարյալ գիտելիք ունենալ» այս մահկանացու գոյության ընթացքում: Փոխարենը, մեզանից ակնկալվում է «հույս ունենալ բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»[14]:

Նույնիսկ Նեփին, որ մեծ հավատք ուներ, խոստովանեց, որ իր հասկացողությունը սահմանափակ է, երբ նա պատասխանեց հրեշտակի հարցին. «Գիտե՞ս դու Աստծո բարեհաճության մասին»: Նեփին պատասխանեց. «Ես գիտեմ, որ նա սիրում է իր զավակներին. սակայն, *ես չգիտեմ բոլոր բաների իմաստը*»[15]:

Նմանապես, Ալման ասաց իր որդի Հելամանին. «Արդ, այս խորհուրդները դեռ լիովին հայտնի չեն դարձվել ինձ. հետևաբար, ես պիտի զսպեմ ինձ»[16]:

Ես արտահայտում եմ իմ վկայությունը, որ մեր Երկնային Հայրը սիրում է Իր զավակներին, և այնուամենայնիվ, Նեփիի և Ալմայի նման, ես չգիտեմ բոլոր բաների իմաստը: Ոչ էլ կարիք կա, որ ամեն բան իմանամ. ես *նույնպես* պիտի զսպեմ ինձ և համբերատար ապավինեմ Տիրոջը՝ իմանալով. «Ես ունեմ բոլոր բաները՝ որպես մի վկայություն, որ այս բաները ճշմարիտ են. և դու նույնպես ունես բոլոր բաները՝ որպես մի վկայություն քեզ համար, որ դրանք ճշմարիտ են . . . .

. . .. Սուրբ գրքերը դրված են քո առջև, այո, և բոլոր բաները մատնանշում են, որ կա՛ Աստված. այո, նույնիսկ երկիրը և բոլոր բաները, որ նրա երեսին են, այո, և նրա շարժումը, այո, և բոլոր մոլորակները, որոնք շարժվում են իրենց կանոնավոր ձևով, վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող»[17]:

Քանի որ մենք ընդունում ենք, որ իմաստուն և անձնվեր Երկնային Հոր ստեղծագործությունն ենք, «Օ՜հ, ուրեմն», ինչո՞ւ թույլ չտանք, որ նա առաջնորդի մեր հոգևոր զարգացումն ու ուսումը «ըստ իր կամքի և հաճության», այլ ոչ թե մեր սեփական[18]:

Նա ապրում է: Հիսուս Քրիստոսը Նրա Միածին Որդին է և մարդկության Քավիչը: Քրիստոսի անսահման Քավության շնորհիվ Նա ունի իմաստություն և հեռատեսություն՝ առաջնորդելու մեզ այս վերջին օրերում: Ջոզեֆ Սմիթը Նրա մարգարեն է, ով ընտրվել էր վերականգնելու Նրա թագավորությունը երկրի վրա իր լրիվությամբ: Թոմաս Ս. Մոնսոնը Նրա կենդանի մարգարեն է և խոսնակը այսօր: Այդ մասին ես բերում եմ իմ անկեղծ վկայությունը՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես «The Golden Plates», *Children's Songbook,* 86:
2. 2 Նեփի 4.15–16:
3. Հակոբ 4.8:
4. Տես 1 Նեփի 10.19:
5. Հակոբ 4.8–10:
6. 1 Նեփի 2.16:
7. Տես 1 Նեփի 2.19–20:
8. Հակոբ 4.14:
9. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «The Lord's Work» (Ելույթ միսիայի նոր նախագահների սեմինարին, հունիս 25, 2016), 6:
10. Դալլին Հ. Օուքս, «Հակադրություն բոլոր բաներում», *Լիահոնա,* մայիս 2016, 114:
11. Առակաց 3.5:
12. Եսայիա 55.9:
13. 2 Նեփի 4.34:
14. Ալմա 32.21:
15. 1 Նեփի 11.16–17, շեշտադրումն ավելացված է:
16. Ալմա 37.11:
17. Ալմա 30.41, 44:
18. Հակոբ 4.9:

Երեց Կազուհիկո Յամաշիտա
Յոթանասուն

Եղեք պատվասեր Քրիստոսի համար

Մենք պատվասեր ենք Քրիստոսի համար, եթե ծառայում ենք հավատարմորեն, ընդունում ենք խոնարհաբար, համբերում ենք ազնվորեն, աղոթում ենք ջերմեռանդորեն և ճաշակում ենք արժանիորեն։

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, այսօր ես կցանկանայի խոսել Եկեղեցու երիտասարդների, այդ թվում՝ մեր հրաշալի միսիոներների հետ։ Եվ անշուշտ, այն եղբայրներն ու քույրերը, ովքեր հոգով երիտասարդ են, նույնպես հրավիրված են լսելու այս ելույթը։

Անցած տարվա օգոստոսի 21-ին Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նվիրագործեց Սապորո Տաճարը՝ թվով երրորդ տաճարը ճապոնիայում։ Սապորո տաճարը կառուցված է հյուսիսային Ճապոնիայում, մի վայրում, որը կոչվում է Հոկաիդո։ Յուտայի նման Հոկաիդոն նույնպես բնակեցվել էջանասեր, աշխատասեր ռահվիրաներով։

1876թ-ին Դոկտոր Վիլյամ Քլարկ[1] անունով մի հայտնի մանկավարժի հրավիրում են դասավանդել Հոկաիդոյում։ Նա Ճապոնիայում ապրեց միայն ութ ամիս, բայց նրա քրիստոնյա հոգին տնական ներգործություն թողեց իր երիտասարդ ոչ քրիստոնյա ուսանողների վրա։ Նախքան մեկնելը նա իր ուսանողներին հրաժեշտի խոսք հղեց, որը հավերժացավ այս բրոնզե արձանիկի տեսքով։[2] Նա ասաց. «Տղանե՛ր, եղեք պատվասեր։ Եղեք պատվասեր Քրիստոսի համար»։[3] «Եղեք պատվասեր Քրիստոսի համար» նրա կարգադրությունը կարող է օգնել այսօրվա Վերջին Օրերի Սրբերին՝ ամենօրյա որոշումներում։

Ի՞նչ է նշանակում «Եղեք պատվասեր Քրիստոսի համար»

Կրթության հայտնի գործիչ Դոկտոր Ուիլիամ Քլարքի բրոնզե արձանը, ով խրախուսում էր տղաներին «լինել պատվասեր Քրիստոսի համար»։

արտահայտությունը։ Լինել պատվասեր Քրիստոսի համար նշանակում է՝ լինել մոտիվացված, կենտրոնացած և նվիրված Նրա գործին։ Լինել պատվասեր Քրիստոսի համար չի նշանակում, որ հանրային հարգանքի համար պետք է առանձնանանք ուրիշներից։ Լինել պատվասեր Քրիստոսի համար, նշանակում է ծառայել հավատարմորեն և ջանասիրաբար մեր ծխերում ու ճյուղերում՝ առանց բողոքի ու ուրախ սրտերով։

Աշխարհով մեկ ծառայող մեր միսիոներները Քրիստոսի համար իսկապես պատվասեր լինելու հրաշալի օրինակ են։ Մի քանի տարի առաջ ես և Քույր Յամաշիտան ծառայում էինք Ճապոնիայի Նագոյա միսիայում։ Մեր միսիոներներն անչափ պատվասեր էին Քրիստոսի համար։ Այդ միսիոներներից մեկը մի երիտասարդ տղա էր՝ Երեց Քովան անունով։

Պատանի հասակում պատահած հեծանիվի վթարի պատճառով Երեց Քովանը զրկված էր աջ ոտքից։ Միսիա գալուց մի քանի շաբաթ անց նրա զուգընկերը զանգահարեց ինձ։ Երեց Քովանի պրոթեզը կոտրվել էր հեծանիվ քշելիս։ Մենք նրան տարանք լավ վերանորոգման կենտրոն և այնտեղ առանձնասենյակում ես առաջին անգամ տեսա նրա ոտքը։ Ես հասկացա, թե ինչպիսի ցավեր էր նա տարել։ Նրա պրոթեզը վերականգնվեց և նա վերադարձավ իր տարածք։

Սակայն շաբաթների ընթացքում նրա պրոթեզը մի քանի անգամ կոտրվեց։ Տարածքի բժշկական խորհրդատուն խորհուրդ տվեց, որ Երեց Քովանը վերադառնար տուն և փոխեր միսիայի հանձնարարությունը։ Ես մերժեցի այդ խորհուրդը, քանի որ Երեց Քովանը հրաշալի միսիոներ էր և շատ էր ցանկանում մնալ Ճապոնիայում։ Սակայն Երեց Քովանի առողջությունն աստիճանաբար տեղի էր տալիս։ Չնայած դրան նա չէր տրտնջում ու բողոքում։

Կրկին անգամ ինձ խորհուրդ տվեցին, որ Երեց Քովանը ծառայեր այն տարածքում, որը նրանից չէր պահանջի հեծանիվ վարել։ Ես մտածեցի Երեց Քովանի ու նրա

ապագայի համար ու աղոթեցի այս խնդրի շուրջ: Ես զգացի, որ Երեց Քովանը պետք է տուն վերադառնար և սպասեր հանձնարարության փոփոխության: Ես զանգահարեցի նրան, իմ սերն ու մտահոգությունն արտահայտեցի ու հայտնեցի իմ որոշումը: Ես ասացի. «Երեց Քովան, դու կարող ես ինձ հետո պատասխանել: Ես կզանգահարեմ առավոտյան: Խնդրում եմ, անկեղծ աղոթքով մտածիր իմ առաջարկի մասին»:

Երբ զանգահարեցի նրան հաջորդ առավոտ, նա խոնարհաբար ասաց, որ կհետևի իմ խորհրդին:

Նրա հետ ունեցած վերջին հարցազրույցի ժամանակ ես հարցրի նրան. «Երեց Քովան, քո միսիայի հարցաթերթիկի մեջ նշել ես, որ ցանկանում ես ծառայել այնպիսի միսիայում, որտեղ հեծանիվ վարելն անհրաժեշտություն չէ»:

Նա պատասխանեց. «Այո նախագահ, ես նշել եմ դա»:

Ես ասացի. «Երեց Քովան, դու կանչվել ես ծառայելու Ճապոնիայի Նագոյա միսիան, որտեղ դու պետք է վարես հեծանիվ: Այդ մասին դու տեղեկացրե՞լ ես քո ցցի նախագահին»:

Նրա պատասխանն ինձ զարմացրեց: Նա ասաց. «Ոչ, ես չեմ ասել նրան: Ես մտածեցի, որ եթե Տերն ինձ *այդտեղ է* կանչել, ապա ես կգնամ մարզասրահ ու կմարզեմ իմ մարմինը, որպեսզի կարողանամ հեծանիվ վարել»:

Մեր հարցազրույցի վերջում նա արցունքն աչքերին ինձ հետևյալ հարցը տվեց. «Նախագահ Յամաշիտա, ինչո՞ւ ես եկա Ճապոնիա: Ինչո՞ւ եմ այստեղ»:

Առանց տատանվելու ես պատասխանեցի. «Ես մի պատճառ գիտեմ, թե ինչու ես դու այստեղ: Դու եկար այստեղ իմ օգտի համար: Ես հասկացա, թե որքան հրաշալի երիտասարդի հետ եմ ես ծառայում: Ես օրհնված եմ, որ ճանաչում եմ քեզ»:

Ուրախ եմ ասելու, որ Երեց Քովանը վերադարձավ իր սիրելի տունը և վերանշանակվեց ծառայելու մի միսիայում, որտեղ նա մեքենա էր վարում տեղաշարժվելու համար: Ես հպարտ եմ ոչ միայն Երեց Քովանի համար, այլ նաև աշխարհի բոլոր միսիոներների համար, ովքեր ինքնակամ ծառայում են առանց տրտնջալու ու բողոքելու: Շնորհակալություն, քույրեր և եղբայրներ, ձեր հավատքի, ձեր ուշադրության և Քրիստոսի համար ձեր պատվասիրության համար:

Մորմոնի Գրքում կան շատ պատմություններ այն մարդկանց մասին, ովքեր պատվասեր են եղել Քրիստոսի համար: Երիտասարդ տարիքում Ալմա կրտսերը հալածում էր Եկեղեցին ու անդամներին: Ավելի ուշ նրա սիրտը կտրուկ փոխվեց և նա դարձավ զորեղ միսիոներ: Նա փնտրեց Տիրոջ առաջնորդությունը և օրհնեց իր հետ ծառայող զուգընկերներին: Տերը զորացրեց նրան և նա հաղթահարեց իր փորձությունները:

Ալման իր որդի Հելամանին հետևյալ խորհուրդը տվեց.

«Ովքեր որ դնեն իրենց վստահությունն Աստծո վրա, պիտի սատարվեն իրենց փորձանքների, և իրենց տագնապների, և իրենց չարչարանքների մեջ: . . .

. . . Սովորիր պահել Աստծո պատվիրանները . . .

Խորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար»:[4]

Մեր երկրորդ որդին իր պատանեկության տարիների մեծ մասն ապրեց Եկեղեցուց դուրս: Երբ նա դարձավ 20 տարեկան, նրա հետ մի բան տեղի ունեցավ, որի շնորհիվ ցանկացավ փոխել իր կյանքը: Սիրով, աղոթքներով, ընտանիքի ու Եկեղեցու անդամների օգնությամբ և, ի վերջո, Տիրոջ ողորմածությամբ ու շնորհով նա վերադարձավ Եկեղեցի:

Ավելի ուշ նա կանչվեց ծառայելու Վաշինգտոն Սիեթլ միսիայում: Սկզբում նա մեծ հիասթափություն ապրեց: Առաջին երեք ամիսների ընթացքում նա ամեն գիշեր գնում էր լողասենյակ ու լաց լինում: Երեց Քովանի նման նա փորձում էր հասկանալ, «Ինչո՞ւ եմ այստեղ»:

Մեկ տարի ծառայելուց հետո մենք մի նամակ ստացանք, որը մեր աղոթքների պատասխանն էր: Նա գրել էր. «Այժմ ես զգում եմ Աստծո և Հիսուսի սերն իմ հանդեպ: Ես ջանասիրությամբ կաշխատեմ, որպեսզի դառնամ հնադարյան մարգարեների նման: Չնայած ես հանդիպում եմ բազմաթիվ դժվարությունների, ես իսկապես երջանիկ եմ: Հիսուսին ծառայելն իսկապես ամենալավ բանն է: Ավելի հրաշալի բան չկա դրանից: Ես անչափ երջանիկ եմ»:

Նա Ալմայի նման զգաց. «Եվ, Օ՜հ, ինչպիսի ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր»:[5]

Մեր կյանքում հանդիպում ենք փորձությունների, բայց եթե մենք պատվասեր ենք Քրիստոսի համար, կարող ենք կենտրոնանալ Նրա վրա և ուրախություն ունենալ նույնիսկ դրանց ժամանակ: Մեր Քավիչը դրա կատարյալ օրինակն է: Նա հասկացավ Իր սրբազան առաքելությունը և հնազանդ էր Հայր Աստծո կամքին: Մեծ օրհնություն է, որ Նրա հրաշալի օրինակը կարող ենք հիշել ամեն կիրակի, երբ ճաշակում ենք հաղորդությունը:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, մենք պատվասեր ենք Քրիստոսի համար, եթե ծառայում ենք հավատարմորեն, ընդունում ենք խոնարհաբար, համբերում ենք ազնվորեն, աղոթում ենք ջերմեռանդորեն և ճաշակում ենք արժանիորեն:

Թող որ մենք պատվասեր լինենք Քրիստոսի համար, երբ ընդունենք մեր դժվարություններն ու փորձությունները համբերությամբ, հավատքով և ուրախություն գտնենք մեր ուխտյալ ճանապարհին:

Ես վկայում եմ, որ Աստված ճանաչում է ձեզ: Նա գիտի ձեր մաքառումներն ու մտահոգությունները: Նա տեղյակ է Իրեն հավատարմորեն ծառայելու ձեր ցանկության մասին և այո՝ նույնիսկ պատվասիրության մասին: Թող ձեր ջանքերում Նա առաջնորդի ու օրհնի ձեզ: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վիլյամ Սմիթ Քլարկը (1826–86) եղել է քիմիայի, բուսաբանության և կենդանաբանության պրոֆեսոր և Ամերիկյան քաղաքացիական պատերազմի ժամանակ ծառայել է որպես գնդապետ: Նա եղել է գյուղատնտեսական կրթության ղեկավար և Մասաչուսեթսի գյուղատնտեսական համալսարանի նախագահը: (Տես «William S. Clark», wikipedia.com:)
2. Արձանը գտնվում է Սապորո Հիթսուջիգաոկայի դիտորդական բլրի վրա:
3. Վիլյամ Ս. Քլարկը Էնն Բ. Այրիշի՝ *Hokkaido: A History of Ethnic Transition and Development on Japan's Northern Island* գրքում (2009), 156:
4. Ալմա 36.3, 37.35, 37:
5. Ալմա 36.20:



Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորում

Կիսվել վերականգնված ավետարանով

Այն, ինչ կոչում ենք «անդամ-միսիոներական աշխատանք», ծրագիր չէ, այլ սիրո և մեզ շրջապատողներին հասնելու վերաբերմունք:

I.

Իր երկրային ծառայության ավարտին, Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, պատվիրեց իր աշակերտներին. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը և աշակերտեցեք» (Մատթեոս 28.19) և «Գնացեք աշխարհով մեկ և ավետարանը քարոզեք ամեն արարածի» (Մարկոս 16:15): Բոլոր քրիստոնյաներն այս պատվիրանի ներքո են և պիտի ավետարանով կիսվեն ուրիշների հետ: Շատերը դա անվանում են «մեծ առաջադրանք»:

Ինչպես Երեց Նիլ Լ. Անդերսոնը նկարագրեց առավոտյան նիստին,անշուշտ, Վերջին Օրերի Սրբերը նրանց թվում են, ովքեր ամենաշատն են նվիրված այդ մեծ պատասխանատվությանը: Եվ մենք պետք է նվիրվենք, քանի որ գիտենք, որ Աստված սիրում է Իր բոլոր զավակներին, և այս վերջին օրերում Նա վերականգնել է կենսական նշանակություն ունեցող մեկ այլ գիտելիք ու զորություն, որը կօրհնի նրանց բոլորին: Փրկիչն ուսուցանել է, որ բոլորին սիրենք որպես եղբայրներ և քույրեր և մենք հարգում ենք այդ ուսմունքը ու կիսվում վերականգնված ավետարանի ուղերձով և վկայությամբ «բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և ժողովուրդների հետ» (ՎևՈ 112.1): Դա Վերջին Օրերի Սուրբ լինելու կարևորագույն մասն է: Մենք վերաբերվում ենք դրան որպես

մի ուրախալի արտոնության: Ի՞նչը կարող է ավելի ուրախալի լինել, քան հավերժության ճշմարտություններով Աստծո զավակների հետ կիսվելը:

Այսօր մենք ունենք ավետարանով կիսվելու բազմաթիվ միջոցներ, որոնք առկա չէին նախորդ սերունդների ժամանակ: Մենք ունենք հեռուստատեսություն, համացանց և սոցիալական լրատվամիջոցներ: Մենք ունենք վերականգնված ավետարանը ներկայացնելու բազմաթիվ արժեքավոր ուղերձներ: Եկեղեցին առաջատար դիրք է զբաղեցնում բազմաթիվ երկրներում: Մենք ունենք աճող թվաքանակով միսիոներներ: Բայց արդյո՞ք մենք այդ բոլոր միջոցներն օգտագործում ենք առավելագույն չափով: Մտածում եմ, որ մեզանից շատերը բացասական պատասխան կտան այդ հարցին: Մենք ցանկանում ենք ավելի արդյունավետ լինել աստվածայնորեն մեզ առաջադրված պարտականության մեջ և հռչակել վերականգնված ավետարանը աշխարհով մեկ:

Կան բազմաթիվ լավ մտքեր, թե ինչպես կիսվել ավետարանով, որը հատուկ է առանձին ցցերին ու երկրներին: Սակայն, քանի որ մենք աշխարհասփյուռ Եկեղեցի ենք, ցանկանում եմ խոսել այն գաղափարների մասին, որոնք հարիր են բոլոր վայրերին՝ ամենանոր միավորներից մինչև ամենահները, Եկեղեցին հարգող երկրներից մինչև այն երկրներն ու ազգերը, որոնք մեծապես ատում

են կրոնը: Ցանկանում եմ խոսել այն գաղափարների մասին, որոնցով կարող եք կիսվել այն մարդկանց հետ, ովքեր նվիրված հավատում են Հիսուս Քրիստոսին, ինչպես նաև այն մարդկանց հետ, ովքեր երբեք չեն լսել Նրա անունը, այն մարդկանց հետ, ովքեր բավարարված են իրենց ներկայիս կյանքով և այն մարդկանց հետ, ովքեր հուսահատ փորձում են փոխվել:

Ի՞նչը կօգնի ձեզ կիսվել ավետարանով, անկախ ձեր հանգամանքներից: Մենք յուրաքանչյուր անդամի օգնության կարիքն ունենք և յուրաքանչյուր անդամ կարող է օգնել, քանի որ կան բազմաթիվ առաջադրանքներ, երբ կիսվում ենք վերականգնված ավետարանով բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների և մարդկանց հետ:

Մենք բոլորս էլ գիտենք, որ անդամների մասնակցությունը միսիոներական աշխատանքին շատ կարևոր է և՛ դարձի, և՛ պահպանման համար: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Այժմ ժամանակն է, որ անդամները և միսիոներները միավորվեն, աշխատեն միասին, տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ: Նա պատրաստել է մեզ համար միջոցները, որպեսզի ավետարանով կիսվենք բազմազան եղանակներով, և Նա կաջակցի մեզ մեր ջանքերում, եթե մենք հավատքով գործենք՝ Նրա աշխատանքն իրականացնելու համար»:[1]

Վերականգնված ավետարանով կիսվելը մեր քրիստոնեական պարտականությունն ու արտոնությունն է ամբողջ կյանքի ընթացքում: Երեց Քվենտին Լ. Քուքը հիշեցնում է մեզ. «Միսիոներական աշխատանքը նման չէ դաշնամուրի 88 ստեղներից մեկին, որը երբեմն-երբեմն նվագում են: Դա երաժշտության կարևորագույն ակորդն է, որը պետք է նվագել ողջ կյանքի ընթացքում, եթե մենք ցանկանում ենք ներդաշնակ լինել քրիստոնեության մեր հանձնառությանը և Հիսուս Քրիստոսի ավետարանին»:[2]

II.

Գոյություն ունեն ավետարանով կիսվելու երեք քայլեր, որոնք կարող են կատարել եկեղեցու բոլոր անդամները, անկախ նրանից, թե որտեղ են ապրում և աշխատում: Մենք բոլորս էլ պետք է կատարենք այդ քայլերը:

Առաջինը, մենք բոլորս էլ կարող ենք աղոթել փրկության այս աշխատանքի կարևոր մասը դառնալու ցանկության համար: Բոլոր ջանքերը սկսվում են *ցանկությամբ:*

Երկրորդը, մենք կարող ենք ինքներս պահել պատվիրանները: Հավատարիմ, հնազանդ անդամները ճշմարտության ամենահամոզիչ վկաներն են և արժեվորում են վերականգնված ավետարանը: Նույնիսկ ավելի կարևորն այն է, որ հավատարիմ անդամները միշտ կարող են ունենալ Նրա Հոգին իրենց հետ, որը կառաջնորդի նրանց, երբ նրանք ցանկանան մասնակցել Հիսուս Քրիստոսի ավետարանով կիսվելու այս հրաշալի գործին:

Երրորդը, մենք կարող ենք աղոթել ոգեշնչման համար, թե *մենք* ինչ կարող ենք անել մեր անձնական իրավիճակներում ուրիշների հետ ավետարանով կիսվելու համար: Դա տարբերվում է *միսիոներների* կամ *ուրիշների* համար աղոթելուց: Մենք պիտի աղոթենք, թե ինչ կարող ենք *մենք* անձամբ անել: Աղոթելուց պետք է հիշենք, որ այդ տեսակի ոգեշնչման համար ասված աղոթքների պատասխանները կգան, եթե պարտավորություն վերցնենք՝ մի բան, որը սուրբ գրությունները կոչում են «անկեղծ միտում» կամ «սրտի ողջ կորով»: Աղոթեք և հանձն առեք գործելու ըստ ձեր ստացած ոգեշնչման և խոստացեք Տիրոջը, որ եթե Նա ոգեշնչի ձեզ խոսելու որևէ մեկի հետ ավետարանի մասին, դուք կանեք դա:

Մենք Տիրոջ առաջնորդության կարիքն ունենք, քանի որ առանձնահատուկ դեպքերում որոշ մարդիկ պատրաստ են, իսկ որոշ մարդիկ պատրաստ չեն ավետարանի մասին լրացուցիչ ճշմարտություններ լսելուն: Մենք երբեք չպետք է որոշենք ուրիշների փոխարեն՝ պատրաստ են իրենք, թե ոչ: Տերը գիտի Իր բոլոր զավակների սրտերը և եթե մենք աղոթենք ոգեշնչման համար, Նա կօգնի մեզ գտնելու այն մարդկանց,

ովքեր, Իր կարծիքով ,«պատրաստ են լսելու խոսքը» (Ալմա 32.6)։

Որպես Տիրոջ առաքյալ, ես կոչ եմ անում Եկեղեցու բոլոր անդամներին և ընտանիքներին աղոթել Տիրոջը, որպեսզի Նա օգնի գտնելու այն մարդկանց, ովքեր պատրաստ են ընդունելու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը։ Երեց Մ. Ռասսել Բալլարդը հետևյալ կարևոր խորհուրդն է տվել, որի հետ ես համամիտ եմ. «Վստահեք Տիրոջը։ Նա Բարի Հովիվն է։ Նա գիտի իր ոչխարներին։ . . . Եվ եթե մենք չենք մասնակցում, շատերը, ովքեր կլսեին Վերականգման ուղերձը, կանցնեն կողքով։ . . . Սկզբունքները բավականին պարզ են՝ աղոթք անհատապես և ձեր ընտանիքում՝ միսիոներական հնարավորությունների համար»։[3] Երբ ցուցադրենք մեր հավատքը, այդ հնարավորությունները կգան առանց որևէ «ստիպողական կամ հարկադրված պատասխանի։ Դրանք կհորդեն որպես մեր եղբայրների և քույրերի հանդեպ մեր սիրո բնական արդյունք»։[4]

Ես գիտեմ, որ դա ճշմարիտ է։ Ես ևս խոստանում եմ, որ Տիրոջ օգնության հանդեպ հավատի շնորհիվ, մենք կառաջնորդվենք, կոգեշնչվենք և կգտնենք մեծ ուրախություն այս հավերժական կարևորություն ներկայացնող աշխատանքում։ Մենք կհասկանանք, որ ավետարանով կիսվելու հաջողությունը սիրով և անկեղծ միտումով մարդկանց օգնության ձեռք մեկնելն է՝ անկախ նրանից, թե ինչ պատասխան կտան նրանք։

III.

Սհա մի քանի բան ևս, թե ինչ կարող ենք անել ավետարանով արդյունավետ կերպով կիսվելու համար.

1. Մենք պետք է հիշենք, «որ մարդիկ սովորում են, երբ պատրաստ են դրան, այլ ոչ թե այն ժամանակ, երբ մենք ենք պատրաստ սովորեցնելու նրանց»։[5] Այն, ինչի հանդեպ *մենք* հետաքրքրված ենք, ինչպես օրինակ՝ վերականգնված Եկեղեցում լրացուցիչ վարդապետական ուսմունքները, սովորաբար այն չեն, ինչ *ուրիշներն* ուզում են։ Սովորաբար ուրիշներն ուզում են այդ վարդապետության *արդյունքները*, այլ ոչ թե վարդապետությունը։ Երբ նրանք նկատում կամ զգում են Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ներգործությունը մեր կյանքում, նրանք զգում են Հոգին և սկսում են հետաքրքրվել ավետարանով։ Նրանք նաև հետաքրքրվում են, երբ փնտրում են ավելի շատ երջանկություն, Աստծո հետ կապ կամ կյանքի նպատակի մասին ավելի մեծ ըմբռնում։[6] Հետևաբար, մենք պետք է զգուշորեն և աղոթքով զանազանենք, թե ինչպես գրավել ավելին իմանալու ուրիշի հետաքրքրությունը։ Դրանք կախված կլինեն տարբեր բաներից, ինչպես օրինակ՝ այդ մարդկանց ներկայիս հանգամանքներից և նրանց հետ ունեցած մեր հարաբերությունից։ Դա լավ թեմա է խորհուրդներում, քվորումներում և Սփոփող Միությունում քննարկելու համար։
2. Զրուցելով ուրիշների հետ, մենք պետք է հիշենք, որ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին ավելին սովորելու նախաձեռնությունը պետք է ավելի կարևոր լինի, քան *Եկեղեցու* մասին ավելին իմանալու մեր հրավերը։[7] Մենք ցանկանում ենք, որ մարդիկ դարձի գան ավետարանում։ Դա է Մորմոնի Գրքի դերը։ Մեր Եկեղեցու մասին զգացմունքները գալիս են Հիսուս Քրիստոսին ճանաչելուց հետո, ոչ թե հակառակը։ Եկեղեցիների հանդեպ կասկած ունեցողներից շատերը նաև սեր չեն տածում Փրկիչի հանդեպ։ Առաջին բաները դրեք առաջին տեղում։
3. Երբ ձգտում ենք մարդկանց ծանոթացնել վերականգնված ավետարանի հետ, պետք է դա անենք այդ մարդկանց հանդեպ անկեղծ սեր տածելով։ Դա կարելի է անել, երբ մենք փորձում ենք օգնել ուրիշներին իրենց խնդիրներում կամ, երբ աշխատում ենք նրանց հետ համայնքային միջոցառումներում, ինչպես օրինակ՝ թեթևացնելով տառապանքները, հոգ տանելով աղքատների ու կարիքավորների մասին կամ լավացնելով ուրիշների կյանքի որակը։
4. Ավետարանով կիսվելու մեր ջանքերը չպետք է սահմանափակվեն մեր ընկերների ու գործընկերների շրջանակով։ Օլիմպիադայի ժամանակ մենք իմացանք տաքսու մի վարորդի մասին, ով Ռիո դե Ժանեյրոյում Եկեղեցու անդամ էր, ով յոթ լեզուներով

Մորմոնի Գրքի օրինակներ էր պահում իր մոտ և բաժանում էր դրանք ցանկացողներին: Նա իրեն կոչում էր «Տաքսի վարող միսիոներ»: Նա ասաց. «Ռիո դե Ժանեյրոյի փողոցներն իմ միսիայի տարածքն են»:[8]

Քլեյթոն Մ. Քրիսչենսենը, ով անդամ-միսիոներ լինելու ազդեցիկ փորձ ունի, ասում է, որ «վերջին քսան տարիների ընթացքում մենք նկատել ենք, որ ավետարանի մասին սովորելու մարդու ցանկությունը կախված չէ, թե որքան լավ են այդ մարդիկ ճանաչում իրար»:[9]

5. Ծխի եպիսկոպոսությունները կարող են ծրագրել հաղորդության մի հատուկ ժողով, որի ժամանակ անդամներին կխրախուսեն բերել հետաքրքրվող մարդկանց: Ծխի անդամները չեն տատանվի իրենց ծանոթներին բերելու այդ ժողովին, քանի որ ավելի համոզված կլինեն, որ ժողովի բովանդակությունն ավելի լավ ծրագրված կլինի, որպեսզի հետաքրքրություն առաջացնի և ավելի լավ ներկայացվի Եկեղեցին:
6. Կան ավետարանով կիսվելու ավելի շատ հնարավորություններ: Օրինակ, այս ամռանը ես մի ուրախալի նամակ ստացա մի նոր անդամից, ով վերականգնված ավետարանի մասին իմացել էր իր հին դասընկերոջից, որը զանգահարել էր իր հիվանդության մասին հարցնելու նպատակով: Նա գրել է. «Ես տպավորվեցի, թե ինչպես նա իրեն ներկայացրեց ինձ: Մի քանի ամիս միսիոներներից սովորելուց հետո ես մկրտվեցի: Իմ կյանքն այդ օրվանից ի վեր բարելավվեց»:[10] Մենք բոլորս էլ ճանաչում ենք մարդկանց, ում կյանքը կբարելավվի վերականգնված ավետարանի շնորհիվ: Արդյո՞ք մենք կապ ենք հաստատում նրանց հետ:
7. Սոցիալական լրատվամիջոցներից օգտվելու մեր երիտասարդ անդամների ցանկությունն ու փորձը նրանց եզակի հնարավորություն են տալիս ուրիշների մոտ ավետարանի հանդեպ հետաքրքրություն առաջացնել: Նկարագրելով Փրկիչի հայտնվելը Նեփիացիներին, Մորմոնը գրում է. «Եվ եղավ այնպես, որ նա սովորեցրեց և ծառայեց այն բազմության երեխաներին, . . . , և նա արձակեց նրանց լեզուները . . . որ նրանք կարողացան խոսել» (3 Նեփի 26.14): Կարծում եմ, այսօր պետք է ասենք. «արձակեք նրանց [տեքստային հաղորդագրությունները], որ նրանք խոսեն»: Առա՛ջ երիտասարդներ:

Ավետարանով կիսվելը բեռը չէ, այլ՝ ուրախություն: Այն, ինչ անվանում ենք «անդամ-միսիոներական աշխատանք» ծրագիր չէ, այլ՝ սիրո և մեզ շրջապատողներին հասնելու վերաբերմունք: Այն նաև հնարավորություն է վկայելու, թե ինչ վերաբերմունք ունենք Փրկիչի վերականգնված ավետարանի նկատմամբ: Ինչպես Երեց Բալլարդն է ուսուցանել. «Մեր դարձի ամենանշանակալից ապացույցը և մեր կյանքում ավետարանի հանդեպ վերաբերմունքն արտահայտվում է ուրիշների հետ այն կիսվելու մեր պատրաստակամությամբ»:[11]

Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի մասին, ով Աշխարհի Լույսն ու Կյանքն է (տես 3 Նեփի 11.11): Նրա վերականգնված ավետարանի լույսերը մահկանացու կյանքի մեր ուղին են: Նրա Քավության շնորհիվ մենք վստահություն ենք ձեռք բերում մահից հետո կյանքի հանդեպ և ստանում ուժ՝ մահկանացու կյանքում դիմանալու համար: Եվ Նրա Քավությունը հնարավորություն է տալիս, որ մեր մեղքերը ներվեն ու Աստծո փրկության փառահեղ ծրագրի ներքո արժանի զտնվենք հավերժական կյանքի համար, որն «Աստծո պարգևներից ամենամեծն է» (ՎևՈւ 14.7): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Բարի գալուստ համաժողով», *Լիահոնա,* նոյ. 2013, 4:
2. Քվենթին Լ. Քուք, «How to Be a Member Missionary», *New Era,* փետ. 2015, 48:
3. Մ. Ռասսել Բալլարդ, «Ապավինեք Տիրոջը», *Լիահոնա,* նոյ. 2013, 44:
4. Մ. Ռասսել Բալլարդ, «Ապավինեք Տիրոջը», 44:
5. Քլեյթոն Մ. Քրիսչենսեն, *The Power of Everyday Missionaries* (2012), 30:
6. Տես Քրիսչենսեն, *Power of Everyday Missionaries,* 26–27:
7. Տես Գարի Ք. Լորենս, *How Americans View Mormonism: Seven Steps to Improve Our Image* (2008), 34–35:
8. Տես Էշլի Քյուիշ, «Cab Driver Hands Out Copies of Book of Mormon to Rio Visitors», օգոստ. 8, 2016, ksl.com:
9. Քրիսչենսեն, *Power of Everyday Missionaries,* 21:
10. Անձնական նամակ, օգոստ. 21, 2016:
11. Մ. Ռասսել Բալլարդ, «Now Is the Time», *Liahona,* հուն. 2001, 89:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Եկեղեցու պատվիրակները

Մենք խնդրում ենք ձեզ՝ տնային ուսուցիչներիդ, լինել Աստծո պատվիրակները Նրա զավակների համար՝ սիրել, հոգ տանել և աղոթել այն մարդկանց համար, ում ծառայում եք։

Սրանից որոշ ժամանակ առաջ մի չամուսնացած քույր, ասենք Մոլլին, աշխատանքից տուն վերադառնալով, հայտնաբերեց իր տան նկուղի հատակը ամբողջովին ծածկված 5 սանտիմետր բարձրությամբ ջրով։ Նա անմիջապես հասկացավ, որ իր հարևանները, ովքեր օգտվում էին նույն ջրահեռացման գծից, մեծ քանակությամբ լվացք էին արել և լոգանք ընդունել, քանի որ իր տուն էր լցվել կոյուղաջուրը։

Ընկերուհուն կանչեց օգնության և երկուսով սկսեցին դույլերով դատարկել ջուրը։ Հենց այդ պահին հնչեց դռան զանգը։ Ընկերուհին ճչաց. «Քո տնային ուսուցիչնե՛րն են»։

Մոլլին ծիծաղեց։ «Այսօր *ամսվա* վերջին օրն է», պատասխանեց նա, «բայց կարող եմ հավաստիացնել քեզ, որ դա իմ տնային ուսուցիչները *չեն*»։

Ոտաբոբիկ, թաց տաբատով, մազերը գլխակապով հավաքած և մի զույգ լատեքսից նորաձև ձեռնոցներ ձեռքերին՝ Մոլլին քայլեց դեպի դուռը։ Սակայն նրա արտասովոր արտաքինը չէր կարելի համեմատել այն արտասովոր տեսարանի հետ, որը բացվեց նրա աչքերի առաջ։ Դա նրա տնային ուսուցիչներն *էին*։

«Դուք կարող էիք թակել իմ դուռը ջրմուղագործի հետ», պատմում էր նա է ավելի ուշ։ «Սա տնային ուսուցման հրաշք էր, այնպիսին, որի մասին եղբայրները պատմում են զերագույն համաժողովների ելույթների ժամանակ»։ Նա շարունակեց. «Բայց այն պահին, երբ ես չգիտեի՝ համբուրեմ նրանց, թե շվաբրը հանձնեմ իրենց, նրանք ասացին. «Օհ, Մոլլի, կներես։ Տեսնում ենք, որ զբաղված ես։ Չենք ցանկանում խանգարել, կգանք մի ուրիշ անգամ»։ Եվ գնացին»։

«Ովքե՞ր էին», հարցրեց ընկերուհին նկուղից։

Ես ուզում էի ասել. «Դե, իհարկե, երեք նեփիացիները չէին», խոստովանում է Մոլլին, բայց ես զուսպ եմ և հանգիստ ասացի. «Իմ տնային ուսուցիչներն էին, սակայն, նրանք զգացին, որ հարմար ժամանակ չէ ուղերձով կիսվելու համար»։[1]

Եղբայրներ, եկեք հակիրճ քննենք քահանայության այս պարտականությունը, որը նկարագրվում է որպես «Եկեղեցու օգնության առաջին աղբյուրը» անհատների և ընտանիքների համար։[2] Հսկա անտառներ են զոհաբերվել՝ տրամադրելով թուղթ, որ կազմակերպվի և հետո վերակազմակերպվի այս պարտականությունը։ Հազարավոր խթանող ելույթներ են արտաբերվել։ Իհարկե, ոչ մի Ֆրոյդական տուրիստական գործակալություն չէր կարող կազմակերպել թվով այդքան շատ մեղքի ճամփորդություններ, որքան այս թեման է

հրահիրել: Բայց մենք դեռ պայքարում ենք քահանայության տնային ուսուցման միջոցով ամենուրեք հասնելու վարքագծի ընդունելի չափանիշին, որն է Տիրոջ պատվիրանի համաձայն «միշտ հսկել եկեղեցու վրա»[3]:

Մեզ հանդիպող դժվարություններից է Եկեղեցու փոփոխվող ժողովրդագրությունը: Գիտենք, որ այս դեպքում, երբ մեր անդամությունն այժմ տարածվել է ավելի քան 30.000 ծխերում և ճյուղերում, որոնք գտնվում են 188 երկրներում և տարածքներում, այժմ ավելի դժվար է այցելել մեր եղբայրների ու քույրերի տները, քան դա եղել է Եկեղեցու վաղ օրերին, երբ հարևանն ուսուցանել է հարևանին մի ձևով, որը կոչվել է «տարածքային ուսուցում»:

Բացի դա, Եկեղեցու շատ միավորներում սահմանափակ թվով քահանայության կրողներ կան, որոնք կարող են տնային ուսուցում կատարել և նրանց ծառայության շրջանակներում են հայտնվում 18-ից 20 կամ ավել ընտանիքներ, որոնց մասին հարկավոր է հոգ տանել: Այստեղ կարող է լինել նաև հեռու ճամփորդելու, թանկ ճանապարհածախսի և փոխադրամիջոցի սակավության խնդիրները, ինչպես նաև տեղական աշխատանքային օրվա և շաբաթվա երկարացված օրակարգը: Սրան ավելացրեք որոշ մշակութային արգելքներ՝ անսպասելի տնային այցելությունների և անվտանգության հարցերի հետ կապված, որոնք գոյություն ունեն աշխարհի շատ թաղամասերում և, այսպիսով, մենք սկսում ենք տեսնել խնդրի ողջ բարդությունը:

Եղբայրներ, լավագույն դեպքերում և այն հանգամանքներում, երբ տնային ուսուցումը կարող է կայանալ, ամսական մեկ այց յուրաքանչյուր տուն թերևս իդեալական տարբերակն է, որին ձգտում է Եկեղեցին: Սակայն հասկանալով, որ աշխարհի շատ վայրերում նման իդեալական տարբերակ հնարավոր չէ, և մենք պատճառ կարող ենք հանդիսանալ, որ եղբայրներն իրենց ձախողված զգան, եթե խնդրենք նրանց անել այն, ինչն իրականում հնարավոր չէ, ուստի Առաջին Նախագահությունը

2001թ. դեկտեմբերին գրել է Եկեղեցու քահանայության ղեկավարներին, տալով այս ոգեշնչված, շատ օգտակար խորհուրդը. «Եկեղեցում կան որոշ տեղամասեր, որտեղ. . . . տնային ուսուցումը յուրաքանչյուր տուն ամեն ամիս չի կարող կատարվել քահանայություն կրող ակտիվ եղբայրների անբավարար քանակի և տարբեր այլ տեղական խնդիրների պատճառով: Մենք նշեցինք դրանցից մի քանիսը: Այդպիսի հանգամանքների գերակայության պարագայում, ղեկավարները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի օգտագործեն առկա ռեսուրսները, յուրաքանչյուր անդամին հսկելու և ամրապնդելու համար»:[4]

Եղբայրներ, եթե իմ ծխում կամ ճյուղում ես հանդիպեի նման դժվար իրավիճակների, իմ Սհարոնյան քահանայության զուգընկերոջ հետ, ես կկիրառեի Առաջին Նախագահության խորհուրդը (որն այժմ ձեռնարկի քաղաքականությունն է) այս կերպ. նախ, որքան էլ որ շատ ամիսներ պահանջվեն, մենք հետամուտ կլինենք սուրբ գրությունների հանձնագրին՝ «այցելել յուրաքանչյուր անդամի տուն»[5], ստեղծելով ժամանակացույց, որը կտանի մեզ այդ տները, և որը կլինի իրական ու գործնական: Այդ ժամանակացույցին հարմարվելը կլինի մեր առաջնահերթությունը, մեր առկա ժամանակի և այցելությունների հաճախականության շրջանակներում այցելել նրանց տները, ովքեր մեր կարիքն ամենաշատն ունեն՝ միսիոներների կողմից ուսուցանվող լսողները, նոր մկրտված նորադարձները, նրանք, ովքեր հիվանդ են, միայնակները, ոչ ակտիվ անդամները, մի ծնողից կազմված ընտանիքները, որտեղ երեխաներ կան և այլոք:

Այն ժամանակ, երբ մենք աշխատում ենք համաձայն մեր ժամանակացույցի, ձգտելով այցելել բոլոր տները, որի իրականացումը կարող է մի քանի ամիս տևել, մենք կարող ենք մեր ցուցակի անհատների և ընտանիքների հետ շփման այլ եզրեր գտնել, որոնք Տերը տվել է մեզ: Անշուշտ, մենք կարող ենք հետևել մեր ընտանիքներին Եկեղեցում, և, ինչպես ասվում է սուրբ գրության հատվածում՝ «խոսելու մեկը մյուսի հետ, իրենց հոգիների բարօրության վերաբերյալ»[6] Բացի այդ, մենք կարող ենք կատարել հեռախոսազանգեր, է-փոստով ուղարկել նամակներ, տեքստային հաղորդագրություններ, նույնիսկ ողջույնի արտահայտություններ ուղարկել մեզ հասանելի սոցիալական ցանցերի միջոցով: Որպեսզի օգնենք որոշակի կարիքի դեպքում, մենք կարող ենք ուղարկել սուրբ գրության մեջբերում կամ մի տող գերագույն համաժողովի ելույթից կամ մորմոնական ուղերձ, վերցված LDS.org կայքի առատ նյութերից: Առաջին Նախագահության լեզվով ասած, մենք պետք է անենք լավագույնը, ինչ կարող ենք, հայտնվելով որոշակի հանգամանքներում և այն նյութերի օգնությամբ, որոնք մատչելի են մեզ:

Եղբայրներ, այս կոչը, որ այսօր անում եմ, ձեզ համար է, որ ընդլայնեք ձեր տեսլականը տնային ուսուցման վերաբերյալ: Խնդրում եմ, մի նոր, ավելի լավ տեսանկյունից նայեք ինքներդ ձեզ՝ որպես Նրա զավակներին ուղարկված Տիրոջ պատվիրակների: Դա նշանակում է հետևում թողնել խելահեղ, Մովսեսի օրենքի նման, «ամսվա վերջի» օրացույցը, որի մեջ դուք շտապում եք գրել մի ուղերձ Եկեղեցու ամսագրերից, որը ընտանիքն արդեն

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ



Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օուքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբենդ

Գարի Ի. Սթիվենսոն

Դեյլ Գ. Ռենլանդ

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ուիթնի Քլեթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Ռիչարդ Ջ. Մենլզ

Քրեյգ Ս. Քրիսչենսեն

Ուլիսես Սոարես

Լին Գ. Ռոբինս

Ջերիթ Վ . Գոնզ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Դին Մ. Դեյվիս
Առաջին Խորհրդական

Ջեռալդ Կոսե
Նախագահող Եպիսկոպոս

Վ. Քրիստոֆեր Վադել
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Դեյնի Գ. Դյուրան
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քալիստեր
Նախագահ

Բրայըն Ք. Էջթոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոննի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նեյլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

ՍԳՈՒՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Քերոլ Մ. Սթենֆենս
Առաջին Խորհրդական

Լինդա Ք. Բրոթըն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Չին Բինգհեմ
Առաջին Խորհրդական

Ջոյ Դ. Ջոնս
Նախագահ

Բոննի Գ. Կորդոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Դուգլաս Դ. Հոլմս
Առաջին Խորհրդական

Ստեֆեն Վ. Օուեն
Նախագահ

Մ. Ջոզեֆ Բրու
Երկրորդ Խորհրդական

Հոկտեմբեր 2016

կարդացել է: Մենք հույս ունենք, որ փոխարենը դուք անդամների համար կստեղծեք մաքուր, ավետարանի ուղղվածություն ունեցող դարաշրջան, հսկելով ու հոգալով հոգևոր և աշխարհիկ կարիքները օգուտ տվող եղանակով:

Այժմ՝ ինչ վերաբերում է նրան, թե ինչն է «համարվում» տնային ուսուցում, ապա ամեն լավ բան, որ անում եք՝ «համարվում» է, ուստի այդ բոլորը զեկուցեք: Իսկապես, կարևորն այն զեկույցն է, թե ինչպես եք դուք օրհնել և հոգ տարել նրանց համար, ովքեր ձեր ծառայության շրջանակներում են, ինչը գրեթե ոչ մի կապ չունի կոնկրետ օրացույցի կամ որոշակի վայրի հետ: Կարևորն այն է, որ դուք սիրում եք ձեր ժողովրդին և կատարում պատվիրանը «միշտ հսկել Եկեղեցու վրա»:[7]

Անցյալ տարվա մայիսի 30-ին իմ ընկեր Տրոյ Ռասսելը իր բեռնատար մեքենան դանդաղ դուրս հանեց ավտոտնակից, որպեսզի ապրանք տեղափոխեր, նվիրաբերելու համար տեղական Դեզերեթ Ինդասթրիզ ընկերությանը: Նա զգաց, որ հետևի անիվը գլորվեց մի ուռուցիկ բանի վրայով: Մտածելով, որ ինչ-որ ապրանք է դուրս ընկել մեքենայից, նա դուրս եկավ և հայտնաբերեց իր թանկագին ինն-ամյա որդուն՝ Օսթինին, դեմքնիվայր ընկած մայթին: Ճիչերը, քահանայության օրհնությունը, առաջին բուժօգնությունը, հիվանդանոցի բուժանձնակազմը՝ նրանք այս դեպքում ապարդյուն էին: Օսթինը հեռացավ:

Չկարողանալով քնել, չկարողանալով գտնել խաղաղություն, Տրոյը անմխիթար վիճակում էր: Նա ասաց, որ դա ավելին էր, քան ինքը կարող էր տանել և որ պարզապես չէր կարող շարունակել ապրել: Բայց այդ տագնապալի դեպքից հետո եկան երեք փրկագնող ուժեր:

Առաջինը, մեր Երկնային Հոր սերն ու հուսադրող ոգին էր, Սուրբ Հոգու միջոցով ներգործող Նրա ներկայությունը մխիթարեց Տրոյին, ուսուցանեց նրան, սիրեց և շշնջաց, որ Աստված ամեն ինչ գիտի գեղեցիկ ու կատարյալ Որդու կորստի մասին: Երկրորդը, նրա կինը՝ Դիդրան էր, որը գրկել էր Տրոյին իր ձեռքերով, սիրում էր նրան և հիշեցնում, որ ինքը ևս կորցրել է այդ որդուն և չի ցանկանում ամուսնուն ևս կորցնել: Երրորդը, այս պատմություն մեջ Ջոն Մեննինգն էր՝ մի *արտակարգ* տնային ուսուցիչ:

Ես իրոք չգիտեմ, թե ինչ ժամանակացույցով էին Ջոնը և նրա կրտսեր զուգընկերը այցելել Ռասսելների տունը, կամ թե ինչ ուղերձով էին կիսվել, երբ եկել էին այնտեղ, կամ ինչպես էին պայմանավորվել իրենց այցի համար: Այն, ինչ գիտեմ, անցյալ տարվա գարնանը եղբայր Մեննինգը եկել էր և վերցրել Տրոյ Ռասսելին այդ ողբերգական պահին այն ճանապարհից, կարծես վերցնում էր հենց փոքրիկ Օսթինին: Որպես տնային ուսուցիչ, հսկող կամ եղբայր ավետարանում, Ջոնը պարզապես գործեց քահանայության խնամքով Տրոյ Ռասսելի նկատմամբ: Նա սկսեց, ասելով. «Տրոյ, Օսթինը ուզում է, որ ոտքի կանգնես, այդ թվում բասկետբոլի դաշտում, այնպես որ ես կլինեմ այստեղ ամեն առավոտ ժամը 5:15: Պատրաստ եղիր, քանի որ ես չեմ ուզում մտնել ներս, քեզ արթնացնել, և ես *գիտեմ,* որ Դիդրան էլ չի ուզում, որ ես դա անեմ»:

«Ես չէի ուզում գնալ», Տրոյն ինձ ասաց ավելի ուշ, «որովհետև ես միշտ վերցնում էի Օսթինին ինձ հետ այդ առավոտները, և գիտեի, որ հիշողությունները շատ ցավոտ են լինելու: Բայց Ջոնը պնդեց, և ես գնացի: Այդ առաջին օրը վերադառնալիս մենք զրուցում էինք, ավելի շուտ ես էի խոսում, իսկ Ջոնը լսում էր: Եկեղեցի ուղևորվելու ողջ ճանապարհին ես խոսեցի, ապա խոսեցի տունդարձի ճանապարհին: Երբեմն ես խոսում էի, երբ մեքենան կայանում էինք և դիտում Լաս Վեգասի արևածագը: Սկզբում դժվար էր, բայց ընթացքում ես հասկացա, որ գտնում եմ իմ ուժը Եկեղեցու բասկետբոլի թիմի վատ խաղացող՝ 1.88 մ հասակով մարդու շնորհիվ, որը զնդակի ոչ դիպուկ նետումներ էր կատարում դեպի զամբյուղը, բայց ով սիրում էր ինձ և լսեց ինձ, մինչև արևը վերջապես կրկին ծագեց իմ կյանքում»:[8]

Սուրբ քահանայության իմ եղբայրներ, երբ մենք խոսում ենք տնային ուսուցման, հոգատարության կամ քահանայության անհատական սպասավորման մասին, կոչեք ինչպես կուզեք, ահա, թե ինչի մասին ենք խոսում: Մենք խնդրում ենք ձեզ՝ որպես տնային ուսուցիչներ, լինել Աստծո պատվիրակները Նրա զավակների համար, սիրել, հոգ տանել և աղոթել մարդկանց համար, ում ձեզ հանձնարարվել է ծառայել, ինչպես մենք ենք սիրում, հոգ տանում և աղոթում ձեզ համար: Աչալուրջ եղեք՝ արածեցնելով Աստծո հոտը ձեր հանգամանքներին համապատասխան: Ես աղոթում եմ մեր բոլորի Բարի Հովվի անունով, որի վկան եմ ես, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Personal conversation, June 2016.
2. *Melchizedek Priesthood Leadership Handbook* (1990), 5.
3. Վարդապետություն և Ուխտեր 20.53:
4. First Presidency letter, Dec. 10, 2001; this counsel has been incorporated into *Handbook 2: Administering the Church* (2010), 7.4.3.
5. Վարդապետություն և Ուխտեր 20.47, 51:
6. Մորոնի 6.5:
7. Վարդապետություն և Ուխտեր 20.53:
8. Անձնական նամակագրություն, ապր. 2016:

Երեց Լեգռան Ռ. Քըրթիս Կրտսեր
Յոթանասուն

Գրքում կա զորություն

Մորմոնի Գրքի մեծագույն զորությունը դրա ազդեցությունն է մեզ Հիսուս Քրիստոսին ավելի մոտեցնելու գործում։

1989 թ-ի հունիսի 14-ին, Եկեղեցու մասին որոշ ապատեղեկատվության պատճառով Գանայի կառավարությունը արգելեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի ողջ գործունեությունը այդ աֆրիկյան երկրի սահմաններում։ Կառավարությունը բռնագրավեց Եկեղեցու ողջ գույքը, և միսիոներական գործունեությունը դադարեց։ Եկեղեցու անդամները, որոնք դիտարկում են այդ ժամանակաշրջանը որպես «սառեցում», առանց իրենց ճյուղի հանդիպումների կամ միսիոներների աջակցության արեցին լավագույնը ավետարանով ապրելու համար։ Կան շատ ներշնչող պատմություններ այն մասին, թե անդամներն ինչպես էին պահպանում ավետարանի լույսը, երկրպագելով իրենց տներում և հոգ տանելով միմյանց մասին՝ որպես տնային և այցելող ուսուցիչներ։

Ի վերջո, թյուրիմացությունը հարթվեց, և 1990 թ-ի նոյեմբերի 30-ին սառեցումն ավարտվեց ու Եկեղեցու նորմալ գործունեությունը վերսկսվեց։[1] Այդ օրվանից Եկեղեցու և Գանայի կառավարության միջև հարաբերությունը գերազանց է եղել։

Սառեցումն ապրած անդամները արագ են ընդգծում օրհնությունները, որոնք եկան այդ անսովոր ժամանակաշրջանից։ Հանդիպած ձախողումների շնորհիվ շատերի հավատքը ամրապնդվեց։ Բայց սառեցման մի օրհնություն եկավ անսովոր ձևով։

Նիկոլաս Օֆոսու-Հենեն մի երիտասարդ ոստիկան էր, որը սառեցման ժամանակ նշանակված էր հսկելու ՎՕՍ հավաքատունը։ Նրա պարտականությունն էր գիշերը հսկել այդ շենքը։ Երբ Նիկոլասը առաջին անգամ ժամանեց հավաքատուն, նա տեսավ, որ իրերը տարածքով մեկ ցրված էին. թղթերը, գրքերը, և կահույքը գտնվում էին անկարգ վիճակում։ Այդ խառնաշփոթի մեջ, նա տեսավ Մորմոնի Գիրքը։ Նա փորձեց անտեսել գիրքը, որովհետև իրեն ասել էին, որ այն չարիք էր։ Սակայն նա զգաց տարօրինակ գրավչություն դրա հանդեպ։ Վերջապես, Նիկոլասն այլևս չէր կարող անտեսել գիրքը։ Նա վերցրեց այն։ Նա իրեն պարտավորված զգաց սկսել այն կարդալ։ Նա կարդաց ողջ գիշերը, և կարդալիս, արցունքները հոսում էին նրա այտերով։

Երբ նա առաջին անգամ վերցրեց , նա կարդաց ողջ 1 Նեփի գլուխը։ Երկրորդ անգամ նա կարդաց ողջ 2 Նեփի գլուխը։ Երբ նա հասավ 2 Նեփի 25-րդ գլուխին, կարդաց հետևյալը. «Եվ մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»։[2]

Այդ պահին Նիկոլասը այնքան ուժեղ զգաց Հոգին, որ սկսեց հեկեկալ։ Նա հասկացավ, որ իր ընթերցանության ընթացքում ստացել էր մի քանի հոգևոր հուշումներ, որ այդ գիրքը սուրբ գրություն է՝ ամենաճիշտը, որը նա երբևիցե կարդացել էր։ Նա հասկացավ, որ, հակառակ իր լսածի, Վերջին Օրերի Սրբերը խիստհավատում են Հիսուս Քրիստոսին։ Սառեցման ավարտից և միսիոներների Գանա վերադարձից հետո Նիկոլասը, նրա կինը և երեխաները միացան Եկեղեցուն։ Երբ ես նրան տեսա անցյալ տարի, նա ոստիկանության հրամանատար էր և ծառայում էր որպես Եկեղեցու Տամալե Գանա Շրջանի նախագահ։ Նա ասում է. «Եկեղեցին վերափոխել է իմ կյանքը։ . . . Ես շնորհակալ եմ Ամենազոր Աստծուն ինձ դեպի այդ ավետարանը տանելու համար»։[3]

Ալիբերտ Դեյվիսը՝ մեկ ուրիշ Գանացի, ուղեկցում էր ընկերոջը մինչև մեր հավաքատներից մեկը, որտեղ այդ ընկերը նախագահության ժողով ուներ։ Իր ընկերոջը սպասելիս, Ալիբերտը կարդում է մի գիրք, որը նա գտավ մոտակայքում։ Երբ ժողովն ավարտվեց, Ալիբերտը ցանկացավ տանել գիրքը տուն։ Նրան թույլ տվեցին վերցնել ոչ միայն այդ գիրքը, այլ նաև Մորմոնի Գիրքը։ Երբ նա հասավ տուն, սկսեց կարդալ Մորմոնի Գիրքը։ Նա չէր կարող վար դնել այն։ Նա կարդում էր մոմի լույսի տակ մինչև գիշերվա ժամը 3:00-ը։ Նա արեց դա մի քանի գիշերների ընթացքում, հուզվելով իր կարդացածից և զգացածից։ Ալիբերտն այժմ Եկեղեցու անդամ է։

Անջելո Սկարպուլան սկսեց իր աստվածաբանական ուսումը հայրենի Իտալիայում, երբ 10 տարեկան էր։ Նա ի վերջո դարձավ քահանա և նվիրվածությամբ ծառայեց իր եկեղեցում։ Եկավ որոշակի պահ, երբ նրա

հավատքը սկսեց սասանվել, և նա փնտրեց ու գտավ ուսումը շարունակելու հնարավորություններ: Որքան ավելի էր նա սովորում, այնուամենայնիվ, այնքան ավելի էր նա մտահոգվում: Այն, ինչ նա կարդում և զգում էր, համոզեց նրան, որ տեղի էր ունեցել Հիսուսի և վաղ Առաքյալների կողմից ուսուցանած ճշմարիտ վարդապետության մեծ ուրացություն: Անջելոն փնտրում էր Աստծո ճշմարիտ կրոնը տարբեր հավատներում, բայց երկար տարիներ նրան չէր բավարարում արդյունքը:

Մի օր նա հանդիպեց Եկեղեցու երկու անդամների, որոնք միսիոներներին օգնում էին ավելի շատ մարդ գտնել ուսուցանելու համար: Նա զգում էր, որ նրանք ձգում էին իրեն և ուրախությամբ լսում էր նրանց ուղերձը: Անջելոն պատրաստակամությամբ ընդունեց Մորմոնի Գիրքը:

Այդ երեկո նա սկսեց կարդալ գիրքը: Նա լցվեց ուրախությամբ: Հոգու շնորհիվ Աստված Անջելոյին տվեց ներքին հավաստիացում, որ Մորմոնի Գրքում նա կգտնի այն ճշմարտությունը, որին ձգտում էր երկար տարիներ: Հաճելի զգացմունքներ թափվեցին նրա վրա: Այն, ինչ նա կարդաց և սովորեց միսիոներներից, հաստատեց նրա եզրակացությունը, որ տեղի էր ունեցել մեծ ուրացություն, բայց նա սովորեց նաև, որ Աստծո ճշմարիտ Եկեղեցին վերականգնվել էր երկրի վրա: Կարճ ժամանակ անց Անջելոն մկրտվեց Եկեղեցում:[4] Երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրան, նա Իտալիայում մեր Եկեղեցու Ռիմինի ճյուղի նախագահն էր:

Այն, ինչ զգացին Նիկոլասը, Ալիբերտը, և Անջելոն Մորմոնի Գրքի հետ կապված, հիշեցնում է Փարլի Պ. Պրատի փորձառությունը.

«Ես ջերմեռանդորեն բացեցի [գիրքը]: . . . Ես կարդում էի ամբողջ օրը: Ուտելը բեռ էր, ես չունեի ցանկություն սնունդի համար: Քունը բեռ էր, երբ . . . գալիս էր գիշերը, քանի որ ես կարդալը գերադասում էի քնելուն:

Երբ կարդում էի, Տիրոջ հոգին իջավ ինձ վրա, և ես իմացա ու ըմբռնեցի, որ գիրքը ճշմարիտ էր՝ այնքան պարզորեն և բացահայտորեն, որքան մարդն ըմբռնում է ու գիտի, որ նա գոյություն ունի: Իմ ուրախությունն արդեն կարծես լի էր, և ես բավականաչափ ուրախանում էի նրան, որ ստացա ավելին, քան եթե վարձատրվեի իմ կյանքի բոլոր վշտերի, զոհաբերությունների և ծանր փորձությունների համար»:[5]

Ոմանք ունեն այդպիսի զորեղ փորձառություն կապված Մորմոնի Գրքի հետ, երբ առաջին անգամ բացում են այն, բայց մյուսներին ճշմարտության վկան գալիս է աստիճանաբար, երբ նրանք կարդում և աղոթում են դրա մասին: Այդպես էր իմ դեպքում: Ես առաջին անգամ կարդացի Մորմոնի Գիրքը որպես սեմինարիայի դեռահաս ուսանող: Սա իմ կարդացած Մորմոնի Գիրքն է: Ես չեմ կարող ձեզ հստակ պատմել ժամի կամ վայրի մասին, ինչպես այն տեղի ունեցավ, բայց այդ ընթերցանության ժամանակ, ինչ-որ պահ ես սկսեցի զգալ ինչ-որ բան: Ամեն անգամ բացելով գիրքը, ես զգում էի ջերմություն և ոգի: Այդ զգացումն աճում էր, երբ ես շարունակում էի իմ ընթերցանությունը: Այդ զգացումը շարունակվում է մինչև այս օրը: Ամեն անգամ բացելով Մորմոնի Գիրքը, ես կարծես միացնում եմ անջատիչը և Հոգին հորդում է սրտիս և հոգուս մեջ:

Այնուամենայնիվ, ուրիշների համար Մորմոնի Գրքի մասին վկայությունը գալիս է ավելի դանդաղ շատ ուսումնասիրությունից և աղոթքից հետո: Ես ունեմ մի ընկեր, ով կարդացել է Մորմոնի Գիրքը,

ձգտելով իմանալ, թե արդյոք այն ճշմարիտ էր: Նա Մորոնի գրքից հրավերն է կիրառել է՝ խնդրել Աստծուն մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:[6] Բայց նա անմիջապես չի ստացել խոստացած հոգևոր պատասխանը: Ինչևէ, մի օր, երբ նա ճանապարհին վարում էր մեքենա՝ խորասուզված մտքերի մեջ, Հոգին վկայեց նրան Մորմոնի Գրքի ճշմարտության մասին: Նա այնքան երջանիկ էր ու հուզված, որ իջեցրեց մեքենայի պատուհանը և բղավեց՝ մասնավորապես ոչ մեկին, և այնուամենայնիվ ողջ աշխարհին. «Այն ճշմարի՞տ է»:

Անկախ նրանից, թե Մորմոնի Գրքի մասին մեր վկայությունը գալիս է առաջին անգամ այն բացելիս, թե ժամանակի ընթացքում, այն կազդի մեզ վրա ամբողջ կյանքում , եթե մենք շարունակենք այն կարդալ և կիրառել դրա ուսմունքները: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ուսուցանել է. «Գրքի մեջ *միգորություն* կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ դիմակայելու գայթակղությանը: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ խուսափելու խաբեությունից: Դուք կգտնեք ավելի մեծ զորություն՝ մնալու նեղ և անձուկ արահետում»:[7]

Ես խրախուսում եմ այս ուղերձի բոլոր լսողներին, ներառյալ այս երեկոյան ժողովին հավաքված Ահարոնյան Քահանայության կրողներին հայտնաբերել Մորմոնի Գրքի զորությունը: Ինչպես խրախուսել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը. «Կարդացեք Մորմոնի Գիրքը: Խորհեք դրա ուսմունքների շուրջ: Հարցրեք Երկնային Հորը՝ արդյոք այն ճշմարիտ է»:[8] Այդ գործընթացի ժամանակ դուք կզգաք ձեր կյանքում Աստծո Հոգին: Այդ Հոգին կլինի ձեր վկայության մի մաս, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ Ջոզեֆ Սմիթը եղել է Աստծո մարգարե, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո ճշմարիտ Եկեղեցին է այսօր երկրի վրա: Այդ վկայությունը կօգնի ձեզ դիմակայել գայթակղությանը:[9] Այն կնախապատրաստի ձեզ «մեծ կոչ[ին] . . .՝ ջանասիրությամբ տքնել Տիրոջ այգիներում»:[10] Այն հանդես կգա որպես հաստատուն խարիսխ, երբ կիրառվեն մեղադրանքներ կամ զրպարտող խոսքեր ձեր հավատքին մարտակոչ նետելու համար և կլինի ժայռի պես ամուր հիմք, երբ դժվարանաք պատասխանել ձեզ տված հարցերին, համենայնդեպս, անմիջապես: Դուք կկարողանաք տարբերել ճշմարտությունը սխալից և կզգաք, թե Սուրբ Հոգու հավաստիացումն ինչպես է կրկին ու կրկին վերահաստատում ձեր վկայությունը, երբ շարունակեք կարդալ Մորմոնի Գիրքը ձեր ողջ կյանքում:

Ես խրախուսում եմ նաև բոլոր ծնողներին, ովքեր լսում կամ կարդում են այս ուղերձը, Մորմոնի Գիրքը դարձնել ձեր տան կարևոր մասը: Երբ մեր երեխաները մեծանում էին, նախաճաշ ուտելիս մենք Մորմոնի Գիրքն էինք կարդում: Սա մեր օգտագործած էջանիշն է: Դիմացի կողմում գրված է Նախագահ Բենսոնի մեջբերումը, որը խոստանում է, որ Աստված օրհնություն կհեղի մեզ վրա, երբ կարդանք Մորմոնի Գիրքը:[11] Ետևի կողմում Նախագահ Մարիոն Ջ. Ռոմնիի՝ Առաջին Նախագահության նախկին խորհրդականի հետևյալ խոստումն է. «Ես համոզված եմ, որ եթե մեր տներում ծնողներն անձամբ և իրենց երեխաների հետ աղոթքով ու կանոնավոր կերպով կարդան Մորմոնի Գիրքը, այդ հրաշալի գրքի ոգին կթափանցի մեր տներն ու այնտեղ ապրողների սիրտը: . . . Հակառակության ոգին կհեռանա: Ծնողներն իրենց երեխաներին խորհուրդ կտան ավելի մեծ սիրով ու իմաստությամբ: Երեխաներն ավելի արձագանքող և ենթարկվող կդառնան իրենց ծնողների խորհրդի հանդեպ: Արդարությունը կավելանա: Հավատքը, հույսը և գթությունը, որը Քրիստոսի մաքուր սերն է, կլցնի մեր տներն ու կյանքը, իրենց հետ բերելով խաղաղություն, ուրախություն և երջանկություն»:[12]

Այժմ, շատ տարիներ անց, երբ մեր երեխաները լքել են մեր տունը և կազմել են իրենց սեփական ընտանիքները, մենք կարող ենք պարզ տեսնել Նախագահ Ռոմնիի խոստման իրականացումը: Մեր ընտանիքը հեռու է կատարյալ լինելուց, բայց մենք կարող ենք վկայել Մորմոնի Գրքի զորության և օրհնությունների մասին, որ այն կարդալը բերել է և շարունակում է բերել մեր ողջ ընտանիքի կյանք:

Մորմոնի Գրքի ամենամեծ զորությունն է դրա ազդեցությունը՝ մեզ մոտեցնել Հիսուս Քրիստոսին: Այն ուժեղ վկա է Նրա և Իր փրկագնող միսիայի համար:[13] Դրա շնորհիվ մենք հասկանում ենք Նրա Քավության վեհափառությունը և զորությունը:[14] Այն հստակ ուսուցանում է Նրա վարդապետությունը:[15] Եվ փառահեղ գլուխների շնորհիվ, որոնք նկարագրում են հարություն առած Քրիստոսի այցը Նեփիացիների մոտ, մենք տեսնում և զգում ենք, թե Նա ինչպես է սիրում, օրհնում և ուսուցանում այդ մարդկանց և սկսում ենք հասկանալ, որ Նա կանի նույնը մեզ համար, եթե մենք գանք դեպի Նա՝ ապրելով Նրա ավետարանով:[16]

Եղբայրներ, ես վկայում եմ Մորմոնի Գրքի զորության մասին: Անկախ նրանից, թե ես կկարդամ

անգլերեն, իտալերեն, թե ֆրանսերեն լեզուներով, տպագրված տեսքով, թե էլեկտրոնային սարքով, ես գտել եմ նույն հրաշալի ոգին, որը ներթափանցում է իմ կյանք դրա գլուխներից և հատվածներից: Ես վկայում եմ, որ այն կարող է մեզ ավելի մոտեցնել Քրիստոսին: Ես աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը լիովին օգտվի այս հրաշալի սուրբ գրքում պարունակվող զորությունից: Հիսուս Քրիստոսի անունով, Ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես "'You Can't Close My Heart': Ghanaian Saints and the Freeze," Jan. 6, 2016, history.lds.org.
2. 2 Նեփի 25.26:
3. Է-փոստ Նիկոլաս Օֆոսու-Հենեից, հոկտ. 27, 2015թ:
4. Տես Angelo Scarpulla, "My Search for the Restoration," *Tambuli,* June 1993, 16–20; email from Ezio Caramia, Sept. 16, 2016.
5. *Autobiography of Parley P. Pratt,* ed. Parley P. Pratt Jr. (1938), 37:
6. Տես Մորոնի 10.4–5:
7. *Եկեղեցու նախագահների ուսմունքներ. Եզրա Թաֆտ Բենսոն* (2014), 141
8. Թոմաս Ս. Մոնսոն, «Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ», *Լիահոնա,* նոյ. 2011, 62, տես նաև Թոմաս Ս. Մոնսոն, «Քահանայության զորություն», *Լիահոնա,* մայիս 2011, 66: *A Prophet's Voice: Messages from Thomas S. Monson* (2012), 490–94:
9. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Քահանայության յուրաքանչյուր կրող պետք է ամեն օր ուսումնասիրի սուրբ գրությունները: . . . Ես խոստանում եմ ձեզ, անկախ նրանից կրում եք Ահարոնյան թե Մելքիսեդեկյան Քահանայությունը, եթե ջանասիրաբար ուսումնասիրեք սուրբ գրությունները, ձեր բոլոր գործերում գայթակղությունը անտեսելու և Սուրբ Հոգու առաջնորդություն ունենալու ձեր զորությունը կավելանա» ("Be Your Best Self," *Լիահոնա,* մայիս 2009, 68):
10. Ալմա 28.14:
11. «Ես խոստանում եմ ձեզ, որ այս պահից ի վեր, եթե մենք ամեն օր սնվենք դրա [Մորմոնի Գրքի] էջերով և հետևենք նրա սկզբունքներին, Աստված կհեղի Սիոնի յուրաքանչյուր զավակի և Եկեղեցու վրա մինչև այժմ չիմացված մի օրհնություն» (*Ուսմունքներ: Եզրա Թաֆտ Բենսոն,* 127):
12. Marion G. Romney, "The Book of Mormon," *Ensign,* May 1980, 67.
13. Տես, օրինակ, Մորմոնի Գրքի տիտղոսաթերթը,1 Նեփի 11, 2 Նեփի 25, Մոսիա 16, 18, Ալմա 5, 12, Հելաման 5, 3 Նեփի 9, Մորմոն 7:
14. Տես, օրինակ, 2 Նեփի 2, 9, Մոսիա 3, Ալմա 7, 34:
15. Տես, օրինակ, 2 Նեփի 31, 3 Նեփի 11, 27:
16. Տես 3 Նեփի 11–28:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Սովորենք Ալմայից և Ամուղեկից

Ես հուսով եմ, որ նրանք, ովքեր հեռացել են աշակերտության ուղուց, կտեսնեն սրտով և կսովորեն Ալմայից ու Ամուղեկից:

Կրտսեր Ալման

Սուրբ գրությունների ամենաամոռանալի մարդկանցից մեկը Ալմա Կրտսերն է: Չնայած այն բանին, որ նա մեծ մարգարեի որդի էր, նա կորցրել էր իր ճանապարհը որոշ ժամանակ և «ամբարիշտ և կռապաշտ մարդ էր» դարձել: Ինչ-որ պատճառով, որը կարող ենք միայն ենթադրել, նա ակտիվորեն հակադրվում էր իր հորը և ձգտում էր ոչնչացնել Եկեղեցին: Եվ իր ճարտասանության ու համոզիչ էության շնորհիվ, նա մեծ հաջողության էր հասել[1]:

Բայց Ալմայի կյանքը փոխվեց, երբ Տիրոջ հրեշտակը երևաց նրան և խոսեց որոտի ձայնով: Երեք օր ու երեք գիշեր, Ալման «պրկվել էր հավերժական տանջանքից . . . նույնիսկ ցավերով անիծված հոգու»: Եվ հետո, ինչ-որ կերպ, մի աղոտ հիշողություն լույս բերեց նրա խավարած մտքին՝ իր հոր կողմից ուսուցանած մի հավերժական մի ճշմարտություն, որ Հիսուս Քրիստոսը գալու է՝ «քավելու համար աշխարհի մեղքերը»: Ալման վաղուց մերժել էր այդպիսի հասկացությունները, բայց հիմա նրա «դատողությունը որսաց այս միտքը», և նա խոնարհաբար, թախանձանքով իր հույսը դրեց Քրիստոսի քավիչ զորության վրա[2]:

Այդ փորձառությունից բարձրանալուց հետո, Ալման փոխված մարդ էր: Այդ պահից ի վեր նա իր կյանքը նվիրեց իր պատճառած վնասի հետևանքները ուղղելուն: Նա ապաշխարության, ներում ստանալու և տևական հավատարմության հզոր օրինակ դարձավ:

Ի վերջո, Ալման ընտրվեց՝ հաջորդելու իր հորը, որպես Աստծո Եկեղեցու ղեկավար:

Նեփիացի ազգի յուրաքանչյուր քաղաքացի հավանաբար գիտերԱլմայի պատմությունը: Նրա ժամանակի Թվիթերի, Ինստագրամի և Ֆեյսբուքի էջերը պիտի որ լցված լինեին նրա մասին նկարներով ու պատմություններով: Նա, հավանաբար, պարբերաբար հայտնվում էր *Զարահեմլա Ռիքլի* շաբաթաթերթի առաջին էջերում և մշտական թեմա էր խմբագրությունների ու համացանցի նյութերում: Կարճ ասած, նա, թերևս, իր ժամանակի ամենահայտնի մարդն էր:

Սակայն, երբ Ալման տեսավ, որ իր ժողովուրդը մոռանում է Աստծուն և աճում է հպարտությունն ու հակառակությունը, նա որոշեց հրաժարվել իր հանրային պաշտոնից և նվիրվել «Աստծո սուրբ կարգի բարձրագույն քահանայությանը»[3], որպեսզի ապաշխարություն քարոզի Նեփիացիներին:

Սկզբում, Ալման մեծ հաջողության հասավ, այսինքն՝ հասավ մինչև Ամմոնիա քաղաքը: Այդ քաղաքի մարդիկ լավ գիտակցում էին, որ Ալման այլևս իրենց քաղաքական առաջնորդը չէր, և նրանք մեծ հարգանք չունեին նրա քահանայության իշխանության հանդեպ: Նրանք հեգնեցին նրան, ծաղրեցին և դուրս քշեցին իրենց քաղաքից:

Սրտաբեկ, Ալման մեջքը դարձրեց դեպի Ամմոնիա քաղաքը[4]:

Սակայն մի հրեշտակ նրան պատվիրեց վերադառնալ:

Մտածեք մի պահ այդ մասին. նրան պատվիրեցին վերադառնալ այն մարդկանց մոտ, ովքեր ատում էին նրան և թշնամաբար էին տրամադրված Եկեղեցում: Դա վտանգավոր և գուցե կյանքին սպառնացող հանձնարարություն էր: Սակայն Ալման չվարանեց: «Նա շտապ վերադարձավ»[5]:

Ալման ծոմ էր պահել շատ օրեր, երբ մտավ քաղաք: Այնտեղ նա լրիվ անծանոթ մի օտարականի հարցրեց. «Կտա՞ս Աստծո խոնարհ ծառային որևէ բան ուտելու»[6]:

Ամուղեկը

Այդ մարդու անունն Ամուղեկ էր:

Ամուղեկն ունևոր մարդ էր՝ Ամմոնիայում հայտնի քաղաքացի: Չնայած նա մեծաքանակ հավատացյալներից մեկն էր, նրա անձնական հավատը սառել էր: Ավելի ուշ նա խոստովանեց, «ես կանչվել եմ շատ անգամ, և ես չեմ կամեցել լսել. հետևաբար, ես գիտեի այս բաների վերաբերյալ, բայց ես չէի կամենում [հավատալ]. հետևաբար, ես շարունակում էի ապստամբել Աստծո դեմ»[7]:

Բայց Աստված պատրաստում էր Ամուղեկին, և երբ նա հանդիպեց Ալմային, իր տուն հրավիրեց Տիրոջ ծառային, որտեղ Ալման շատ օրեր անցկացրեց[8]: Այդ ժամանակ, Ամուղեկը բացեց իր սիրտը Ալմայի ուղերձի համար և նրա հետ հրաշալի փոփոխություն կատարվեց: Դրանից հետո Ամուղեկը ոչ միայն հավատաց, այլև դարձավ ճշմարտության մարտիկ:

Երբ Ալման դարձյալ դուրս ելավ Ամմոնիայի ժողովրդին սովորեցնելու, նա երկրորդ վկա ուներ իր կողքին՝ Ամուղեկին՝ այդ մարդկանցից մեկին:

Իրադարձությունները, որոնք հետևեցին, համարվում են սուրբ գրությունների ամենից դառն ու անուշ պատումներից մեկը: Դուք կարող եք այն կարդալ Ալմայի 8–16 գլուխներում:

Այսօր, ես կցանկանայի խնդրել ձեզ մտածել այս երկու հարցերի շուրջ.

Առաջին. «Ի՞նչ կարող եմ սովորել Ալմայից»:

Երկրորդ. «Ինչո՞վ եմ ես նման Ամուղեկին»:

Ի՞նչ կարող եմ սովորել Ալմայից:

Թույլ տվեք սկսել, հարցնելով Հիսուս Քրիստոսի Եկեղեցու բոլոր նախկին, ներկա կամ ապագա առաջնորդներին. «Ի՞նչ կարող եք դուք սովորել Ալմայից»:

Ալման բացառիկ պարգևներով և ունակություններով օժտված մարդ էր: Հեշտ է մտածել, որ նա որևէ մեկի օգնության կարիքը չէր զգում: Այնուամենայնիվ, ի՞նչ արեց Ալման, երբ վերադարձավ Ամմոնիա:

Ալման գտավ Ամուղեկին և նրանից օգնություն խնդրեց:

Եվ նա ստացավ օգնությունը:

Ինչ-ինչ պատճառներով, երբեմն, մենք, որպես առաջնորդներ, չենք ուզում գտնել և օգնություն խնդրել մեր Ամուղեկներից: Գուցե կարծում ենք, որ ինքներս կարող ենք ավելի լավ կատարել աշխատանքը կամ չենք ցանկանում անհարմարություն պատճառել ուրիշներին կամ էլ ենթադրում ենք, որ ուրիշները չեն ցանկանա մասնակցել: Շատ հաճախ մենք վարանում ենք հրավիրել մարդկանց՝ օգտագործել իրենց աստվածատուր շնորհները և մասնակցել փրկության մեծ աշխատանքին:

Մտածեք Փրկիչի մասին. արդյոք նա մեն-մենա՞կ ստեղծեց Իր Եկեղեցին:

Ո՛չ:

Նրա ուղերձն սա չէր. «Ետ կանգնիր: Ես գործը կկարգավորեմ»: Ավելի շուտ, այն հետևյալն էր. «Եկ, հետևիր ինձ»[9]: Նա ոգեշնչում, հրավիրում, հրահանգում և ապա վստահում էր Իր հետևորդներին. «արեք այն բաները, որոնք տեսաք ինձ անելիս»[10]: Այս կերպ, Հիսուս Քրիստոսը շենացնում էր ոչ միայն իր Եկեղեցին, այլ նաև Իր ծառաներին:

Ինչ պաշտոնում էլ այժմ ծառայելիս լինեք, թե՛ որպես սարկավագների քվորումի նախագահ, թե՛ ցցի նախագահ, թե՛ տարածքային նախագահ, հաջողակ լինելու համար դուք պետք է գտնեք ձեր Ամուղեկներին:

Դա կարող է լինել մեկը, ով համեստ կամ նույնիսկ անտեսանելի է ձեր ժողովներում: Դա կարող է լինել մեկը, ով, *կարծես*, չի ցանկանում կամ ի վիճակի չէ ծառայելու: Ձեր Ամուղեկները կարող են լինել երիտասարդ, թե ծեր, տղամարդիկ, թե կանայք, անփորձ, հոգնած կամ ոչ ակտիվ Եկեղեցում: Բայց նրանք հույս ունեն, ինչը չես կարող տեսնել առաջին հայացքից, որ ձեզանից կլսեն այդ բառերը. «Տերը ունի ձեր կարիքը: Ես ունեմ ձեր կարիքը»:

Սրտի խորքում շատերն են ցանկանում ծառայել իրենց Աստծուն: Նրանք ցանկանում են գործիք լինել Նրա ձեռքում: Նրանք կամենում են մանգաղը գցել և իրենց զորությամբ ջանք գործադրել նախապատրաստելու երկիրը մեր Փրկիչի վերադարձի համար: Նրանք ուզում են կառուցել Նրա Եկեղեցին: Բայց նրանք՝ իրենք, վարանում են սկսել: Հաճախ նրանք սպասում են, որ իրենց խնդրեն:

Ես հրավիրում եմ ձեզ մտածել ձեր ճյուղերի և ծխերի, ձեր միսիոների և ցցերի այն մարդկանց մասին, ովքեր ցանկանում են գործի անցնելու կոչ լսել: Տերը աշխատում է նրանց հետ՝ պատրաստում է նրանց, փափկացնում նրանց սրտերը: Գտեք նրանց՝ փնտրելով ձեր սրտով:

Ձեռք մեկնեք նրանց: Սովորեցրեք նրանց: Ոգեշնչեք նրանց: Խնդրեք նրանց:

Կիսվեք նրանց հետ Ամուղեկին ասած հրեշտակի խոսքերով, որ Տիրոջ օրհնությունները կհանգչի նրանց վրա և նրանց ընտանիքի վրա[11]: Հնարավոր է՝ դուք զարմանաք, բացահայտելով Տիրոջ անվեհեր մի ծառայի, ով այլապես թաքնված կմնար:

Ինչո՞վ եմ ես նման Ամուղեկին:

Մինչ մեզանից ոմանք պետք է փնտրեն Ամուղեկին, մյուսների հարցը կարող է այսպիսին լինել. «Ինչո՞վ եմ ես նման Ամուղեկին»:

Գուցե դուք տարիների ընթացքում ավելի քիչ հավատարիմ եք դարձել աշակերտության ձեր ճանապարհին: Գուցե ձեր վկայության կրակը խամրե՞լ է: Գուցե դուք հեռացե՞լ եք Քրիստոսի մարմնից: Հավանաբար, դուք հիասթափված եք կամ նույնիսկ զայրացած: Եփեսոսի հին եկեղեցու նման, գուցե, դուք թողել եք ձեր «առաջին սերը»[12], Հիսուս Քրիստոսի ավետարանի վսեմ, հավերժական ճշմարտությունները:

Հնարավոր է, Ամուղեկի նման ձեր սրտում դուք գիտեք, որ Տերը ձեզ «կանչել է շատ անգամ», բայց դուք «չեք կամեցել լսել»:

Այնուամենայնիվ, Տերը տեսնում է ձեր մեջ այն, ինչ տեսնում էր Ամուղեկի մեջ՝ քաջարի ծառայողի ներուժ, որը կարևոր գործ ունի կատարելու և վկայություն ունի կիսվելու: Կա մի ծառայություն, որը ուրիշ ոչ ոք չի կարող կատարել նույն կերպ: Տերը ձեզ վստահել է Իր սուրբ քահանայությունը, որը աստվածային ներուժ է կրում օրհնելու և բարձրացնելու ուրիշներին: Լսեք ձեր սրտին և հետևեք Հոգու հուշումներին:

Անդամներից մեկի ճամփորդությունը

Ինձ հուզել է մեր եղբայրներից մեկի ճամփորդությունը, որն իրեն հարց էր տալիս. «Երբ Տերը կկանչի, արդյոք ես կլսե՞մ»: Այդ լավ եղբորը ես կկոչեմ եղբայր Դավիթ:

Դավիթը դարձի էր եկել դեպի Եկեղեցին մոտ 30 տարի առաջ: Նա ծառայեց միսիայում, ապա սովորեց, որ իրավաբան դառնա: Մինչ նա ուսումնասիրում և աշխատում էր, որպեսզի աջակցի իր երիտասարդ ընտանիքին, Եկեղեցու մասին որոշ տեղեկություններ կարդաց, որոնք շփոթեցրին նրան: Որքան շատ էր նա կարդում այդ բացասական նյութերը, այնքան ավելի շատ էր անհանգստանում: Ի վերջո, նա խնդրեց, որ իր անունը հանվի Եկեղեցու գրանցումներից:

Այդ ժամանակից ի վեր, ինչպես Ալման իր ըմբոստ օրերում, Դավիթը մեծ ժամանակ էր ծախսում, որպեսզի բանավիճի Եկեղեցու անդամների հետ առցանց զրույցներում՝ նպատակ ունենալով վիճարկել նրանց համոզմունքները:

Նա շատ լավ էր այդ գործում:

Նրա հետ բանավիճողների մեջ կար մի անդամ, որին ես կանվանեմ Հակոբ: Հակոբը միշտ բարի և հարգալից էր Դավիթի հանդեպ, բայց նաև վճռական էր Եկեղեցին պաշտպանելիս:

Տարիների ընթացքում Դավիթն ու Հակոբը փոխադարձ հարգանք և ընկերություն էին ձևավորել: Մի բան, որ Դավիթը չգիտեր, այն էր, որ Հակոբը աղոթում էր Դավիթի համար և ավելի քան մեկ տասնամյակ հավատարմորեն շարունակում էր դա անել: Նա նույնիսկ տեղադրել էր իր ընկերոջ անունը, որ նրա համար աղոթեին Տիրոջ տաճարներում՝ հույս տածելով, որ Դավիթի սիրտը կփափկի:

Ժամանակի ընթացքում կամաց-կամաց, Դավիթը փոխվեց: Նա սկսեց սիրով հիշել այն հոգևոր փորձառությունները, որոնք ունեցել էր ժամանակին, ինչպեսև այն երջանկությունը, որ նա զգում էր, երբ Եկեղեցու անդամ էր:

Ինչպես Ալման՝ Դավիթը ամբողջովին չէր մոռացել ավետարանի ճշմարտությունները, որ ժամանակին ընդունել էր: Եվ Ամուղեկի նման՝ Դավիթը զգում էր, որ Տերը կանչում է իրեն: Այդ ժամանակ Դավիթը իրավաբանական ֆիրմայի գործընկեր էր, որը հեղինակավոր աշխատանք էր: Նա Եկեղեցու քննադատի համբավ էր ձեռք բերել և հպարտությունը թույլ չէր տալիս, որ նա խնդրի, որ իրեն ընդունեն Եկեղեցի:

Այնուամենայնիվ, նա շարունակում էր զգալ Հովվի կանչը:

Նրա սրտին դիպավ սուրբ գրությունը. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի նորան»[13]: Նա աղոթեց. «Թանկագին Աստված, ես ուզում եմ կրկին վերջին օրերի սրբերի թվում լինել, բայց հարցերի պատասխանների կարիք ունեմ»:

Նա սկսեց ուշք դարձնել Հոգու հուշումներին և ընկերների ոգեշնչված պատասխաններին, որ մինչ այդ երբևէ չէր լսել: Մեկը մյուսի հետևից նրա կասկածները փոխվեցին հավատի, մինչև վերջապես հասկացավ, որ կրկին զգում է Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված Եկեղեցու վկայությունը:

Այդ պահին նա զգաց, որ ի վիճակի կլինի հաղթահարել իր հպարտությունը և անել այն, ինչ անհրաժեշտ է, որպեսզի կրկին ետ ընդունվի Եկեղեցի:

Ի վերջո, Դավիթը մտավ մկրտության ջրերը և ապա սկսեց օրեր հաշվել մինչև իր օրհնությունների վերականգնումը:

Ուրախ եմ հաղորդել, որ այս տարվա ամռանը Դավիթի օրհնությունները վերականգնվեցին: Նա կրկին Եկեղեցու լիիրավ անդամ է և ծառայում է որպես Ավետարանի Վարդապետության ուսուցիչ իր ծխում: Նա ամեն հնարավորություն օգտագործում է, որ խոսի մարդկանց հետ իր վերափոխման մասին, որպեսզի հատուցի իր հասցրած վնասը և վկայություն բերի Հիսուս Քրիստոսի ավետարանի և Եկեղեցու մասին:

Եզրափակում

Իմ թանկագի՛ն եղբայրներ, իմ թանկագի՛ն ընկերներ, եկեք որոնենք, գտնենք, ոգեշնչենք և վստահենք մեր ծխերի և ցցերի Ամուղեկներին: Այսօր Եկեղեցում կան բազմաթիվ Ամուղեկներ:

Հավանաբար, դուք գիտեք մեկին: Գուցե այդ մեկը դուք եք:

Հավանաբար, Տերը ձեզ հուշում է, կոչ անելով ձեզ վերադառնալ ձեր առաջին սիրուն, ներդնել ձեր տաղանդները, արժանիորեն գործադրել քահանայությունը և կողք կողքի ծառայել ձեր ընկերակից Սրբերի հետ՝ մոտենալով Հիսուս Քրիստոսին և կառուցելով Աստծո արքայությունը:

Մեր սիրելի Փրկիչը գիտի, թե որտեղ եք դուք: Նա գիտի ձեր սիրտը: Նա ցանկանում է փրկել ձեզ, և Նա ձեռք կմեկնի ձեզ: Պարզապես բացեք ձեր սիրտը Նրան: Ես հուսով եմ, որ նրանք, ովքեր հեռացել են աշակերտության ուղուց, անգամ միայն մի քանի աստիճանով, կխորհեն Աստծո բարության և շնորհի մասին, սրտով կնայեն, կսովորեն Ալմայից և Ամուղեկից և կլսեն Փրկիչի կյանք փոխող խոսքերը. «Ե՛կ, հետևիր ինձ»:

Ես ձեզ հորդորում եմ ուշք դարձնել Նրա կոչին, քանի որ անկասկած, դուք կստանաք երկնքի բարիքները: Տիրոջ օրհնությունը կհանգչի ձեր վրա և ձեր տան վրա[14]:

Այդ մասին ես վկայում եմ և որպես Տիրոջ Առաքյալ, թողնում եմ ձեզ իմ օրհնությունը՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մոսիա 27.8–10:
2. Տես Ալմա 36.6–20:
3. Ալմա 4.20:
4. Տես Ալմա 8.24:
5. Ալմա 8.18:
6. Ալմա 8.19:
7. Տես Ալմա 10.2–6:
8. Տես Ալմա 8.27:
9. Ղուկաս 18.22:
10. Joseph Smith Translation, Matthew 26:25 (in the Bible appendix):
11. Տես Ալմա 10.7:
12. Տես Հայտնություն 2.4:
13. Հակոբոս 1.5:
14. Տես Ալմա 10.7:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Որ Նա Նույնպես կարողանա ամրանալ

Ես աղոթում եմ, որ մենք կատարենք մեր կոչումը՝ բարձրացնելով մյուսներին, որպեսզի պատրաստենք նրանց իրենց փառահեղ ծառայությանը։

Ես ինձ օրհնված եմ զգում, որ Աստծո քահանայություն կրողների հետ մասնակցում եմ այս ժողովին։ Տղամարդկանց և տղաների այս կազմակերպության նվիրվածությունը, հավատքը և անձնուրաց ծառայությունը մեր օրերի հրաշք է։ Այսօր խոսքս ուղղում եմ քահանայություն կրողներին, մեծ թե փոքր, որ միավորված են Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ անձնազոհ ծառայության մեջ։

Տերն Իր զորությունը շնորհում է բոլոր քահանայության պաշտոններում գտնվողներից նրանց, ովքեր արժանավայել ծառայում են իրենց քահանայության պաշտոններում։

Վիլֆորդ Վուդրուֆը, որպես Եկեղեցու Նախագահ, քահանայության պաշտոններում իր փորձառությունն այսպես է նկարագրել.

«Ես լսեցի առաջին քարոզը, որ երբևէ լսել էի այս Եկեղեցում։ Հաջորդ օրը ես մկրտվեցի։ . . . Ես կարգվեցի Ուսուցիչ։ Անմիջապես դրանից հետո սկսվեց իմ միսիան։ . . . Ամբողջ միսիան ես անցկացրեցի որպես Ուսուցիչ։ . . . Համաժողովին ես կարգվեցի Քահանայի պաշտոնում։ . . . Որպես քահանա կարգվելուց հետո ինձ միսիա ուղարկեցին . . . երկրի հարավ։ Դա 1834 թվականի աշունն էր։ Ինձ հետ մի զուգընկեր ունեի, և մենք մեկնեցինք առանց «քսակի և պարկի»։ Ես միայնակ ճամփորդել եմ շատ մղոններ և քարոզել եմ ավետարանը։ Ես մկրտել եմ բազմաթիվ մարդկանց, որոնց չեմ կարողացել հաստատել Եկեղեցում, քանի որ ես միայն Քահանա էի։ . . . Մինչև Երեց կարգվելը, ես որոշ ժամանակ ճամփորդեցի, քարոզելով ավետարանը։ . . .

[Այժմ] ես արդեն հիսունչորս տարի է Տասներկու Առաքյալների անդամ եմ։ Ես արդեն վաթսուն տարի է ճամփորդում եմ այդ և մյուս քվորումների հետ, և ուզում եմ ձեզ ասել, որ Աստծո զորությամբ նույնքան աջակցվել եմ Ուսուցչի պաշտոնը կրելիս, և հատկապես որպես Քահանա եկեղեցում պաշտոնավարելիս, որքան Առաքյալ լինելու տարիներին։ Տարբերություն չկա, քանի դեռ մենք կատարում ենք մեր պարտականությունը»։[1]

Տարբերություն չդնելու այդ հրաշալի հոգևոր հնարավորությունը տրված է Տիրոջ բացատրության մեջ, որտեղ Միարոնյան Քահանայությունը ներկայացվում է որպես Մելքիսեդեկյան Քահանայության հավելում։[2] *Հավելում* բառը նշանակում է, որ այդ երկուսը կապակցված են։ Այդ կապը կարևոր է, որ քահանայությունը դառնա այն ուժն ու օրհնությունը, որ կարող է լինել այս աշխարհում և ընդմիշտ, քանզի այն «չունի օրերի սկիզբ կամ տարիների վերջ»։[3]

Այդ կապը պարզ է։ Միարոնյան Քահանայությունը երիտասարդ տղաներին նախապատրաստում է շատ ավելի սուրբ պարտականությանը։

«Բարձրագույն կամ Մելքիսեդեկյան Քահանայության զորությունն ու իշխանությունն է՝ կրել եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների բանալիները, —

Ունենալ երկնքի արքայության խորհուրդները ստանալու առանձնաշնորհը, տեսնել երկինքներն իրենց համար բացված, հաղորդակցվել Անդրանիկի եկեղեցու և ընդհանուր ժողովի հետ ու վայելել հաղորդակցությունն ու ներկայությունը Հայր Աստծո և Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի»։[4]

Քահանայության այդ բանալիները տվյալ ժամանակահատվածում լիովին գործադրվում են միայն մեկ մարդու՝ Տիրոջ Եկեղեցու և նախագահող քահանայապետի կողմից։ Այնուհետև Նախագահի լիազորությամբ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող յուրաքանչյուր տղամարդ կարող է օժտվել Ամենազորի անունով խոսելու և գործելու իշխանությամբ և արտոնությամբ։ Այդ զորությունն անսահման է։ Այն կապված է կյանքի և մահու, ընտանիքի և Եկեղեցու, Աստծո և Նրա հավերժական աշխատանքի սքանչելի բնույթի հետ։

Տերը նախապատրաստում է Միարոնյան Քահանայություն կրողին

դառնալ երեց՝ այդ փառահեղ Մելքիսեդեկյան Քահանայությունում ծառայելու հավատքով, զորությամբ և երախտագիտությամբ:

Երեցներ, խորը երախտագիտությունը կարևոր դեր ունի քահանայության ողջ ծառայության մեջ ձեր մասը կատարելիս: Դուք կհիշեք այն օրերը, երբ սարկավագ, ուսուցիչ կամ քահանա էիք, երբ նրանք, ովքեր բարձրագույն քահանայություն էին կրում, բարձրացնում և խրախուսում էին ձեզ՝ ձեր քահանայության ճանապարհին:

Մելքիսեդեկյան Քահանայության յուրաքանչյուր կրող ունի նման հիշողություններ, բայց գուցե տարիների հետ նվազել է երախտագիտության զգացումը: Հուսով եմ, կնորացնեմ այդ զգացումը և դրա հետ միասին հաստատակամությունը՝ նույնատիպ աջակցություն տրամադրել նրանց, ում կարող եք, ինչպիսին դուք եք ժամանակին ստացել:

Ես հիշում եմ մի եպիսկոպոսի, ով ինձ վերաբերվում էր այնպես, ասես ես արդեն այն մարդն էի, որը դառնալու ներուժն ունեի քահանայության զորությամբ: Երբ ես քահանա էի, մի կիրակի նա կանչեց ինձ: Նա ցանկացավ, որ մենք միասին այցելեինք մեր ծխի որոշ անդամների: Նա այնպես ասաց, կարծես ես իր հաջողության միակ հույսն էի: Նա իմ կարիքը չուներ: Նա հրաշալի խորհրդականներ ուներ իր եպիսկոպոսությունում:

Մենք այցելեցինք մի կարիքավոր և քաղցած այրի կնոջ: Նա ցանկացավ, որ իրեն օգնեի ճիշտ մոտեցում ցուցաբերել այդ կնոջը, խորհուրդ տալ, որ նա բյուջե կազմեր ու օգտագործեր և խոստանալ նրան, որ դա կարող էր բարելավել իր վիճակն այնքան, որ հոգ տաներ ոչ միայն իր, այլև ուրիշների մասին:

Այնուհետև մենք գնացինք սփոփելու ծանր իրավիճակում հայտնված երկու աղջնակների: Երբ դուրս եկանք նրանց տնից, եպիսկոպոսը հանգիստ ասաց ինձ. «Այդ երեխաները երբեք չեն մոռանա, որ մենք այցելեցինք իրենց»:

Հաջորդ տանը ես տեսա, թե ինչպես պետք է հրավիրել ոչ ակտիվ տղամարդուն վերադառնալ Տիրոջ մոտ, համոզելով նրան, որ ծխի անդամներն իր կարիքն ունեին:

Այդ եպիսկոպոսը Մելքիսեդեկյան Քահանայության կրող էր, ով օգնեց ինձ տեսնել իմ ներուժը և ոգևորեց ինձ իր օրինակով: Նա ինձ սովորեցրեց Տիրոջ ծառայության մեջ ցանկացած վայր գնալու ուժ և քաջություն ունենալ: Նա վաղուց արդեն հեռացել է այս կյանքից՝ ստանալով իր վարձքը, բայց ես դեռ հիշում եմ նրան, որովհետև նա կարողացավ բարձրացնել ինձ, երբ ես Ահարոնյան Քահանայություն կրող մի անփորձ պատանի էի: Ավելի ուշ ես հասկացա, որ նա ինձ տեսնում էր քահանայության ճանապարհին՝ որպես ավելի մեծ պարտականություններ կրողի, որն այդ ժամանակ ինձ համար անտեսանելի էր:

Հայրս նույն կերպ է վարվել ինձ հետ: Նա Մելքիսեդեկյան Քահանայության փորձառու և իմաստուն կրող էր: Մի անգամ նա Առաքյալներից մեկի կողմից առաջադրանք էր ստացել գիտական փաստերով մի կարճ ակնարկ գրել երկրագնդի տարիքի մասին: Նա մանրակրկիտ գրեց այդ նյութը, իմանալով, որ այդ ակնարկն ընթերցողները համոզված էին, որ երկրագունդը շատ ավելի երիտասարդ էր, քան գիտական փաստերն էին հուշում:

Դեռևս հիշում եմ՝ ինչպես հայրս ինձ տալով իր գրածը, ասաց. «Հալ, դու հոգևոր իմաստություն ունես և կիմանաս, թե արդյոք արժե սա ուղարկել առաքյալներին և մարգարեներին»: Ես գրեթե չեմ հիշում, թե ինչ էր գրված այդ ակնարկում, բայց ինձ հետ ընդմիշտ կմնա երախտագիտությունը, որ տածեցի Մելքիսեդեկյան Քահանայության այդ հրաշալի կրողի հանդեպ, ով իմ մեջ տեսավ հոգևոր իմաստություն, որը ես չէի կարող տեսնել:

Տարիներ անց, մի երեկո, երբ ես արդեն կարգվել էի որպես Առաքյալ, Աստծո մարգարեն կանչեց ինձ և խնդրեց կարդալ Եկեղեցու վարդապետության մասին գրված մի գիրք: Նա ողջ գիշեր անցկացրել էր՝ կարդալով գրքի գլուխները: Ծիծաղելով նա ասաց. «Ես չեմ կարողանում հասկանալ այս ամենը: Դու չպիտի հանգստանաս, երբ ես աշխատում եմ»: Եվ այնուհետև նա ասաց նույն խոսքերը, որոնք հայրս էր ասել տարիներ առաջ. «Հալ, դու պիտի կարդաս սա: Դու կիմանաս, արդյոք արժե սա հրատարակել»:

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողից նմանատիպ աջակցություն և վստահություն ստացա մի երեկո Եկեղեցու կողմից հովանավորվող ելույթների փառատոնում: Երբ 17 տարեկան էի, ինձ խնդրեցին խոսել մեծ լսարանի առաջ: Ես գաղափար չունեի, թե ինչ էր ակնկալվում ինձանից: Ինձ թեմա չէր հանձնարարվել, և ես պատրաստել էի մի ելույթ, որն ավետարանի իմ հասկացողությունից շատ ավելի վեր էր: Ելույթի ժամանակ հասկացա, որ խոսքիս մեջ սխալ էի թույլ տվել: Դեռևս հիշում եմ, որ իմ ելույթի ավարտից հետո ես ձախողման խորտակող զգացողություն ունեի:

Հաջորդ և վերջին խոսնակը Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մեթյու Քոուլին էր: Նա ամբողջ Եկեղեցում սիրված հրաշալի հռետոր էր: Դեռևս հիշում եմ, թե ինչպես էի նայում նրան իմ նստատեղից, որը ամբիոնի մոտ էր:

Նա սկսեց հզոր ձայնով: Նա ասաց, որ իմ ելույթը նրա վրա մեծ համաժողովում գտնվելու տպավորություն էր թողել: Դա ասելիս նա ժպտաց: Ձախողման զգացողությունը լքեց ինձ, և ես լցվեցի վստահությամբ, որ մի օր գուցե կդառնամ այն, ինչ նա արդեն մտածում էր իմ մասին:

Այդ երեկոյի մասին հիշողությունը մինչ այժմ ինձ հուշում է ուշադիր

լսել, երբ Ահարոնյան Քահանայության կրող է խոսում: Երեց Քոուլիի շնորհիվ ես միշտ ակնկալում եմ, որ կլսեմ Աստծո խոսքը: Ես հազվադեպ եմ հիասթափվում և հաճախ եմ հիանում և այդ պահերին Երեց Քոուլիի պես ժպտում եմ:

Շատ բաներ կարող են օգնել մեր երիտասարդ եղբայրներին առաջադիմել քահանայության մեջ, բայց առավել կարևոր է այն օգնությունը, որի արդյունքում զարգանում է նրանց հավատքը և վստահությունը, որ կարող են Աստծո զորությանն ապավինել քահանայության իրենց ծառայության մեջ:

Այդ հավատքն ու վստահությունը չի արմատավորվի նրանց մեջ լոկ մեկ անգամ բարձրացվելով նույնիսկ ամենաշնորհալի Մելքիսեդեկյան Քահանայության կրողի կողմից: Այդ զորություններին ապավինելը պետք է զարգացվի քահանայության մեջ ավելի փորձառու անդամների կողմից վստահության դրսևորման բազմաթիվ արտահայտումներով:

Ահարոնյան Քահանայության կրողները նաև Տիրոջ կողմից Սուրբ Հոգու միջոցով ամենօրյա և անգամ ամենժամյա խրախուսման և շտկման կարիքն ունեն: Դա նրանց համար հասանելի կլինի, երբ նրանք *նախընտրեն արժանի մնալ:* Դա կախված կլինի նրանց կատարած ընտրություններից:

Այդ իսկ պատճառով, մենք պետք է ուսուցանենք օրինակով և վկայությամբ, որ Մելքիսեդեկյան Քահանայության մեծ առաջնորդ Բենիամին թագավորի խոսքերը ճշմարիտ են:[5] Դրանք սիրո խոսքեր են, ասված Տիրոջ անունով, ում քահանայությունն է սա: Բենիամին թագավորն ուսուցանում է, թե ինչ է պահանջվում մեզանից, որպեսզի այնքան մաքուր մնանք, որ Տիրոջ քաջալերումն ու շտկումը ստանանք.

«Եվ, ի վերջո, ես չեմ կարող ասել ձեզ բոլոր բաները, որոնցով դուք կարող եք մեղք գործել. քանզի կան զանազան ուղիներ և միջոցներ, նույնիսկ այնքան շատ, որ ես չեմ կարող թվել դրանք:

Բայց այսքանը ես կարող եմ ասել ձեզ, եթե դուք չհետևեք ինքներդ ձեզ,

և ձեր մտքերին, և ձեր խոսքերին, և ձեր արարքներին, և չպահեք Աստծո պատվիրանները, և չշարունակեք հավատքով առ այն, ինչ լսեցիք մեր Տիրոջ գալուստի վերաբերյալ, նույնիսկ մինչև ձեր կյանքի վերջը, դուք պիտի կորչեք: Եվ այժմ, ո՛վ մարդ, հիշիր և մի կորչիր»:[6]

Մենք բոլորս էլ տեղյակ ենք, որ արդարության թշնամու կրակոտ նետերը սոսկալի քամու պես ուղղվում են քահանայություն կրող երիտասարդների դեմ, ում մենք շատ ենք սիրում: Մեզ համար նրանք պատանի զինվորների նման են, ովքեր իրենց կոչում էին Հելամանի որդիներ: Այդ պատանի զինվորների պես նրանք կարող են փրկվել, եթե աչալուրջ մնան, ինչպես Բենիամին թագավորն է իրենց կոչ արել:

Հելամանի որդիները չկասկածեցին: Նրանք քաջաբար կռվեցին և հաղթեցին իրենց նվաճողներին, որովհետև նրանք հավատում էին իրենց մայրերի խոսքերին:[7] Մենք հասկանում ենք սիրող մոր հավատքի ուժը: Մայրերն այսօր մեծապես աջակցում են իրենց որդիներին: Մենք էլ՝ որպես քահանայության կրողներ, կարող ենք և պետք է մեր վճռականությամբ ավելացնենք մեր աջակցությունը, կատարելով պարտականությունը, որ դարձի գալով ինքներս պետք է ձեռք մեկնենք և զորացնենք մեր եղբայրներին:[8]

Ես աղոթում եմ, որ Մելքիսեդեկյան Քահանայության յուրաքանչյուր կրող ընդունի Տիրոջ կողմից առաջարկված հնարավորությունը.

«Եվ եթե ձեզանից ինչ-որ մեկն ամուր է Հոգով, թող նա վերցնի մեկին, որ տկար է, որպեսզի շենացնի նրան ողջ հեզությամբ, որ նա նույնպես կարողանա ամրանալ:

Հետևաբար, վերցրեք ձեզ հետ նրանց, ովքեր կարգված են փոքրագույն քահանայությանը, և ուղարկեք նրանց ձեզանից առաջ, որ պայմանավորվածություններ ձեռք բերեն և ճանապարհ պատրաստեն ու ներկա գտնվեն այդ պայմանավորվածություններին, որոնց ինքներդ չեք կարող ներկա գտնվել:

Ահա, այս ձևով է, որ իմ առաքյալները, հին օրերում, կառուցեցին իմ եկեղեցին ինձ համար»:[9]

Քահանայության ղեկավարները և Ահարոնյան Քահանայություն կրողների հայրերը կարող են հրաշքներ գործել: Դուք կարող եք Տիրոջն օգնել երիտասարդ տղաների հետ լրացնելով հավատարիմ երեցների շարքերը, ովքեր ընդունում են ավետարանը քարոզելու կանչը և վստահորեն կատարում են դա: Դուք կտեսնեք, որ շատերը, ում դուք բարձրացրել և խրախուսել եք, հավատարիմ են մնում, արժանավայել ձևով ամուսնանում են տաճարում, և իրենց հերթին բարձրացնում ու պատրաստում են մյուսներին:

Դրա համար նոր միջոցառումների ծրագրերի, բարելավված ուսումնական նյութերի կամ ավելի լավ սոցկայքերի կարիքը չկա: Դրա համար ձեր այժմյան կոչումից առավել այլ կոչման կարիքը չունեք: Քահանայության երդումն ու ուխտը

ձեզ ուժ, իշխանություն և ուղղություն կտա: Ես աղոթում եմ, որ գնաք տուն և ուշադիր ուսումնասիրեք քահանայության երդումն ու ուխտը, որը տրված է Վարդապետություն և Ուխտեր, բաժին 84-ում:

Մենք բոլորս հույս ունենք, որ ավելի շատ երիտասարդներ կունենան Վիլֆորդ Վուդրուֆի փորձը, ով, որպես Ահարոնյան Քահանայության կրող, դարձի բերող զորությամբ էր ուսուցանում Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Ես աղոթում եմ, որ մենք կատարենք մեր կոչումը՝ բարձրացնելով մյուսներին, որպեսզի պատրաստենք նրանց իրենց փառահեղ ծառայությանը: Իմ ողջ սրտով ես շնորհակալ եմ այն հրաշալի մարդկանց, ովքեր բարձրացրել են ինձ և ցույց տվել՝ ինչպես պետք է սիրել և բարձրացնել մյուսներին:

Ես վկայում եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը այսօր կրում է քահանայության բոլոր բանալիները երկրի վրա: Ես վկայում եմ, որ նա իր ողջ կյանքում ծառայելով բոլորիս համար, օրինակ է եղել, թե որպես Մելքիսեդեկյան Քահանայության կրողներ ինչպես պետք է օգնենք մյուսներին: Ես անձնապես երախտապարտ եմ, թե ինչպես է նա բարձրացրել ինձ և ցույց տվել, ինչպես պետք է բարձրացնել մյուսներին:

Հայր Աստվածն ապրում է: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին և արքայությունն է: Սա Նրա քահանայությունն է: Ես սա ինքս գիտեմ Սուրբ Հոգու զորությամբ: Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Wilford Woodruff, “The Rights of the Priesthood,” *Deseret Weekly,* Mar. 17, 1894, 381.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.30; 107.14:
3. Վարդապետություն և Ուխտեր 84.17:
4. Վարդապետություն և Ուխտեր 107.18–19:
5. Ալմա 13.6–9 հատվածն ասում է, որ Մորմոնի Գրքի մարգարեները Մելքիսեդեկյան Քահանայություն էին կրում:
6. Մոսիա 4.29–30:
7. Տես Ալմա 56.47:
8. Տես Ղուկաս 22.32:
9. Վարդապետություն և Ուխտեր 84.106–8:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Սկզբունքներ և խոստումներ

Եկեք հոգ տանենք մեր մարմինների ու մեր մտքերի մասին և պահպանենք աստվածայնորեն նախատեսված ծրագրի՝ Իմաստության Խոսքի մեջ շարադրված սկզբունքները:

Եղբայրներ, այս երեկո ես աղոթում եմ մեր Երկնային Հոր առաջնորդության համար, մինչ ես իմ ուղերձով կիսվում եմ ձեզ հետ:

1833թ-ին Տերը Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնեց առողջ ապրելակերպի մի ծրագիր: Այդ ծրագրի մասին կարելի է կարդալ Վարդապետություն և Ուխտերի 89-րդ բաժնում և այն հայտնի է Իմաստության Խոսք անունով: Այն հատուկ ցուցումներ է տալիս այն սննդի մասին, որն ուտում ենք և արգելում է այնպիսի նյութեր, որոնք վնասակար են մեր առողջությանը:

Մարդկանց, ովքեր հնազանդ են Տիրոջ պատվիրաններին և ովքեր հավատարիմ են Իմաստության Խոսքին, խոստացված են հատուկ օրհնություններ, որոնց թվում է լավ

առողջությունը և ֆիզիկական լրացուցիչ ներուժը:[1]

Վերջերս կարդացի այդ խոստումներին վերաբերող մի իրական ու ողբերգական պատմություն: Եկեղեցու հավատարիմ մի անդամ՝ Ջոն Ա. Լարսենը, Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ծառայել էր Միացյալ Նահանգների USS *Cambria* նավի ծովափնյա պահակախմբում: Ֆիլիպիններում մղված պատերազմի ժամանակ լուրեր տարածվեցին, որ ինքնասպան կործանիչների ռմբարկու ինքնաթիռներ էին մոտենում: Անհապաղ տեղահանման հրաման տրվեց: Քանի որ USS *Cambria*-ն արդեն հեռացել էր, Ջոնն իր զինակիցների հետ հավաքեց իրերն ու շտապեց լողափ, հուսալով, որ հեռացող նավերից մեկը կվերցներ իրեն: Բարեբախտաբար, հեռացող նավակներից մեկը վերցրեց նրանց և արագ նավարկեց դեպի ծովածոցից հեռացող վերջին նավը: Հեռացող նավի մարդիկ այնքան զբաղված էին շուտափույթ տեղահանմամբ, որ տախտակամածից միայն պարաններ նետեցին ներքև՝ հուսալով, որ նրանք կկարողանան բարձրանալ տախտակամած:

Ջոնը, ով իր մեջքին կրում էր ծանր ռադիոն, կախված մնաց 12 մետր երկարությամբ պարանի վերջում՝ այն նավի եզրին, որն ուղևորվում էր բաց ծով: Նա սկսեց ձեռքերով ձգվել վեր, գիտակցելով, որ եթե թողներ պարանը, ապա, անկասկած, կմեռներ: Մեկ երրորդը բարձրանալուց հետո նա զգաց, որ ձեռքերը ցավից այրվում են: Նա այնքան թուլացավ, որ զգաց՝ այլևս չէր կարող բռնված մնալ:

Սպառելով ուժերը, Ջոնը դառնորեն ապավինեց ճակատագրին և լուռ աղաղակեց առ Աստված՝ ասելով, որ միշտ պահել էր Իմաստության Խոսքը, ապրել մաքուր կյանքով և այժմ հուսահատության պահին կարիք ուներ այդ խոստացված օրհնությունների:

Ավելի ուշ Ջոնը նշել է, որ երբ վերջացրեց իր աղոթքը, նա ուժի մեծ հոսք զգաց: Նա սկսեց կրկին բարձրանալ պարանով և բավականաչափ արագ բարձրացավ այն: Երբ հասավ տախտակամածին, նրա շնչառությունը կանոնավոր էր և ազատ շնչում էր: Իմաստության Խոսքի մեջ խոստացված առողջությունն ու տոկունությունը տրվել էր նրան: Դրանից հետո՝ իր հետագա կյանքի ընթացքում նա իր երախտագիտությունը հայտնեց Երկնային հորը, որ Նա պատասխանել էր իր հուսահատ աղոթքին:[2]

Եղբայրներ, եկեք հոգ տանենք մեր մարմինների ու մեր մտքերի մասին և պահպանենք աստվածայնորեն նախատեսված ծրագրի՝ Իմաստության Խոսքի մեջ շարադրված սկզբունքները: Իմ ողջ սրտով ու հոգով ես վկայում եմ այն փառահեղ օրհնությունների մասին, որոնք սպասում են մեզ: Թող որ դա այդպես լինի, իմ աղոթքն է մեր Տեր և Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 89.18–21:
2. Տես Ջոն Ա. Լարսենը՝ Ռոբերտ Ս. Ֆրիմանի և Դենիս Ա. Ռայթի համեմատ.*Saints at War: Experiences of Latter-day Saints in World War II* (2001), 350–51, կիրառված է թույլտվությամբ:

Կիրակի առավոտյան նիստ | 2 հոկտեմբերի, 2016թ.

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Երջանկություն տանող կատարյալ ուղին

Ես վկայում եմ մեզ համար մեր Հոր ծրագրի մեծ պարգևի մասին: Դա դեպի խաղաղություն և երջանկություն տանող միակ կատարյալ ճանապարհն է:

Համաժողովների կենտրոնում գտնվող և աշխարհով մեկ սփռված իմ սիրելի եղբայրներ և քույրեր, խորապես երախտապարտ եմ այս առավոտ իմ մտքերով ձեզ հետ կիսվելու հնարավորության համար:

1964թ-ի հուլիսին, հիսուներկու տարի առաջ, ես հանձնարարությամբ գտնվում էի Նյու Յորք Սիթիում տեղի ունեցող Համաշխարհային ցուցահանդեսին: Մի առավոտ ցուցահանդեսի ժամանակ ես այցելեցի Եկեղեցու տաղավար: Ժամանեցի *Man's Search for Happiness (Մարդկանց երջանկության որոնումները)* եկեղեցու ֆիլմի ցուցադրումից անմիջապես առաջ, մի տեսագրություն փրկության ծրագրի մասին, որն այդ օրից ի վեր դարձել է հանրաճանաչ Եկեղեցում: Ես նստեցի մի երիտասարդ տղայի կողքին, ով, հավանաբար, 35 տարեկան էր: Մենք շփվեցինք մի փոքր: Նա մեր Եկեղեցուց չէր: Ապա լույսերը մարեցին և ցուցադրումը սկսվեց:

Մենք լսեցինք հաղորդավարի ձայնը, երբ նա առաջ քաշեց կարևոր ու համընդհանուր հարցերը. Որտեղի՞ց եմ գալիս: Ինչո՞ւ եմ այստեղ: Ու՞ր կգնամ այս կյանքից հետո: Բոլորն ուշադիր փորձում էին լսել պատասխանները և նրանց աչքերը գամված էին պատկերին: Մեր նախաերկրային կյանքի նկարագրությունը տրվեց, ինչպես նաև՝ երկրի վրա մեր նպատակի բացատրությունը: Մենք ականատես եղանք մի հուզիչ տեսարանի, թե ինչպես է մի ծեր մարդ մահանում և փառավոր կերպով միավորվում իր սիրելիների հետ, ովքեր նախորդել էին նրան հոգևոր աշխարհում:

Երկնային Հոր ծրագրի այս գեղեցիկ կինոնկարի վերջում ամբոխը լռությամբ դուրս եկավ և շատերը հուզվել էին ֆիլմի ուղերձից: Կողքիս նստած երիտասարդը ոտքի չկանգնեց: Ես հարցրեցի, թե արդյո՞ք դուր եկավ նրան ֆիլմը: Նրա պատասխանը զորեղ էր. «Սա է ճշմարտությունը»:

Մեր Հոր ծրագիրը՝ մեր երջանկության և մեր փրկության համար, աշխարհով մեկ տարածում են մեր միսիոներները: Այս աստվածային ուղերձը լսողներից ոչ բոլորն են ընդունում և հետևում դրան: Սակայն, տղամարդիկ ու կանայք ամենուր, ինչպես Նյու Յորքի Համաշխարհային ցուցահանդեսի իմ ընկերը, հասկանում են դրա ճշմարտությունը և ոտք են դնում այն ուղու վրա, որը նրանց անվտանգ տուն է տանում: Նրանց կյանքը մեկընդմիշտ փոխվում է:

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ծրագրի կարևորագույն մասն է: Առանց Նրա քավիչ զոհաբերության ամեն ինչ կկորչի: Սակայն Նրան ու Նրա առաքելությանը պարզապես հավատալը բավարար չէ: Մենք պետք է աշխատենք ու սովորենք, փնտրենք ու աղոթենք,

ապաշխարենք ու կատարելագործվենք: Մենք պետք է իմանանք Աստծո օրենքները և կատարենք դրանք: Մենք պետք է ստանանք Նրա փրկող արարողությունները: Միայն այդ ամենն անելով, մենք ձեռք կբերենք ճշմարտություն և հավերժական երջանկություն:

Մենք օրհնված ենք, որ *ունենք* ճշմարտությունը: Մենք պարտավորություն ունենք *կիսվելու* այդ ճշմարտությամբ: Եկեք *ապրենք* ճշմարտությամբ, որ ձեռք բերենք այն ամենն, ինչ Հայրը պատրաստել է մեզ համար: Նա չի անում որևէ բան, եթե դա մեր օգտի համար չէ: Նա ասել է մեզ. «Սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[1]

Հոգու խորքից և խորին խոնարհությամբ ես վկայում եմ այն մեծ պարգևի մասին, որը մեր Հոր ծրագիրն է մեզ համար: Դա դեպի խաղաղություն և երջանկություն տանող միակ կատարյալ ճանապարհն է, թե՛ այստեղ, և թե՛ գալիք աշխարհում:

Եղբայրներ և քույրեր, եզրափակելով ելույթս, թողնում եմ ձեզ հետ իմ սերը և իմ օրհնությունը և այս ամենն անում եմ մեր Փրկիչ և Քավիչ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.39



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Ուրախություն և հոգևոր գոյատևում

Երբ մեր կյանքը կենտրոնացնում ենք Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի վրա, մենք ուրախություն ենք զգում, անկախ այն բանից՝ մեր կյանքում ինչ-որ բան տեղի է ունենում թե ոչ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, այսօր ես կկամենայի քննարկել մի սկզբունք, որն անհրաժեշտ է մեր հոգևոր գոյատևման համար: Դա մի սկզբունք է, որն ավելի կարևոր կդառնա միայն այն ժամանակ, երբ մեր շրջապատում աճեն ողբերգություններն ու կեղծիքները:

Սրանք վերջին օրերն են, ուստի մենք չպիտի զարմանանք, երբ տեսնենք, թե ինչպես է իրականանում մարգարեությունը: Շատ մարգարեներ, ներառյալ Եսայիան, Պողոսը, Նեփիին և Մորմոնը կանխատեսել են, որ կգան վտանգավոր ժամանակներ,[1] որ մեր օրերում ողջ երկիրը խառնաշփոթի մեջ կլինի,[2] «որ մարդիկ կլինեն «ինքնասէր, . . . անգութ, . . . աւելի ցանկասեր, քան աստուածասեր»,[3] և շատերը կդառնան սատանայի ծառաներ, ովքեր նեցուկ կլինեն հակառակորդի գործին:[4] Իսկապես, իմ և ձեր «պատերազմը . . . այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ է, և այն չար հոգիների հետ, որ երկնաւորների մէջ են»:[5]

Երբ հակամարտություններն ազգերի միջև սրվում են, երբ փոքրոգի ահաբեկիչները սպանում են անմեղներին, և երբ կաշառակերությունն ամենուր է՝ բիզնեսից մինչև կառավարություն, դառնալով սովորական երևույթ, ի՞նչը կարող է օգնել մեզ: Ի՞նչը կարող է օգնել մեզանից յուրաքանչյուրին մեր անձնական մաքառումների և վերջին օրերում ապրելու դժվար մարտահրավերների գործում:

Մարգարե Լեքին մի սկզբունք է ուսուցանել հոգևոր գոյատևման համար: Նախ, դիտարկեք նրա հանգամանքները. Երուսաղեմում Նա հալածանքների էր ենթարկվել ճշմարտությունը քարոզելու համար, և Տերը պատվիրել էր նրան թողնել իր ունեցվածքը և ընտանիքով փախչել անապատ: Նա ապրել էր վրանում ու գոյատևել այն սնունդով, որը կարելի էր գտնել դեպի անհայտ վերջնակետը տանող ճանապարհին: Նա հետևել էր, թե ինչպես իր երկու որդիներ Լամանն ու Լեմուելը ապստամբեցին Տիրոջ ուսմունքների դեմ և հարձակվեցին իրենց եղբայրների՝ Նեփիի և Սամի վրա:

Լեքին հստակ գիտեր՝ ինչ է ընդդիմությունը, անհանգստությունը, սրտի ցավը, դառնությունը, հիասթափությունը և վիշտը: Սակայն նա համարձակ ու անվարան հայտարարեց մի սկզբունք, ինչպես հայտնությամբ տվել էր Տերը. «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:[6] Պատկերացրեք. մեր մահկանացու կյանքի բնույթն ու նպատակը նկարագրող բոլոր բառերից նա ընտրեց *ուրախությունը*:

Կյանքը լի է շրջադարձներով ու փակուղիներով, փորձություններով ու ամեն տեսակի դժվարություններով: Մեզանից յուրաքանչյուրը հավանաբար ունեցել է ժամանակներ, երբ վիշտը, տառապանքը և հուսահատությունը համարյա ջլատել են մեզ: Սակայն մի՞թե մենք այստեղ չենք ուրախանալու համար:

Այո: Պատասխանը հնչեղ այո է: Բայց ինչպե՞ս է դա հնարավոր: Իսկ մենք ի՞նչ պիտի անենք, որպեսզի ստանանք ուրախությունը, որը Երկնային Հայրն է պատրաստել մեզ համար:

Էլիզա Ռ. Մնոուն՝ Սփոփող Միության գերագույն նախագահի երկրորդ խորհրդականը, մի շատ հետաքրքիր պատասխան առաջարկեց: Միսսուրիի բնաջնջման խայտառակ հրամանի պատճառով, որը կիրառվեց 1838 թվականի խստաշունչ ձմռան սկզբին,[7] նա և այլ Սրբեր հարկադրված էին հեռանալ նահանգից հենց այդ ձմռանը: Մի անգամ Էլիզայի ընտանիքը գիշերն անցկացրեց մի

փոքրիկ փայտաշեն տնակում, որն օգտագործվում էր փախստական Սրբերի կողմից: Գերանների միջև եղած ճեղքերը փակող փայտերը հանվել ու որպես վառելափայտ օգտագործվել էին նրանց կողմից, ովքեր նախկինում եղել էին այդտեղ, ուստի գերանների միջև այնքան մեծ անցքեր կային, որ կատուն կարող էր ներս սողալ: Սաստիկ ցուրտ էր, իսկ նրանց ուտելիքը սառել քարացել էր:

Այդ երեկո մոտ 80 մարդ կուչ էր եկել փոքրիկ տնակի ներսում, որն ընդամենը 20 քառակուսի մետր էր: Մեծ մասը նստած կամ կանգնած էին ողջ գիշեր, փորձելով տաքանալ: Դրսում մի խումբ տղամարդիկ անցկացրին գիշերը, հավաքվելով բոցավառվող խարույկի շուրջ, երգելով օրհներգեր, իսկ մյուսները՝ խորովելով սառած կարտոֆիլները: Էլիզան գրել էր հուշերում. «Ոչ մի բողոք չէր լսվում, բոլորն աշխույժ էին և, դատելով տեսքից, անծանոթները մեզ ավելի շուտ զբոսաշրջիկների տեղ կդնեին, քան նահանգապետի կողմից աքսորյալների խմբի:

Էլիզան պատմում է, որ այդ ուժասպառ անող, ցուրտ երեկոն զարմանալիորեն լավատեսական էր: Նա հայտարարել է. «Շատ ուրախ գիշեր էր: Ոչ-ոք Սրբերից բացի չի կարող ուրախ լինել ամեն իրավիճակում»:[8]

Այո: Սրբերը կարող են ուրախ լինել բոլոր իրավիճակներում: Մենք կարող ենք ուրախ լինել, նույնիսկ, եթե օրը վատ է, շաբաթը վատ է, նույնիսկ՝ տարին վատ է:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ուրախությունը, որ մենք զգում ենք, շատ քիչ է կապված մեր կյանքի հանգամանքների հետ և մեծապես կապված է մեր կյանքի կիզակետի հետ:

Երբ մեր կյանքի կիզակետը Աստծո փրկության ծրագրի, որի մասին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանեց մեզ, Հիսուս Քրիստոսի ու Նրա ավետարանի վրա է, մենք կարող ենք ուրախություն զգալ, անկախ այն բանից՝ ինչ է կատարվում կամ չի կատարվում մեր կյանքում: Ուրախությունը գալիս է Նրանից ու Նրա շնորհիվ: Նա բոլոր ուրախությունների աղբյուրն է: Ես դա զգում եմ Սուրբ Ծնունդին, երբ մենք երգում ենք «Ուրախություն աշխարհին, Տերն է ծնվել»:[9] Եվ մենք կարող ենք զգալ դա ողջ տարին: Վերջին Օրերի Սրբերի համար Հիսուս Քրիստոսը ուրախություն է:

Ահա ինչու մեր միսիոներները թողնում են իրենց տները, որպեսզի քարոզեն Նրա ավետարանը: Նրանց նպատակը Եկեղեցու անդամների թվի ավելացումը չէ: Ավելի շուտ մեր միսիոներները ուսուցանում և մկրտում են,[10] որպեսզի ուրախություն բերեն աշխարհի մարդկանց:[11]

Փրկիչն առաջարկում է խաղաղություն, որն «ամեն մտքից վեր է»:[12] Նա նաև առաջարկում է ուրախության ուժգնություն, խորություն ու մեծություն, որը չի հնազանդվում մարդկային տրամաբանությանն ու հասկացողությանը: Օրինակ, թվում է, թե անհնար է ուրախ լինել, երբ ձեր երեխան տառապում է անբուժելի հիվանդությամբ, երբ դուք կորցնում եք ձեր աշխատանքը կամ երբ ձեր կինը կամ ամուսինը դավաճանում է ձեզ: Սակայն սա հենց այն ուրախությունն է, որ Փրկիչն առաջարկում է: Նրա ուրախությունը հաստատուն է, հավաստիացնելով մեզ, որ մեր «ձախորդություններն ու չարչարանքները կտևեն միայն մի փոքր պահ»[13] և կնվիրագործվեն մեր օգտի համար:[14]

Այդ դեպքում մենք ինչպե՞ս կարող ենք ձեռք բերել այդ ուրախությունը: Մենք կարող ենք սկսել՝

«մտիկ տալով հաւատքի զորագլուխին և կատարողին՝ Հիսուսին»[15] «բոլոր մտորումներում»:[16] Մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Նրան մեր աղոթքներում և պահել ուխտերը, որոնք կապել ենք Նրա ու մեր Երկնային Հոր հետ: Երբ մեր Փրկիչը դառնա ավելի իրական մեզ համար, և երբ մենք Նրանից խնդրենք այն ուրախությունը, որը մեզ պիտի տրվի, մեր ուրախությունը կավելանա:

Ուրախությունը զորեղ է, իսկ ուրախության վրա կենտրոնանալը մեր կյանք է բերում Աստծո զորությունը: Ինչպես բոլոր բաներում, Հիսուս Քրիստոսը մեր լավագույն օրինակն է, «որ իր առաջին դրուած ուրախութեան փոխանակ խաչը հանձն առավ»:[17] Մտածեք այդ մասին: Որպեսզի տաներ երկրի վրա երբևէ կրած ամենատանջալի փորձառությունը, մեր Փրկիչը կենտրոնացավ *ուրախության վրա*:

Իսկ ո՞րն էր ուրախությունը, որը դրվել էր Նրա առաջ: Անշուշտ, այն ընդգրկում էր մեզ մաքրելու, բժշկելու և զորացնելու ուրախությունը, ուրախությունը՝ վճարելու բոլոր նրանց մեղքերի համար, ովքեր կապաշխարեն, ուրախությունը՝ իմ և քո տունդարձը հնարավոր դարձնելու համար, որպեսզի մաքուր և արժանի լինենք ապրելու մեր Երկնային Ծնողների ու ընտանիքների հետ:

Եթե մենք կենտրոնանք ուրախության վրա, ինչ էլ որ պատահի մեզ կամ նրանց, ում սիրում ենք, մենք համբերությամբ կարող ենք տանել այն ամենը, ինչը ներկայումս թվում է անհաղթահարելի, ցավոտ կամ պարզապես անհնար:

Մի հայր հոգևորապես անհուսալի իրավիճակում կենտրոնացել էր այն ուրախության վրա, որը գալիս է Տիրոջ կողմից ի վերջո մաքրվելուց ու արդարացվելուց հետո, ուրախության, որը գալիս է մեղքից ու ամոթից ազատվելուց հետո, և ուրախության, որը գալիս է մտքի խաղաղություն ձեռք բերելուց հետո: Այդ կենտրոնացումը նրան քաջություն տվեց խոստովանելու իր կնոջն ու եպիսկոպոսին, որ խնդիրներ ունի կապված պոռնոգրաֆիայի և ամուսնական անհավատարմության հետ: Այժմ նա կատարում է այն բոլոր քայլերը, որ իր եպիսկոպոսը խորհուրդ է տալիս՝ ի սրտե ձգտելով վերականգնել իր սիրելի կնոջ վստահությունը:

Մի երիտասարդ կին կենտրոնացել էր բարոյապես մաքուր մնալու ուրախության վրա, որն օգնեց էր նրան համբերությամբ տանել իր ընկերների ծաղրը և հեռու մնալ տարածված ու սադրիչ, բայց հոգևորապես վտանգավոր իրավիճակից:

Մի մարդ, ով հաճախ ստորացնում էր իր կնոջը և բավականություն ստանում իր երեխաների վրա զայրույթով պոռթկալուց, կենտրոնացավ այն ուրախության վրա, որը եկավ Սուրբ Հոգին որպես իր մշտական ուղեկից ունենալու արժանավորության հետ: Այդ կենտրոնացումը մղեց նրան ազատվել բնական մարդուց[18], որին ինքը հաճախ տեղի էր տալիս և կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

Վերջերս իմ սիրելի գործընկերներից մեկը պատմեց ինձ վերջին երկու տասնամյակում ունեցած իր ծանր փորձությունների մասին: Նա ասաց. «Ես սովորել եմ տառապել ուրախությամբ: Քրիստոսի ուրախությունը կլանեց իմ տառապանքը»:[19]

Ես և դուք ի՞նչը կկարողանանք համբերությամբ տանել, եթե կենտրոնանաք այն ուրախության վրա, որը մեր «առաջին դրուած» է:[20] Այդ դեպքում ինչպիսի՞ ապաշխարություն է հնարավոր: Ո՞ր թույլ կողմերը կդառնան ուժեղ:[21] Ո՞ր խրատը կդառնա օրհնություն:[22] Ո՞ր հիասթափությունները, անգամ ողբերգությունները կլինեն մեր օգտի համար:[23] Իսկ ի՞նչ դժվար ծառայություն կկարողանանք մատուցել Տիրոջը:[24]

Երբ մենք ջանասիրաբար կենտրոնանում ենք Փրկիչի վրա, իսկ հետո հետևում ուրախության վրա կենտրոնանալու նրա օրինակին, մենք պիտի խուսափենք այն բաներից, որոնք կխանգարեն մեր ուրախությանը: Հիշեք Կորիհորին՝ հակաքրիստոսին: Կորիհորը տեղից տեղ էր գնում և շատ կեղծիքներ էր տարածում Փրկիչի մասին, մինչև նրան բերեցին քահանայապետի մոտ, ով հարցրեց նրան. «Ինչո՞ւ ես դու շրջում ամենուր՝ խեղաթյուրելով Տիրոջ ուղիները: Ինչո՞ւ ես դու սովորեցնում այս ժողովրդին, որ ոչ մի Քրիստոս չի լինելու՝ նրանց ցնծությունը խանգարելու համար»:[25]

Ցանկացած բան, որն ընդդիմանում է Քրիստոսին կամ Նրա վարդապետությանը, կխանգարի մեր ուրախությանը: Այն ներառում է մարդկանց փիլիսոփայությունները, որոնցով լի են համացանցը և բլոգոլորտները, որոնք անում են ճիշտ նույն բանը, ինչ Կորիհորն էր անում:[26]

Եթե մենք նայենք աշխարհին և հետևենք դրա երջանկության բանաձևերին[27], մենք երբեք չենք ունենա ուրախություն: Անարդարները կարող են ցանկացած չափով զգացմունքներ և զգացողություններ ունենալ, բայց նրանք երբեք չեն զգա ուրախություն:[28] Ուրախությունը պարգև է հավատարիմներին:[29] Դա մի պարգև է, որը տրվում է, երբ նպատակադրված փորձում ենք ապրել արդար կյանքով, ինչպես ուսուցանել է Հիսուս Քրիստոսը:[30]

Նա ուսուցանել է մեզ՝ ինչպես ուրախանալ: Երբ մենք ընտրում ենք, որ Երկնային Հայրը լինի մեր Աստվածը,[31] և երբ մենք կարող ենք զգալ, թե Փրկիչի Քավությունն ինչպես է աշխատում մեր կյանքում, մենք կլցվենք ուրախությամբ:[32] Ամեն անգամ, երբ մենք ուսուցանում ենք մեր ամուսնուն կամ կնոջը և ուղղություն տալիս մեր զավակներին, ամեն անգամ, երբ ներում ենք ինչ-որ մեկին կամ ներում խնդրում, մենք կարող ենք ուրախություն զգալ:

Ամեն օր, երբ ես և դուք ընտրում ենք ապրել սելեստիալ օրենքներով, ամեն օր, երբ մենք պահում ենք մեր ուխտերը և օգնում ուրիշներին նույնը անել, ուրախությունը մերը կլինի:

Ականջալուր եղեք Սաղմոսի հետևյալ խոսքերին. «Ես Տիրոջը դրի իմ առաջին ամեն ժամանակ. որովհետև նա իմ աջ կողմն է. ես չեմ սասանուիլ: . . . Քո երեսի առաջին ուրախութիւնների լիություն կա»:[33] Երբ այս սկզբունքը ամուր պահենք մեր սրտերում, մեր ամեն մի օրը կարող է լինել ուրախության և գոհության օր:[34] Այս ամենը վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Բ Տիմոթէոս 3.1–5:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.26, 88.91:
3. Բ Տիմոթէոս 3.2–4:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 10.5:
5. Եփեսացիս 6.12:
6. 2 Նեփի 2.25:
7. Միսսուրիի նահանգապետ Լիլբուռն Վ. Բոգսը հրաման արձակեց Մորմոնների բնաջնջման համար 1838թ. հոկտեմբերի 27-ին (տես *Եկեղեցու նախագահների ուսմունքները. জոզեֆ Սմիթ* [2007], 349):
8. Տես Eliza R. Snow, in Edward W. Tullidge, *The Women of Mormondom* (1877), 145–46:
9. “Joy to the World,” *Hymns,* no. 201.
10. Միսիոներներն անում են այնպես, ինչպես Տերն է պատվիրել. նրանք քարոզում են, սովորեցնում են, մկրտում են Նրա անունով (տես Մաթէոս 28.19, Մարկոս 16.15, Մորմոն 9.22, Վարդապետություն և Ուխտեր 68.8, 84, 62, 112.28): Իր միջնորդական աղոթքում Հիսուսը հռչակեց Իր կապը Իր աշակերտների ուրախության հետ: Նա ասաց, «այս բաները խոսում եմ աշխարհում, որպէսզի նրանք իրենց մէջ *իմ* լիակատար ուրախութիւնն ունենան» (Հովհաննէսի 17.13, ավելացված շեշտադրում):
11. Տես Ալմա 13.22:
12. Փիլիպպեցիս 4.7:
13. Վարդապետություն և Ուխտեր 121.7:
14. Տես 2 Նեփի 2.2:
15. Եբրայեցիս 12.2:
16. Վարդապետություն և Ուխտեր 6.36:
17. Եբրայեցիս 12.2:
18. Տես Մոսիա 3.19. «բնական մարդը» ոչ միայն Աստծո թշնամին է, այլև իր կնոջ և երեխաների թշնամին է:
19. Տես Ալմա 31.38:
20. Եբրայեցիս 12.2:
21. Տես Եթեր 12.27:
22. Տես Եբրայեցիս 12.6:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 122.7:
24. Տես Մատթէոս 19.26, Մարկոս 10.27:
25. Ալմա 30.22: Մորմոնի գիրքը լի է ուրախություն ու հրճվանք ապրող տղամարդկանց ու կանանց օրինակներով, *որովհետև նրանք ընտրել են՝ հետևել Հիսուս Քրիստոսին:* Որևէ այլ ընտրություն, ինչպես Կորիհորի ընտրությունն էր, հանգեցնում է վերջնական կործանման:
26. *Զրպարտությունը,* որը նշանակում է խեղաթյուրում, սահմանվում է որպես՝ կանխամտածված հայտարարություն, որը նախատեսված է ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան վարկաբեկելու համար: Զրպարտությունը արվում էր ինչպես Կորիհորի ժամանակ, այնպես էլ հիմա: Մարգարե জոզեֆ Սմիթը խոսել է Եկեղեցու անպարտելիության մասին, նույնիսկ զրպարտության հետ բախվելիս: Նա ասել է. «Ճշմարտության Դրոշը վեր է խոյացած. ոչ մի անսուրբ ձեռք չի կարող կանգնեցնել աշխատանքի առաջընթացը, հալածանքները կարող են մոլեգնել, խուժանը կարող է միավորվել, զորքեր կարող են հավաքվել, զրպարտությունները կարող են արատավորել, բայց Աստծո ճշմարտությունն առաջ կգնա համարձակ, ազնիվ, անկախ, մինչև այն ներթափանցի յուրաքանչյուր մայրցամաք, այցելի ամեն երկիր, անցնի ամեն պետություն և հնչի յուրաքանչյուրի ականջում, մինչև Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. জոզեֆ Սմիթ,* 472):
27. Աշխարհը սովորեցնում է, որ *ապրանքները* գնելը ուրախություն կբերի: Իսկ եթե չի օգնում, ավելի շատ գնեք: Աշխարհը նաև սովորեցնում է, որ կարող եք մեղք գործել ուրախանալու համար: Իսկ եթե չի օգնում, ավելի շատ մեղք գործեք: Խոստումը անսահման ուրախությունն է, որը կարող եք գտնել ամեն կենսուրախ ծիածանի հակառակ կողմում: Ճիշտ չէ:
28. Ոչ այս աշխարհում և ոչ էլ այն:
29. Արդար Սրբերը, «ովքեր դիմացել են աշխարհի խաչերին,. . . կժառանգեն Աստծո արքայությունը,. . . նրանց ուրախությունը լիակատար կլինի հավիտյան» (2 Նեփի 9.18):
30. Օրինակ, տես 2 Նեփի 27.30, Ալմա 27.16–18:
31. Տես 1 Նեփի 17.40:
32. Տես Մոսիա 4.2–3:
33. Սաղմոս 16.8, 11:
34. Տես Եսայիա 35.10, 2 Նեփի 8.3:

Երեց Պիտեր Ֆ. Մըրս
Յոթանասուն

Հաղորդությունը կարող է օգնել մեզ սուրբ դառնալ

Խորհեք հինգ եղանակների մասին, որոնք կմեծացնեն սուրբ հաղորդության արարողությանը կանոնավոր մասնակցելու ազդեցությունը և զորությունը։

Իմ վաղ հիշողություններից մեկը կապված է հաղորդության ժողովի հետ, որը տեղի է ունեցել մեր տանը Վարնամբուլում (Ավստրալիա)։ 10–15 մարդ էր այցելել մեր ճյուղ, և հայրս՝ քահանայության երեք ղեկավարներից մեկը, սովորաբար հնարավորություն էր ունենում օրհնելու հաղորդությունը։ Հիշում եմ իմ զգացողությունները, երբ նա խոնարհաբար և ուշադիր կարդում էր հաղորդության աղոթքների բառերը։ Հաճախ նրա ձայնը դողում էր, երբ նա զգում էր Հոգին։ Երբեմն նա կանգ էր առնում՝ իր զգացմունքները կառավարելու և աղոթքն ավարտին հասցնելու համար։

Հինգ տանեկանում ես չէի կարող հասկանալ ասվածի ու կատարվածի ամբողջ իմաստը. այնուամենայնիվ, ես գիտեի, որ տեղի էր ունենում մի յուրահատուկ բան։ Ես զգում էի Սուրբ Հոգու խաղաղեցնող ու հավաստիացնող ազդեցությունը, մինչ հայրս մտորում էր մեր հանդեպ Փրկիչի սիրո մասին։

Փրկիչն ուսուցանել է. «Եվ այս պիտի դուք միշտ անեք նրանց համար, ովքեր ապաշխարում և մկրտվում են իմ անունով. և դուք պիտի դա անեք ի հիշատակ իմ արյան, որը ես հեղել եմ ձեզ համար, որ դուք կարողանաք վկայել Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ։ Եվ եթե դուք միշտ հիշում եք ինձ, դուք իմ Հոգին կունենաք ձեզ հետ» (3 Նեփի 18.11)։

Ես հրավիրում եմ մեզ բոլորիս խորհել հինգ եղանակների մասին, որոնք կմեծացնեն սուրբ հաղորդության արարողությանը կանոնավոր մասնակցելու ազդեցությունը և զորությունը, արարողություն, որը կարող է օգնել մեզ սուրբ դառնալ։

1. Նախապատրաստվեք արարողությանը

Մենք կարող ենք սկսել պատրաստվել հաղորդությանը այն սկսվելուց երկար ժամանակ առաջ։ Շաբաթ օրը կարող է լավ ժամանակ լինել մեր հոգևոր առաջընթացի և պատրաստվածության մասին խորհելու համար։

Մահկանացու կյանքը կարևորագույն պարգև է Երկնային Հորը նմանվելու մեր ճանապարհին։ Անհրաժեշտությունից ելնելով, այն ներառում է փորձություններ և դժվարություններ, որոնք մեզ հնարավորություն են տալիս փոխվելու և աճելու։ Բենիամին թագավորն ուսուցանել է, որ «բնական մարդն Աստծո մի թշնամի է, . . . և կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Սուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի քավությամբ» (Մոսիա 3.19)։ Հաղորդության արարողությանը մասնակցելը հնարավորություն է տալիս մեր սրտերն ու հոգիները լիարժեք ենթարկել Աստծուն։

Մեր սրտերը կոտրվում են, երբ պատրաստվում ենք երախտագիտություն հայտնելու Քրիստոսի Քավության համար, ապաշխարելու մեր սխալների ու թերությունների համար և խնդրելու Հոր օգնությունը՝ դառնալ Նրա նման՝ ։ մեր ճանապարհը շարունակելիս։ Ապա մենք ուրախությամբ սպասում ենք հաղորդության տված հնարավորությանը՝ հիշելու Նրա զոհաբերությունը և նորոգելու մեր բոլոր ուխտերը։

2. Եկեք ժամանակից շուտ

Հաղորդության մեր փորձառությունը կարող է բարելավվել, եթե մենք

ժողովին գանք շուտ և մտորենք՝ մինչ հնչում է նախերգանքը:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է.«Ակնածանքով կատարվող նախերգանքը սնուցում է հոգին: Այն ոգեշնչման աղբյուր է»:[1] «Մա զրուցելու կամ հաղորդագրություններ ուղարկելու ժամանակ չէ,—ասել էՆախագահ Ռասսել Մ. Նելսոնը,—այլ աղոթքով խորհրդածելու ժամանակ, մինչ ղեկավարներն ու անդամները հոգեպես պատրաստվում են հաղորդությանը»:[2]

3. Երգեք և սովորեք հաղորդության օրհներգի բառերից

Հաղորդության օրհներգը առանձնահատուկ կարևորություն ունի հաղորդության մեր փորձառության համար: Երաժշտությունը վեհացնում է մեր մտքերն ու զգացմունքները: Հաղորդության օրհներգն ավելի մեծ ազդեցություն է ունենում, երբ մենք կենտրոնանում ենք բառերի և ուսուցանվող զորեղ վարդապետության վրա: Մենք շատ բան ենք սովորում նման բառերից. «Խոշտանգվեց մեզ համար»,[3] «Եկեք հիշենք ու համոզվենք, որ մեր սիրտն ու ձեռքերը մաքուր են»[4] և «Ուր սեր, գութ և արդարություն դաշն են ու անբաժան»:[5]

Երբ մենք օրհներգ ենք կատարում և պատրաստվում խորհրդանիշերն ընդունելուն, բառերը կարող են օգնել մեզ նորոգել մեր ուխտերը: Խորհեք հետևյալ բառերի շուրջ.«Սիրում ենք քեզ, Տեր, ամբողջ սրտով, կքայլենք քո ուղիով»:[6]

4. Հաղորդության աղոթքները լսեք հոգով (տես Մորոնի 4–5)

Հաղորդության աղոթքների ծանոթ բառերը մեխանիկորեն լսելու փոխարեն մենք կարող ենք շատ ավելին սովորել և զգալ, եթե լսենք հոգով՝ խորհելով այս սուրբ աղոթքներում ներառված պատվիրանների և դրանցից բխող օրհնությունների մասին:

Հացն ու ջուրը օրհնվում և սրբագործվում են մեր հոգիների համար: Դրանք հիշեցնում են մեզ Փրկիչի զոհաբերության մասին և այն մասին, որ Նա կարող է օգնել մեզ սուրբ դառնալ:

Աղոթքները բացատրում են, որ մենք ճաշակում ենք հացը, ի հիշատակ Որդու մարմնի, որը Նա տվեց որպես փրկագին՝ բոլորին հարությանն արժանի դարձնելու համար, և մենք խմում ենք ջուրը, ի հիշատակ Որդու արյան, որը Նա Իր կամքով թափեց, որպեսզի մենք կարողանանք փրկվել ապաշխարության պայմանով:

Աղոթքները ներկայացնում են ուխտերը «որ նրանք հոժար են»

(Մորոնի 4.3) արտահայտությամբ: Այս արտահայտությունը մեծ ներուժ ունի մեզ համար: Արդյո՞ք մենք պատրաստ ենք ծառայել և մասնակցել: Արդյո՞ք մենք պատրաստ ենք փոխվել: Արդյո՞ք մենք պատրաստ ենք աշխատել մեր թուլությունների վրա: Արդյո՞ք մենք պատրաստ ենք օգնության հասնել և օրհնել ուրիշներին: Արդյո՞ք մենք պատրաստ ենք վստահել Փրկիչին:

Երբ խոստումները հայտարարվում են, և մենք ճաշակում ենք, մենք հաստատում ենք մեր սրտերում, որ մենք հոժարակամ ենք.

- Մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը:
- Զգտել պահել Նրա բոլոր պատվիրանները:
- Միշտ հիշել Նրան:

Աղոթքն ավարտվում է վեհ հրավերով ու խոստումով. «Որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան»: (Մորոնի 4.3):

Պողոսը գրել է. «Հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն [և] ժուժկալութիւն» (Գաղատացիս 5.22–23): Հրաշալի օրհնությունները և պարգևները հասանելի կլինեն մեզ, եթե մենք պահենք մեր ուխտերը:

5. Խորհենք և հիշենք Նրան, երբ բաժանում են հաղորդության խորհրդանիշերը

Ակնածալից պահերը կարող են մեզ համար սրբազան դառնալ, մինչ քահանայություն կրողները բաժանում են հաղորդությունը:

Մինչ բաժանում են հացը, մենք կարող ենք մտածել, որ մեր հանդեպ ունեցած մեծ սիրո շնորհիվ Փրկիչը տարավ «մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին» (Ալմա 7.12):

Մենք կարող ենք հիշել Հարության փառահեղ օրհնությունը, որ «պիտի զա բոլորին, . . . ճորտին ու ազատին, տղամարդուն ու կնոջը, ամբարիշտին ու արդարին. և նույնիսկ մի մազ իսկ նրանց գլխից չի կորչի. այլ ամեն ինչ պիտի վերականգնվի իր կատարյալ կառուցվածքով» (Ալմա 11.44):

Մինչ բաժանում են ջուրը, մենք կարող ենք հիշել Փրկիչի հայտարարությունը.

«Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. . . .

Տառապանք, որը ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով,- և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ» (ՎևՈւ 19.16, 18):

Մենք հիշում ենք, որ Նա «իր վրա [առավ մեր] թուլությունները, որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ [մեր] թուլությունների» (Ալմա 7.12):

Մինչ մենք խորհում ենք հաղորդության մեր փորձառության մասին, մենք ինքներս մեզ պետք է հարցնենք.

- Ի՞նչ կանեմ այս շաբաթ, որ ավելի լավ պատրաստվեմ հաղորդությանը:

- Կարո՞ղ եմ լինել ավելի ակնածալից և հայտնություն փնտրել հաղորդության ժողովի հենց սկզբից:
- Ի՞նչ վարդապետություն էր ուսուցանվում հաղորդության օրհներգում:
- Ի՞նչ լսեցի և զգացի, մինչ լսում էի հաղորդության աղոթքները:
- Ինչի՞ մասին էի ես մտածում, մինչ բաժանվում էր հաղորդությունը:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Հաղորդության արարողությունը սուրբ և կրկնվող հրավեր է՝ անկեղծորեն ապաշխարելու և լինելու հոգեպես նորոգված: Հաղորդությունը ճաշակելու գործողությունն ինքնին մեղքեր չի թողնում: Բայց, երբ մենք պատրաստվում ենք բարեխղճորեն և մասնակցում այս սուրբ արարողությանը կոտրված սրտով և փշրված հոգով, ապա խոստումն է, որ մենք կարող ենք *միշտ* Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալ: Եվ Սուրբ Հոգու սրբագործող զորության միջոցով, որպես մեր մշտական ուղեկից, մենք *միշտ* կարող ենք պահպանել մեր մեղքերի թողությունը»:[7]

Ես վկայում եմ բազմաթիվ օրհնությունների մասին, որոնք հասանելի կլինեն մեզ, եթե մենք բարելավենք մեր նախապատրաստությունները և հոգևոր մասնակցությունը հաղորդության արարողության ընթացքում: Ես նաև վկայում եմ, որ այս օրհնությունները հասանելի են մեզ մեր Երկնային Հոր սիրո և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Boyd K. Packer, “Personal Revelation: The Gift, the Test, and the Promise,” *Ensign,* Nov. 1994, 61.
2. Russell M. Nelson, “Worshiping at Sacrament Meeting,” *Liahona,* Aug. 2004, 13.
3. “Jesus of Nazareth, Savior and King,” *Hymns,* no. 181.
4. “While of These Emblems We Partake,” *Hymns,* no. 173.
5. «Ինչ մեծ է իմաստությունն ու սերը», *Hymns,* no. 195:
6. “As Now We Take the Sacrament,” *Hymns,* no. 169.
7. Դեյվիդ Ա. Բեդնար, «Միշտ պահեք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա,* մայիս 2016, 61–62:

Լինդա Ծ. Ռիվզ
Սփոփող Միության գերագույն նախագահության
երկրորդ խորհրդական

Փրկագնման մեծ ծրագիրը

Ես գիտեմ, որ երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք մեր մեղքերը, դրանք իսկապես ջնջվում են առանց հետքի։

Նախագահ Բոյդ Ք. Փաքերի մահանալուց մի քանի ամիս առաջ քահանայության և օժանդակ կազմակերպությունների գերագույն ղեկավարները հրաշալի հնարավորություն ունեցան լսելու նրա խոսքերը։ Ես անդադար մտածել եմ նրա ասածների շուրջ։ Նա կիսվեց, որ խորհել է այն ամենի մասին, ինչ արել է իր կյանքի ընթացքում, փնտրելով իր գործած մեղքերը, որոնց համար անկեղծորեն ապաշխարել էր և չէր կարողացել մտաբերել դրանցից *գոնե մեկը*։ Մեր սիրելի Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերության շնորհիվ և անկեղծ ապաշխարության միջոցով նրա մեղքերն ամբողջությամբ ջնջվել էին, կարծես թե երբեք չէին էլ գործվել։ Ապա Նախագահ Փաքերը պատվիրեց մեզ որպես ղեկավարներ վկայել, որ սա ճշմարիտ է մեզանից յուրաքանչյուրի համար, ով անկեղծորեն ապաշխարում է։

Ես ճանաչում եմ մի մարդու, ով տարիներ առաջ ներքաշված էր բարոյական օրինազանցությունների մեջ։ Որոշ ժամանակ այս մարդը շատ էր ամաչում ու վախենում խոսել այդ մասին իր կնոջ և քահանայության ղեկավարների հետ։ Նա ցանկանում էր լիովին ապաշխարել, սակայն բացատրեց, որ նախընտրում էր հրաժարվել իր հավերժական փրկությունից, բայց ազատել իր կնոջը և երեխաներին ցավից, ամոթից կամ այլ հետևանքներից, որոնք կառաջանայինիր խոստովանությունից հետո։

Երբ մենք մեղք ենք գործում, սատանան հաճախ փորձում է համոզել մեզ, որ անշահախնդիր արարք կլինի ուրիշներին մեր մեղքերի մասին իմանալու կործանարար ազդեցությունից պաշտպանելը, ներառյալ մեր եպիսկոպոսին

խոստովանելուց խուսափելը, ով կարող է օրհնել մեր կյանքն իր քահանայության բանալիներով՝ որպես Իսրայելի դատավոր։ Այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ անշահախնդիր և Քրիստոսանման վարվելու համար պետք է խոստովանել և ապաշխարել։ Սա Երկնային Հոր փրկագնման մեծ ծրագիրն է։

Ի վերջո, այս լավ մարդը խորը զղջումով խոստովանեց իր հավատարիմ կնոջն ու Եկեղեցու իր ղեկավարներին։ Չնայած դա ամենադժվար բանն էր, որ նա երբևէ արել էր, սփոփանքը, խաղաղության, Փրկիչի հանդեպ երախտագիտության, սիրո զգացողությունները և գիտելիքը, որ Տերը բարձրացնում էր իր ծանր բեռը, բերեց աննկարագրելի մի ուրախություն՝ անկախ հետևանքներից և նրա ապագայից։

Նա համոզված էր, որ իր կինը և երեխաները մեծ վիշտ կապրեին, և դա այդպես էլ եղավ, և որ կհրավիրվեր կարգապահական խորհուրդ ու նրան կազատեին իր կոչումից. այդպես էլ եղավ։ Նա համոզված էր, որ իր կնոջ սիրտը կկոտրվեր, ցավ կապրեր և զայրույթով կլցվեր և այդպես էլ եղավ։ Եվ նա համոզված էր, որ կինը կհեռանար՝ տանելով իր հետ երեխաներին, սակայն նա չարեց դա։

Երբեմն լուրջ օրինազանցությունները տանում են բաժանության և ավելի են բարդացնում ստեղծված իրավիճակը։ Սակայն, ի զարմանս այս մարդու, կինը գրկեց նրան և նվիրվեց ամուսնուն հնարավորինս օգնելու գործին։ Ժամանակի ընթացքում նա կարողացավ ամբողջ հոգով ներել նրան։ Նա զգաց Փրկիչի Քավության բուժող զորությունը։ Անցել են տարիներ. այս զույգը և նրանց երեք երեխաները ամուր են ու հավատարիմ։ Ամուսինը և կինը ծառայում են տաճարում և ունեն հրաշալի, սիրառատ ընտանիք։ Այս մարդու վկայության և Փրկիչի հանդեպ նրա սիրո ու երախտագիտության խորությունն այնքան ակնհայտ են նրա կյանքում։

Ամուղեկը վկայել է, «Ես կկամենայի, որ դուք գործի անցնեք և չկարծրացնեք ձեր սրտերն այլևս. . . . եթե դուք կամենաք ապաշխարել . . . ,

փրկագնման մեծ ծրագիրն անհապաղ պիտի իրագործվի ձեզ համար»:[1]

Երբ ես ծառայում էի ամուսնուս հետ, մինչ նա նախագահում էր միսիայում, մի առավոտ մենք գնացինք օդանավակայան՝ դիմավորելու միսիոներների մի մեծ խմբի: Երիտասարդներից մեկը գրավեց մեր ուշադրությունը: Նա կարծես տխուր էր, մտահոգ, գրեթե հուսահատ: Օրվա ընթացքում նա մեր ուշադրության կենտրոնում էր: Երեկոյան այս երիտասարդը ուշացած խոստովանություն արեց, և նրա ղեկավարները որոշեցին, որ նա պետք է տուն վերադառնար: Չնայած մենք շատ էինք տխրել, որ նա անազնիվ էր վարվել և չէր ապաշխարել մինչև միսիա գալը, օդանավակայան գնալու ճանապարհին մենք անկեղծորեն և սիրով գովեցինք նրան, որ քաջություն ունեցավ խոստովանելու իր մեղքը, և մենք խոստացանք, որ մշտապես կապ կպահեինք նրա հետ:

Այս երիտասարդն օրհնված էր, որ ուներ հրաշալի ծնողներ, փորձառու քահանայության ղեկավարներ և աջակցող ու սիրող ծուխ: Լիովին ապաշխարելու և Փրկիչի Քավությունը ճաշակելու համար մեկ տարի ջանասիրաբար աշխատելուց հետո նա կարողացավ վերադառնալ մեր միսիա: Դժվարանում եմ նկարագրել մեր զգացած ուրախությունը, մինչ մենք դիմավորում էինք այս երիտասարդին օդանավակայանում: Նա լի էր Հոգով, երջանիկ էր, վստահ Աստծո ներկայության մեջ և պատրաստակամ՝ հավատարմորեն ծառայելու: Նա օրինակելի միսիոներ դարձավ, և ավելի ուշ ես և ամուսինս պատիվ ունեցանք մասնակցելու նրա տաճարային կնքմանը:

Ի հակադրություն սրան, ահա մեկ այլ միսիոների օրինակ, ով իմանալով, որ մինչև միսիան գործած չխոստովանված մեղքը անշուշտ պատճառ պիտի դառնար նրան վաղաժամկետ տուն ուղարկելու համար, կազմեց իր սեփական ծրագիրը. մեծ ջանասիրությամբ աշխատել միսիայի ընթացքում և խոստովանել միսիայի նախագահին միսիան ավարտելուց մի քանի օր առաջ: Նա չունեցավ Աստծո ուզած կերպով տրտմություն և փորձեց շրջանցել ծրագիրը, որ մեր սիրելի Փրկիչն առաջարկել է մեզանից յուրաքանչյուրին:

Մեր միսիայի ընթացքում մի անգամ ես ամուսնուս ընկերակցում էի, երբ նա գնում էր մկրտության հարցազրույց անցկացնելու մի մարդու հետ: Մինչ ամուսինս հարցազրույց էր անցկացնում, ես դրսում սպասում էի քույր միսիոներների հետ, ովքեր ուսուցանել էին այդ մարդուն: Երբ հարցազրույցն ավարտվեց, ամուսինս տեղեկացրեց միսիոներներին, որ այդ մարդը կարող էր մկրտվել: Այս հրաշալի մարդու աչքերից անընդհատ արցունքներ էին հոսում. նա վստահ էր, որ կյանքի ընթացքում գործած լուրջ մեղքերը խոչընդոտ պիտի լինեին իր մկրտության համար: Ես հազվադեպ եմ տեսել նման ուրախություն և երջանկություն, որը բխում էր այն մարդուց, ով դուրս եկավ խավարից ու մտավ լույսի մեջ:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը վկայել է.

«Ողորմած Քավիչի և Նրա զորության հանդեպ հավատով հուսահատությունը կարող է հույսի վերածվել: Մարդու սիրտը և ցանկությունները փոխվում են, և մեղքը, որը մի ժամանակ հրապուրիչ է եղել, զարհուրելի է թվում: . . .

. . . Ինչպիսին էլ որ լինի ապաշխարության գինը, այն կլանվում է ներման ուրախությամբ»:[2]

Այս փորձառություններն ինձ հիշեցնում են Ենովսին Մորմոնի Գրքից, ով «աղաղակեց առ [Տերը՝] զորեղ աղոթքով», ապա լսեց մի ձայն, որն ասում էր. «Ենովս, քո մեղքերը ներված են քեզ: . . .

Եվ ես՝ Ենովսս, գիտեի, որ Աստված չէր կարող ստել. ուստի, իմ հանցանքը սրբվեց:

Եվ ես ասացի. Տեր, ի՞նչպես եղավ դա:

Եվ նա ասաց ինձ. Քրիստոսի հանդեպ քո հավատքի շնորհիվ . . . Գնա, քո հավատքը քեզ ողջ դարձրեց»:[3]

Այս ելույթը պատրաստելիս ես ցանկանում էի զգալ, թե ինչպես են մեր թոռնիկները հասկանում ապաշխարությունը և ինչ են զգում Փրկիչի հանդեպ: Ուստի, ես խնդրեցի մեր

զավակներին տալ նրանց հետևյալ հարցերը: Ինձ հուզեցին մեր թոռնիկների պատասխանները:

Ի՞նչ է ապաշխարությունը: «Երբ դու մեկին խփում ես, կարող ես ասել «կներես» և օգնել նրան»:

Ի՞նչ ես զգում, երբ ապաշխարում ես: «Կարողանում ես զգալ Նրան, կարողանում ես զգալ Նրա ջերմությունը և վատ զգացողությունները հեռանում են»:

Ի՞նչ զգացողություններ եք ունենում Հիսուսի և Երկնային Հոր հանդեպ, երբ ապաշխարում եք: «Ես զգում եմ, որ Հիսուսը մտածում է, որ արժեր Քավություն կատարել, և Նա ուրախ է, որ մենք կարող ենք կրկին ապրել Իր հետ»:

Ինչո՞ւ են Հիսուսը և Երկնային Հայրն ուզում, որ ես ապաշխարեմ: Ահա իմ պատանի թոռնուհու պատասխանը. «Քանի որ Նրանք սիրում են ինձ: Զարգանալու և Նրանց նման դառնալու համար ես պետք է ապաշխարեմ: Ես նաև ուզում եմ, որ Հոգին ինձ հետ լինի, ուստի, ես պետք է ամեն օր ապաշխարեմ, որպեսզի վայելեմ Նրա հրաշալի ընկերակցությունը: Ես երբեք չեմ կարողանա բավականաչափ երախտագիտություն հայտնել Նրանց»:

Երբ չորսամյա Բրինլին լսեց այս հարցերը, նա ասաց. «Ես չգիտեմ, հայրիկ: Դու սովորեցրու ինձ»:

Անցած գերագույն համաժողովի ժամանակ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը

հայտարարել է. «Որքան էլ կարծում եք, որ ուշացել եք, որքան էլ կարծում եք, որ բաց եք թողել հնարավորությունները, որքան էլ որ շատ սխալներ գործած լինեք . . . , կամ տնից և ընտանիքից ու Աստծուց հեռացած եք զգում, ես վկայում եմ, որ դուք *չեք* հեռացել Աստվածային սիրո հասանելիությունից: Ձեզ համար հնարավոր չէ սուզվել ավելի խորը, քան Քրիստոսի Քավության անսահման լույսն է շողում»:[4]

Օ՜հ, որքան եմ կամենում, որ իմ երեխաներից, թոռնիկներից և ձեզանից յուրաքանչյուրը, իմ եղբայրներ և քույրեր, զգա ուրախությունը և մտերմությունը Երկնային Հոր և մեր Փրկիչի, մինչ մենք ամեն օր ապաշխարում ենք մեր մեղքերը և թուլությունները: Երկնային Հոր յուրաքանչյուր գիտակից զավակ ապաշխարության կարիք ունի: Խորհեք, թե որ մեղքերի համար մենք պետք է ապաշխարենք: Ի՞նչն է մեզ ետ պահում դրանից: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավը դառնալ:

Ես գիտեմ, որ ինչպես Նախագահ Փաքերն է զգացել ու վկայել, երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք մեր մեղքերը, դրանք իսկապես ջնջվում են առանց հետքի: Ես անձամբ զգացել եմ սեր, ուրախություն, սփոփանք և վստահություն Տիրոջ ներկայության մեջ, երբ անկեղծորեն ապաշխարել եմ:

Ինձ համար կյանքի ամենամեծ հրաշքները՝ Կարմիր ծովի բաժանումը, սարերի տեղափոխումը կամ նույնիսկ մարմնի բժշկումը չեն: Ամենամեծ հրաշքը տեղի է ունենում, երբ մենք խոնարհ աղոթքով դիմում ենք մեր Երկնային Հորը, ջերմեռանդորեն ներում աղերսում, ապա մաքրվում այդ մեղքերից մեր Փրկիչի քավիչ զոհաբերության շնորհիվ: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 34.31:
2. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ապաշխարության աստվածային պարգևը», *Լիահոնա,* նոյ. 2011, 40:
3. Ենովս 1.4–8:
4. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Այգու մշակները», *Լիահոնա,* մայիս 2012, 33:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Ո՞ւմ մոտ գնանք

Ի վերջո, մեզանից յուրաքանչյուրը պետք է պատասխանի Փրկիչի հարցին. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ»:

Մի քանի տարի առաջ ընտանիքիս հետ այցելեցինք Սուրբ Երկիր: Մեր ճամփորդության հետ կապված իմ վառ հիշողություններից մեկն այն է, որ մենք այցելեցինք Երուսաղեմի այն վերնահարկը, որը Վերջին Ընթրիքի պատմական վայրն է:

Այդ վայրում կանգնած, ես նրանց համար կարդացի Հովհաննես 17 գլխից այն հատվածը, որտեղ Հիսուսը Հորն աղոթում է Իր աշակերտների համար.

«Ես նրանց համար եմ աղաչում . . . որ մեկ լինեն ինչպես մենք: . . .

Բայց ոչ թե միայն նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար էլ, որ նորանց խոսքովը կհավատան ինձ:

Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հայր, ինձանում, և ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մեկ լինեն»:[1]

Այդ խոսքերը կարդալիս ես խորապես հուզվեցի և հասկացա, որ այդ սուրբ վայրում ինքս էլ աղոթում եմ, որ կարողանամ միշտ մեկ լինել իմ ընտանիքի, իմ Երկնային Հոր և Նրա Որդու հետ:

Կյանքում ամենակարևոր բաներից են՝ մեր անգին հարաբերություններն ընտանիքի, ընկերների, Տիրոջ և Նրա վերականգնված Եկեղեցու հետ: Այդ հարաբերություններն այնքան կարևոր են, որ դրանք պետք է փայփայել, պաշտպանել և սնուցել:

Սուրբ գրությունների առավել ազդեցիկ պատմություններից մեկում ասվում է, որ «[Տիրոջ] աշակերտներից շատերը» դժվարանում էին ընդունել Նրա ուսմունքները և վարդապետությունը, և *«ետ գնացին, և այլևս ման չէին գալիս նորա հետ»*:[2]

Երբ այդ աշակերտները հեռացան, Հիսուսը դարձավ դեպի Տասներկուսը և հարցրեց. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ»:[3]

Պետրոսը պատասխանեց.

«Տեր, *ո՞ւմ մոտ գնանք.* հավիտենական կյանքի խոսքեր ունիս դու:

Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»:[4]

Այն պահին, երբ մյուսները իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին այն բանի վրա, թե ինչ չէին կարող ընդունել, Առաքյալները նախընտրեցին կենտրոնանալ այն բանի վրա, թե ինչին *էին* իրենք հավատում և գիտեին, և արդյունքում նրանք մնացին Քրիստոսի հետ:

Ավելի ուշ, Պենտեկոստեի օրը Տասներկուսը ստացան Սուրբ Հոգու պարգևը: Նրանք դարձան համարձակ Քրիստոսի մասին իրենց վկայության մեջ և սկսեցին ավելի խորը հասկանալ Հիսուսի ուսմունքները:

Այսօր էլ նույնն է: Ոմանց համար հավատալու և մնալու Քրիստոսի

հրավերը դեռևս ծանր կամ դժվար ընդունելի է: Որոշ աշակերտներ դժվարանում են հասկանալ Եկեղեցու քաղաքականության կամ ուսմունքների որոշ կետեր: Ոմանց մտահոգում են մեր պատմության որոշ դրվագները կամ որոշ հին և ներկա անդամների ու ղեկավարների թերությունները: Իսկ ոմանք էլ դժվարանում են ապրել կրոնով, որը մեծ պահանջներ ունի: Ի վերջո, ոմանք էլ «ձանձրանում են բարին գործելուց»:[5] Այս կամ այն պատճառով Եկեղեցու որոշ անդամներ երերում են իրենց հավատքում, մտածելով, որ միգուցե պետք է հետևեն նրանց, ովքեր «ետ գնացին, և այլևս ման չէին գալիս» Հիսուսի հետ:

Եթե ձեզանից մեկը երերում է իր հավատքում, ես ձեզ տալիս եմ նույն հարցը, որը Պետրոսը տվեց. «Ո՞ւմ մոտ եք [դուք] գնալու»: Եթե որոշել եք դառնալ ոչ ակտիվ կամ հեռանալ վերականգնված Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուց, ո՞ւր եք գնալու: Ի՞նչ եք անելու: Այլևս Եկեղեցու անդամների և Տիրոջ կողմից ընտրված ղեկավարների հետ չշարունակելու որոշումը երկարատև ազդեցություն կթողնի, որը միշտ չէ, որ անմիջապես կտեսնեք: Գուցե լինի ինչ-որ մի վարդապետություն, քաղաքականություն, պատմության մի դրվագ, որը ձեր հավատքի առումով հակասություն է առաջացնում ձեր մեջ և գուցե զգաք, որ այժմ այդ ներքին հակասությունը լուծելու միակ միջոցը Սրբերից հեռանալն է: Եթե դուք ապրեք նույնքան երկար, որքան ես, կհասկանաք, որ որոշ հարցեր ինչ-որ կերպ իրենք իրենց լուծվում են: Ոգեշնչված ներքմբռնումը կամ հայտնությունը գուցե նոր լույս սփռեն տվյալ խնդրի վրա: Հիշեք, Վերականգնումը մեկ իրադարձություն չէ, այլ շարունակաբար բացահայտվում է:

Երբեք մի հրաժարվեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով հայտնված մեծ ճշմարտություններից: Երբեք մի դադարեք Մորմոնի Գրքում տրված Քրիստոսի վարդապետությունները կարդալուց, խորհելուց և կիրառելուց:

Միշտ հավասարապես ժամանակ հատկացրեք Տիրոջը՝ բարեխղճորեն

փորձելով հասկանալ, թե ինչ է Տերը հայտնել: Ինչպես իմ թանկագին ընկեր և նախկին գործընկեր Երեց Նիլ Ա. Մաքսվելն է մի անգամ ասել. «Մենք չպիտի ենթադրենք . . . որ եթե մի բան չենք կարող բացատրել, դա անբացատրելի է»:[6]

Ուրեմն նախքան կկատարեք հոգևոր առումով հեռանալու վտանգավոր ընտրությունը, ես խրախուսում եմ ձեզ՝ դադար առեք և խորը մտածեք, մինչ կհրաժարվեք նրանից, ինչն առաջին հերթին օգնեց ձեզ ստանալ Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու մասին ձեր վկայությունը: Դադար առեք և մտածեք, թե ինչ եք զգացել այստեղ և ինչու եք դա զգացել: Մտածեք այն պահերի մասին, երբ Սուրբ Հոգին հավերժական ճշմարտությունների մասին վկայություն է բերել ձեզ:

Ո՞ւր եք գնալու, որպեսզի գտնեք նրանց, ովքեր կկիսեն ձեր համոզմունքները անհատապես սիրող Երկնային Ծնողների հանդեպ, ովքեր ուսուցանում են մեզ ինչպես վերադառնալ Իրենց հավերժական ներկայություն:

Ո՞ւր եք գնալու, որպեսզի ուսուցանվեք Փրկիչի մասին, ով ձեր լավագույն ընկերն է և ոչ միայն տառապել է ձեր մեղքերի համար, այլև կրել «ցավեր և չարչարանքներ և փորձություններ ամեն տեսակի», «որպեսզի նրա սիրտը լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների»,[7] ինչպես նաև, ըստ իս, հավատքը կորցնելու տկարությունը:

Ո՞ւր եք գնալու, որ ավելին սովորեք մեր հավերժական երջանկության և խաղաղության համար տրված Երկնային Հոր ծրագրի մասին, ծրագիր, որը լի է հրաշալի հնարավորություններով, ուսմունքներով, մեր մահկանացու և հավերժական կյանքի համար տրված առաջնորդությամբ: Հիշեք, փրկության ծրագիրը մահկանացու կյանքին իմաստ, նպատակ և ուղղություն է տալիս:

Ո՞ւր եք գնալու, որ գտնեք մանրակրկիտ և ոգեշնչված Եկեղեցու կազմակերպության կառուցվածքը, որի միջոցով ձեզ ուսուցանում և աջակցում են տղամարդիկ և կանայք, ովքեր լիովին նվիրված են Տիրոջ ծառայությանը՝ ծառայելով ձեզ և ձեր ընտանիքներին:

Ո՞ւր եք գնալու, որ գտնեք մարգարեներ և առաքյալներ, ովքեր կանչվել են Աստծո կողմից, դառնալով մեկ այլ միջոց՝ խորհուրդ, հասկացողություն, սփոփանք և ոգեշնչում տալու մեր օրերի մարտահրավերների համար:

Ո՞ւր եք գնալու, որ գտնեք մարդիկ, ովքեր ապրում են սահմանված արժեքներով և չափանիշներով, որոնք դուք կիսում եք և ցանկանում եք փոխանցել ձեր զավակներին և թոռներին:

Եվ ո՞ւր եք գնալու, որ ապրեք տաճարային փրկող արարողություններից և ուխտերից բխող ուրախությունը:

Եղբայրներ և քույրեր, Քրիստոսի ավետարանը ընդունելն ու դրանով ապրելը կարող է մարտահրավերներով լի լինել: Միշտ այդպես է եղել և այդպես էլ կլինի: Կյանքը զառիվեր և դժվար արահետով քայլող արշավականների նման կարող է լինել: Բնական և նորմալ բան է՝ ճանապարհին երբեմն դադար առնելը, որ շունչ քաշենք, վերագնահատենք մեր ուղղությունը և վերանայենք մեր արագությունը: Ճանապարհին դադար առնելու կարիքը ոչ բոլորն ունեն, բայց դրանում ոչ մի վատ բան չկա, եթե ձեր հանգամանքներն

են ստիպում: Իրականում դա կարող է դրական ազդեցություն ունենալ նրանց վրա, ովքեր լիովին օգտվում են Քրիստոսի ավետարանի կենդանի ջրով թարմանալու հնարավորությունից:

Վտանգը գալիս է այն ժամանակ, երբ մարդը որոշում է հեռանալ դեպի կյանքի ծառը տանող ուղուց:[8] Երբեմն մենք կարող ենք սովորել, ուսումնասիրել և գիտենալ, իսկ երբեմն էլ պետք է հավատանք, վստահենք և հուսանք:

Ի վերջո, մեզանից յուրաքանչյուրը պետք է պատասխանի Փրկիչի հարցին. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ»:[9] Բոլորս էլ պետք է փնտրենք այդ հարցի մեր անձնական պատասխանը: Ոմանց համար պատասխանելը հեշտ է, մյուսների համար՝ դժվար: Չեմ ձևացնի, թե գիտեմ՝ ինչու է հավատալը ոմանց ավելի հեշտորեն տրվում, քան մյուսներին: Պարզապես անչափ երախտապարտ եմ և գիտեմ, որ պատասխանները միշտ կան, և եթե մենք փնտրենք դրանք, իրոք փնտրենք իրական միտումով և աղոթքով լեցուն սրտի ողջ կորովով, ի վերջո կգտնենք մեր հարցերի պատասխանները, եթե շարունակենք առաջ գնալ ավետարանի ուղիով: Իմ ծառայության ընթացքում ես ճանաչել եմ մարդկանց, ովքեր տատանվել են և ապա հավատքը փորձվելուց հետո՝ վերադարձել:

Ես անկեղծ հույս եմ տածում, որ մենք կհրավիրենք Աստծո բազմաթիվ զավակների, որ գտնեն ավետարանի ուղին և մնան այդ ուղու վրա, որպեսզի իրենք ևս կարողանան «ճաշակել պտղից, որը բաղձալի էր բոլոր մյուս պտուղներից ավելի»:[10]

Սրտանց խնդրում եմ, որ խրախուսենք, ընդունենք, հասկանանք և սիրենք նրանց, ովքեր պայքարում են իրենց հավատքի հետ: Երբեք չպետք է անտեսենք մեր եղբայրներից և քույրերից ոչ մեկին: Մենք բոլորս էլ ճանապարհի տարբեր հատվածներում ենք գտնվում և համապատասխանաբար պետք է ծառայենք միմյանց:

Ոչ միայն պետք է գրկաբաց ողջունենք նորադարձներին, այլև ընդունենք և աջակցենք նրանց, ովքեր հարցեր ունեն և տատանվում են իրենց հավատքի մեջ:

Մեկ այլ ծանոթ այլաբանություն օգտագործելով, ես աղոթում եմ, որ եթե ձեզանից որևէ մեկը մտածում է հեռանալ «Սիոնի հին նավից», որտեղ Աստված և Քրիստոսն են ղեկի մոտ կանգնած, նախքան այդ քայլին դիմելը՝ դադար առեք և խորը մտածեք:

Խնդրում եմ իմացեք, որ եթե անգամ ահարկու փոթորիկներն ու ալիքները հարվածեն հին նավին, Փրկիչը նավի վրա է և կարող է սաստել փոթորկին Իր հրամանով. «Լռիր, պապանձուիր»: Մինչ այդ, մենք չպետք է վախենանք և պետք է անսասան հավատք ունենանք ու իմանանք, որ «քամին էլ, ծովն էլ հնազանդվում են նրան»:[11]

Եղբայրներ և քույրեր, Տիրոջ անունով խոստանում եմ ձեզ, որ Նա երբեք չի լքի Իր Եկեղեցին, և Նա երբեք չի լքի մեզանից ոչ մեկին: Հիշեք Պետրոսի պատասխանը Փրկիչի հարցին և խոսքերը.

«Ո՞ւմ մոտ գնանք. հավիտենական կյանքի խոսքեր ունիս դու:

Եվ մենք հավատացինք և ճանաչեցինք, թե դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին»:[12]

Ես վկայում եմ, որ «տրված չի ո՛չ ուրիշ անուն, ո՛չ ուրիշ ճանապարհ, ո՛չ էլ միջոց, որի շնորհիվ կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին. միայն Քրիստոսի անունով և միջոցով»:[13]

Ես նաև վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր օրերում կանչել է առաքյալներ ու մարգարեներ և վերականգնել է Իր Եկեղեցին ուսմունքներով ու պատվիրաններով՝ որպես «ապաստան փոթորկից ու ցասումից», որն իրոք կգա, եթե աշխարհի մարդիկ չապաշխարեն և չվերադառնան Նրա մոտ:[14]

Նաև վկայում եմ, որ Տերը «հրավիրում է նրանց բոլորին՝ գալ իր մոտ և ճաշակել իր բարությունից. և նա չի մերժում ոչ մեկին, որ գալիս են դեպի իրեն, սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այր թե կին. . . . և բոլորը նույնն են Աստծո համար»:[15]

Հիսուսը մեր Փրկիչն ու Քավիչն է, և Նրա վերականգնված ավետարանը կօգնի մեզ ապահով վերադառնալ մեր Երկնային Ծնողների ներկայություն, եթե մենք մնանք ավետարանի ուղու վրա և Նրա հետքերին հետևենք: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 17.9, 11, 20–21
2. Հովհաննես 6.66; շեշտադրումն ավելացված է:
3. Հովհաննես 6.67
4. Հովհաննես 6.68–69, շեշտադրումն ավելացված է:
5. Վարդապետություն և Ուխտեր 64.33
6. Neal A. Maxwell, *Not My Will, But Thine* (1988), 124.
7. Ալմա 7.11–12
8. Տես 1 Նեփի 8.20–30
9. Հովհաննես 6.67
10. 1 Նեփի 8.15
11. Տես Մարկոս 4.35–41:
12. Հովհաննես 6.68–69
13. Մոսիա 3.17
14. Վարդապետություն և Ուխտեր 115.6
15. 2 Նեփի 26.33

Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս
Նախագահող Եպիսկոպոսության առաջին խորհրդական

Երկրպագության օրհնությունները

Երկրպագությունը կարևոր և առանցքային դեր ունի մեր հոգևոր կյանքում: Մենք պետք է փափագենք, փնտրենք և ձգտենք զգալ այն:

Նրա այցը

Սուրբ գրություններում արձանագրված առավել ուշագրավ և հրաշալի իրադարձություններից մեկը Փրկիչի մահից և Հարությունից հետո Ամերիկա մայրցամաքի ժողովրդին Նրա այցելության մասին պատմությունն է: Մարդիկ ականատես էին եղել այնպիսի մեծ ավերածության, որ «ամբողջ երկրի երեսը ձևափոխվել էր»:[1] Այդ իրադարձությունների մասին արձանագրությունը պատմում է, որ այդ աղետից հետո ողջ ժողովրդի մեջ շարունակ ողբ ու հեկեկոց էր,[2] և իրենց խորը վշտի մեջ նրանք բժշկության, խաղաղության և ազատություն ստանալու մեծ կարիք ունեին:

Երբ Փրկիչն իջավ երկնքից, մարդիկ երկու անգամ Նրա ոտքերի մոտ ընկան: Առաջին անգամը եղավ այն ժամանակ, երբ Նա աստվածային իշխանությամբ հայտարարեց.

«Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը, ում մասին մարգարեները վկայել էին, որ պիտի գա աշխարհ:

Եվ ահա, ես եմ լույսն ու կյանքն աշխարհի»:[3]

Այնուհետև ներկաներին Նա կոչ արեց. «Բարձրացեք և առաջ եկեք ինձ մոտ, որ դուք կարողանաք մտցնել ձեր ձեռքն իմ կողը, և նաև, որ դուք կարողանաք շոշափել բևեռների նշաններն իմ ձեռքերի ու իմ ոտքերի վրա, որ դուք կարողանաք իմանալ, որ ե՛ս եմ Իսրայելի Աստվածը, և ամբողջ երկրագնդի Աստվածը, և սպանվել եմ աշխարհի մեղքերի համար: . . .

Եվ երբ նրանք բոլորն առաջ եկան և իրենք ականատես եղան, նրանք միաձայն աղաղակեցին՝ ասելով.

Ովսա՜ննա: Օրհնվա՜ծ լինի Բարձրյալ Աստծո անունը»:[4]

Եվ ապա երկրորդ անգամ «նրանք ընկան ցած՝ Հիսուսի ոտքերի մոտ և երկրպագեցին նրան»: Բայց այս անգամ նպատակով, քանի որ մենք իմանում ենք, որ նրանք «երկրպագեցին նրան»:[5]

Ներկա օրեր

Այս տարվա սկզբին ես հանձնարարությամբ այցելել էի Միացյալ Նահանգների արևմուտքում գտնվող մի ցից: Սովորական կիրակի էր, սովորական ժողով, Եկեղեցու սովորական անդամներով: Ես նայում էի, ինչպես էին անդամները մտնում հավաքատուն և ակնածալից զբաղեցնում իրենց տեղերը: Վերջին վայրկյանին շշուկով խոսակցությունները արձագանքում էին սրահում: Մայրերն ու հայրերը, երբեմն զուր ջանքեր գործադրելով, փորձում էին հանգստացնել իրենց աշխույժ երեխաներին: Սովորական իրավիճակ:

Բայց մինչ ժողովը կսկսվեր, Հոգու կողմից ոգեշնչված խոսքեր եկան միտքս:

Այս անդամները պարզապես չէին եկել պարտականություն կատարելու կամ խոսնակներին ունկնդրելու:

Նրանք եկել էին շատ ավելի խորը և շատ ավելի կարևոր պատճառով:

Նրանք եկել էին երկրպագելու:

Երբ ժողովը սկսվեց, հայացքով հետևում էի ներկա գտնվող անդամներին: Նրանք ունեին գրեթե երկնային հայացքներ, որ ակնածանք և խաղաղություն էր արտահայտում: Նրանց համար սրտումս ջերմություն զգացի: Այդ կիրակի նրանք

բավականին արտասովոր փորձառություն ունեցան։

Նրանք երկրպագում էին։

Նրանք երկնային զգացողություն ունեին։

Ես տեսնում էի դա նրանց դեմքերին։

Եվ ես բերկրում ու երկրպագում էի նրանց հետ։ Այդ ժամանակ Հոգին խոսեց իմ սրտում։ Եվ այդ օրը ես սովորեցի իմ, Աստծո և մեր կյանքում ճշմարիտ երկրպագության դերի մասին։

Երկրպագությունը մեր ամենօրյա կյանքում

Եկեղեցու կոչումներում ծառայելու առումով Վերջին Օրերի Սրբերը բացառիկ են։ Բայց երբեմն գուցե մեր աշխատանքը կատարում ենք մեխանիկորեն, ասես պարզապես մի գործ ենք անում։ Երբեմն ժողովներին հաճախելիս և արքայության մեջ ծառայություն կատարելիս մեզ մոտ պակասում է երկրպագության սուրբ բաղադրիչը։ Իսկ առանց դրա մեզ մոտ պակասում է հոգևոր անզուգական շփումը անսահմանության հետ, որը մեզ համար հասանելի է՝ որպես սիրող Երկնային Հոր զավակներ։

Հեռու լինելով պատահական, երջանիկ դրսևորում լինելուց, երկրպագությունը կարևոր և առանցքային դեր ունի մեր հոգևոր կյանքում։ Դա մենք պետք է փափագենք, փնտրենք և ձգտենք զգալ։

Ի՞նչ է երկրպագությունը։

Աստծուն երկրպագելիս մենք մոտենում ենք Նրան ակնածալից սիրով, խոնարհությամբ և խորը պաշտամունքով։ Մենք ճանաչում և ընդունում ենք Նրան որպես մեր ինքնիշխան Թագավոր, տիեզերքի Արարիչ, մեր սիրելի և անսահման սիրող Հայր։

Մենք հարգում և մեծարում ենք Նրան։

Մենք ենթարկվում ենք Նրան։

Հզոր աղոթքով մենք բարձրացնում ենք մեր սրտերը, փայփայում ենք Նրա խոսքը, ցնծում Նրա շնորհով և պարտավորվում նվիրված հավատարմությամբ հետևել Նրան։

Հիսուս Քրիստոսի աշակերտի կյանքում Աստծուն երկրպագելն այնքան կարևոր բան է, որ եթե Նրան չենք ունենում մեր սրտում, մենք զուր ենք փնտրում Նրան մեր խորհուրդներում, եկեղեցիներում և տաճարներում։

Ճշմարիտ աշակերտները ձգտում են «երկրպագել նրան, ով արարել է երկինքը և երկիրը և ծովերը և ջրերի աղբյուրները,—կանչելով Տիրոջ անունն օր ու գիշեր»։[6]

Մենք կարող ենք բավականաչափ սովորել ճշմարիտ երկրպագության մասին, քննելով, թե ինչպես են մյուսները՝ մարդիկ, ովքեր գուցե այդքան էլ չեն տարբերվել մեզանից, հանդիպել, իրենց դրսևորել և երկրպագել աստվածության ներկայությամբ։

Զմայլանք, երախտագիտություն և հույս

19-րդ դարի առաջին կեսին Քրիստոնյա աշխարհն ընդհանրապես չէր ընդունում այն գաղափարը, որ Աստված կարող է խոսել մարդու հետ։ Սակայն 1820 թվականի գարնանը, այդ մոտեցումն ընդմիշտ փոխվեց, երբ խոնարհ գյուղացի տղան գնաց անտառ և ծնկաչոք աղոթեց։ Այդ օրվանից ի վեր ուշագրավ տեսիլքների, բացահայտումների և երկնային հայտնությունների տեղատարափ սկսվեց՝ երկրի բնակիչներին օժտելով Աստծո էության, նպատակի և մարդու հետ Նրա հարաբերության մասին անգին գիտելիքով։

Օլիվեր Քաուդերին այդ օրերը նկարագրել է որպես «անմոռանալի օրեր . . . Ինչպիսի՜ ուրախություն։ Ինչպիսի՜ հրաշք։ Ինչպիսի՜ զմայլանք»։[7]

Օլիվերի խոսքերը հայտնում են աստվածությանը ճշմարիտ երկրպագելու առաջին բաղադրիչ տարրերը՝ փառահեղ ակնածանք և խորը երախտագիտության զգացում։

Ամեն օր, բայց հատկապես կիրակի օրը, մենք բացառիկ հնարավորություն ունենք զգալու երկնքի զարմանահրաշությունը և պատկառելիությունը, և արտահայտելու մեր գոհաբանությունը առ Աստված՝ Իր օրհնյալ բարեհոգության և անսահման ողորմածության համար։

Դա մեր մեջ հույս է ծնում։ Դրանք երկրպագության առաջին բաղադրիչներն են։

Լույս, գիտելիք և հավատք

Պենտեկոստեի օրհնյալ օրը Սուրբ Հոգին մուտք գործեց Քրիստոսի աշակերտների սրտերն ու մտքերը՝ լցնելով նրանց լույսով և գիտելիքով։

Մինչ այդ օրը նրանք երբեմն վստահ չէին, թե ինչ պիտի անեին։

Երուսաղեմը վտանգավոր վայր էր դարձել Փրկիչի հետևորդի համար, և նրանք պիտի որ մտածեին, թե ինչ տեղի կունենար իրենց հետ։

Բայց երբ նրանց սրտերը լցվեցին Սուրբ Հոգով, կասկածն ու դժկամությունն անհետացավ։ Աներևակայելիորեն դրսևորված ճշմարիտ երկրպագության շնորհիվ Աստծո Սրբերը երկնային լույս, գիտելիք և զորացած վկայություն ստացան։ Իսկ դա ծնեց հավատք։

Այդ պահից ի վեր Առաքյալները և Սրբերը գործում էին նպատակային վճռականությամբ։ Ողջ աշխարհին նրանք քաջաբար քարոզում էին Քրիստոս Հիսուսի մասին։

Հոգով երկրպագելիս մենք լույս ու ճշմարտություն ենք բերում մեր հոգի, որն էլ ամրացնում է մեր հավատքը։ Դրանք ևս ճշմարիտ երկրպագության անհրաժեշտ բաղադրիչներն են։

Աշակերտություն և գթասրտություն

Մորմոնի Գրքից մենք սովորում ենք, որ երբ Ալմա Կրտսերն ազատվեց իր իսկ ըմբոստության հետևանքների տառապանքներից, նա այլևս նույնը չէր։ Նա համարձակորեն «ճամփորդում էր ողջ . . . երկրով . . . և ողջ ժողովրդի մեջ. . ., . . . եռանդուն ձգտելով փոխհատուցել բոլոր վնասները, որոնք [նա] հասցրել էր եկեղեցուն»։[8]

Ամենազոր Աստծուն մշտապես երկրպագելու արդյունքում նա դարձավ եռանդուն աշակերտ։

Ճշմարիտ երկրպագության արդյունքում մենք դառնում ենք մեր սիրելի Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անկեղծ և եռանդուն աշակերտները։ Մենք փոխվում և ավելի ենք նմանվում Նրան։

Մենք դառնում ենք ավելի հասկացող ու հոգատար, ավելի ներողամիտ և ավելի սիրող։

Մենք հասկանում ենք, որ անհնար է ասել, որ սիրում ենք Աստծուն, և միևնույն ժամանակ ատենք, արհամարհենք և անտեսենք մեր շուրջը գտնվողներին։[9]

Ճշմարիտ երկրպագությունը ծնում է աշակերտի ճանապարհով քայլելու անկոտրում վճռականություն։ Իսկ դա անխուսափելիորեն տանում է դեպի գթասրտություն։ Այս երկուսը ևս երկրպագության բաղադրիչ տարրերն են։

Գոհաբանությամբ մտնք Նրա դռներով

Երբ հիշում եմ այն կիրակի առավոտը, երբ ամեն ինչ ասես սովորական բնույթ էր կրում այդ սովորական ցցի սովորական հավաքատանը, անգամ այսօր սիրտս լցվում է այդ արտասովոր հոգևոր զգացողությունը վերհիշելիս, որը ընդմիշտ կօրհնի իմ կյանքը։

Ես սովորեցի, որ անգամ եթե մեր ժամանակի, կոչումների և հանձնարարությունների մեջ մենք բացառիկ ղեկավարներ ենք, և նույնիսկ ցուցակում մեր անվան առաջ որպես անհատ, ընտանիք կամ ղեկավար դնում ենք «զերազանց» նշանը, բայց եթե մենք թերանում ենք երկրպագել մեր ողորմած Ազատարարին, երկնային Թագավորին և փառահեղ Աստծուն, մենք հիմնականում զրկվում ենք ավետարանի ուրախությունից և խաղաղությունից։

Աստծուն երկրպագելիս մենք ճանաչում և ընդունում ենք Նրան այն նույն ակնածանքով, ինչպես Ամերիկայի հնագույն ժողովուրդն ընդունեց Նրան։ Մենք մոտենում ենք Նրան զմայլանքի և ակնածանքի անզուգական զգացումներով։ Մենք երախտագիտությամբ հիանում ենք Աստծո մեծահոգությամբ։ Ուստի մենք հույս ենք ձեռք բերում։

Մենք խորհում ենք Աստծո խոսքի մասին, և այն լցնում է մեր հոգիները լույսով ու ճշմարտությամբ։ Մենք հիասքանչ հոգևոր հեռապատկերներ ենք տեսնում, որը հնարավոր է տեսնել միայն Սուրբ Հոգու լույսի ներքո։[10] Ուստիև, մենք ձեռք ենք բերում հավատք։

Երկրպագելիս, մեր հոգիները մաքրվում են և մենք պարտավորվում ենք քայլել մեր սիրելի Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի հետքերով։ Եվ այդ վճռականությամբ մենք ձեռք ենք բերում գթասրտություն։

Երկրպագելիս, մենք սրտանց փառաբանում ենք մեր օրհնյալ Աստծուն առավոտյան, կեսօրին և երեկոյան։

Մենք մշտապես սրբացնում և պատվում ենք Նրան մեր հավաքատներում, տներում, տաճարներում և մեր բոլոր գործերում։

Երկրպագելիս, մենք բացում ենք մեր սիրտը Հիսուս Քրիստոսի Քավության բուժիչ զորության հանդեպ։

Մեր կյանքը դառնում է մեր երկրպագության խորհրդանիշն ու մարմնավորումը։

Իմ եղբայրներ և քույրեր, հոգևոր փորձառությունները շատ ավելի քիչ կապ ունեն այն ամենի հետ, ինչ տեղի է ունենում մեր շուրջը և հիմնականում կախված են այն ամենից, ինչ տեղի է ունենում մեր սրտերում։ Իմ վկայությունն է, որ ճշմարիտ երկրպագությունը Եկեղեցու սովորական ժողովը վերածում է արտասովոր հոգևոր խնջույքի։ Այն հարստացնում է մեր կյանքը, ընդլայնում մեր հասկացողությունը և զորացնում մեր վկայությունները։ Քանզի, երբ մեր սրտով դառնում ենք առ Աստված, հնագույն Սաղմոսողի հետ մենք «մտնում ենք նրա դռները գոհությունով, նրա սրահները փառաբանությունով. գոհանում ենք նրանից և օրհնում նրա անունը։

Որովհետև Տերը բարի է և նրա ողորմությունը հավիտյան. և նրա ճշմարտությունը ազգից մինչև ազգ»։[11]

Անկեղծ և սրտաբուխ երկրպագությամբ մենք աճում և հասունանում ենք հույսի, հավատքի և գթասրտության մեջ։ Եվ այդ ընթացքում մեր հոգում հավաքում ենք երկնային լույս, որը աստվածային իմաստ, մշտատև խաղաղություն և հարատև ուրախություն է բերում մեր կյանք։

Սա է մեր կյանքում երկրպագության օրհնությունը։ Այս մասին ես խոնարհ վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 8.17
2. Տես 3 Նեփի 8.23
3. 3 Նեփի 11.10–11
4. 3 Նեփի 11.14, 16–17
5. 3 Նեփի 11.17
6. Վարդապետություն և Ուխտեր 133.39–40
7. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.71, ծանոթագրություն
8. Մոսիա 27.35
9. Տես Ա Հովհաննես 4.20
10. Տես Ա Կորնթացիս 2.14
11. Սաղմոս 100.4–5

Երեց Լին Գ. Ռոբինս
Յոթանասունի նախագահություն

Արդար Դատավորը

Միայն մեկ ճանապարհ կա արդարությամբ դատելու, ինչպես Հիսուս Քրիստոսն է դատում, և դա Նրա նման լինելն է։

Իր մահկանացու կյանքի ընթացքում Հիսուս Քրիստոսը եղել է սիրող դատավոր, արտասովոր իմաստությամբ ու համբերությամբ։ Սուրբ գրություններում Նա հայտնի է որպես «արդար դատավոր» (Բ Տիմոթեոս 4.8, Մովսես 6.57), և Նրա խորհուրդն է մեզ, որ մենք նույնպես «դատենք արդար դատով» (տես Ջոզեֆ Սմիթի թարգմանությամբ Մատթեոս 7.1–2 [Մատթեոս 7.1, ծանոթագրություն *ա*]) և «ապավինե[նք] այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել . . . [և] արդարությամբ դատել» (ՎԵՈՒ 11.12)։

Նեփիացի տասներկուսին տված այս խորհուրդը կօգնի մեզ դատել

այնպես, ինչպես Տերն է դատում. «Դուք պիտի լինեք դատավորներն այս ժողովրդի՝ *համաձայն այն արդարադատության, որ ես կտամ ձեզ,* որը կլինի արդար։ Հետևաբար, ինչպիսի՞մարդ եք դուք պարտավոր լինել։ Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ, ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27, շեշտադրումն ավելացված է)։ Մենք երբեմն մոռանում ենք, որ երբ Նա խորհուրդ տվեց Իր նման լինել՝ խոսում էր այն մասին, թե ինչպես դատել արդար։

Անարդար դատաստան

Անարդար դատաստանի մի ամոթալի օրինակ է կորած ոչխարի առակը, երբ փարիսեցիները և դպիրները սխալ են դատում և՛ Փրկչին, և՛ Նրա հետ ճաշող մարդկանց, ասելով. «Սա ընդունում է մեղավորներին և նորանց հետ ուտում» (Ղուկաս 15.2), անտեսելով այն փաստը, որ հենց իրենք են մեղավորները։ Դատապարտող սրտերի տեր լինելով, դպիրներն ու փարիսեցիները երբեք չեն իմացել, թե որն է կորած ոչխարին փրկելու ուրախությունը։

Կրկին «դպիրներն ու փարիսեցիներն էին», որ «մի կին բերեցին նորա մօտ՝ շնության մեջ բռնված» (Հովհաննես 8.3) տեսնելու, թե արդյոք Նա կդատի նրան՝ համաձայն Մովսեսի օրենքի (տես հատված 5)։ Դուք գիտեք պատմության շարունակությունը, թե ինչպես նա խոնարհեցրեց նրանց անարդար դատելու պատճառով և ինչպես նրանք «իրանց *խղճմտանքիցը* հանդիմանվեցան՝ մէկը մէկի ետևից դուրս էին գնում» (հատված 9, շեշտադրումն ավելացված է)։ Ապա Նա ասաց կնոջը. «Ես էլ չեմ քեզ դատապարտում. գնա, և այսուհետև մեղք մի գործիր։ Եվ կինը փառաբանեց Աստծուն այդ պահից ի վեր և հավատաց նրա անվանը» (Ջոզեֆ Սմիթի թարգմանությամբ Հովհաննես 8.11 [Հովհաննես 8.11, ծանոթագրություն *գ*])։

Յուրաքանչյուրիս մեջ գտնվող բնական տղամարդն ու կինը հակում ունի դատապարտելու ուրիշներին և անարդար դատելու կամ՝ իր կարծիքով արդար։ Դա նույնիսկ տեղի ունեցավ Փրկիչի առաքյալներից երկուսի՝ Հակոբոսի և Հովհաննեսի հետ։ Նրանք զայրացան, երբ Սամարիայի գյուղերից մեկի բնակիչները Փրկիչին անհարգալից վերաբերվեցին (տես Ղուկաս 9.51–54)։

«Երբոր [նրանք] տեսան՝ ասեցին. Տէր՝ կամենո՞ւմ ես ասենք, կրակ իջնէ երկնքիցը և նորանց սատկեցնէ ինչպես Եղիան էլ արավ։

Նա էլ դարձավ՝ սաստեց նորանց և ասեց. Դուք չգիտե՞ք՝ թէ որ հոգու եք դուք։

Որովհետև մարդի Որդին չեկավ՝ մարդկանց հոգիները կորցնելու, այլ ապրեցնելու» (հատվածներ 54–56)։

Այսօրվա «ընդհանուր դատավորները»՝ (ՎԵՈՒ 107.74) մեր եպիսկոպոսներն ու ճյուղերի նախագահները, պետք է խուսափեն նման կերպով դատապարտելուց, ինչպես Հակոբոսն ու Հովհաննեսը արեցին այդ պարագայում։ Արդար դատավորը կարձագանքի խոստովանություններին կարեկցանքով և ըմբռնումով։ Սխալ գործած երիտասարդը, օրինակ, պետք է դուրս գա եպիսկոպոսի սենյակից, զգալով Փրկիչի սերը եպիսկոպոսի միջոցով և պարուրված Քավության բուժող զորությամբ և ուրախությամբ, առանց ամոթանքի կամ արհամարհանքի։ Հակառակ դեպքում, եպիսկոպոսը կարող է ակամա քշել կորած ոչխարներին

ավելի հեռու՝ դեպի անապատ։ (տես Ղուկաս 15.4)։

Կարգապահություն

Այնուամենայնիվ, կարեկցանքը չի չեղարկում կարգապահության անհրաժեշտությունը։ *Կարգապահություն* բառն առաջացել է լատիներեն «*discere*»՝ «սովորել» կամ «*discipulus*»՝ «սովորող» բառերից, որոնք նշանակում են աշակերտ կամ հետևորդ։[1] Աշակերտություն անել Տիրոջ ձևով՝ նշանակում է սիրով և համբերությամբ ուսուցանել։ Մուրբ գրություններում Տերը հաճախ է օգտագործում *խրատել* բառը, երբ խոսում է կարգապահության մասին (տես, օրինակ, Մոսիա 23.21, ՎևՈւ 95.1)։ *Խրատել* բառն առաջացել է լատիներեն «*castus*» բառից, նշանակելով առաքինի կամ մաքուր, իսկ *խրատել* նշանակում է մաքրել։[2]

Աշխարհում աշխարհիկ դատավորն է, որ դատապարտում է մարդուն և *փակում* նրան բանտում։ Հակառակ դրան, Մորմոնի Գիրքն ուսուցանում է մեզ, որ երբ մենք ինքնակամ մեղք ենք գործում, դառնում ենք մեր «սեփական դատավորները» (Ալմա 41.7) և հանձնում ենք ինքներս մեզ հոգևոր բանտին։ Հեգնալի է, որ ընդհանուր դատավորն այս դեպքում կրում է բանալիները, որոնք *բացում են* բանտի դռները, “քանզի խրատելով՝ ես ուղի եմ հարթում բոլոր բաների գայթակղությունից նրանց *ազատելու* համար¦ (ՎևՈւ 95.1, շեշտադրումն ավելացված է)։ Արդար դատի վարույթները ողորմած են, սիրող և փրկող, ո՛չ դատապարտող։

Երիտասարդ Ջոզեֆ Սմիթը չորս տարվա փորձաշրջան անցավ, մինչև կստանար ոսկե թիթեղները, «քանի որ չպահեց Տիրոջ պատվիրանները»։[3] Ավելի ուշ, երբ Ջոզեֆը կորցրեց 116 ձեռագիր էջերը, նա կրկին խրատվեց։ Թեև Ջոզեֆն իսկապես զղջում էր, Տերն, այնուամենայնիվ, հետ էր վերցնում նրա արտոնությունները որոշ ժամանակով, քանի որ ասված է «ում որ սիրում եմ, ես նաև խրատում եմ, որ նրանց մեղքերը ներվեն» (ՎևՈւ 95.1)։

Ջոզեֆն ասել է. «Հրեշտակն ուրախ էր, երբ վերադարձրեց ինձ Ուրիմն

ու Թումմիմը և ասաց, որ Աստված գոհ է ինձանից հավատարիմ ու խոնարհ լինելու համար և սիրում է ինձ *ապաշխարելու* և ջերմեռանդ աղոթքներիս համար»։[4] Քանի որ Տերը ցանկանում էր սովորեցնել Ջոզեֆին սրտի փոփոխության դասը, Նա պահանջեց նրանից ցավագին զոհաբերություն։ Զոհաբերությունը խրատի էական մասն է կազմում։

Զոհաբերություն

«Հնում *զոհաբերությունը* նշանակում էր մի բան կամ մեկին սուրբ դարձնել»[5], ինչը մի առանձին եղանակով կապում է դա *խրատել* բառի նշանակության հետ, այսինքն՝ «մաքրելու»։ Նմանապես, հին Իսրայելում մեղքի կամ հանցանքի համար ներում էին ստանում նվիրաբերման կամ զոհաբերության միջոցով։[6] Զոհաբերությունը ոչ միայն «մատնանշ[ել] դեպի այն մեծ և վերջին զոհաբերությունը» (Ալմա 34.14), այլ նաև օգնեց առաջացնել ավելի խորը երախտագիտություն Փրկիչի Քավության հանդեպ։ Որպես ապաշխարության մաս, մեր կողմից զոհաբերել չկամենալը ծաղրում կամ նսեմացնում է Քրիստոսի ավելի մեծ զոհաբերությունը նույն մեղքի համար և աննշան է դարձնում Նրա տառապանքը, ինչը ապերախտության մի սառնասիրտ դրսևորում է։

Մյուս կողմից, զոհաբերության քաղցր հեգնանքով մենք իրականում *ստանում ենք* մի բան, ինչը հավիտենական արժեք ունի՝ Նրա ողորմությունն ու ներումը և վերջապես «այն ամենն, ինչ Հայրն ունի» (ՎևՈւ 84.38)։ Որպես ապաշխարության գործընթացի մի մաս, զոհաբերությունը բուժող բալասանի պես նույնպես օգնում է փոխարինել «խղճի խայթը» (Ալմա 42.18) «խղճմտանքի խաղաղությամբ» (Մոսիա 4.3)։ Առանց զոհաբերության, մարդը կդժվարանա ներել ինքն իրեն երկար ժամանակ, գիտակցելով, որ ինչ-որ բան չի արվել։[7]

Ծնողը՝ որպես արդար դատավոր

Թեև մեզանից քչերը կկանչվեն լինել ընդհանուր դատավորներ, արդար դատաստանի սկզբունքները կիրառվում են բոլորիս հանդեպ, հատկապես ծնողների, ովքեր ամեն օր հնարավորություն ունեն օգտագործելու այս սկզբունքներն իրենց երեխաների հանդեպ։ Երեխային արդյունավետ ուսուցանելը լավ դաստիարակման բուն էությունն է, իսկ սիրով խրատելը արդար դատավոր լինելու էությունն է։

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Եթե երեխաները հանդուգն ու անկառավարելի են, եղեք համբերատար նրանց հետ, մինչև որ նրանց կգրավեք սիրով . . . և այնուհետև դուք կարող եք նրանց բնավորությունը ձևավորել ձեր ցանկությամբ»։[8]

Խորիմաստ է, որ սովորեցնելով, թե ինչպես դաստիարակել, մարգարեները կարծես թե միշտ վկայակոչում են Քրիստոսանման հատկանիշները։ Վարդապետություն

և Ուխտերը դաստիարակելու վերաբերյալ տալիս է այս հայտնի խորհուրդը.

«Ոչ մի զորություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. Միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով.

Բարությամբ և մաքուր գիտելիքով, որոնք անչափ մեծացնում են հոգին՝ առանց կեղծավորության ու առանց նենգության,—

Ժամանակին խստությամբ հանդիմանելով, երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով. և ապա, դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես» (ՎԱՈ 121.41–43):

Սուրբ գրության այս հատվածը սովորեցնում է մեզ հանդիմանել «երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով», *ոչ* թե զայրույթից դրդված: Սուրբ Հոգին և զայրույթը անհամատեղելի են, քանի որ «նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ» (3 Նեփի 11.29): Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն ուսուցանել է, որ «ոչ բարի բաները սովորաբար չեն ասվում Տիրոջ ոգեշնչման ներքո: Տիրոջ Հոգին բարության հոգի է, այն համբերության հոգի է, այն գթության հոգի է և սիրո ու համբերատարության և երկայնամտության:

. . . Բայց եթե մենք ունենք սխալ գտնելու ոգին. . . . կործանարար ձևով, այն *երբեք* չի գալիս որպես արդյունք մեր Երկնային Հոր Հոգու ընկերակցության և *միշտ* վնասակար է:

. . . Բարությունն այն ուժն է, որն Աստված տվել է մեզ կարծր սրտերը բացելու և համառ հոգիները հնազանդեցնելու համար»:[9]

Մեր երեխաների իրական ինքնությունը

Երբ Փրկիչն այցելեց նեփիացիներին, Նա մի արտառոց բան արեց երեխաների հետ.

«Եվ եղավ այնպես, որ նա սովորեցրեց և ծառայեց այն բազմության երեխաներին. . . . և նա արձակեց նրանց լեզուները, և նրանք ասացին իրենց հայրերին մեծ ու զարմանալի բաներ. . . .

Եվ նրանք թե՛ տեսան, թե՛ լսեցին այդ երեխաներին. այո՛, նույնիսկ մանկիկները բացեցին իրենց բերաններն ու արտաբերեցին զարմանալի բաներ» (3 Նեփի 26.14, 16):

Թերևս մանկիկների *բերանները բացելուց* առավել, Տերը *բացել էր նրանց ապշահար ծնողների աչքերն ու ականջները*: Այդ ծնողներին արտակարգ պարգև էր տրվել՝ մի ակնթարթում տեսնել հավերժությունը և իրենց երեխաների իրական ինքնությունն ու նախաերկրային հասակը: Արդյոք դա ընդմիշտ չէ՞ր փոխի ծնողների վարքը՝ ինչպես են նրանք *նայում* և վերաբերվում իրենց երեխաներին: Ես սիրում եմ Գյոթեի գրչին պատկանող այս վարիացիան. «Այն, թե ինչպես եք նայում [երեխաներին] այն է, թե ինչպես եք վերաբերվում նրանց, իսկ այն, թե ինչպես եք վերաբերվում նրանց, այն է, թե [ով] նրանք կդառնան»:[10] Երեխայի իրական ինքնության մասին հիշելը հեռատեսության պարգև է, որը սրբորեն ոգեշնչում է արդար դատավորի տեսիլքը:

Եզրափակում

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է մեզ. «Երբեք թույլ մի տվեք, որ խնդիրը, որը պետք է լուծել ավելի կարևոր լինի, քան մարդը, ում պետք է սիրել»[11]: Որքա՜ն կարևոր է այս սկզբունքը արդար դատավորներ դառնալու գործում, հատկապես՝ մեր սեփական երեխաների համար:

Կա միայն մեկ ճանապարհ արդարությամբ դատելու, ինչպես Հիսուս Քրիստոսն է դատում, և դա Նրա նման լինելն է: Հետևաբար, «ինչպիսի՞մարդ եք դուք պարտավոր լինել: Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես “disciple,” etymonline.com.
2. Տես *Merriam-Webster's Collegiate Dictionary,* 11th ed. (2003), “chasten.”
3. Karen Lynn Davidson and others, eds., *Histories, Volume 1: Joseph Smith Histories, 1832–1844,* vol. 1 of the Histories series of *The Joseph Smith Papers* (2012), 83.
4. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 71, շեշտադրումն ավելացված է:
5. Սուրբ գրությունների ուղեցույց, «Զոհաբերություն», scriptures.lds.org:
6. Տես Աստվածաշնչի բառարանը, «Զոհաբերություններ»:
7. Ամեն շաբաթ հաղորդության սեղանի մոտ մեր մատուցած զոհաբերությունը կոտրված սիրտն ու փշրված հոգին է (տես 2 Նեփի 2.7, 3 Նեփի 9.20, Վարդապետություն և Ուխտեր 59.8): Կոտրված սիրտը ապաշխարող սիրտն է, փշրված հոգին՝ հնազանդ հոգին (see D. Todd Christofferson, “When Thou Art Converted,” *Liahona,* May 2004, 12).
8. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ.Սմիթ* (1998), 299:
9. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ* (2011), 225, 226, 228, շեշտադրումն ավելացված է:
10. Attributed to Johann Wolfgang von Goethe, brainyquote.com.
11. Թոմաս Ս. Մոնսոն, «Ուրախություն գտնենք ճանապարհին», *Լիահոնա,* նոյ. 2008, 86:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Հանգստության օրը երախտագիտության օր է

Վերջին Օրերի Սրբերի համար Հանգստության օրը երախտագիտության և սիրո օր է։

Ամ սիրելի եղբայրներ և քույրեր, որ սփռված եք ողջ աշխարհի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում, ես երախտապարտ եմ, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խնդրեց ինձ ելույթ ունենալ համաժողովում՝ այս Հանգստության օրը։ Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին իմ խոսքերը հասցնի ձեր սրտերին։

Այսօր ես ցանկանում եմ խոսել սրտի զգացմունքների մասին։ Մի զգացմունքը, որի վրա ես կկենտրոնանամ, երախտագիտությունն է՝ հատկապես Հանգստության օրը։

Մենք երախտապարտ ենք զգում շատ բաների համար. անծանոթի բարության համար, սնունդի համար, երբ քաղցած ենք, մեր գլխավերևում չոր ծածկի համար, երբ փոթորիկներ են բարձրանում, առողջացող կոտրվածքի համար և նորածին երեխայի առողջ ճիչի համար։ Մեզանից շատերն այսպիսի պահերին հիշում են երախտագիտության զգացումը։

Վերջին Օրերի Սրբերի համար Հանգստության օրն այդպիսի պահ է, իրականում՝ երախտագիտության ու սիրո օր։ 1831 թվականին Միսսուրիի Ջեքսոն գավառում Տերը հրահանգեց Սրբերին, որ նրանց աղոթքներն ու շնորհակալությունները պիտի ուղղված լինեն Աստծուն։ Վաղ շրջանի Սրբերին մի հայտնություն տրվեց այն մասին, թե ինչպես Հանգստության օրը սուրբ պահեն, ծոմ պահեն և աղոթեն։[1]

Տերը մեզ ու նրանց ասաց, թե ինչպես երկրպագենք ու շնորհակալություն հայտնենք Հանգստության օրը։ Ինչպես դուք տարբերակում եք, ամենակարևորը սերն է, որը մենք զգում ենք պարգևները տվողների հանդեպ։ Ահա Տիրոջ մի քանի խոսքերն այն մասին, թե ինչպես շնորհակալություն հայտնել և ինչպես սիրել Հանգստության օրը.

«Ուստի, ես նրանց տալիս եմ պատվիրան, ասելով այսպես. Սիրի՛ր Տիրոջը՝ քո Աստծուն, քո ողջ սրտով, քո ողջ զորությամբ, մտքով և ուժով. և Հիսուս Քրիստոսի անունով ծառայիր նրան։ . . .

Գոհություն հայտնիր Տիրոջը՝ քո Աստծուն, բոլոր բաներում։

Արդարությամբ զոհ մատուցիր Տիրոջը՝ քո Աստծուն, այսինքն՝ կոտրված սրտի ու փշրված հոգու զոհը»։[2]

Իսկ հետո Տերը շարունակում է, զգուշացնելով այն վտանգի մասին, որ չպիտի թերանանք շնորհակալություն հայտնել Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին՝ որպես այդ պարգևները տվողների։ «Եվ ոչնչով մարդ չի վիրավորում Աստծուն կամ ոչ ոքի հանդեպ նրա ցասումը չի բռնկվում, բացի նրանցից, ովքեր չեն խոստովանում նրա ձեռքը բոլոր բաներում և չեն հնազանդվում նրա պատվիրաններին»։[3]

Ձեզանից շատերն արդեն ուրախություն են գտնում Հանգստության օրը՝ որպես Աստծուն հիշելու և օրհնությունների համար շնորհակալություն հայտնելու օր։ Դուք հիշում եք ծանոթ երգը.

Կյանքի փոթորիկը երբ ցնցում է քեզ,
Երբ թվում է, թե ամեն ինչ կորցրել ես,
Օրհնություններդ հաշվիր, թվիր մեկ առ մեկ,
Եվ դու կզարմանաս, թե ինչ շատ ունես։

Օրհնություններդ
Հաշվիր,
Թվիր,
Տես, թե Աստված ինչ է տվել քեզ։ . . .

Հոգսերն են արդյոք քեզ անհանգստացնում,
Խաչը, որ տանում ես, քեզ ծանր է թվում,
Օրհնություններդ հաշվիր, թվիր մեկ առ մեկ,
Եվ դու ուրախ կերգես զիշեր ու ցերեկ։[4]

Ես նամակներ եմ ստանում Վերջին Օրերի հավատարիմ Սրբերից, ովքեր կքած են հոգսերի բեռի տակ։ Ոմանք համարյա այնպիսի զգացում ունեն, որ առնվազն ամեն ինչ կորած է իրենց համար։ Ես հուսով եմ և աղոթում եմ, որ այն, ինչ ես ասում եմ Հանգստության օրը երախտապարտ լինելու մասին, կօգնի ցրել կասկածները, և ձեր սրտերը կերգեն։

Մի օրհնություն, որի համար մենք կարող եք երախտապարտ լինել, այն

է, որ հնարավորություն ունենք մասնակցելու հաղորդության ժողովին՝ Նրա մեկ կամ երկու հետևորդների հետ, Նրա անունով: Կան մարդիկ, ովքեր իրենց տներում են և անկարող են վեր կենալ անկողնուց: Կան մարդիկ, ովքեր կկամենային այնտեղ լինել, որտեղ մենք ենք, բայց փոխարենը ծառայում են հիվանդանոցներում, ապահովում հասարակության անվտանգությունը կամ պաշտպանում մեզ, վտանգի ենթարկելով իրենց կյանքը՝ ինչ-որ տեղ անապատում կամ ջունգլիներում: Փաստը, որ մենք կարող եք գոնե մեկ ուրիշ Սրբի հետ միասին հաղորդություն ընդունել, կօգնի մեզ երախտագիտություն ու սեր զգալ Աստծո բարության հանդեպ:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի և վերականգնված ավետարանի մեկ այլ օրհնությունը, որը մենք կարող ենք հաշվել, այն է, որ ամեն շաբաթ մենք հնարավորություն ունենք ընդունել հաղորդությունը, որը պատրաստվում, օրհնվում և բաժանվում է Աստծո լիազորված ծառաների կողմից: Դուք կարող եք երախտապարտ լինել, երբ Սուրբ Հոգին հաստատում է մեզ, որ հաղորդության աղոթքի բառերը, որոնք ասվում են լիազորված քահանայություն կրողների կողմից, շնորհված են մեր Երկնային Հոր կողմից:

Բոլոր օրհնություններից մեկը, որը մենք կարող ենք հաշվել, ամենամեծն անշուշտ ներման զգացումն է, որը համակում է մեզ, երբ ընդունում ենք հաղորդությունը: Մենք ավելի մեծ սեր ու գնահատանք կզգանք Փրկիչի հանդեպ, ում անսահման զոհաբերությունը հնարավոր դարձրեց, որ մենք մաքրվենք մեղքից: Երբ մենք ճաշակում ենք հացն ու ջուրը, մենք հիշում ենք, որ Նա տառապեց մեզ համար: Իսկ երբ մենք երախտագիտություն ենք զգում այն ամենի համար, ինչ Նա արել է մեզ համար, մենք կզգանք Նրա սերը մեր հանդեպ և մեր սերը Նրա հանդեպ:

Սիրո օրհնությունը, որ մենք ստանում ենք, մեզ համար կհեշտացնի պահելու «միշտ հիշեք նրան» պատվիրանը:[5] Դուք կարող եք նույնիսկ սեր ու երախտագիտություն զգալ, ինչպես ես եմ զգում Սուրբ Հոգու հանդեպ, ում հավատարմության մասին Երկնային Տերը խոստացել է, որ միշտ մեզ հետ կլինի, եթե մենք հավատարիմ մնանք մեր կապած ուխտերին: Մենք կարող եք հաշվել այդ օրհնությունները ամեն կիրակի և երախտապարտ զգալ:

Հանգստության օրը նաև կատարյալ ժամանակ է հիշելու Աստծո զավակներին սիրելու և ծառայելու ուխտի մասին, որը մենք կապել եք մկրտության ջրերում: Հանգստության օրը այդ ուխտի կատարումը իր մեջ կներառի մասնակցությունը դասին կամ քվորումին՝ սրտի ողջ նվիրումով, որպեսզի հավատ ու սեր կառուցենք մեր եղբայրների ու քույրերի միջև, ովքեր այնտեղ մեզ հետ են: Այդ խոստումը կարող է ընդգրկել նաև ցանկացած կոչման հրաշալի կատարումը:

Ես երախտապարտ եմ այն բազմաթիվ կիրակիների համար, երբ ուսուցանում էի սարկավագների քվորումում Յուտայի Բաունթիֆուլ քաղաքում, ինչպես նաև Կիրակնօրյա դպրոցում՝ Այդահոյում: Եվ ես նույնիսկ հիշում եմ այն ժամանակները, երբ որպես իմ կնոջ օգնական, ծառայում էի երեխաների խմբում, որտեղ իմ հիմնական աշխատանքը խաղալիքները բաժանելն ու հավաքելն էր:

Տարիներ հետո Հոգու միջոցով ես հասկացա, որ Տիրոջ համար կատարվող իմ պարզ ծառայությունը կարևոր էր Երկնային Հոր զավակների կյանքում: Ի զարմանս ինձ, նրանցից ոմանք հիշում ու շնորհակալություն էին հայտնում ինձ՝ անփորձ պատանու այն ջանքերի համար, ով Հանգստության օրը ծառայում էր իրենց Ուսուցչի անունից:

Ինչպես մենք երբեմն չենք կարող տեսնել Հանգստության օրը կատարած մեր ծառայության արդյունքները, այնպես էլ չենք կարող տեսնել Տիրոջ այլ ծառաների միասնական ներգործությունը: Բայց Տերը լուռ, առանց հանրայնացնելու կառուցում է Իր արքայությունը Իր հավատարիմ ու խոնարհ ծառաների միջոցով՝ դեպի դրա փառավոր հազարամյակի ապագան: Սուրբ Հոգու ուղեկցությամբ մենք կարող ենք տեսնել այդ աճող վեհությունը:

Ես մեծացել եմ, հաճախելով Նյու Ջերսիի մի փոքրիկ ճյուղի հաղորդության ժողովներին, որը բաղկացած էր ընդամենը մի քանի անդամներից և իմ ընտանիքից: Յոթանասունհինգ տարի առաջ ես մկրտվեցի Եկեղեցու կողմից կառուցված միակ ժողովատանը, որը միակն էր Փենսիլվանիայում և Նյու Ջերսիում: Սակայն Փրինքթոնի Նյու Ջերսիում, որտեղ մի փոքրիկ ճյուղ էր, այժմ կան երկու մեծ ծուխ: Իսկ ընդամենը մի քանի օր առաջ հազարավոր երիտասարդներ անցկացրին տոնակատարություն, որը նախորդեց Ֆիլադելֆիա Փենսիլվանիա Տաճարի նվիրագործմանը:

Երբ երիտասարդ տղամարդ էի, ես կանչվեցի որպես շրջանի միսիոներ Ալբուկերկեի Նյու Մեքսիկո

քաղաքի միակ եկեղեցում, որտեղ մենք երկրպագում էինք կիրակի օրը: Այսօր այնտեղ մի տաճար կա ու չորս ցից:

Ուսման նպատակով Ալբուկերկեից մեկնեցի Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքը: Այնտեղ կար միայն մի եկեղեցի և մի շրջան, որն ընդգրկում էր Մասաչուսեթսի տարածքի մեծ մասը և Ռոդ Այլենդը: Ես մեքենայով ճամփորդում էի այդ գեղեցիկ երկրի սարերով, որպեսզի մասնակցեի փոքր ճյուղերի հաղորդության ժողովներին, որոնք գտնվում էին վարձված շենքերում կամ հարմարեցված տներում: Այժմ Մասաչուսեթս նահանգի Բելմոնտ քաղաքում կա Աստծո սուրբ տաճար և ցցեր, որոնք ցրված են գյուղական վայրերում:

Ես այն ժամանակ հստակ տեսնում էի, որ այդ փոքրիկ հաղորդության ժողովներին Տերը հեղում էր Իր Հոգին մարդկանց վրա: Ես զգում էի դա, բայց չէի տեսնում Տիրոջ նպատակի չափերն ու ժամկետները, որպեսզի կառուցեր ու փառավորեր Իր արքայությունը: Մի մարգարե հայտնությամբ տեսավ ու գրառեց այն, ինչ հիմա մենք ինքներս կարող ենք տեսնել: Նեփիին ասաց, որ մեր ընդհանուր թիվը մեծ չի լինի, բայց միասնական լույսը տեսանելի կլինի.

«Եվ եղավ այնպես, որ ես տեսա Աստծո Գառի եկեղեցին և այն թվով փոքր է: . . .

Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:[6]

Այս տնտեսությունում նման մի մարգարեական նկարագրություն կա մեր պայմանների ու ապագա հնարավորությունների մասին, որը շարադրված է Վարդապետություն և Ուխտերում.

«Դուք դեռ չեք հասկացել, թե որքան մեծ օրհնություններ ունի Հայրն իր ձեռքում և ձեզ համար պատրաստած.

«Եվ դուք չեք կարող տանել բոլոր բաներն այժմ. այնուամենայնիվ, ուրախ եղեք, քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ: Արքայությունը ձերն է և նրա օրհնությունները ձերն են, և հավերժության հարստությունները ձերն են:

«Եվ նա, ով ընդունում է բոլոր բաները *զոհությամբ*, պիտի փառավորվի. և այս աշխարհի բաները պիտի ավելացվեն նրա համար, նույնիսկ հարյուրապատիկ, այո, ավելի շատ»:[7]

Ես զգացել եմ, որ Աստծո սիրո և օրհնությունների համար աճող երախտագիտության փոխակերպումն աճում է ողջ Եկեղեցում: Թվում է, որ այն արագանում է Եկեղեցու անդամների մեջ այնպիսի ժամանակներում ու տեղերում, որտեղ փորձվում է նրանց հավատը, որտեղ նրանք ստիպված էին օգնություն խնդրել Աստծուց առաջ գնալու համար:

Ժամանակները, որոնց միջով մենք կանցնենք, իրենց հետ ծանր փորձություններ կբերեն, ինչպես որ բերեցին Ալմայի ժողովրդին դաժան Ամուղոնի տիրապետության տակ, ով այնքան ծանր բեռներ էր դնում նրանց մեջքին, որ անհնար էր տանել.

«Եվ եղավ այնպես, որ Տիրոջ ձայնը եկավ նրանց իրենց չարչարանքների մեջ՝ ասելով. Բարձրացրեք ձեր գլուխները և հանգիստ եղեք, քանզի ես գիտեմ ուխտի մասին, որը դուք արել եք ինձ հետ. և ես կուխտեմ իմ ժողովրդի հետ ու կազատեմ նրանց ճորտությունից:

Եվ ես նաև կթեթևացնեմ բեռները, որոնք դրվել են ձեր ուսերին, որպեսզի դուք մինչև անգամ չզգաք դրանք ձեր մեջքին, նույնիսկ մինչ դուք ճորտության մեջ եք. և սա ես կանեմ, որպեսզի հետագայում դուք կարողանաք կանգնել որպես վկաներ ինձ համար, և որպեսզի դուք կարողանաք հաստատ իմանալ, որ ես՝ Տեր Աստվածս, այցելում եմ իմ ժողովրդին իրենց չարչարանքների մեջ:

Եվ արդ, եղավ այնպես, որ բեռները, որոնք դրվել էին Ալմայի ու նրա եղբայրների վրա, թեթևացան. այո՛, Տերն ուժեղացրեց նրանց, որ նրանք կարողանային իրենց բեռները հեշտությամբ տանել, և նրանք զվարթությամբ ու համբերությամբ հնազանդվեցին Տիրոջ ողջ կամքին»:[8]

Ես և դուք վկայություն ունենք, որ երբ մենք պահել ենք Աստծո հետ կապած մեր ուխտերը, հատկապես, երբ դժվար էր դա անել, Նա լսել է մեր երախտագիտության աղոթքներն այն ամենի համար, ինչ Նա արդեն արել է և պատասխանել է, երբ մեր աղոթքներում զորություն ու հավատարմությամբ տոկալու ուժ ենք խնդրել: Եվ շատ անգամներ Նա մեզ առույգացրել և ուժ է տվել:

Ձեզ երևի շատ կհետաքրքրի, թե դուք ինչ կարող եք անել, որպեսզի ապրեք ու երկրպագեք այս Հանգստության օրը, որպեսզի արտահայտեք ձեր երախտագիտությունը

ու զորացնեք ձեզ և ուրիշներին՝ գալիք փորձություններին դիմակայելու համար:

Դուք կարող եք սկսել այսօր՝ անձնական և ընտանեկան աղոթքով, շնորհակալություն հայտնելով այն ամենի համար, ինչ Աստված արել է ձեզ համար: Կարող եք աղոթել, որպեսզի իմանաք, թե Տերն ինչ կցանկանար, որ դուք անեիք Իրեն և ուրիշներին ծառայելու համար: Հատկապես, դուք կարող եք աղոթել, որպեսզի Սուրբ Հոգին տեղեկացնի ձեզ այն մարդու մասին, ով մենակ է կամ կարիքի մեջ, ում մոտ Տերը կուղարկեր ձեզ:

Ես կարող եմ խոստանալ ձեզ, որ դուք կստանաք ձեր աղոթքների պատասխանը, և երբ գործեք ըստ ձեր ստացած պատասխանների, ուրախություն կգտնեք Հանգստության օրվա մեջ և ձեր սրտերը կողողվեն երախտագիտությամբ:

Ես վկայում եմ, որ Հայր Աստվածը ճանաչում ու սիրում է ձեզ: Փրկիչը՝ Տեր Հիսուս Քրիստոսը, հատուցել է ձեր մեղքերի համար, քանի որ սիրում է ձեզ: Հայրը և Որդին, գիտեն ձեր անունը, ինչպես գիտեին Մարգարե Ջոզեֆի Սմիթի անունը, երբ հայտնվեցին նրան: Ես վկայում եմ, որ սա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցին է, և Նա կպատվի ու կնորոգի այն ուխտերը, որոնք դուք կապել եք Աստծո հետ: Ձեր բնույթը կփոխվի և դուք ավելի կնմանվեք Փրկիչին: Դուք պաշտպանված կլինեք գայթակղություններից ու ճշմարտության մասին կասկածի զգացումներից: Դուք ուրախություն կգտնեք Հանգստության օրվա մեջ: Ես խոստանում եմ ձեզ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 59:
2. Վարդապետություն և Ուխտեր 59.5, 7–8:
3. Վարդապետություն և Ուխտեր 59.21:
4. «Օրհնություններդ հաշվիր» *«Հիմներ և մանկական երգեր»*, էջ 8:
5. Մորոնի 4.3, 5.2, Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79:
6. 1 Նեփի14.12, 14:
7. Վարդապետություն և Ուխտեր 78.17–19:
8. Մոսիա 24.13–15:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորում

«Եթե ինձ գիտենայիք»

Մենք Փրկիչի մասին միայն գիտե՞նք, թե աստիճանաբար ճանաչում ենք Նրան: Ինչպե՞ս ենք ճանաչում Տիրոջը:

Որպես Լեռան Քարոզի եզրափակիչ մաս՝ Փրկիչն ընդգծեց այն հավերժական ճշմարտությունը, որ «միայն Հոր կամքը կատարելու դեպքում է մարդը ստանում Որդու փրկություն պարգևող շնորհը»:[1]

Նա ասել է.

«Ոչ թէ ամեն ինձ Տէ՛ր, Տէ՛ր ասողը կմտնէ երկնքի արքայութիւնը. այլ նա որ կատարում է իմ Հօր կամքը, որ երկնքումն է:

Շատերը կասեն ինձ այն օրը, Տէ՛ր, Տէ՛ր, չէ՞ որ քո անունովը մարգարէացանք, և քո անունովը դևեր հանեցինք, և քո անունովը շատ զօրութիւններ գործեցինք:

Եւ ես այն ժամանակ պարզ կասեմ նորանց, թե՝ երբէք ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք, ով անօրէնութիւն գործողներ»:[2]

Այս ուսուցման մասին մեր հասկացողությունն ընդարձակվում է, երբ մենք խորհում ենք այս տեքստի ոգեշնչված վերափոխման մասին: Իմաստալից է, որ Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակում «երբէք ձեզ չեմ ճանաչել» արտահայտությունը Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ փոխվել է «Դուք ինձ երբեք չեք ճանաչել» արտահայտությամբ:[3]

Մտածեք նաև տաս կույսերի առակի մասին: Հիշեք, որ հինգ հիմար ու անպատրաստ կույսերը գնացին իրենց լամպերում յուղ առնելու, երբ լսեցին փեսային տեսնելու աղաղակը:

«Եւ երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկաւ. և պատրաստները նորա հետ հարսանիքը մտան, և դուռն փակուեցաւ:

Եւ յետոյ այն միւս կոյսերն էլ եկան և ասեցին. Տէր, Տէր բաց մեզ:

Նա էլ պատասխանեց և ասեց. ճշմարիտ ասում եմ ձեզ, ես չեմ ճանաչում ձեզ»:[4]

Այս առակի նշանակությունը մեզանից յուրաքանչյուրի համար ընդարձակվում է մեկ այլ ոգեշնչված վերափոխման շնորհիվ: Նշանակալից

է, որ Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակում «ես չեմ ճանաչում ձեզ» արտահայտությունը Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ փոխվել է «Դուք ինձ չեք ճանաչում» արտահայտությամբ:[5]

«Դուք ինձ երբեք չեք ճանաչել» և «Դուք ինձ չեք ճանաչում» արտահայտությունները մեզանից յուրաքանչյուրի համար պետք է հանդիսանան խորհիր հոգևոր ինքնագնահատում կատարելու առիթ: Մենք Փրկիչի մասին միայն գիտե՞նք, թե աստիճանաբար ճանաչում ենք Նրան: Ինչպե՞ս ենք ճանաչում Տիրոջը: Իմ ուղերձը կենտրոնանում է հոգու այս հարցերի շուրջ: Ես իմ ողջ սրտով հրավիրում եմ, որ մեզ հետ լինի Սուրբ Հոգու աջակցությունը՝ մինչ մենք միասին կխորհենք այս կարևոր թեմայի շուրջ:

Սկսենք ճանաչել

Հիսուսն ասել է.

«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով:

Եթէ ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կգիտենայիք»:[6]

Մենք սկսում ենք ճանաչել Հորը, երբ սկսում ենք ճանաչել Նրա Միրելի Որդուն:

Մահկանացու կյանքի ամենակարևոր նպատակներից մեկը ոչ միայն Հոր Միածնի մասին իմանալն է, այլ Նրան ճանաչել ձգտելը: Ահա չորս կարևոր քայլ, որոնք կարող են օգնել մեզ ճանաչել Տիրոջը. դրանք են՝ հավատք գործադրել Նրա հանդեպ, հետևել Նրան, ծառայել Նրան և հավատալ Նրան:

Հավատք գործադրել Նրա հանդեպ

Հավատք գործադրել Հիսուս Քրիստոսի հանդեպ նշանակում է ապավինել Նրա արժանիքներին, ողորմությանն ու շնորհին:[7] Մենք սկսում ենք ճանաչել Փրկիչին, երբ արթնացնում ենք մեր հոգևոր ունակություններն ու փորձարկման ենթարկում Նրա ուսմունքները՝ նույնիսկ մինչև որ կարողանանք մեր կյանքում տեղ տալ Նրա խոսքերին:[8] Երբ Տիրոջ հանդեպ մեր հավատքը մեծանում է, մենք ապավինում ենք Նրա քավող, բժշկող ու մեզ ամրացնող զորությանը:

Ճշմարիտ հավատքը հիմնված է Տիրոջ վրա և միշտ առաջնորդում է մեզ դեպի արդարակեցություն: «[Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը հանդիսանում է] ճշմարիտ կրոնի առաջին սկզբունքը, . . . ողջ արդարակեցության հիմքը . . . և բոլոր բանականությունների գործողության սկզբունքը»:[9] Քանի որ Հիսուս Քրիստոսի կողմից հռչակված ճշմարիտ սկզբունքներին համաձայն գործելն էական է ճշմարիտ հավատքի ձեռք բերման ու գործադրման համար, ապա «հավատքն առանց գործերի մեռած է»:[10] Մենք պետք է լինենք «խօսքը անող, և ոչ միայն լսողներ»:[11]

Աստծո խոսքը լսելն ու Փրկիչի հանդեպ հավատքի հոգևոր պարգևը ստանալը սերտորեն փոխկապակցված են, քանի որ «հավատքը լսելուցն է, և լսելը՝ Աստուծոյ խօսքիցը»:[12] Մենք ծանոթանում ենք Նրա հետ ու ճանաչում ենք Նրա ձայնը, երբ կարդում ու սնվում ենք սուրբ գրություններում գտնվող Նրա խոսքերով,[13] անկեղծ միտումով աղոթում ենք Հորը Նրա անունով[14] և ձգտում ենք ունենալ Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը:[15] Հիսուս Քրիստոսի վարդապետությունը սովորելն ու մեր կյանքում կիրառելը հանդիսանում է անհրաժեշտ նախապայման Նրա հանդեպ հավատքի պարգևը ստանալու համար:[16]

Տիրոջ հանդեպ հավատք գործադրելը նախապատրաստում է մեզ հետևել Նրան:

Հետևել Նրան

«Եւ Յիսուսը Գալիլեացիների ծովի եզրումը ման գալիս՝ տեսաւ երկու եղբարց՝ Սիմօնին որ Պետրոս է կոչուած, և նորա Անդրէաս եղբօրը, որ ուռկան էին գցում ծովը, որովհետև ձկնորս էին.

Եւ ասեց նորանց. Իմ ետևից եկէք, և ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ:

Եւ նորանք շուտով իրանց ուռկանները թողած նորա ետևից գնացին»:[17]

Պետրոսն ու Անդրեասը հանդիսանում են Վարդապետին լսելու ու Նրան հետևելու հրաշալի օրինակներ:

Փրկիչը նույն կերպ կանչում է ձեզ և ինձ. «Եթէ մէկը կամենում է իմ ետևից գալ, թող իր անձն ուրանայ

և իր խաչն առնէ, և իմ ետևից գայ»:[18] Իր խաչը վերցնելն ամեն անաստվածությունից և ամեն աշխարհիկ ցանկությունից հրաժարվելն է և Տիրոջ պատվիրանները պահելը:[19]

Փրկիչը մեզ հորդորել է լինել Իր նման:[20] Այսպիսով, հետևել Տիրոջը նշանակում է հետամուտ լինել Նրա օրինակին: Մենք շարունակում ենք ճանաչել Տիրոջը, երբ Նրա Քավության զորությամբ ձգտում ենք նմանվել Նրան:

Իր մահկանացու կյանքի ծառայության ընթացքում Հիսուսը մեզ ցույց տվեց ճանապարհը, առաջնորդեց մեզ ու սահմանեց կատարյալ օրինակ: «Նրա բնավորության, արժանիքների ու հատկանիշների մասին ճիշտ պատկերացում ունենալը»[21] տալիս է մեզ հարատև նպատակ ու պարզ առաջնորդություն, երբ մենք հետևում ենք Նրան որպես անձվեր հետևորդ:

Փրկիչին հետևելը մեզ նաև օգնում է լիարժեք հասկանալ, թե արդյոք մեր կյանքի ընտրած ճանապարհը համահունչ է Աստծո կամքի հետ:[22] Նման գիտելիքն անհայտ առեղծված չէ և կենտրոնացած չէ առաջին հերթին մեր ժամանակավոր ձգտումների կամ մահկանացու կյանքի հոգսերի վրա: Այլ կայուն և անընդհատ առաջընթացը, կապած ու պահած ուխտերի հետ մեկտեղ, հանդիսանում է կյանքի այն ընթացքը, որը հաճելի է Նրան:

Մորմոնի Գրքում Լեքիի երազը բացահայտում է այն ուղղին, որին պետք է հետևենք, այն դժվարությունները, որոնք պետք է հաղթահարենք և այն հոգևոր աղբյուրները, որոնք օգնում են մեզ հետևել մեր Փրկիչին ու մոտենալ Նրան: Այն, ինչ Նա կամենում է, որ մենք անենք, դա նեղ ու անձուկ արահետով առաջ մղվելն է: Ծառի պտուղից ճաշակելը և խորապես «առ Տերը դարձի գալը»[23] այն օրհնություններն են, որոնք Նա ի սրտե ցանկանում է, որ մենք ստանանք: Հետևաբար, Նա ձեռքով նշան է անում. «Եկ հետևիր ինձ»:[24]

Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելն ու Նրան հետևելը նախապատրաստում է մեզ ծառայել Նրան:

Ծառայել Նրան

«Քանզի ի՞նչպես է մարդ ճանաչում իր տիրոջը, որին նա չի ծառայել, և որն օտար է նրան և հեռու է նրա սրտի մտքերից և խորհուրդներից»:[25]

Մենք Տիրոջն ավելի լիարժեք ենք ճանաչում, երբ ծառայում ենք Նրան ու աշխատում ենք Նրա արքայությունում: Երբ մենք այդպես ենք վարվում, Նա մեզ առատորեն օրհնում է երկնային աջակցությամբ, հոգևոր պարգևներով ու ավելի մեծ ունակություններով: Մենք երբեք մենակ չենք, երբ մասնակցում ենք Նրա գործին:

Նա հայտնել է. «Քանզի ես կգնամ ձեր առջևից: Ես կլինեմ ձեր աջ կողմում և ձեր ձախ կողմում, և իմ Հոգին կլինի ձեր սրտերում, և իմ հրեշտակները՝ ձեր շուրջը, որ բարձրացնեն ձեզ»:[26]

Մենք սկսում ենք ճանաչել Փրկիչին, երբ ջանք չենք խնայում լինելու այնտեղ, որտեղ Նա կամենում է, որ լինենք, երբ ձգտում ենք ասել այն, ինչ Նա ուզում է, որ ասենք, և դառնում ենք այն, ինչ Նա ուզում է, որ լինենք:[27] Երբ մենք հնազանդորեն ընդունում ենք մեր կախումը Նրանից, Նա ընդարձակում է մեր ունակությունը, որպեսզի էլ ավելի արդյունավետ ծառայենք, քան երբևէ: Աստիճանաբար մեր ցանկություններն ավելի են հավասարվում Նրա ցանկություններին, և Նրա նպատակները դառնում են մեր նպատակները, այնպես, որ մենք «չենք] խնդրի այն, ինչը հակառակ է [Նրա] կամքին»:[28]

Նրան ծառայելը պահանջում է մեր ողջ սիրտը, զորությունը, միտքը և ուժը:[29] Ուստի, ուրիշներին անձնուրաց կերպով ծառայելը ոչնչացնում է բնական մարդու եսակենտրոն և ինքնասեր միտումները: Նրանց, ում ծառայում ենք, ավելի շատ ենք սիրում: Եվ քանի որ ուրիշներին ծառայելով ծառայում ենք Աստծուն, մենք ավելի խորն ենք սիրում Նրան և մեր եղբայրներին ու քույրերին: Նման սերը գթության՝ նույնիսկ Քրիստոսի մաքուր սիրո պարգևի դրսևորումն է:[30]

«Աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են. որ դուք կարողանաք դառնալ Աստծո որդիները. որպեսզի երբ նա հայտնվի, մենք լինենք նրա նման. քանզի մենք պիտի տեսնենք նրան, ինչպես որ ինքն է. որ մենք կարողանանք ունենալ այդ հույսը. որ մենք կարողանանք մաքրվել, ճիշտ ինչպես նա է մաքուր»:[31]

Մենք ճանաչում ենք Տիրոջը, երբ լցվում ենք Իր սիրով:

Հավատալ Նրան

Արդյոք հնարավո՞ր է հավատք գործադրել Նրա հանդեպ, հետևել Նրան, ծառայել Նրան, սակայն չհավատալ Նրան:

Ես ճանաչում եմ Եկեղեցու անդամների, ովքեր սուրբ գրություններում եղած, ինչպես նաև այս ամբիոնից հայտարարված վարդապետություններն ու սկզբունքներն ընդունում են որպես ճշմարտություն: Սակայն, այնուամենայնիվ, նրանք դժվարանում են հավատալ, որ ավետարանի այդ ճշմարտությունները հատկապես կիրառելի են իրենց կյանքում և հանգամանքներում: Թվում է, թե նրանք ունեն հավատք Փրկիչի հանդեպ, սակայն չեն հավատում, որ Նրա խոստացած օրհնությունները մատչելի են իրենց համար, կամ կարող են գործել իրենց կյանքում: Ես նաև հանդիպում եմ եղբայրների ու քույրերի, ովքեր պատրաստակամորեն կատարում են իրենց ծառայությունները, սակայն վերականգնված ավետարանն իրենց կյանքում դեռ չի դարձել ապրող և փոխակերպող իրականություն: Մենք ճանաչում ենք Տիրոջը, երբ ոչ միայն հավատում ենք, որ Նա կա, այլ հավատում ենք Նրան ու Նրա հավաստիացումներին:

Նոր Կտակարանում մի հայր Փրկիչին խնդրեց բժշկել իր տղային: Հիսուսը պատասխանեց.

«Եթէ կարող ես հավատալ, ամեն բան կարելի է հաւատացողին:

Եվ շուտով տղայի հայրն աղաղակեց և արտասուքով ասեց, հավատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգնիր»:[32]

Ես բազմիցս խորհել եմ այս հոր խնդրանքի մասին, որն ասում է. «Իմ անհաւատութեանն օգնիր»: Ինձ հուզում է, արդյոք այս մարդու խնդրանքի նպատակն առաջին հերթին իրեն օգնելը չէր, որպեսզի հավատար Հիսուսին որպես մեր Քավիչ, ու Նրա բժշկող զորությանը: Նա գուցե արդեն ընդունել էր Քրիստոսին որպես Աստծո Որդի: Սակայն, հավանաբար, օգնության կարիք ուներ, որպեսզի հավատար, որ Վարդապետի բժշկող զորությունն իսկապես կարող էր լինել այդքան անհատականացված ու անձնական, որպեսզի օրհներ իր սիրելի որդուն: Նա գուցե հավատում էր Քրիստոսին ընդհանուր առմամբ, սակայն դեռ չէր հավատում, որ Քրիստոսի զորությունը կարող է գործել այդքան անհատապես:

Մենք հաճախ վկայում ենք այն մասին, ինչը գիտենք, որ ճշմարիտ է, սակայն գուցե մեզանից յուրաքանչյուրի համար ավելի կարևոր հարցը կայանում է նրանում, թե արդյոք հավատում ենք մեր գիտեցածին:

Քահանայության պատշաճ զորությամբ կատարած սրբազան արարողություններն անհրաժեշտ են Փրկիչին հավատալու, Նրան ճանաչելու և, վերջիվերջո, մեր գիտեցածին հավատալու համար:

«Եվ [Մելքիսեդեկյան] քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ *Աստծո գիտության բանալիները:*

Հետևաբար, նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության զորությունը»:[33]

Մենք հավատում ու ճանաչում ենք Տիրոջը, երբ Աստծո գիտության բանալին, սպասավորելով Մելքիսեդեկյան Քահանայության զորությամբ, բացում է դուռը և մեզանից յուրաքանչյուրի համար հնարավոր է դարձնում աստվածային զորություն ստանալ մեր կյանքում: Մենք հավատում ու ճանաչում ենք Փրկիչին, երբ հետևում ենք Նրան՝ ստանալով ու հավատարմորեն պահելով սրբազան արարողություններն ու աստիճանաբար Նրա պատկերը մեր դեմքին փոխանցելով:[34] Մենք հավատում և ճանաչում ենք Քրիստոսին, երբ անհատապես զգում ենք Նրա Քավության փոխակերպող, բժշկող, ամրացնող և սրբագործող զորությունը: Մենք հավատում և ճանաչում ենք Վարդապետին, երբ «նրա խոսքի զորությունն [արմատներ է տալիս] մեր մեջ»,[35] գրվում է մեր մտքերում և սրտերի վրա,[36] և մենք «կիրաժարվենք [մեր] բոլոր մեղքերից՝ [Նրան] գիտենալու համար»:[37]

Նրան հավատալ նշանակում է վստահել, որ Նրա առատ օրհնությունները հասանելի ու կիրառելի են մեր անձնական կյանքում ու մեր ընտանիքներում: Մենք մեր ողջ հոգով[38] կարող ենք հավատալ Նրան, երբ առաջ մղվենք ուխտի մեր արահետով, մեր կամքը Նրա կամքին հանձնենք ու հնազանդվենք մեզ համար Նրա առաջնահերթությանն ու ժամանակի ընտրությանը: Նրան հավատալը՝ որպես ճշմարտություն ընդունելով Նրա զորությունն ու խոստումները, հեռանկար, խաղաղություն ու ուրախություն է բերում դեպի մեր կյանք:

Խոստում և վկայություն

Ապագայում մի օր «ամեն ծունկ պիտի ծալվի, և ամեն լեզու պիտի խոստովանի»,[39] որ Հիսուսը Քրիստոսն է: Այդ հրաշալի օրը մենք կիմանանք, որ Նա մեզանից յուրաքանչյուրիս անունով է ճանաչում: Եվ ես վկայում ու խոստանում եմ, որ մենք ոչ միայն կարող ենք իմանալ Տիրոջ մասին, այլ կարող ենք ճանաչել Նրան, եթե հավատք գործադրենք Նրա հանդեպ, հետևենք, ծառայենք ու հավատանք Նրան: Սա իմ վկայությունն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd ed. (1916), 245–46.
2. Մատթեոս 7.21–23:
3. Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 7.33 (Մատթեոս 7.23, ծանոթագրություն *ա*):
4. Մատթեոս 25.10–12:
5. Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 25.11 (Մատթեոս 25.12, ծանոթագրություն *ա*):
6. Հովհաննես 14.6–7:
7. Տես 2 Նեփի 2.8; 31.19; Մորոնի 6.4:
8. Տես Ալմա 32.27:
9. *Lectures on Faith* (1985), 1.
10. Հակոբոս 2.20:
11. Հակոբոս 1.22:
12. Հռովմեացիս 10.17:
13. Տես 2 Նեփի 32.3; Վարդապետություն և Ուխտեր 18.34–36:
14. Տես Մորոնի 10.4:
15. Տես Հովհաննես 14.26; Վարդապետություն և Ուխտեր 121.46:
16. Տես Հովհաննես 7.17: Մենք բոլորս պատասխանատվություն ունենք ձգտելու և անելու այն, ինչ կարող ենք, որպեսզի արժանի լինենք հավատքի պարգևն ունենալուն: Այնուամենայնիվ, ի վերջո, սիրող և հոգատար Աստված շնորհում է մեզ այս պարգևը:
17. Մատթեոս 4.18–20:
18. Մատթեոս 16.24:
19. Տես Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 16.26 (in the Bible appendix).
20. Տես 3 Նեփի 27.27:
21. *Lectures on Faith,* 38.
22. *Lectures on Faith,* 38.
23. Ալմա 23.6:
24. Ղուկաս 18.22:
25. Մոսիա 5.13:
26. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
27. Տես «Կգնամ, ուր կուզես դու, Տեր» *Հիմներ,* համար 46:
28. Հելաման 10.5:
29. Տես Վարդապետություն և Ուխտեր 4.2:
30. Տես Մորոնի 7.47:
31. Մորոնի 7.48:
32. Մարկոս 9.23–24:
33. Վարդապետություն և Ուխտեր 84.19–20; շեշտադրումն ավելացված է:
34. Տես Ալմա 5.14, 19:
35. Ալմա 26.13:
36. Տես Եբրայեցիս 8.10:
37. Ալմա 22.18:
38. Տես Օմնի 1.26:
39. Մոսիա 27.31:

Բրայըն Ք. Էշթոն
Կիրակնօրյա դպրոցի գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Քրիստոսի վարդապետությունը

Քրիստոսի վարդապետությունը մեզ թույլ է տալիս ձեռք բերել հոգևոր ուժ, որը մեզ կբարձրացնի մեր ներկայիս հոգևոր վիճակից դեպի այն վիճակը, որտեղ մենք կարող ենք կատարելագործվել։

Իր հարությունից հետո Հիսուսի այցելությունը նեփիացիներին նպատակ ուներ ուսուցանելու մեզ կարևորագույն բաներ։ Սկզբում Հայրը վկայեց մարդկանց, որ Հիսուսն է Իր «Սիրելի Որդին, որից [Նա] շատ գոհ [էր]»։[1] Ապա Հիսուսն Ինքն իջավ և վկայեց Իր քավիչ զոհաբերության մասին,[2] հրավիրելով մարդկանց «իմանալ անկասկած», որ Ինքը Քրիստոսն է, առաջ գալով ու շոշափելով Իր կողի վերքը և բևեռների նշանները Իր ձեռքերի ու ոտքերի վրա։[3] Այս վկայություններն անկասկած հաստատեցին, որ Հիսուսի Քավությունն ավարտված էր, և Հայրը կատարեց Փրկիչ տալու Իր ուխտը։ Ապա Հիսուսն ուսուցանեց նեփիացիներին, թե ինչպես ստանալ Հոր երջանկության ծրագրի բոլոր օրհնությունները, որոնք մեզ համար հնարավոր են դարձվել Փրկիչի Քավության շնորհիվ՝ սովորեցնելով նրանց Քրիստոսի վարդապետությունը։[4]

Այսօր իմ ուղերձը կենտրոնանում է Քրիստոսի վարդապետության վրա։ Սուրբ գրությունները Քրիստոսի վարդապետությունը սահմանում են այսպես. հավատ գործադրել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, ապաշխարել, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և համբերել մինչև վերջ։[5]

Քրիստոսի վարդապետությունը մեզ հնարավորություն է տալիս ստանալու Քրիստոսի Քավության օրհնությունները

Քրիստոսի Քավությունը ստեղծում է պայմաններ, երբ մենք կարող ենք ապավինել «Սուրբ Մեսիայի արժանիքներին, ողորմությանը և շնորհին»,[6] «կատարելագործվել [Քրիստոսով]»,[7] ձեռք բերել ամեն բարի բան,[8] և ունենալ հավերժական կյանք։[9]

Մյուս կողմից Քրիստոսի վարդապետությունը այն միակ միջոցն է, որի շնորհիվ մենք կարող ենք ձեռք բերել բոլոր օրհնությունները, որոնք հասանելի են դարձվել մեզ Հիսուսի Քավության շնորհիվ։ Քրիստոսի վարդապետությունն է, որ մեզ թույլ է տալիս ձեռք բերել հոգևոր ուժ, որը մեզ կբարձրացնի մեր ներկայիս հոգևոր վիճակից դեպի այն վիճակը, որտեղ մենք կարող ենք կատարելագործվել ու նմանվել Փրկիչին։[10] Վերածնվելու այս գործընթացի մասին Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է.«Վերստին ծնվելը, ի տարբերություն մեր ֆիզիկական ծննդի, ավելի շուտ ընթացք է, քան իրադարձություն։ Եվ այդ գործընթացի մեջ մտնելը մահկանացու կյանքի առանցքային նպատակն է»։[11]

Եկեք քննարկենք Քրիստոսի վարդապետության յուրաքանչյուր տարրը։

Առաջինը, հավատ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ։ Մարգարեներն ուսուցանել են, որ հավատը սկսում է Քրիստոսի խոսքերը լսելուց։[12] Քրիստոսի խոսքերը վկայում են Նրա քավիչ զոհաբերության մասին և ասում մեզ, թե ինչպես կարող ենք ձեռք բերել ներում, օրհնություններ և վեհացում։[13]

Երբ լսում ենք Քրիստոսի խոսքերը, մենք հավատ ենք գործադրում՝ ընտրելով հետևել Փրկիչի ուսմունքներին և օրինակին։[14] Մա անելու համար Նեփին ուսուցանել է, որ մենք պետք է «ամբողջովին ապավինենք [Քրիստոսի] արժանիքներին, որը հզոր է փրկելիս»։[15] Քանի որ Հիսուսն Աստված էր նախաերկրային կյանքում,[16] ապրեց առանց մեղքի[17] և Իր Քավության ընթացքում բավարարեց արդարադատության բոլոր պահանջներն իմ և ձեր համար,[18] Նա զորություն և

բանալիներ ունի՝ իրականացնելու ողջ մարդկության հարությունը,[19] և Նա հնարավոր դարձրեց, որ գթասրտությունը հաղթի արդարադատությանը՝ ապաշխարության պայմանով:[20] Երբ մենք հասկանում ենք, որ կարող ենք գթասրտության արժանանալ Քրիստոսի արժանիքների շնորհիվ, մենք կարող ենք «ունենալ հավատք ի ապաշխարություն»:[21] Քրիստոսի արժանիքներին լիովին ապավինել՝ նշանակում է վստահել, որ Նա արել է ամեն անհրաժեշտ բան մեզ փրկելու համար, և ապա գործել ըստ մեր հավատի:[22]

Հավատը նաև օգնում է մեզ քիչ մտահոգվել, թե ինչ են մեր մասին մտածում ուրիշները և սկսել ավելի շատ մտահոգվել, թե ինչ է Աստված մտածում մեր մասին:

Երկրորդը, ապաշխարություն: Սամուել Լամանացին ուսուցանել է. «Եթե դուք հավատաք [Քրիստոսի] անունին, դուք կապաշխարեք ձեր բոլոր մեղքերից»:[23] Ապաշխարությունը թանկագին պարգև է Երկնային Հոր կողմից, որը հնարավոր է դարձվել Նրա Միածին Որդու զոհաբերության միջոցով: Դա է գործընթացը, որը Հայրը տվել է մեզ, որի միջոցով մենք փոխում ենք մեր մտքերը, գործերը և մեր էությունը, որպեսզի ավելի ու ավելի նմանվենք Փրկիչին:[24] Դա միայն մեծ մեղքերի համար չէ, այլ ինքնաքննման և զարգացման ամենօրյա գործընթաց է,[25] որն օգնում է մեզ հաղթահարել մեր մեղքերը, մեր թերությունները, մեր թուլությունները և մեր անհամապատասխանությունները:[26] Ապաշխարությունը օգնում է մեզ դառնալ Քրիստոսի «ճշմարիտ հետևորդներ», ինչը մեզ լցնում է սիրով[27] և հեռացնում է մեր վախերը:[28] Ապաշխարությունը լրացուցիչ ծրագիր չէ պարզապես այն դեպքերի համար, եթե կատարյալ ապրելու մեր ծրագիրը չստացվի:[29] Շարունակաբար ապաշխարելը միակ ուղին է, որը կարող է բերել մեզ հարատև ուրախություն և հնարավոր դարձնել, որ վերադառնանք ու ապրենք մեր Երկնային Հոր հետ:

Ապաշխարության միջոցով մենք դառնում ենք ենթարկվող և հնազանդ Աստծո կամքին: Սակայն դա

բավարար չէ: Աստծո բարության և մեր ոչնչության իմացությունը,[30] միանալով մեր վարքը Աստծո կամքի հետ համահունչ դարձնելու մեր լավագույն ջանքերի հետ,[31] շնորհ է բերում մեր կյանք:[32] Շնորհը «Աստվածային օգնությունն է և ուժը, որը տրվում է Հիսուս Քրիստոսի ողորմության և սիրո շնորհիվ . . . անելու բարի գործեր, որը [մենք] այլապես ինքնուրույն չէինք կարող ձեռք բերել»:[33] Քանի որ ապաշխարել՝ նշանակում է դառնալ Փրկիչի նման, որին անհնար է ինքնուրույն հասնել, մեզ անշուշտ անհրաժեշտ է Փրկիչի շնորհը, որպեսզի մեր կյանքում տեղի ունենան անհրաժեշտ փոփոխություններ:

Երբ ապաշխարում ենք, մենք փոխարինում ենք մեր հին, անարդար վարքագիծը, թուլությունները, անկատարությունները և վախերը նոր վարքագծով և համոզմունքներով, որոնք մեզ մոտեցնում են Փրկիչին և օգնում նմանվել Նրան:

Երրորդը, մկրտություն և հաղորդություն: Մորմոն մարգարեն ուսուցանել է, որ «ապաշխարության առաջին պտուղներից է մկրտությունը»:[34] Լիարժեք լինելու համար ապաշխարությունը պետք է միանա մկրտության արարողությանը, կատարվելով մեկի կողմից, ով կրում է Աստծո քահանայության իշխանությունը: Եկեղեցու անդամները նորոգում են մկրտության և այլ արարողությունների ժամանակ կապած ուխտերը, մինչ մենք ճաշակում ենք հաղորդությունը:[35]

Մկրտության և հաղորդության արարողությունների ժամանակ մենք ուխտում ենք պահել Հոր և Որդու պատվիրանները, միշտ հիշել Քրիստոսին և հոժարակամ վերցնել Քրիստոսի անունը (կամ Նրա գործը և հատկանիշները[36]) մեզ վրա:[37] Ի պատասխան՝ Փրկիչն ուխտում է ներել կամ թողություն տալ մեր մեղքերին[38] և «իր Հոգին ավելի առատորեն դուրս թափել [մեզ] վրա»:[39] Քրիստոսը նաև խոստանում է նախապատրաստել մեզ հավերժական կյանքի համար՝ օգնելով մեզ նմանվել Իրեն:[40]

Դուգլաս Դ. Հոլմսը՝ Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդկանը, գրել է.«Մկրտության և հաղորդության արարողությունները խորհրդանշում են վերստին ծնվելու վերջնական արդյունքը և գործընթացը: Մկրտվելիս մենք թաղում ենք մարմնական հին մարդուն և սկսում նոր կյանք:[41] Հաղորդության ժամանակ մենք սովորում ենք, որ այս փոփոխությունը քայլ առ քայլ կատարվող

գործընթաց է,երբ քիչ-քիչ, շաբաթից շաբաթ մենք փոխվում ենք, մինչ ապաշխարում ենք, ուխտեր կապում և Հոգու օժտումների շնորհիվ [նմանվում ենք Փրկիչին]»:[42]

Արարողությունները և ուխտերը Քրիստոսի վարդապետության առանցքն են: Քահանայության արարողությունները արժանիորեն ստանալու և դրանց հետ կապված ուխտերը պահելու միջոցով է, որ մեր կյանքում բացահայտվում է աստվածայնության զորությունը:[43] Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը բացատրել է, որ «աստվածայնության զորությունը գալիս է անհատապես և Սուրբ Հոգու զորությամբ»:[44]

Չորրորդը, Սուրբ Հոգու պարգևը: Մկրտությունից հետո հաստատման արարողության միջոցով մեզ տրվում է Սուրբ Հոգու պարգևը:[45] Երբ մենք ստանում ենք այս պարգևը, այն մեզ թույլ է տալիս մշտապես ունենալ Աստծո ընկերակցությունը[46] և դրա արդյունքում մշտապես ունենալ շնորհ:

Որպես մեր մշտական զուգընկեր, Սուրբ Հոգին մեզ տալիս է լրացուցիչ զորություն կամ ուժ՝ պահելու մեր ուխտերը:[47] Նա նաև սրբագործում է մեզ,[48] որը նշանակում է դարձնել մեզ «մեղքից ազատված, անարատ, մաքուր և սուրբ՝ Հիսուս Քրիստոսի քավության միջոցով»:[49] Սրբագործման գործընթացը ոչ միայն մաքրում է մեզ, այլ նաև օժտում է մեզ անհրաժեշտ հոգևոր պարգևներով կամ Փրկիչի աստվածային հատկանիշներով[50] և փոխում է մեր էությունը[51] այնպես, «որ մենք այլևս հակված չենք գործելու չարիք»:[52] Ամեն անգամ, երբ մենք ընդունում ենք Սուրբ Հոգուն մեր կյանք՝ հավատի, ապաշխարության, արարողությունների, Քրիստոսանման ծառայությունների և այլ արդար գործերի միջոցով, մենք քայլ առ քայլ փոխվում ենք և աստիճանաբար դառնում Քրիստոսի նման:[53]

Հինգերորդը, համբերել մինչև վերջ: Նեփի մարգարեն ուսուցանել է, որ Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո մենք պետք է «համբերենք մինչև վերջ, հետևելով կենդանի Աստծո Որդու օրինակին»:[54] Երեց Դեյլ Գ. Ռենլանդը նկարագրել է մինչև վերջ համբերելու գործընթացը. «Մենք կարող ենք կատարելագործվել՝ բազմիցս և անընդհատ . . . գործադրելով հավատ [Քրիստոսի] հանդեպ, ապաշխարելով, ճաշակելով հաղորդությունից, նորոգելով մկրտության ուխտերն ու օրհնությունները, և ստանալով Սուրբ Հոգին՝ որպես մշտական ուղեկից ավելի մեծ չափով: Երբ այդպես ենք անում, մենք ավելի ենք նմանվում Քրիստոսին և կարողանում ենք համբերել մինչև վերջ՝ ինչ էլ որ պատահի»:[55]

Այլ կերպ ասած՝ Սուրբ Հոգին ստանալը և փոփոխությունը, որը այն առաջացնում է մեր մեջ, ամրացնում է մեր հավատը: Մեծացող հավատը կրկին տանում է դեպի ապաշխարություն: Եվ երբ մենք հաղորդության զոհասեղանին ենք դնում մեր սրտերը և մեր մեղքերը, մենք ստանում ենք Սուրբ Հոգին առատորեն: Սուրբ Հոգին առատորեն ստանալն այնուհետև մեզ տանում է վերստին ծնվելու ուղիով: Երբ մենք շարունակում ենք այդ գործընթացը և ստանում ենք բոլոր փրկարար արարողությունները և ավետարանի ուխտերը, մենք ստանում ենք «շնորհ՝ շնորհի տեղ», մինչև որ ստանում ենք լիությունը:[56]

Մենք պետք է կիրառենք Քրիստոսի վարդապետությունը մեր կյանքում

Եղբայրներ և քույրեր, երբ մենք կիրառում ենք Քրիստոսի վարդապետությունը մեր կյանքում, մենք օրհնվում ենք նյութապես և հոգեպես՝ նույնիսկ փորձությունների մեջ: Ի վերջո, մենք կարողանում ենք «որդեգրել այն ամենը, ինչ բարի է»:[57] Ես վկայում եմ, որ այս գործընթացը տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ իմ կյանքում՝ քայլ առ քայլ, աստիճանաբար:

Սակայն ավելի կարևոր է այն, որ մենք պետք է կիրառենք Քրիստոսի վարդապետությունը մեր կյանքում, քանի որ այն ապահովում է միակ ուղին, որը մեզ կրկին կտանի մեր Երկնային Հոր մոտ: Դա միակ ուղին է՝ ընդունելու Փրկիչին և դառնալու Նրա որդիներն ու դուստրերը:[58] Այսպիսով, մեղքից ազատվելու և հոգևոր աճ ունենալու միակ ուղին մեր կյանքում Քրիստոսի վարդապետությունը կիրառելն է:[59] Ի վերջո, Հովհաննես Առաքյալն ուսուցանել է.«Ամեն ով որ . . . չէ կենում Քրիստոսի վարդապետութեան մէջ, Աստուած չունի»:[60] Հիսուսն ասաց նեփիացիների Տասներկուսին, որ եթե մենք չկարողանանք հավատ գործադրել առ Քրիստոսը, ապաշխարել, մկրտվել և համբերել մինչև վերջ, մենք «կկտրվենք և կգցվենք կրակի մեջ, որտեղից այլևս հնարավոր չէ վերադառնալ»:[61]

Այսպիսով, ինչպե՞ս կարող ենք մեր կյանքում ավելի լիարժեք կիրառել Քրիստոսի վարդապետությունը: Ուղիներից մեկը կարող է լինել ամեն շաբաթ հաղորդությանը պատրաստվելու համար ջանքեր գործադրելը՝ որոշ ժամանակ հատկացնելով աղոթքով խորհելուն, թե ինչպես կարող ենք կատարելագործվել: Ապա կարող ենք հաղորդության զոհասեղանին դնել առնվազն մի բան, ինչը մեզ խանգարում է նմանվել Հիսուս Քրիստոսին և հավատով օգնություն աղերսել, խնդրելով անհրաժեշտ հոգևոր պարգևներ, և ուխտել ավելի լավը դառնալ եկող շաբաթվա ընթացքում:[62] Մինչ մենք կանենք դա, Սուրբ Հոգին կհայտնվի մեր կյանքում ավելի շատ, և մենք լրացուցիչ ուժ կստանանք՝ հաղթահարելու մեր թերությունները:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն է, և Նրա

անունով է միայն, որ մենք կարող ենք փրկվել:[63] Բոլոր բաները, որ բարի են, հասանելի են դարձվել միայն Նրա միջոցով:[64] «Այն ամենը, ինչ բարի է» որդեգրելու[65] և հավերժական կյանք ունենալու համար մենք պետք է շարունակ մեր կյանքում կիրառենք Քրիստոսի վարդապետությունը: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 11.7:
2. Տես 3 Նեփի 11.10–11:
3. Տես 3 Նեփի 11.14–15:
4. Տես 3 Նեփի 11.21–39:
5. Տես 2 Նեփի 31, 3 Նեփի 27.16–20: Քրիստոսի վարդապետությանը հանդիպում ենք բոլոր սուրբ գրություններում, սակայն ավելի հաճախ՝ Մորմոնի Գրքում:
6. 2 Նեփի 2.8:
7. Մորոնի 10.32:
8. Տես Մորոնի 7.22–24:
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 132.23:
10. Քրիստոսի Քավությունը և Քրիստոսի վարդապետությունը միասին կազմում են Քրիստոսի ավետարանը (տես 3 Նեփի 27.13–21):
11. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Վերստին ծնված», *Լիահոնա,* մայիս 2008, 78:
12. Տես Հռովմայեցիս 10.17, 2 Նեփի 31.19, Ալմա 32.27–29, Մորոնի 7.25:
13. Տես 2 Նեփի 32.3:
14. Տես 2 Նեփի 31.10, 13:
15. 2 Նեփի 31.19:
16. Տես Հովհաննես 1.1–3, Մովսես 7.47, Աբրահամ 3.24–27:
17. Տես Եբրայեցիս 4.15, Վարդապետություն և Ուխտեր 45.4:
18. Տես Ալմա 34.16:
19. Տես 2 Նեփի 9.21–22, Դալլին Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Լիահոնա,* մայիս 2014, 49–52:
20. Տես Ալմա 34.15–16:
21. Ալմա 34.15:
22. Քրիստոսի արժանիքներին լիովին ապավինելը ներառում է գիտակցելը, որ Հիսուս Քրիստոսը փրկագնման միակ աղբյուրն է (տես Մոսիա 4.7–8): Այն նաև պահանջում է, որ մենք հավատանք, որ Քրիստոսը կարող է փրկել մեզ որպես անհատներ: Դա է պատճառներից մեկը, որ Վարդապետություն և Ուխտեր 27.2-ում մենք պատվիրվում է հաղորդություն ընդունելիս ոչ միայն հիշել այն փաստը, որ Քրիստոսը տառապեց, այլև Նա արեց դա մեզ համար անհատապես:
23. Հելաման 14.13:
24. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Ապաշխարություն և դարձ», *Լիահոնա,* մայիս 2007, 102–5:
25. Տես Նեյլ Լ. Անդերսեն, «Ապաշխարեք … որպեսզի ես կարողանամ բուժել ձեզ», *Լիահոնա,* նոյ. 2009, 40–43:
26. Jeffrey R. Holland, “Broken Things to Mend,” *Liahona,* May 2006, 69–71; Anthony D. Perkins, “The Great and Wonderful Love,” *Liahona,* Nov. 2006, 76–78.
27. Մորոնի 7.48:
28. Տես Մորոնի 8.16: Մեր ապաշխարությունն իսկապես այն հիմնական ապացույցն է, որ մենք Փրկիչի աշակերտներն ենք: Կարո՞ղ ենք մենք հայտարարել, որ հետևում ենք Քրիստոսին, եթե շարունակաբար չենք ապաշխարում կամ ձգտում դարձնել մեր սրտերը և գործերը դեպի Նա:
29. Տես *Adjusting to Missionary Life* (booklet, 2013), 46:
30. Տես Մոսիա 4.5–7:
31. Տես 2 Նեփի 10.24, 25.23:
32. Տես Հելաման 5.11, Եթեր 12.27, Մորոնի 10.32–33:
33. Աստվածաշնչի բառարան, «Շնորհ»:
34. Մորոնի 8.25:
35. Երբ մենք արժանիորեն ենք ընդունում հաղորդությունը, մենք նորոգում ենք Աստծո հետ կապած մեր բոլոր ուխտերը (տես Delbert L. Stapley, in Conference Report, Oct. 1965, 14; L. Tom Perry, “As Now We Take the Sacrament,” *Liahona,* May 2006, 41):
36. Տես Dallin H. Oaks, “Testimony” (address given at the seminar for new mission presidents, June 25, 2014), 1–2:
37. Տես Մորոնի 4.3, տես նաև Մոսիա 18.8–10, Վարդապետություն և Ուխտեր 20.37 լրացուցիչ ուխտերի համար, որոնք մենք կապում ենք մկրտվելիս:
38. Տես Մորոնի 8.25:
39. Մոսիա 18.10:
40. Տես Բ Կորնթացիս 3.18, Եթեր 12.27, Վարդապետություն և Ուխտեր 35.2, Մովսես 1.39:
41. ՏեսՀռովմայեցիս 6.4:
42. Douglas D. Holmes, “Come unto Christ—the Doctrine of Christ,” unpublished manuscript.
43. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21:
44. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ուխտերի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2009, 22:
45. Հաստատումը կատարվում է ձեռնադրման միջոցով (տես, օրինակ, Գործք 8.17):
46. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.28, Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Սուրբ Հոգի», scriptures.lds.org:
47. Տես Բ Կորնթացիս 3.18, 1 Նեփի 14.14, Վարդապետություն և Ուխտեր 93.20:
48. Տես 3 Նեփի 27.20:
49. Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Սրբագործում,» scriptures.lds.org:
50. Տես Մորոնի 7.48, 8.26, 10.8–18:
51. Տես Մոսիա 4.14, Վարդապետություն և Ուխտեր 84.33, Bruce R. McConkie, “The Ten Blessings of the Priesthood,” *Ensign,* Nov. 1977, 33–35:
52. Մոսիա 5.2:
53. Սուրբ Հոգին նաև օգնում է մեզ վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ (տես 2 Նեփի 32.5, Վարդապետություն և Ուխտեր 45.57), օգնելով մեզ իմանալ, թե մենք ինչ պետք է անենք Քրիստոսին նմանվելու համար (տես Բ Կորնթացիս 3.18, Եթեր 12.27, Վարդապետություն և Ուխտեր 84.46–48):
54. 2 Նեփի 31.16: Մինչև վերջ համբերելը պահանջում է և ժամանակ, և համբերություն (տես Հակոբոս 1.2–4): Մենք չենք կարող զարգացնել որոշակի Քրիստոսանման հատկանիշներ՝ առանց հակառակության և դժվարությունների հանդիպելու: Օրինակ, մենք ինչպե՞ս կարող ենք դառնալ համբերատար, եթե մեզանից երբեք չի պահանջվել համբերել:
55. Դեյլ Գ. Ռենլանդ, «Վերջին Օրերի Սրբերը շարունակում են ճիգ թափել», *Լիահոնա,* մայիս 2015, 56:
56. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.12, 19:
57. Մորոնի 7.25, տես նաև Մոսիա 2.41:
58. Տես Վարդապետություն և Ուխտեր 39.4–6:
59. Տես 2 Նեփի 9.24:
60. Բ Հովհաննես 1.9:
61. 3 Նեփի 27.17:
62. Մարդը կարող է Փրկիչի օգնությամբ հաճախ նույն զոհողությունը կատարել շաբաթներ շարունակ, մինչև, ինչպես Երեց Նիլ Ա. Մաքսվելն է ուսուցանել, «այն սպառվի» («Հրաժարվեք ամեն անաստվածությունից», *Ensign,* May 1995, 68):
63. Տես 2 Նեփի 25.20:
64. Տես Մորոնի 7.24:
65. Մորոնի 7.25:

Երեց Քարլ Բ. Քուք
Յոթանասուն

Ծառայեք

Յուրաքանչյուր անդամի կարիքը կա, և յուրաքանչյուր անդամ ծառայելու հնարավորության կարիքն ունի։

Երբ փոքր էի, հորեղբայր Լայմանի և հորաքույր Դորոթիի հետ ես սիրում էի աշխատել իրենց ագարակում։ Հորեղբայր Լայմանը սովորաբար ղեկավարում էր մեր գործերը, իսկ հորաքույր Դորոթին հաճախ օգնում էր նրան և վարում էր հին Դողջ բեռնատար մեքենան։ Ես հիշում եմ ադրենալինի հոսքը, երբ մենք խրվում էինք ցեխի մեջ կամ փորձում էինք զառիվեր բլուրը բարձրանալ. հորեղբայր Լայմանը գոռում էր. «Միացրու բաղադրյալ փոխանցումը, Դորոթի»։ Այդ ժամանակ էր, որ ես սկսում էի աղոթել։ Ինչ-որ կերպ՝ Տիրոջ օգնությամբ և ատամնանիվները շրխկացնելով հորաքույր Դորոթին միացնում էր բաղադրյալ փոխանցումը։ Բոլոր անիվներին ուժ հաղորդելով, մեքենան տեղից շարժվում էր, և մեր աշխատանքը շարունակվում էր։

«Միացնել բաղադրյալ փոխանցումը» նշանակում է փոխանցման բռնակը դնել հատուկ դիրքում, երբ բոլոր ատամնանիվներն այնպես են դասավորվում, որ միասին աշխատելով ավելի մեծ քարշիչ ուժ են ստեղծում։[1] Բաղադրյալ փոխանցումը չորս քարշիչ անիվների հետ միասին թույլ է տալիս իջեցնել փոխանցման աստիճանը, մեծացնել հզորությունը և շարժվել։

Ես սիրում եմ այն միտքը, որ մեզանից յուրաքանչյուրը բաղադրյալ փոխանցման ատամնանիվների մի մասն է հանդիսանում, երբ մենք ծառայում ենք միասին Եկեղեցու ծխերում և ճյուղերում, քվորումներում և օժանդակ կազմակերպություններում։ Ինչպես ատամնանիվներն են միասին ավելի մեծ հզորություն ստեղծում բաղադրյալ փոխանցման համար, միասին մենք ավելի մեծ ուժ ենք ունենում։ Երբ միավորվում ենք միմյանց ծառայելու գործում, մենք միասին ավելի շատ աշխատանք ենք կատարում, քան կարող էինք անել միայնակ։ Մեծ

ոգևորություն ենք ապրում, ներգրավվելով և միավորվելով, երբ ծառայում և աջակցում ենք Տիրոջ գործին։

Ծառայելն օրհնություն է

Ծառայելու հնարավորությունը Եկեղեցու անդամության մեծագույն օրհնություններից է։[2] Տերն ասել է. «Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ»,[3] և մենք, ծառայելով մյուսներին, ծառայում ենք Նրան։[4]

Ծառայելիս մենք մոտենում ենք Աստծուն։[5] Մենք ճանաչում ենք Նրան այնպես, որ այլ կերպ չէինք կարող ճանաչել։ Մեր հավատքը Նրա հանդեպ մեծանում է։ Մեր խնդիրներն ավելի տեսանելի են դառնում։ Կյանքից ավելի մեծ բավարարվածություն ենք ստանում։ Աճում է մյուսների հանդեպ սերը և ծառայելու ցանկությունը։ Այդ օրհնյալ գործընթացի շնորհիվ մենք դառնում ենք ավելի Աստվածանման և ավելի լավ ենք պատրաստվում Նրա մոտ վերադառնալուն։[6]

Ինչպես Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին է ուսուցանել. «Ծառայությունը ինչ-որ բան չէ, որը մենք պետք է ստիպված կատարենք, որպեսզի սելեստիալ արքայությունում ապրելու համար իրավունք վաստակենք։ Ծառայությունը հենց այն մանրաթելն է, որից սելեստիալ արքայության մեջ վեհացած կյանքն է հյուսվում»։[7]

Ծառայելը կարող է դժվար լինել

Ինչևէ, Եկեղեցում ծառայելը կարող է դժվար լինել, եթե մեզ հանձնարարվում է անել մի բան, որը վախեցնում է մեզ, եթե մենք հոգնում ենք ծառայելուց կամ եթե կանչվել ենք կատարելու այն, ինչն ի սկզբանե մեզ գրավիչ չի թվում։

Վերջերս ես նոր հանձնարարություն ստացա։ Ես ծառայել եմ Աֆրիկայի հարավարևելյան տարածքում։ Մեծ ոգևորություն էի ապրում, ծառայելով այնտեղ, որտեղ Եկեղեցին նոր էր հիմնադրվում, և մենք սիրում էինք Սրբերին։ Այնուհետև ինձ կանչեցին Եկեղեցու գլխավոր վարչություն, և եթե ազնիվ լինեմ, ես այդքան էլ խանդավառված չէի։ Կոչման փոփոխությունը որոշ անհայտ իրավիճակներ ստեղծեց ինձ համար։

Մի գիշեր առաջիկա փոփոխության մասին խորհրդածելուց հետո երազումս տեսա իմ նախապապին՝ Ջոզեֆ Սքինին: Նրա օրագրից ես տեղյակ էի, որ երբ նա և իր կինը՝ Մարիան, տեղափոխվել էին Նավու, նա ծառայելու ցանկություն էր ունեցել և այդ պատճառով գտնելով Մարգարե Ջոզեֆ Սմիթին հարցրել էր, թե ինչով կարող էր օգնել: Մարգարեն ուղարկել էր նրան աշխատելու տափաստանային տարածքում և խնդրել էր նրան ջանք չխնայել, ինչն էլ նա արել էր: Նա աշխատեց Սմիթների ագարակում:[8]

Ես մտածեցի այն արտոնության մասին, որ Ջոզեֆ Սքինն ունեցել էր իր հանձնարարությունն այդ կերպ ստանալով: Հանկարծ ես հասկացա, որ ես, ինչպես նաև մենք բոլորս, ունենք այդ նույն արտոնությունը: Եկեղեցու բոլոր կոչումները գալիս են Աստծուց՝ Իր նշանակված ծառաների միջոցով:[9]

Ես հոգևոր հստակ հաստատում ստացա, որ իմ նոր նշանակումը ոգեշնչված էր: Կարևոր է, որ մենք գիտակցենք, որ մեր կոչումները ուղղակիորեն գալիս են Աստծուց մեր քահանայության ղեկավարների միջոցով: Այդ փորձառությունից հետո իմ վերաբերմունքը փոխվեց, և ես լցվեցի ծառայելու մեծ ցանկությամբ: Ես երախտապարտ եմ ապաշխարության օրինության և իմ փոխված սրտի համար: Ես սիրում եմ իմ նոր կոչումը:

Եթե անգամ մենք մտածում ենք, թե Եկեղեցու մեր կոչումը պարզապես մեր քահանայության ղեկավարի գաղափարն է եղել կամ տվյալ կոչումը մեզ առաջարկվեց, քանի որ ոչ ոք չէր ընդունի դա, մենք կօրհնվենք, եթե ծառայենք: Բայց երբ մեր կոչման մեջ Աստծո ձեռքն ենք տեսնում և ծառայում ենք մեր ողջ սրտով, լրացուցիչ զորություն է գալիս մեր ծառայության մեջ, և մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ծառաները:

Ծառայելու համար հավատք է պահանջվում

Կոչումները կատարելու համար հավատք է պահանջվում: Երբ Ջոզեֆը նոր էր սկսել իր աշխատանքն ագարակում, նա և Մարիան

ծանր հիվանդացան: Նրանք գումար չունեին և օտար միջավայրում էին: Նրանց համար դժվար ժամանակներ էին: Իր օրագրում Ջոզեֆը գրել է. «Մենք աշխատում էինք միասին և հավատարիմ մնում Եկեղեցուն՝ գործադրելով այն փոքր հավատքը, որ մենք ունեինք, թեպետ դևը փորձում էր կործանել և ետ դարձնել մեզ»:[10]

Հարյուրավոր այլ ժառանգների հետ միասին ես հավերժ երախտապարտ կլինեմ, որ Ջոզեֆն ու Մարիան ետ չդարձան: Օրհնությունները գալիս են, երբ մենք հաստատակամություն ենք դրսևորում մեր կոչումներում և պարտականություններում, և տոկում ենք մեր ունեցած ողջ հավատքով:

Ես ճանաչում եմ Ավետարանի վարդապետության մի հրաշալի ուսուցչի, ով բարձրացնում է դասարանի անդամներին, երբ ուսուցանում է, բայց միշտ չէ, որ այդպես է եղել: Եկեղեցուն միանալուց հետո նա կանչվեց ուսուցանելու Երեխաների խմբում: Նա զգում էր, որ ուսուցանելու ունակություններ չուներ, բայց ընդունեց իր կոչումը՝ գիտակցելով ծառայելու կարևորությունը: Վախը շուտով պատեց նրան, և նա դադարեց Եկեղեցի հաճախել, որպեսզի այլևս չդասավանդեր: Բարեբախտաբար, նրա տնային ուսուցիչը նկատեց նրա բացակայությունը, այցելեց նրան և խնդրեց ետ վերադառնալ: Եպիսկոպոսը և ծխի անդամներն աջակցում էին նրան: Ի վերջո, ավելացած հավատքով նա սկսեց ուսուցանել երեխաներին: Երբ նա կիրառեց այժմ *«Ուսուցանեք Փրկչի ձևով»* ձեռնարկում ուսուցանվող սկզբունքները, Տերն օրհնեց նրա ջանքերը, և նա դարձավ շնորհալի ուսուցիչ:[11]

Բոլորիս մեջ գոյություն ունեցող բնական տղամարդը կամ կինը հակված է չծառայելու համար արդարացումներ գտնել, բերելով այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ «Ես պատրաստ չեմ ծառայելուն, ես դեռ սովորելու շատ բան ունեմ», «Ես հոգնել եմ և դադար եմ ուզում տալ», «Ես արդեն տարիքս առել եմ, այժմ մեկ ուրիշի հերթն է» կամ «Ես ուղղակի շատ զբաղված եմ»:

Եղբայրներ և քույրեր, կոչում ընդունելն ու կատարելը հավատքի դրսևորում է: Մենք կարող ենք վստահել մեր մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերին, երբ նա բազմիցս ուսուցանել է. «Ում Տերը կանչում է, Տերը որակավորում է», և «Երբ Տիրոջ գործի մեջ ենք, մենք Տիրոջ օգնությունը ստանալու իրավունքն ունենք»:[12] Մենք ծանրաբեռնված ենք, թե հետաքրքրված չենք, մահու չափ վախեցած ենք, թե մահու չափ ձանձրացած, Տերը ցանկանում է, որ մենք իջեցնենք փոխանցման աստիճանը, մեծացնենք հզորությունը և ծառայենք:

Ես չեմ նկատել, որ Նախագահ Մոնսոնը և Առաջին Նախագահությունում կամ Տասներկուսի Քվորումում ծառայող նրա գործընկերները չափից շատ զբաղված կամ անտանելի հոգնած լինեն: Նրանք ոգեշնչված օրինակն են այն զորության, որ գալիս է մեր կյանք, երբ մենք հավատք ենք գործադրում, ընդունում ենք կոչումները և կատարում դրանք պատասխանատվությամբ և նվիրվածությամբ: Նրանք երկար տարիներ առաջ «[իրենց ուսը] դեմ են տվել անիվին»[13] և շարունակում են այն հրել առաջ և դեպի վեր:

Այո, նրանք ծառայում են կարևոր կոչումներում, սակայն *յուրաքանչյուր* կոչում կամ նշանակում կարևոր է: Եկեղեցու նախկին մարգարե և

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մենք բոլորս միասին այս մեծ գործի մեջ ենք: . . . Ձեր պարտականությունը նույնքան լուրջ է ձեր պատասխանատվության շրջանակներում, որքան իմ պարտականությունն իմ պատասխանատվության շրջանակում: Այս եկեղեցում ոչ մի կոչում փոքր կամ անկարևոր չէ»:[14] Յուրաքանչյուր կոչում կարևոր է:[15]

Եկեք ծառայենք

Եկեք հավատքով ոտքի ելնենք, «[մեր ուսը] դեմ տանք անիվին», և առաջ շարժենք այս «արժանահավատ գործը»:[16] Եկեք «միացնենք բաղադրյալ փոխանցումը»՝ հավատարիմ հորաքույր Դորոթիի հետ միասին: Որպես եղբայրներ և քույրեր՝ եկեք ծառայենք:

Եթե ուզում եք ձեր եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին ուրախացնել, նրան տվեք հետևյալ հարցերը. «Ինչո՞վ կարող եմ օգնել», «Որտե՞ղ կցանկանար Տերը, որ ես ծառայեի»: Երբ նա աղոթի և հաշվի առնի ձեր անձնական, ընտանեկան և մասնագիտական աշխատանքը, նա կոգեշնչվի համապատասխան կոչում տալու ձեզ: Երբ ձեզ ձեռնադրեն, դուք կստանաք քահանայության օրհնություն, որը կօգնի ձեզ հաջողությամբ կատարել ձեր ծառայությունը: Դուք *կօրհնվեք:* Յուրաքանչյուր անդամի կարիքը կա, և յուրաքանչյուր անդամ ծառայելու հնարավորության կարիքն ունի:[17]

Հիսուս Քրիստոսը մեր օրինակն է

Հիսուս Քրիստոսը՝ մեր մեծ Օրինակը, Իր կյանքը տվեց Իր Հոր գործի համար: Նախքան այս աշխարհը կկազմավորվեր՝ ի սկզբանե ընտրված և օծված Հիսուսը Մեծ Խորհրդում կամովին առաջարկեց. «Ահա ես, ինձ ուղարկիր»:[18] Այդպիսով, Նա իրականում դարձավ բոլորիս ծառան: Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության շնորհիվ ստացած զորության միջոցով, մենք ևս կարող ենք ծառայել: Նա կօգնի մեզ:[19]

Ես իմ անկեղծ սերն են հղում նրանց, ովքեր գուցե այժմ անձնական հանգամանքներով պայմանավորված ի վիճակի չեն ծառայել Եկեղեցում ավանդական կերպով, բայց ապրում են իրենց կյանքը ծառայության ոգով: Ես աղոթում եմ, որ դուք օրհնվեք ձեր ջանքերում: Ես նաև բարձր եմ գնահատում նրանց, ովքեր ամեն շաբաթ մեծարում են իրենց կոչումները, ինչպես նաև նրանց, ովքեր շուտով ընդունելու են ծառայելու կոչումը: Բոլոր ավանդներն ու զոհաբերություններն արժեվորվում են, հատկապես Նրա կողմից, ում մենք ծառայում ենք: Բոլոր նրանք, ովքեր ծառայում են, կստանան Աստծո շնորհը:[20]

Ինչ տարիքում կամ հանգամանքներում էլ որ լինենք, թող ծառայությունը լինի մեր «նշանաբանը»:[21] Ծառայեք ձեր կոչման մեջ: Միսիա ծառայեք: Ծառայեք ձեր մորը: Ծառայեք օտարին: Ծառայեք ձեր հարևանին: Ուղղակի ծառայեք:

Թող Տերը օրհնի մեզանից յուրաքանչյուրին ծառայելու և Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները դառնալու մեր ջանքերում:[22] Ես վկայում եմ, որ Նա ապրում է և ղեկավարում է այս աշխատանքը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես “Compound Gears,” technologystudent.com/gears1/gears3.htm; “Compound Gear Reduction,” curriculum.vexrobotics.com.
2. Տես *Քարոզիր իմ ավետարանը. միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 87:
3. Վարդապետություն և Ուխտեր 42.29, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 59.5:
4. Տես Մատթեոս 25.40; Մոսիա 2.17:
5. Տես Հովհաննես 12.26:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 81.4–6:
7. Marion G. Romney, “The Celestial Nature of Self-Reliance,” *Ensign,* Nov. 1982, 93.
8. Տես Joseph Skeen, reminiscences and diary, 7, Church History Library, Salt Lake City; see also *Journal and History of Joseph Skeen,* ed. Greg S. Montgomery and Mark R. Montgomery (1996), 23.
9. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.38; Հավատո հանգանակ 1.5:
10. Skeen, reminiscences and diary, 8, spelling and punctuation standardized; see also *Journal and History of Joseph Skeen,* 23; Luke 22:31; 2 Nephi 28:19–24; Alma 30:60; Doctrine and Covenants 10:22–27.
11. Տես *Teaching in the Savior’s Way* (2016), 37–38; *Handbook 2: Administering the Church* (2010), 5.3, 5.5.4.
12. Thomas S. Monson, “Duty Calls,” *Ensign,* May 1996, 44.
13. “Put Your Shoulder to the Wheel,” *Hymns,* no. 252.
14. Gordon B. Hinckley, “This Is the Work of the Master,” *Ensign,* May 1995, 71.

    Նախագահ Հինքլին նաև ասել է. «Դուք հրաշալի հնարավորություն ունեք ինձ նման գոհանալու ձեր պարտականության կատարմամբ: Մեր միասնական ջանքերով է պայմանավորված այս աշխատանքի առաջընթացը: Ինչպիսին էլ լինի ձեր կոչումը, այն լի է բարիք գործելու նմանատիպ հնարավորությամբ, ինչպիսին իմն է: Իրականում կարևորն այն է, որ սա Տիրոջ աշխատանքն է: Մեր աշխատանքն է՝ շրջել բարիք գործելով» (“This Is the Work of the Master,” 71):

    Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Ինչպե՞ս է մարդը մեծարում կոչումը: Պարզապես կատարելով այդ կոչման հետ կապված ծառայությունը» (“Duty Calls,” 43):
15. Տես Ալմա 37.6:
16. “Put Your Shoulder to the Wheel,” *Hymns,* no. 252.
17. Տես *Handbook 2,* 3.3.1, 3.3.3, 19.1.1, 19.4. “Through the service of men and women and boys and girls, God’s work is done” (*Gospel Principles* [2009], 163).
18. Աբրահամ 3.27:
19. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.5:
20. Տես Մոսիա 18.26:
21. “They, the Builders of the Nation,” *Hymns,* no. 36.
22. Տես Մորոնի 7.48:

Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Զգույշ կաց, միգուցե մոռանաս

Ես խրախուսում եմ ձեզ՝ հատկապես ճգնաժամի պահերին, երբ դուք զգացել եք Հոգին և ձեր վկայությունը ուժեղ էր, հիշել հոգևոր հիմքերը, որոնք դուք կառուցել եք։

Բարի օր, սիրելի եղբայրներ և քույրեր։ Որքան օրհնված ենք մենք այս համաժողովի ընթացքում։ Տասներկու Առաքյալների Քվորումում որպես անդամ ծառայելու առաջին տարում ես ավելի խոնարհ եմ դարձել։ Սա եղել է լարված, աճի և երբևէ հնչած լուրջ աղոթքների տարի՝ ուղղված իմ Երկնային Հորը։ Ես զգացել եմ այդ աջակցող աղոթքները իմ ընտանիքի, ընկերների և ամբողջ աշխարհում գտնվող Եկեղեցու անդամների կողմից։ Շնորհակալություն ձեր մտահոգությունների և աղոթքների համար։

Ես նաև արտոնություն եմ ունեցել նորից տեսնել թանկագին ընկերներին. ոմանց հետ ծանոթացել եմ տարիներ առաջ, իսկ շատերին վերջերս եմ հանդիպել։ Մի թանկագին ընկերոջ հետ հանդիպումից հետո, ում ես գիտեմ և սիրում եմ արդեն շատ տարիներ, ես տպավորվեցի և պատրաստեցի իմ այսօրվա ելույթը։

Երբ մենք հանդիպեցինք, իմ ընկերը հայտնեց ինձ, որ ինքը երկմտում է։ Նա զգում էր իր իսկ բառերով ասած՝ «հավատքի ճգնաժամ», և իմ խորհրդի կարիքն ուներ։ Ես երախտապարտ էի, որ նա կիսվեց ինձ հետ իր զգացմունքներով և մտահոգություններով։

Նա ներկայացրեց այն մեծ կարոտը մի բանի հանդեպ, որը նա առաջ ուներ, բայց հիմա, կարծում էր, որ կորցնում է. դա հոգևոր զգայունությունն է։ Երբ նա խոսում էր, ես ուշադիր լսում էի և ջանասիրաբար աղոթում էի, որ իմանայի, թե Տերը ինչ է ցանկանում, որ ես ասեմ։

Իմ ընկերը, ինչպես հավանաբար ձեզանից ոմանք, տվեց մի հարց, որը պարզ ձևակերպված է Երեխաների Խմբի երգերից մեկում՝ «Երկնային Հայր, դու իրո՞ք կաս»։[1] Ձեզանից ոմանց հետ, ովքեր նույն հարցն են տալիս, ես կցանկանայի կիսվել այն խորհրդով, որը ես հղեցի իմ ընկերոջը, և հուսով եմ, որ ձեզանից յուրաքանչյուրը կզգա, որ իր հավատն ամրապնդված է, իսկ որոշումը նորացված՝ Հիսուս Քրիստոսի հավատարիմ հետևորդը լինելու համար։

Ես կսկսեմ, հիշեցնելով ձեզ, որ դուք սիրող Երկնային Հոր որդիներն ու դուստրերն եք, և Նրա սերը մնում է հաստատուն։ Ես գիտեմ, որ այդպիսի հուսադրող սիրո զգացմունքները դժվար են վերհիշվում, երբ դուք անձնական խնդիրների կամ դժվարությունների, հուսահատությունների կամ կոտրված երազանքների մեջ եք։

Հիսուս Քրիստոսը գիտի սաստիկ դժվարությունների և փորձություններ։ Նա տվեց Իր կյանքը մեզ համար։ Նրա վերջին ժամերը լի էին դաժան չարչարանքներով, որոնք նույնիսկ վեր են մեր պատկերացումից, բայց Նրա զոհաբերությունը մեզանից յուրաքանչյուրի համար Նրա մաքուր սիրո առավելագույն արտահայտությունն էր։

Ոչ մի սխալ, մեղք կամ ընտրություն չեն կարող փոխել Աստծո սերը մեր հանդեպ։ Դա չի նշանակում, որ մեղսավոր պահվածքը թույլատրելի է, ոչ էլ այն վերացնում է մեր կատարած մեղքերից ապաշխարելու պարտականությունը։ Բայց *մի մոռացեք*. Երկնային Հայրը գիտի և սիրում է ձեզանից յուրաքանչյուրին և Նա միշտ պատրաստ է օգնել։

Երբ ես խորհում էի իմ ընկերոջ իրավիճակի վերաբերյալ, հիշեցի Մորմոնի Գրքի մեծ իմաստության մասին. «Եվ, այժմ, իմ որդինե՛ր, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության

ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:[2]

Ես վկայում եմ, որ «թշվառության ու անվերջ վայի անդունդը» մի տեղ է, որում ոչ մեկը չի ցանկանա հայտնվել: Իսկ իմ ընկերը զգում էր, որ մոտենում էր այդ անդունդին:

Երբ ես խորհուրդ եմ տալիս մարդկանց, ինչպես իմ ընկերոջը, ես ուսումնասիրում եմ նրանց կատարած ընտրությունները վերջին տարիների ընթացքում, որոնք ստիպել են նրանց մոռանալ սուրբ փորձառությունները, թուլանալ և կասկածել: Ես խրախուսել եմ նրանց, ինչպես և խրախուսում եմ ձեզ հիմա վերհիշել՝ հատկապես դժվարության պահերին, երբ դուք զգացել եք Հոգին և ձեր վկայությունը ուժեղ էր. հիշեք հոգևոր հիմքը, որը դուք կառուցել էիք: Ես խոստանում եմ, որ եթե դուք սա անեք՝ խուսափեք այն բաներից, որոնք չեն կառուցում և ամրապնդում ձեր վկայությունը կամ ծաղրում են ձեր համոզմունքները, այն թանկագին ժամանակները, երբ ձեր վկայությունը բարգավաճում էր, կվերադառնան ձեր հիշողություն, խոնարհ աղոթքի և ծոմի միջոցով: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ դուք կրկին կզգաք Հիսուս Քրիստոսի ավետարանի ապահովությունը և ջերմությունը:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է նախ ինքն իրեն ամրապնդի հոգևորապես և հետո ամրապնդի շրջապատող մարդկանց: Հաճախ խորհեք սուրբ գրությունների մասին և հիշեք այն մտքերն ու զգացմունքները, երբ դուք կարդում եք դրանք: Փնտրեք նաև ճշմարտության այլ աղբյուրներ, բայց ուշադիր լսեք սուրբ գրությունների այս զգուշացումը. «Բայց ուսյալ լինելը լավ է, *եթե* նրանք ականջ են դնում Աստծո խորհուրդներին»:[3] Հաճախեք Եկեղեցու ժողովներին, հատկապես՝ հաղորդության ժողովին, և ընդունեք հաղորդությունը ու նորոգեք ձեր կապած ուխտերը, ներառյալ ձեր խոստումը՝ միշտ հիշել Փրկիչին, որ Նրա Հոգին միշտ ձեզ հետ լինի:

Կարևոր չէ, թե ինչ սխալներ ենք մենք արել կամ որքան անկատար կարող ենք մեզ զգալ, մենք միշտ կարող ենք օրհնել և բարձրացնել ուրիշներին: Քրիստոսանման ծառայությամբ նրանց օգնելու ձգտումը կարող է օգնել մեզ զգալ Աստծո սերը մեր սրտի խորքում:

Շատ կարևոր է հիշել Երկրորդ Օրինացում գրված զորեղ խորհուրդը. «Նայի՛ր ինքդ քեզ և եղի՛ր չափազանց զգույշ. *մի՛ մոռացիր* այն բոլոր բաները, որ տեսան քո աչքերը. քո կեանքի բոլոր օրերում քո սրտից թող դուրս չգան դրանք: Դրանք կը հաղորդես քո որդիներին ու որդիների որդիներին»:[4]

Սերունդներ են ազդեցության ենթարկվում մեր կատարած ընտրություններից: Կիսվեք ձեր վկայությունով ձեր ընտանիքի հետ. խրախուսեք նրանց հիշե,լ թե ինչպես էին նրանք զգում, երբ ճանաչում էին Հոգին իրենց կյանքում, ապա խնդրեք գրառել այդ զգացմունքները օրագրում և անձնական պատմություններում, որպեսզի իրենց սեփական բառերը, երբ անհրաժեշտ լինի, արթնացնեն իրենց հիշողության մեջ, թե Աստված որքան բարի է եղել իրենց հանդեպ:

Դուք երևի կհիշեք, որ Նեփին և իր եղբայրները վերադարձան Երուսաղեմ, որպեսզի վերցնեին արույրե թիթեղները, որոնք պարունակում էին նրանց ժողովրդի պատմությունը: Դա էր պատճառներից մեկը, որպեսզի նրանք չմոռանան իրենց անցյալը:

Նաև, Մորմոնի Գրքում Հելամանը անվանեց իր որդիներին «առաջին հայրերի» անուններով, որ նրանք չմոռանան Աստծո մեծահոգությունը.

«Ահա, իմ որդինե՛ր, ես փափագում եմ, որ դուք հիշեք պահել Աստծո պատվիրանները: . . . Ահա, ես տվել եմ ձեզ մեր առաջին ծնողների անունները, ովքեր դուրս էին եկել Երուսաղեմի հողից. և այս ես արել եմ, որ երբ դուք հիշեք ձեր անունները, դուք կարողանաք հիշել նրանց. և երբ դուք հիշեք նրանց, դուք կարողանաք հիշել նրանց գործերը. և երբ դուք հիշեք նրանց գործերը, դուք կարողանաք իմանալ, որ ասվել է, և նաև գրվել, որ դրանք բարի էին:

«Հետևաբար, իմ որդինե՛ր, ես կկամենայի, որ դուք անեք այն, ինչ բարի է, որպեսզի ձեր մասին էլ ասվի, և նաև գրվի, ճիշտ ինչպես ասվել և գրվել է նրանց մասին»:[5]

Շատերն այսօր ունեն նույն ավանդույթը՝ անվանել իրենց երեխաներին սուրբ գրությունների հերոսների կամ հավատարիմ նախնիների անուններով, որպես մի ճանապարհ՝ խրախուսելու նրանց չմոռանալ իրենց ժառանգությունը:

Երբ ես ծնվեցի, ինձ անվանեցին Ռոնալդ Ա. Ռասբենդ: Իմ ազգանունը պատվում է իմ հոր նախնիների տոհմը: Իմ երկրորդ անունի սկզբնատառը *Ա* տրվեց ինձ ի հիշեցում և ի պատիվ դանիական Անդերսոն իմ մորական տոհմի:

Իմ նախապապը՝ Ջենս Անդերսոնը Դանիայից էր: Եվ 1861 թվականին Տերը երկու մորմոն միսիոներների բերեց Ջենսի և Ան Քաթրին Անդերսոնի տուն, որտեղ միսիոներները տան տերերին և նրանց 16 տարեկան որդուն՝ Էնդրյուին, ներկայացրին վերականգնված ավետարանը: Այդպես սկսվեց հավատի ժառանգությունը, որտեղ ես և իմ ընտանիքը շահառուներն ենք: Անդերսոնները կարդացին Մորմոնի Գիրքը և մկրտվեցին կարճ ժամանակ անց: Հաջորդ տարի Անդերսոնները լսեցին մարգարեի կանչը՝ անցնել Ատլանտյան օվկիանոսը՝ միանալու Հյուսիսային Ամերիկայի Սրբերին:

Ցավոք, Ջենսը մահացավ ծովային ճանապարհորդության ժամանակ, բայց նրա կինը և որդին շարունակեցին դեպի Սոլթ Լեյքի հովիտ, տեղ հասնելով 1862 թվականի

սեպտեմբերի 3-ին: Չնայած չարչարանքներին և վշտին, նրանց, ինչպես նաև իրենց հետնորդների մեծ մասի հավատքը, չսասանվեց:

Իմ գրասենյակում կախված է մի նկար[6], որն այնքան հրաշալի պատկերում է մի խորհրդանշական հուշ՝ հիշեցնում իմ նախնիների և միսիոներների հետ այդ առաջին հանդիպման մասին: Ես վճռել եմ չմոռանալ իմ ժառանգությունը, և իմ անվան շնորհիվ ես միշտ կհիշեմ նրանց հավատարմության և զոհաբերության ժառանգությունը:

Երբեք մի մոռացեք, կասկածի տակ մի դրեք կամ անտեսեք անձնական, սուրբ հոգևոր փորձառությունները: Հակառակորդի ծրագիրն է՝ շեղել մեզ հոգևոր վկայություններից, իսկ Տիրոջ ցանկությունն է՝ լուսաբանել և զբաղեցնել մեզ Իր աշխատանքով:

Թույլ տվեք կիսվել այս ճշմարտության մասին իմ անձնական օրինակով: Ես պարզ հիշում եմ այն ժամանակը, երբ ստացա հուշում՝ որպես պատասխան իմ զորեղ աղոթքին: Պատասխանը պարզ և ուժեղ էր: Բայց ես թերացա անհապաղ հետևել այդ հուշումին և որոշ ժամանակ անց սկսեցի կասկածել, թե արդյոք իսկական էր այն, ինչ ես զգացել եմ: Ձեզանից ոմանք նույնպես կարող են ընկնել հակառակորդի այդ խաբեության մեջ:

Մի քանի օր հետո ես արթնացա հետևյալ զորեղ հատվածներով իմ մտքում.

«Ճշմարիտ, ճշմարիտ, ասում եմ քեզ. Եթե դու լրացուցիչ վկայություն ես փափագում, ուղղիր միտքդ դեպի այն գիշերը, երբ դու ինձ էիր կանչում քո սրտում: . . .

«Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ: Ավելի մեծ ի՞նչ բավականություն կարող ես դու ունենալ, քան Աստծուց»:[7]

Թվում էր, թե Տերն ասում էր, «Տես Ռոնալդ, ես արդեն ասացի քեզ՝ ինչ անել: Հիմա արա այն»: Որքան շնորհակալ էի ես այդ սիրող ուղղման և ուղղորդման համար: Ես անմիջապես մխիթարվեցի հուշումով և կարողացա շարժվել առաջ, իմանալով իմ սրտում, որ իմ աղոթքը պատասխան է ունեցել:

Ես կիսվեցի այս փորձառությամբ, սիրելի եղբայրներ և քույրեր, որպեսզի ցուցադրեմ, թե մեր միտքն ինչ արագությամբ կարող է մոռանալ, և ինչպես են հոգևոր փորձառությունները առաջնորդում մեզ: Ես սովորել եմ փայփայել այդպիսի պահերը, «որ չմոռանամ»:

Իմ ընկերոջը և բոլոր նրանց, ովքեր ցանկանում են մեծացնել իրենց հավատը՝ ես տալիս եմ խոստում. քանի դեռ դուք հավատարմորեն ապրեք Հիսուս Քրիստոսի ավետարանով և ապրեք դրա ուսմունքներով, ձեր վկայությունը կպաշտպանվի և այն կաճի: Պահեք ուխտերը, որոնք դուք կապել եք, չնայած ձեզ շրջապատողների գործողություններին: Եղեք ջանասեր ծնողներ, եղբայրներ և քույրեր, պապիկներ և տատիկներ, մորաքույրներ, քեռիներ և ընկերներ, ովքեր ուժեղացնում են սիրելիների անձնական վկայությունները և կիսվում են հոգևոր փորձառություններով: Մնացեք հավատարիմ և հաստատուն, նույնիսկ, եթե կասկածի փոթորիկը ներխուժի ձեր կյանք ուրիշների պատճառով: Փնտրեք այն, ինչ կերտում և ամրացնում է ձեզ հոգեպես: Խուսափեք կեղծ՝ այսպես կոչված, «ճշմարիտ» ընծաներից, որոնք համատարած են և հիշեք գրանցել ձեր «սիրո, ուրախության, խաղաղության, համբերության, քաղցրության, բարության, հավատարմության, հեզության և ժուժկալության» զգացումները:[8]

Կյանքի ամենաուժգին փոթորիկների ժամանակ *մի մոռացեք* ձեր աստվածային ժառանգությունը՝ որպես Աստծո որդիներ կամ դուստրեր, կամ ձեր հավերժական ճակատագիրը՝ վերադառնալ և ապրել Նրա հետ, որը կգերազանցի այն ամենին, ինչ աշխարհն է առաջարկում: Հիշեք Ալմայի սիրող և քաղցր խոսքերը. «Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, իմ եղբայրնե՛ր, եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում»:[9]

Բոլոր նրանք, ովքեր կարիք ունեն իրենց հավատը ուժեղացնելու, ես աղերսում եմ ձեզ՝ *մի՛ մոռացեք*: Խնդրում եմ, մի՛ մոռացեք:

Ես վկայում եմ որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն է: Ես գիտեմ, որ նա տեսել և խոսել է Հայր Աստծո ու Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ, ինչպես նա գրանցել է իր իսկ բառերով: Որքան եմ ես երախտապարտ, որ նա *չմոռացավ* և գրեց այդ փորձառությունների մասին, որպեսզի մենք բոլորս կարողանանք իմանալ իր վկայության մասին:

Ես բերում եմ իմ հանդիսավոր վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Նա ապրում է: Ես գիտեմ՝ Նա ապրում է և կանգնած է այս Եկեղեցու գլխին: Այս բաները ես գիտեմ անձամբ, անկախ ուրիշ ձայնից կամ վկայությունից, և ես աղոթում եմ, որ դուք և ես *երբեք չմոռանանք* սուրբ հավերժական ճշմարտությունները՝ առաջին և ամենակարևորը, որ մենք ապրող և սիրող Երկնային Ծնողների որդիներն ու դուստրերն ենք, ովքեր ցանկանում են միայն մեր հավերժական երջանկությունը: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ռասբենդը կոչում է այս նկարը իր նախնիների և վաղ օրերի մորմոն-միսիոներների առաջին հանդիպման «խորհրդանշական հիշեցում»:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "A Child's Prayer," *Children's Songbook,* 12:
2. Հելաման 5.12:
3. 2 Նեփի 9.29, շեշտադրումն ավելացված է:
4. Երկրորդ Օրինաց 4.9, շեշտադրումն ավելացված է:
5. Հելաման 5.6–7:
6. Իսկական կտավը ստեղծվել է 1856թ. Քրիստին Դալսգարդի կողմից: Իմ գրասենյակի նկարը պատճենն է, նկարված 1964թ. Առնոլդ Ֆրիբերգի կողմից:
7. Վարդապետություն և Ուխտեր 6.22–23:
8. Գաղատացիս 5.22–23:
9. Ալմա 5.26:

Երեց Էվան Ա. Շմուց
Յոթանասուն

Աստված կարի ամեն արտասուքը

Երբ մենք Նրա հանդեպ հավատք գործադրենք, Նա մեզ կբարձրացնի և կանցկացնի մեզ մեր բոլոր փորձությունների միջով և, ի վերջո, կփրկի մեզ սելեստիալ արքայությունում:

Որպես Իր ծրագրի մաս մեր Երկնային Հայրը թույլ է տվել, որ վիշտը միահյուսվի մեր մահկանացու գոյությանը:[1] Չնայած թվում է, որ ցավոտ փորձությունները անհավասար են ընկնում մեզ վրա, մենք կարող ենք համոզված լինել, որ ինչ-որ չափով բոլորս էլ տառապում ենք և մաքառում: Իմ աղոթքն է, որ Սուրբ Հոգին առաջնորդի մեզ ավելի մեծ հասկացողության, թե ինչո՞ւ է դա այդպես նախատեսված:

Երբ կյանքի դժվարին փորձություններին Քրիստոսի հավատքի ոսպնյակի միջով ենք նայում, մենք կարողանում ենք տեսնել, որ կարող է լինել աստվածային նպատակ մեր տառապանքի համար: Հավատարիմները կարող են զգալ ճշմարտությունը Պետրոսի հակասական թվացող խորհրդից: Նա գրել է. «Բայց թէեւ *չարչարուիք* էլ արդարութեան համար, երանելի էք»:[2] Եթե մեր «սրտերը նվիրենք հասկանալուն»,[3] մենք կարող ենք մեծացնել մեր կարողությունը՝ ինչպես մեր փորձություններում մինչև վերջ համբերելիս, այնպես էլ դրանցից սովորելիս և դրանցով մաքրվելիս:

Նման հասկացողությունը տալիս է պատասխան հավերժական հարցին. «Ինչո՞ւ է վատ բաներ պատահում լավ մարդկանց»:

Ամենքը, ովքեր այսօր լսում են, ինչ-որ չափով ծանոթ են մենակությանը, հուսահատությանը, վշտին, ցավին կամ տխրությանը: Առանց «հավատքի աչքի»[4] հավերժական ճշմարտության հասկացության, մենք հաճախ գտնում ենք, որ թշվառությունը և



տառապանքը, որը զգում ենք մահկանացու կյանքում, կարող է մշուշել կամ մթնեցնել այն ուրախությունը, որը գալիս է իմանալուց, որ մեր Երկնային Հոր մեծ ծրագիրը *իսկապես* երջանկության հավերժական ծրագիր է: Չկա ուրիշ ուղի ուրախության լիությունը ստանալու համար:[5]

Աստված հրավիրում է մեզ արձագանքել հավատքով մեր իսկ առանձնահատուկ չարչարանքներին, որպեսզի մենք օրհնություններ հնձենք և գիտելիք ձեռք բերենք, որը ոչ մի այլ ուղով հնարավոր չէր լինի սովորել: Մեզ հրահանգված է պահել պատվիրաններն ամեն հանգամանքներում և պայմաններում, քանի որ «ով որ հավատարիմ է նեղության մեջ, նրա վարձքը ավելի մեծ է երկնքի արքայությունում»:[6] Եվ ինչպես մենք կարդում ենք սուրբ գրություններում. «Եթե տխուր ես, աղաչանքով կանչիր առ Տերը՝ քո Աստվածը, որպեսզի հոգիդ ուրախանա»:[7]

Պողոս Առաքյալը, ինքը ծանոթ լինելով չարչարանքներին, իր իսկ փորձառությունից ելնելով, խորությամբ և գեղեցկությամբ ուսուցանել է հավերժական հեռանկարը, որը գալիս է, երբ մենք լավ և համբերատար դիմանում ենք: Նա ասել է. «Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենագերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար»:[8] Այլ խոսքերով, մենք կարող ենք իմանալ, որ մեր չարչարանքների մեջ Աստված ապահովել է հավերժական փոխհատուցող վարձք:

Իր կյանքի փորձությունների, հալածանքների և վշտերի մասին Պողոսի խոսելու կարողությունը՝ որպես «թեթեւ նեղություն», հակասում էր նրա տառապանքի ուժգնությանը, որը նրա համար կուլ էր գնացել ավետարանի հավերժական հեռանկարում: Պողոսի հավատքն առ Հիսուս Քրիստոս բոլոր բաները տանելի էին դարձրել: Հինգ անգամ նա ճիպոտահարվել էր, երեք անգամ ձաղկահարել էին, մեկ անգամ քարկոծվել էր, երեք անգամ նավակոծ եղել, շատ անգամ նա մահվան վտանգի էր ենթարկվել խեղդվելով, ավազակների կողմից և նույնիսկ

կեղծ եղբայրների կողմից, նա տարել էր հոգնածություն և ցավ, սով ու ծարավ և բանտարկվել էր ցրտի ու մերկության մեջ:[9]

Մեզանից շատերը աղերսել են Աստծուն վերացնել մեր տառապանքի պատճառը, և երբ մեր որոնած սփոփանքը չի եկել, մենք գայթակղվել ենք մտածել՝ Նա չի լսում: Ես վկայում եմ, որ նույնիսկ այդ պահերին, Նա լսում է մեր աղոթքները և պատճառ ունի թույլ տալու, որ մեր չարչարանքները շարունակվեն,[10] և կօգնի մեզ համբերությամբ տանել դրանք:[11]

Մի անձնական և պատկերավոր հատվածում Պողոսը պատմում է մեզ մի անանուն «խայթի» մասին իր մարմնում, որը նրան մեծ ցավ էր պատճառում և երեք անգամ նրան ծնկի բերեց, ու նա աղերսեց Տիրոջը իրենից վերցնել այն: Ի պատասխան Պողոսի աղոթքների, Տերը չհեռացրեց խայթը, այլ խաղաղությամբ խոսեց և հասկացողություն տվեց նրա սրտին, ասելով. «Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետեւ իմ զորութիւնը տկարութեան մեջ է կատարվում»: Նոր հասկացողությամբ Պողոսը կարողացավ ընդունել և երախտապարտ լինել խայթի համար, որը նրան տրվել էր: Նա ասաց. «Արդ, ավելի յօժարութեամբ . . . իմ տկարութիւններովը կպարծենամ, որ Քրիստոսի զօրութիւնը բնակուէ ինձանում»:[12]

Երբ մենք ձեռք ենք բերում այս հավերժական հեռանկարը մեր կյանքում, համբերելու մեր կարողությունը մեծանում է, մենք սովորում ենք, թե ինչպես օգնենք նրանց, ովքեր մեր օգնության կարիքն ունեն,[13] և մենք սկսում ենք գնահատել և նույնիսկ երախտագիտություն հայտնել այն փորձառությունների համար, որոնք Աստված թույլ է տալիս մեզ՝ որպես դաստիարակներ ունենալ հավերժական կյանքի ուղիում:

Երբ մենք ինքներս հայտնվում ենք նեղությունների մեջ, կարող է դժվար լինել մեզ համար տեսնել մեր փորձությունները որպես մեր հետևորդության արահետի անձնական փորձության նշաններ: Բայց լինի դա մեր հուսահատության խավար հովտի ժամանակներում,

թե երջանկության մայրուղիներում, ուրիշների տառապանքներից սովորելն ու նրանց հանդեպ կարեկցանք զգալը կարող է օրհնություն լինել:

Վերջին ցցի համաժողովի հանձնարարության ընթացքում ես այցելել էի Ֆիլիպպիններ. սիրտս փշրվեց, երբ իմացա Եղբայր Դանիել Ապիլադոյի հետ պատահած ողբերգական դեպքի մասին: Եղբայր Ապիլադոն և նրա կինը մկրտվել էին 1974 թվականին: Նրանք ընդունել էին վերականգնված ավետարանը և կնքվել էին տաճարում: Այնուհետև օրհնվել էին հինգ զեղեցիկ երեխաներով: 1997 թվականի հուլիսի 7-ին, երբ Եղբայր Ապիլադոն ծառայում էր որպես ցցի նախագահ, հրդեհ էր բռնկվել նրանց փոքրիկ տանը: Եղբայր Ապիլադոյի մեծ որդի Միքայելը, փրկեց իր հորը, դուրս քաշեց նրան վառվող շենքից, իսկ ինքը ետ վազեց տուն՝ փրկելու մյուսներին: Դա վերջին անգամն էր, որ Եղբայր Ապիլադոն իր որդուն կենդանի տեսավ: Կրակին զոհ գնացին Եղբայր Ապիլադոյի կինը՝ Դոմինգան և նրա հինգ երեխաները:

Փաստը, որ Եղբայր Ապիլադոն ապրում էր Աստծուն հաճելի կյանքով, երբ ողբերգությունը վրա հասավ, չկանխեց ողբերգությունը, ոչ էլ նրան անընկալունակ դարձրեց վշտի հանդեպ, որը հաջորդեց դրան: Բայց նրա *հավատարմությունը* իր ուխտերը պահելիս և առ Քրիստոս հավատք գործադրելիս, տվեցին նրան համոզվածություն այն խոստումի հանդեպ, որ նա կվերամիավորվի իր կնոջ և ընտանիքի հետ: Այդ հույսը դարձավ խարիսխ նրա հոգու համար:[14]

Իմ այցելության ընթացքում, Եղբայր Ապիլադոն՝ այժմ ցցի հայրապետը, ծանոթացրեց իր նոր կնոջ՝ Սիմոնետի և իրենց երկու որդիների՝ Ռաֆայելի և Դանիելի հետ: Իսկապես, Հիսուս Քրիստոսը կարող է «կոտրած սիրտ ունեցողներին բժշկել»:[15]

Կիսվելով Եղբայր Ապիլադոյի պատմությամբ, ես մտահոգված եմ, որ նրա կորստի ահագնությունը կարող է շատերին ստիպել մտածել, որ իրենց սեփական վշտերն ու տառապանքները համեմատաբար քիչ կարևորություն ունեն: Խնդրում եմ մի համեմատեք, այլ ձգտեք սովորել և կիրառել հավերժական սկզբունքները, երբ դուք անցնում եք ձեր իսկ չարչարանքների հնոցով:

Եթե կարելի է, որ խոսեմ անհատապես ձեզ հետ՝ «ամեն վաստակածներ

եւ բեռնաւորուածներ»,[16] թույլ տվեք նշել, որ ձեր անձնական մաքառումները՝ ձեր անհատական վշտերը, ցավերը, չարչարանքները և ամեն տեսակի տկարությունները հայտնի են մեր Երկնային Հորը և Նրա Որդուն: Քաջացե՛ք, հավատացե՛ք: Եվ հավատք ունեցեք Աստծո խոստումների հանդեպ:

Հիսուս Քրիստոսի նպատակը և առաքելությունը ներառում էր, որ Նա «վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները» «իր վրա վեր կառնի նրանց թուլությունները» և «կսատարի իր ժողովրդին ըստ նրանց թուլությունների»:[17]

Այդպես անհատույց առաջարկած մեր Փրկիչի այդ պարգևները լիովին ստանալու համար, բոլորս պետք է սովորենք, որ տառապանքը ինքնին չի ուսուցանում կամ շնորհում մեզ որևէ բան, որը տևական արժեք ունի, մինչև որ մենք *զիտակցաբար* մեր չարչարանքներից հավատքի գործադրման միջոցով սովորելու գործընթացում չներգրավվենք:

Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ կիսվել է նրանով, ինչը նա սովորել էր նպատակային տառապանքի մասին հետևյալ խոսքերով.

«Տառապանքի որոշ ձևեր, մինչև վերջ համբերելու դեպքում, փաստորեն, կարող են ազնվացնող լինել. . . . . Լավ համբերելու մասն է կազմում բավականաչափ հեզ լինելը մեր տառապանքների մեջ, որպեսզի սովորենք մեր համապատասխան փորձություններից: Ոչ թե մենք պետք է անցնենք այդ բաների միջով, այլ դրանք պետք է անցնեն մեր միջով . . . այնպիսի ուղիներով, որոնք սրբագործում են [մեզ]»:[18]

Ուրիշների կյանքում և օրինակներում ես նկատել եմ, որ Հիսուս Քրիստոսի և Նրա խոստումների հանդեպ ուժեղ և հաստատուն հավատք գործադրելը գալիք ավելի լավ բաների հաստատուն հույս է ապահովում: Այդ հաստատուն հույսը մեզ կայուն է դարձնում, մեզ անհրաժեշտ ուժ ու զորություն հաղորդելով, որ համբերենք[19]: Երբ մենք կարողանում ենք կապել մեր տառապանքը մեր մահկանացու կյանքի մի հաստատուն նպատակի հետ, իսկ *ավելի ստույգ* այն վարձքի հետ, որը սպասվում է մեզ երկնային հեռաստաններում, մեր հավատքն առ Քրիստոս մեծանում է և մենք ստանում ենք հանգստություն մեր հոգիներին:

Այդ ժամանակ մենք կարող ենք տեսնել լույս թունելի վերջում: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Իսկապես թունելի վերջում *կա* լույս: Այդ լույսն Աշխարհի Լույսն է, Պայծառ և Առավոտյան Աստղը, «լույս, որն անվերջ է, որը երբեք չի կարող խավարեցվել» [Մոսիա 16.9]: Դա հենց Ինքը՝ Աստծո Որդին է»:[20]

Մենք կարող ենք ուժ վերցնել, իմանալով, որ բոլոր դժվարին փորձությունները այս կյանքում ժամանակավոր են, նույնիսկ ամենախավար գիշերներից հետո լուսաբաց է բացվում հավատարիմների համար:

Երբ ամեն բան վերջանա և մենք համբերությամբ տանենք բոլոր բաները հավատքով առ Հիսուս Քրիստոս, մենք ունենք խոստում, որ «Աստուած կսրբէ ամեն արտասուքը [մեր] աչքերիցը»:[21]

Ես վկայում եմ, որ Աստված մեր Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ապրում են, և որ Նրանք խոստումներ պահող են: Ես վկայում եմ, որ Փրկիչը հրավիրում է մեզ բոլորիս գալ և ճաշակել Իր Քավությունից: Երբ մենք Նրա հանդեպ հավատք գործադրենք, Նա մեզ կբարձրացնի և կանցկացնի մեր բոլոր փորձությունների միջով և, ի վերջո, կփրկի մեզ սելեստիալ արքայությունում: Թույլ տվեք հրավիրել ձեզ գալ Քրիստոսի մոտ, մինչև վերջ համբերել հավատքով, կատարելագործվել Նրա միջոցով և ունենալ կատարյալ ուրախություն Նրանում: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ծննդոց 3.16–19:
2. 1 Պետրոս 3.14, շեշտադրումն ավելացված է:
3. Մոսիա 12.27:
4. Եթեր 12.19:
5. Տես3 Նեփի 28.10, տես նաև2 Նեփի 31.19–21:
6. Վարդապետություն և Ուխտեր 58.2:
7. Վարդապետություն և Ուխտեր 136.29:
8. Բ Կորնթացիս 4.17:
9. Տես Բ Կորնթացիս 11.23–27:
10. ՏեսՎարդապետություն և Ուխտեր 121.7–8; 122:
11. Տես Մոսիա 24.12–15:
12. Տես Բ Կորնթացիս 12.7–9:
13. Տես Մոսիա 4.16:
14. Տես Եթեր 12.4:
15. Եսայիա 61.1–3, տես նաև հատվածներ 2–3:
16. Մատթեոս 11.28:
17. Ալմա 7.11–12:
18. Neal A. Maxwell, “Enduring Well,” *Liahona,* Apr. 1999, 12:
19. Տես Եթեր 12.4:
20. Jeffrey R. Holland, “An High Priest of Good Things to Come,” *Liahona,* Jan. 2000, 42.
21. Հայտնություն 7.17, տես նաև 21.4:

Երեց Կ. Բրեթ Նաթրես
Յոթանասունի Քվորում

Չկա ավելի մեծ երջանկություն, քան իմանալ, որ նրանք գիտեն

Ես չգիտեմ, աշխարհում ուրիշ ինչը կարող է բերել ավելի շատ ուրախություն և երջանկություն, քան այն, որ մեր երեխաները գիտեն Փրկիչի մասին։

Եղբայրներ և քույրեր, վերջերս ես մտածում էի հետևյալ հարցի մասին. «Եթե ձեր երեխաները իմանային ավետարանի մասին ձեզանից՝ որպես այդ գիտելիքի միակ աղբյուրի, նրանք ինչքա՞ն շատ կիմանային»։ Այս հարցը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր սիրում, ուսուցանում և ազդում են երեխաների վրա։

Կա՞ ավելի մեծ նվեր, որը մենք կարող ենք փոխանցել մեր երեխաներին, քան հստակ հիշողությունը, որ մենք գիտենք, որ Քավիչը ապրում է։ Նրանք գիտե՞ն, որ մենք գիտենք։ Եվ ամենակարևորը՝ նրանք անձնապես գիտե՞ն, որ Նա ապրում է։

Երբ ես պատանի էի, ես իմ մոր ամենադժվար ենթարկվող երեխան էի։ Ես էներգիայի մեծ պաշար ունեի։ Իմ մայրն ասում էր, որ նրա ամենամեծ վախն այն էր, որ ես չեմ հասցնի մեծանալ։ Ես պարզապես շատ եռանդուն էի։

Ես հիշում եմ, երբ պատանի էի, իմ ընտանիքի հետ նստած էի մի հատուկ հաղորդության ժողովի։ Իմ մայրը հենց նոր էր ստացել իր սուրբ գրությունների հավաքածուն։ Այս նոր հավաքածուն իր մեջ ներառում էր եկեղեցու սուրբ գրությունները մեկ տարբերակով, իսկ մեջտեղում կար տողերով թուղթ գրառումներ անելու համար։

Ժողովի ժամանակ ես հարցրի նրան, թե կարող եմ տեսնել նրա սուրբ գրությունները։ Հուսալով, որ դա կօգնի ինձ լինել ակնածալից, նա դրանք փոխանցեց ինձ։ Երբ ես նայում էի սուրբ գրությունները, նկատեցի, որ գրառումների մասում նա գրել էր մի անձնական նպատակ։ Որպեսզի ներկայացնեմ նրա նպատակի ենթատեքստը, ես պետք է ասեմ ձեզ, որ ես վեց երեխաներից երկրորդն եմ և իմ անունն է Բրեթ։ Իմ մայրը կարմիր գույնով գրել էր միայն մի նպատակ. «Համբերություն Բրեթի հետ»։

Որպես լրացուցիչ փաստ, որպեսզի օգնեմ ձեզ հասկանալ դժվարությունները, որոնց միջով իմ ծնողներն անցնում էին իրենց զավակներին մեծացնելիս, թույլ տվեք պատմեմ ձեզ, թե ինչպես էինք մենք սուրբ գրություններ կարդում։ Ամեն առավոտ նախաճաշի ժամանակ մեր ընտանիքի համար իմ մայրը կարդում էր Մորմոնի Գիրքը։ Այդ ժամանակ իմ մեծ եղբայր Դեյվը և ես նստում էինք լուռ, բայց ոչ ակնածանքով։ Լիովին անկեղծ ասած՝ մենք չէինք լսում։ Մենք կարդում էինք շիլայի տուփի տպագրությունը։

Վերջապես, մի առավոտ ես որոշեցի անկեղծանալ իմ մոր հետ։ Ես բացատրեցի. «Մամ, ինչու՞ ես դու այսպես վարվում մեզ հետ։ Ինչու՞ ես դու կարդում Մորմոնի Գիրքը ամեն առավոտ»։ Հետո ես ասացի մի արտահայտություն, որի համար ես ամաչում եմ։ Իրականում, ես չեմ հավատում, որ այդպիսի բան եմ ասել։ Ես ասացի նրան. «Մամ, ես *չեմ* լսում»։

Նրա պատասխանը իմ կյանքի ամենանշանակալից պահն էր։ Նա ասաց. «Որդիս, ես մի ժողովում էի, որտեղ Նախագահ Մերիոն Գ. Ռոմնին ուսուցանեց սուրբ գրությունները կարդալու օրհնությունների մասին։ Այդ ժողովի ժամանակ ես ստացա խոստում, որ եթե ես կարդամ սուրբ գրությունները իմ երեխաներին ամեն օր, ես չեմ կորցնի նրանց»։ Այնուհետև նա նայեց ուղիղ իմ աչքերի մեջ և ասաց բացարձակ վճռականությամբ. *«Եվ ես չեմ կորցնի քեզ»։*

Նրա խոսքերը խոցեցին իմ սիրտը: Չնայած իմ անկատարությանը, ես արժանի էի փրկության: Նա սովորեցրեց ինձ հավերժական ճշմարտություն. ես սիրող Երկնային Հոր որդին եմ: Ես սովորեցի, որ անկախ իրավիճակից, ես արժանի եմ փրկության: Սա կատարյալ պահ էր անկատար փոքրիկ տղայի համար:

Ես հավերժ երախտապարտ եմ իմ հրեշտակ մոր համար և բոլոր հրեշտակների համար, ովքեր անվերապահորեն սիրում են իրենց երեխաներին, չնայած նրանց անկատարություններին: Ես հաստատ հավատում եմ, որ քույրերը՝ ես կկոչեմ նրանց «հրեշտակներ», Սիոնի մայրերն են, անկախ նրանից՝ նրանք ամուսնացած են, թե ոչ, կամ ունեն երեխաներ այս երկրային փորձառության ընթացքում:

Տարիներ առաջ Առաջին Նախագահությունը հայտարարեց. «Մայրությունը մոտ է աստվածայնությանը: Այն ամենաբարձր, ամենասուրբ ծառայությունն է, որ մարդը կարող է կատարել: Ով պատվում է այս սուրբ կոչումն ու ծառայությունը, մորը դնում է հրեշտակների կողքին»:[1]

Ես երախտապարտ եմ ամբողջ Եկեղեցու հրեշտակների համար, ովքեր համարձակորեն և սիրով հռչակում են հավերժական ճշմարտությունը Երկնային Հոր զավակներին:

Ես երախտապարտ եմ Մորմոնի Գրքի պարգևի համար: Ես գիտեմ, որ այն ճշմարիտ է: Այն պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը: Ես չգիտեմ որևէ մեկին, ով ամեն օր ջանասիրաբար կարդում է Մորմոնի Գիրքը մաքուր մտադրությունով և հավատքով առ Քրիստոս և կորցրել է իր վկայությունը կամ հեռացել հավատից: Մորոնիի մարգարեական խոստումը բերում է իր հետ բոլոր բաների ճշմարտությունն իմանալու բանալին, ներառյալ՝ հակառակորդի խաբեությունների մեջ խորաթափանցելու և դրանցից խուսափելու կարողությունը (տես Մորոնի 10.4–5):

Ես նաև երախտապարտ եմ սիրող Երկնային Հոր և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի համար: Փրկիչը ցուցադրեց կատարյալ օրինակ, թե ինչպես ապրել ոչ կատարյալ և անարդար աշխարհում: «Սիրենք Աստծուն, որովհետև առաջինը Նա՛ սիրեց մեզ» (1 Հովհաննես 4.19): Նրա սերը մեր հանդեպ անսահման է: Նա մեր ամենաանկեղծ ընկերն է: Նրա քրտինքը «հոսում էր արյան կաթիլների նման» ձեր և նաև ինձ համար (Ղուկաս 22.44): Նա ներեց նրանց, ովքեր, թվում էր, թե աններելի են: Նա սիրեց չսիրվածներին: Նա արեց այն, ինչ ոչ մի մահկանացու չէր կարող անել. Նա ապահովեց Քավություն բոլոր մարդկանց հանցանքները, ցավերը և հիվանդությունները հաղթահարելու համար:

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք ապրել խոստումով, որ անկախ դժվարություններից, մենք միշտ կարող ենք հույս դնել Նրա վրա, «ով հզոր է փրկելիս» (2 Նեփի 31.19): Նրա Քավության շնորհիվ մենք կարող ենք ունենալ ուրախություն, խաղաղություն, երջանկություն և հավերժական կյանք:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը ասել է. «Բացառությամբ մի քանիսի, ովքեր կորստի են մատնված, չկա ոչ մի սովորություն, կախվածություն, ապստամբություն, հանցանք, ուրացություն, չարագործություն, որ կարող է խուսափել ամբողջական ներման խոստումից, որը Քրիստոսի քավության խոստումն է»:[2]

Մարդկության ամենաանհավանական իրադարձություններից մեկը Փրկիչի ծառայության այցն է Ամերիկայի հնագույն բնակիչներին: Ձեր մտքում պատկերացրեք՝ ինչպիսին կլիներ այդ տեսարանը: Խորհելով տաճարում հավաքված այդ մի խումբ Սրբերի հանդեպ Նրա սիրող և քնքուշ հոգատարության մասին, ես մտածում եմ երեխաների մասին, ում ես սիրում եմ ավելի, քան կյանքը: Ես փորձել եմ պատկերացնել, թե ինչ կզգայի, տեսնելով մեր փոքրիկներին, որոնք ականատես են Փրկիչի հրավերին, երբ յուրաքանչյուր երեխա մոտենա Նրան, տեսնի Փրկիչի բաց թևերը. Ես կողքից կդիտեի, թե ինչպես յուրաքանչյուր երեխա զգուշությամբ կշոշափի Նրա ձեռքերի և ոտքերի սպիները, իսկ հետո կտեսնեի, թե ինչպես է նրանցից յուրաքանչյուրը կանգնում ու վկայում, որ Նա ապրում է (տես 3 Նեփի 11.14–17, տես նաև 17.21, 18.25), թե ինչպես մեր երեխաները կշրջվեին ու կասեին «Մայրիկ, հայրիկ, սա Նա է»:

Ես չգիտեմ, աշխարհում ուրիշ ինչը կարող է բերել ավելի շատ ուրախություն և երջանկություն, քան այն, որ մեր երեխաները գիտեն Փրկիչի մասին, այն, որ նրանք գիտեն «թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»: Այդպատճառով, որպեսԵկեղեցուանդամներ «մենք քարոզում ենք Քրիստոսի մասին» և մենք վկայում ենք Քրիստոսի մասին (2 Նեփի 25.26):

- Դրա համար մենք ամեն օր աղոթում ենք մեր երեխաների հետ:
- Դրա համար մենք ամեն օր կարդում ենք սուրբ գրությունները նրանց հետ:

- Դրա համար մենք ուսուցանում ենք նրանց ծառայել ուրիշներին, որպեսզի նրանք կարողանան ստանալ իրենց օրհնությունը, գտնելով իրենք իրենց, երբ նրանք կորցնեն իրենց ուրիշներին ծառայելով (տես Մարկոս 8.35, Մոսիա 2.17):

Երբ նվիրում ենք ինքներս մեզ աշակերտության այդ պարզ օրինակին, մենք ուժեղացնում ենք մեր երեխաներին Փրկիչի սիրով և աստվածային ուղղորդությամբ ու պաշտպանությամբ, որը պետք կգա, երբ նրանք հանդիպեն հակառակորդի մոլագար փոթորիկներին:

Ավետարանը իրոք մարդու մասին է: Այն կորած ոչխարի մասին է (տես Ղուկաս 15.3–7), այն ջրհորի մոտ կանգնած Սամարացի կնոջ մասին է (տես Հովհաննես 4.5–30), այն անառակ որդու մասին է (տես Ղուկաս 15.11–32):

Եվ մի փոքր տղայի մասին է, ով կարող է պնդել, որ չի լսում:

Այն մեզանից յուրաքանչյուրի մասին է՝ որքան էլ անկատար լինենք, դառնանք մեկ Տիրոջ հետ, ինչպես Նա է մեկ՝ Իր Հոր հետ (տես Հովհաննես 17.21):

Ես վկայում եմ, որ մենք ունենք սիրող Երկնային Հայր, ով գիտի մեզ անվանապես: Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը ապրող Աստծո ապրող Որդին է: Նա է Միածինը և մեր Բարեխոսը Հոր առաջ: Ես նաև վկայում եմ, որ փրկությունը գալիս է Նրա անունով և միջոցով և ոչ՝ ուրիշ ճանապարհով:

Իմ աղոթքն է, որ մենք կնվիրենք մեր սրտերը և մեր ձեռքերը՝ օգնելու Երկնային Հոր զավակներին ճանաչել Նրան և զգալ Նրա սերը: Եթե մենք անենք դա, Նա խոստանում է մեզ հավերժական երջանկություն և ուրախություն այս և գալիք աշխարհում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Առաջին Նախագահության նամակ», Համաժողովի հաշվետվության ժամանակ, հոկ. 1942թ., 12–13, կարդացվել է Նախագահ Ջ. Ռիբեն Քլարկ Կրտսերի կողմից:
2. Բոյդ Ք. Փաքեր, «Ներման պայծառ առավոտը», *Ensign,* նոյ. 1995, 20

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ
Տասներկու Առաքյալների Քվորում

Ապաշխարություն. ուրախալի ընտրություն

Ապաշխարությունը ոչ միայն հնարավորություն է, այլ նաև ուրախություն է՝ մեր Փրկիչի շնորհիվ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, երբ 12 տարեկան էի, իմ ընտանիքն ապրում էր Շվեդիայի հարավում գտնվող ծովափնյա Գյոտեբորգ քաղաքում Շվեդիայի հարավում: Ի դեպ, դա մեր սիրելի գործընկեր Երեց Պեր Գ. Մալմի ապրելավայրն էր,[1] ով կյանքից հեռացավ այս ամառ: Մենք կարոտում ենք նրան: Մենք երախտապարտ ենք նրա մեծահոգության և ազնիվ ծառայության համար և նրա իսկապես հիասքանչ ընտանիքի օրինակի համար: Եվ մենք, իհարկե, աղոթում ենք, որ նրանց հետ լինեն Աստծո լիառատ օրհնությունները:

Հիսուն տարի առաջ, մենք եկեղեցի էինք հաճախում մի մեծ, վերանորոգված տանը: Մի կիրակի իմ ընկեր Սթեֆանը,[2] ճյուղում միակ մյուս սարկավագը, ոգևորված ինձ ողջունեց ճյուղում: Մենք գնացինք ժողովարանին հարող հավելյալ տարածքը, և նա իր գրպանից հանեց մի մեծ պայթուցիկ ու մի քանի լուցկի: Երիտասարդներին հատուկ ցուցադրական խիզախությամբ ես վերցրի պայթուցիկը և վառեցի երկար մոխրագույն պայթաքուղը: Ես մտադիր էի հանգցնել քուղը նախքան այն կպայթեր: Բայց, երբ մատներս վառեցի այդ անելիս, ես զգեցի պայթուցիկը: Ես և Սթեֆանը սարսափով նայում էինք, մինչ քուղը շարունակում էր վառվել:

Պայթուցիկը պայթեց և ծծմբահոտը լցրեց հավելյալ տարածքը և ժողովարանը: Մենք շտապ հավաքեցինք պայթուցիկի ցրված մնացորդները և բացեցինք պատուհանները, փորձելով վերացնել հոտը, միամտորեն մտածելով, որ ոչ ոք չէր զգա: Բարեբախտաբար, ոչ մեկս չէր վիրավորվել և ոչ մի վնասվածք չէր հասցվել:

Երբ անդամները եկան ժողովի, նրանք, իհարկե, զգացին ճնշող հոտը: Դժվար էր չզգալ: Հոտը շեղում էր ժողովի սրբազան մթնոլորտից: Քանի որ այդքան քիչ Ահարոնյան Քահանայության կրողներ կային և դա կարելի է նկարագրել միայն որպես մտածողության անջատում, ես բաժանեցի հաղորդությունը, բայց արժանի չէի զգում ճաշակել դրանից: Երբ հաղորդության սկուտեղը ինձ առաջարկվեց, ես չվերցրեցի ոչ հաց, ոչ էլ ջուր: Սոսկալի վատ էի զգում: Ես նեղսրտած էի և գիտեի, որ այն, ինչ արել էի, առաջացրել էր Աստծո դժգոհությունը:

Եկեղեցուց հետո ճյուղի նախագահ Ֆրանկ Լինդբերգը՝ պատկառելի տարեց մի մարդ, արծաթավուն սպիտակ մազերով, խնդրեց ինձ գալ իր գրասենյակը: Իմ նստելուց հետո նա նայեց ինձ բարությամբ և ասաց, որ նկատել էր, որ ես չէի ճաշակել հաղորդությունից: Նա հարցրեց՝ ինչո՞ւ: Ես կարծում էի, որ նա գիտեր ինչու: Ես համոզված էի՝ բոլորը գիտեին, թե ես ինչ էի արել: Իմ պատմելուց հետո, նա հարցրեց, թե ինչպես էի զգում: Արցունքների միջից, ընդհատումներով, ես ասացի նրան, որ ցավում էի, և որ գիտեի, որ Աստծուն վիրավորել էի:

Նախագահ Լինդբերգը բացեց Վարդապետություն և Ուխտերի մի լավ մաշված օրինակ և խնդրեց ինձ կարդալ մի քանի ընդգծված հատվածներ: Ես բարձրաձայն կարդացի հետևյալը.

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, նա ներվում է, և ես, Տերս, այլևս չեմ հիշում դրանք:

Այս բաներով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից, — ահա նա կխոստովանի և կթողնի դրանք»:[3]

Ես երբեք չեմ մոռանա Նախագահ Լինդբերգի կարեկցական ժպիտը, երբ ես վեր նայեցի ընթերցելն ավարտելուց հետո: Որոշ հուզմունքով նա ասաց ինձ, որ նա զգում էր, որ լավ կլիներ ինձ համար վերսկսել ճաշակել հաղորդությունը: Երբ ես դուրս եկա նրա գրասենյակից, զգում էի աննկարագրելի ուրախություն:

Այդպիսի ուրախությունը ապաշխարության անկապտելի արդյունքն է: *Ապաշխարել* բառը հունարենում ունի «արդյունքում ըմբռնել» իմաստը և ենթադրում է «փոփոխություն»:[4] Շվեդերենում այդ բառն է *omvänd,* որը պարզապես նշանակում է «ետ դառնալ»:[5] Քրիստոնյա գրող, Ք. Ս. Լյուիսը, գրել է փոփոխության համար անհրաժեշտության և մեթոդի մասին: Նա նշել է, որ ապաշխարությունը ներառում է «ճիշտ ճանապարհին վերադառնալը: Սխալ հանրագումարը կարելի է ուղղել, — ասել է նա, — բայց միայն ետ գնալով, մինչև որ գտնեք սխալը, և աշխատելով կրկին տվյալ կետից, բայց ոչ երբեք ուղղակի *շարունակելով*»:[6] Մեր վարքը փոխելը և վերադառնալը «ճիշտ ճանապարհին» ապաշխարության մասն է կազմում, բայց միայն մասը: Իսկական ապաշխարությունը նաև ներառում է մեր սիրտը և կամքը դեպի Աստված շրջելը և մեղքից հրաժարվելը:[7] Ինչպես բացատրվում է Եզեկիէլում, ապաշխարելը «մեղքից ետ դառնալն է . . . իրավունք եւ արդարութիւն գործելը . . . գրաւը ետ դարձնելը . . . [և] կեանքի կանոններովը գնալը, առանց անօրէնութիւն գործելու»:[8]

Սակայն նույնիսկ սա ամբողջական նկարագրություն չէ: Այն ճշտորեն չի նշում այն ուժը՝ մեր Փրկիչի քավիչ զոհաբերությունը, որը հնարավոր է դարձնում ապաշխարությունը: Իսկական ապաշխարությունը պետք է ներառի հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս, հավատք, որ Նա կարող է փոխել մեզ, հավատք, որ Նա կարող է ներել մեզ, և հավատք, որ Նա կօգնի մեզ խուսափել նոր սխալներից: Այդպիսի հավատքը Նրա Քավությունն արդյունավետ է դարձնում մեր կյանքում: Երբ մենք «արդյունքում ըմբռնում ենք» և «ետ ենք դառնում» Փրկիչի օգնությամբ, մենք զգում ենք հույս Նրա խոստումների հանդեպ և ներման ուրախությունը: Առանց Քավիչի, անկապտելի հույսը և ուրախությունը գոլորշիանում է և ապաշխարությունը դառնում է պարզապես

վարքի ողորմելի փոփոխություն: Իսկ Նրա հանդեպ հավատք գործադրելով, մենք դարձի ենք գալիս դեպի մեղքը ներելու Նրա ունակությանը և պատրաստակամությանը:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը հաստատել է ապաշխարության հույս ներշնչող խոստումները 2015 թվականի ապրիլի իր վերջին գերագույն համաժողովում: Նա նկարագրել է Փրկիչի Քավության բժշկելու զորությունը, որը ես համարում եմ իմաստության թորում, որը ձեռք էր բերվել կես դար առաքելական ծառայության մեջ լինելուց: Նախագահ Փաքերն ասել է. «Քավությունը չի թողնում ոչ հետք, ոչ դրոշմ: Ինչ այն ուղղում է, ուղղված է . . . Այն ուղղակի բժշկում է, և ինչ այն բժշկում է, մնում է բժշկված»:[9]

Նա շարունակում է.

«. . . Քավությունը, որը կարող է ետ պահանջել մեզանից յուրաքանչյուրին, չի թողնում ոչ մի սպի: Դա նշանակում է, որ անկախ նրանից, թե ինչ ենք մենք արել կամ որտեղ ենք մենք եղել կամ ինչպես է ինչ-որ բան պատահել, եթե մենք իսկապես ապաշխարում ենք, [Փրկիչը] խոստացել է, որ Նա կքավի: Եվ երբ Նա քավեց, այն կարգավորվեց: . . .

. . . Քավությունը . . . կարող է մաքուր լվանալ ամեն բիծ, անկախ նրանից, թե որքան դժվար կամ որքան երկար կամ որքան անգամներ է կրկնվել»:[10]

Փրկիչի Քավության հասանելիությունն անսահման է լայնությամբ և խորությամբ, ձեզ համար և ինձ համար: Բայց այն երբեք չի պարտադրվի մեզ: Ինչպես մարգարե Լեքին է բացատրել, բավականաչափ ուսուցանվելուց հետո, «որ բարին տարբերենք չարից»[11] մենք «ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով կամ ընտրելու գերություն և մահ»:[12] Այլ խոսքով, ապաշխարությունը ընտրություն է:

Մենք երբեմն կատարում ենք այլ ընտրություններ: Այդպիսի ընտրությունները գուցե ներքնապես սխալ չթվան, բայց դրանք խանգարում են մեզ դառնալ իսկապես ապաշխարող և, այսպիսով, արգելում են

իրական ապաշխարության մեր ձգտմանը: Օրինակ՝ մենք կարող է ընտրենք ուրիշներին մեղադրելը: Երբ 12 տարեկան էի Գյոտեբորգում, ես կարող էի մեղադրել Սթեֆանին: Առաջին հերթին նա էր այն անձնավորությունը, ով բերել էր մեծ պայթուցիկը և լուցկիները եկեղեցի: Բայց ուրիշներին մեղադրելը, եթե նույնիսկ արդարացված, թույլ է տալիս մեզ այդպես անելով, արդարացնել մեր վարքը: Այդպես վարվելով մենք մեր գործողությունների համար պատասխանատվությունը փոխանցում ենք ուրիշների վրա: Պատասխանատվությունը փոխանցելով՝ մենք նվազեցնում ենք ինչպես անհրաժեշտությունը, այնպես էլ գործելու մեր ունակությունը: Մենք դարձնում ենք մեզ ավելի շուտ խղճուկ զոհեր, քան անկախ գործողություններ կատարելու ընդունակ գործակալներ:[13]

Եվս մեկ ընտրություն, որը խանգարում է մեր ապաշխարությանը՝ մեր սխալները փոքրացնելն է: Գյոտեբորգի պայթուցիկի դեպքում ոչ ոք չտուժեց, ոչ մի լուրջ վնաս չհասցվեց և ժողովը ամեն դեպքում տեղի ունեցավ: Ավելի հեշտ կլիներ ասել, որ պատճառ չկար ապաշխարելու: Բայց մեր սխալները փոքրացնելը, եթե նույնիսկ անմիջական հետևանքներն ակնհայտ չեն, վերացնում է փոխվելու մղումը: Այս մտածողությունն արգելում է մեզ տեսնել, որ մեր սխալները և մեղքերը հավերժական հետևանքներ ունեն:

Սակայն մեկ ուղի է նաև մտածելը, որ մեր մեղքերը նշանակություն չունեն, որովհետև Աստված սիրում է մեզ, անկախ նրանից, թե մենք ինչ ենք անում: Գայթակղություն է հավատալ նրան, ինչ խաբեբա Նեռն ուսուցանեց Զարահեմլայի ժողովրդին. «Որ ողջ մարդկությունը կփրկվի վերջին օրը, և որ նրանք չպետք է վախենան կամ դողան . . . և վերջում բոլոր մարդիկ պետք է ունենան հավերժական կյանք»:[14] Բայց այս հրապուրիչ գաղափարը կեղծ է: Աստված իսկապես սիրում է մեզ: Սակայն այն, ինչ մենք անում ենք, նշանակություն ունի Նրա համար: Նա հստակ հրահանգներ

է տվել այն մասին, թե ինչպես մենք պետք է վարվենք: Մենք կոչում ենք դրանք պատվիրաններ: Նրա վավերացումը և մեր հավերժական կյանքը կախված է մեր վարքից, ներառյալ՝ խոնարհաբար իսկական ապաշխարություն որոնելու մեր պատրաստակամությունից:[15]

Բացի այդ, մենք հրաժարվում ենք իսկապես ապաշխարելուց, երբ ընտրում ենք առանձնացնել Աստծուն Իր պատվիրաններից: Ի վերջո, եթե հաղորդությունը սրբազան չլիներ, նշանակություն չէր ունենա, որ պայթուցիկի հոտը տհաճ էր Գյոտեբորգի այդ հաղորդության համար: Մենք պետք է զգույշ լինենք փոքրացնելիս մեղսավոր վարքը՝ վտանգելով կամ բաց թողնելով Իր պատվիրանների Աստծո հեղինակ լինելը: Իսկական ապաշխարությունը պահանջում է ընդունել Փրկիչի աստվածայնությունը և Նրա վերջին օրերի աշխատանքի ճշմարտացիությունը:

Արդարացումներ գտնելու փոխարեն, եկեք ընտրենք ապաշխարությունը: Ապաշխարության միջոցով մենք կարող ենք ուշքի գալ, ինչպես անառակ որդու առակում[16] և մտածել մեր գործողությունների հավերժական նշանակության մասին: Երբ մենք հասկանանք, թե ինչպես կարող են մեր մեղքերն ազդել մեր հավերժական երջանկության վրա, մենք ոչ միայն կդառնանք իսկապես զղջացող, այլև կձգտենք ավելի լավը դառնալ: Երբ հանդիպենք գայթակղության, մենք ավելի շուտ պիտի հարցնենք ինքներս մեզ Վիլյամ Շեքսպիրի խոսքերով.

Ի՞նչ կշահեմ, եթե ձեռք բերեմ այն,
ինչը տենչում եմ:
Երազանք, շունչ, անցողիկ ուրախության կարճ զգացում.
Ո՞վ է գնում բոպեական ուրախությունը մեկ շաբաթվա ոռնոցով:
Կամ ծախում հավերժությունը խաղալիք ստանալու համար:[17]

Եթե մենք կորցրել ենք հավերժության հեռանկարը հանուն ինչ-որ մի խաղալիքի, մենք կարող ենք ընտրել ապաշխարությունը: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք ունենք ևս մեկ շանս: Փոխաբերական իմաստով՝ մենք կարող ենք փոխանակել այնպես անխոհեմորեն գնված խաղալիքը և կրկին ստանալ հավերժության համար հույս: Ինչպես Փրկիչն է բացատրել. «Քանզի, ահա, Տերը՝ քո Քավիչը, մարմնի մեջ մահ տարավ, ուստի նա տարավ բոլոր մարդկանց ցավը, որ բոլոր մարդիկ կարողանան ապաշխարել ու գալ իր մոտ»:[18]

Հիսուս Քրիստոսը կարող է ներել, որովհետև Նա է վճարել մեր մեղքերի համար գինը:[19]

Մեր Քավիչը ընտրում է ներել՝ Իր անզուգական կարեկցանքի, ողորմածության և սիրո պատճառով:

Մեր Փրկիչը ուզում է ներել, որովհետև սա Նրա աստվածային հատկանիշներից մեկն է:

Եվ լինելով որպես Բարի Հովիվ՝ Նա ուրախանում է, երբ մենք

ընտրում ենք ապաշխարությունը:[20]

Նույնիսկ, երբ մենք Աստծո ուզած ձևով ենք տրտմություն զգում մեր գործողությունների համար,[21] երբ որոշում ենք ապաշխարել, մենք անմիջապես հրավիրում ենք Փրկիչին մեր կյանք: Ինչպես Ամուղեկն է ուսուցանել. «Գործի անցեք և մի կարծրացրեք ձեր սրտերն այլևս. քանզի ահա, հիմա է ժամանակը և ձեր փրկության օրը. և հետևաբար, եթե դուք կամենաք ապաշխարել և չկարծրացնեք ձեր սրտերը, փրկագնման մեծ ծրագիրն *անհապաղ* պիտի իրագործվի ձեզ համար»:[22] Մենք կարող ենք զգալ աստվածային տրտմություն մեր գործողությունների համար և միևնույն ժամանակ զգալ ուրախություն՝ ունենալով Փրկիչի օգնությունը:

Այն փաստը, որ մենք կարող ենք ապաշխարել՝ ավետարանի բարի լուրն է:[23] Հանցանքը կարող է «սրբվել»:[24] Մենք կարող ենք լցվել ուրախությամբ, ստանալ մեր մեղքերի թողություն և ունենալ «խղճի խաղաղություն»:[25] Մենք կարող ենք ազատվել հուսահատության և մեղքի գերության զգացումներից: Մենք կարող ենք լցվել Աստծո սքանչելի լույսով և «այլևս ցավ չզգալ»:[26] Ապաշխարությունը ոչ միայն հնարավորություն է, այլ նաև ուրախություն է մեր Փրկիչի շնորհիվ: Ես դեռ հիշում եմ այն զգացումները, որոնք հորդեցին ինձ վրա ճյուղի նախագահի գրասենյակում պայթուցիկի դեպքից հետո: Ես գիտեի, որ ներվել էի: Մեղքի իմ զգացումներն անհետացան, իմ տխուր տրամադրությունը բացվեց և իմ սիրտը զգաց լույս:

Եղբայրներ և քույրեր, երբ մենք ավարտենք այս համաժողովը, ես հրավիրում եմ ձեզ զգալ ավելի շատ լույս ձեր կյանքում՝ ուրախություն այն գիտելիքից, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը իրական է, ուրախություն Փրկիչի ունակության, պատրաստակամության և ներելու ցանկության համար և ապաշխարել՝ ուրախությունն ընտրելու համար: Եկեք հետևենք հրահանգին. «ուրախութեամբ . . . ջուր քաշէք փրկութեան աղբիւրներիցը»:[27] Թող որ մենք ընտրենք ապաշխարել, թողնենք մեր մեղքերը և մեր սրտով ու կամքով ետ դառնանք, որպեսզի հետևենք մեր Փրկիչին: Ես վկայում եմ Նրա կենդանի իրողության մասին: Ես Նրա անզուգական կարեկցանքի, ողորմության ու սիրո վկան եմ ու անդադար վայելողը: Ես աղոթում եմ, որ Նրա Քավության փրկագնող օրհնությունները ձերը լինեն այժմ և կրկին ու կրկին՝ ձեր ողջ կյանքի ընթացքում,[28] ինչպես այն եղել է իմ կյանքում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Երեց Պեր Գոստա Մալմը (1948–2016) ծառայել է որպես Յոթանասունի Բարձրագույն Իշխանավոր 2010 թվականից մինչև իր մահը: Չնայած նա ծնվել էր Յոնկոպինգում (Շվեդիա), նա և նրա կինը՝ Ագնետան, իրենց տունը կառուցեցին Գյոտեբորգում՝ Շվեդիա: Իր նշանավոր 2010 թվականի գերագույն համաժողովի ելույթում Երեց Մալմը խոսել է նաև Գյոտեբորգի վերաբերյալ իր մտորումների մասին (տես «Հանգստություն ձեր հոգիներին», *Լիահոնա,* նոյ. 2010, 101–2):
2. Չնայած Սթեֆանը իմ ընկերոջ իսկական անունը չէ, պատմությունը պատմում եմ նրա թույլտվությամբ:
3. Վարդապետություն և Ուխտեր 58.42–43:
4. Հունարեն *metanoeo* բառացիորեն նշանակում է «արդյունքում ըմբռնել» (*meta,* «արդյունքը», նկատի ունենալով «փոփոխությունը», *noeo,* «ըմբռնում» *nous,* «միտքը, բարոյական մտածողության տեղը») (see James Strong, *The New Strong's Expanded Exhaustive Concordance of the Bible:* [2010], Greek dictionary section, 162).
5. Իմ թարգմանությունը *omvänd* բառի: *Om* կարող է թարգմանվել որպես «ետ»: *Vänd* կարող է թարգմանվել որպես «դառնալ»:
6. Կ. Ս. Լյուիս *Մեծ սևեռանքը* (1946), 6: Գրքի նախաբանում Լյուիսը գրել է, որ ոմանք երկինքը կամ դժոխքը ընտրելու փոխարեն, փորձում են «միավորել» դրանք: Նա ասում է, որ մեզանից ոմանք կարծում են, որ «զարգացումը կամ հարմարեցումը կամ հղկումը ինչոր ձևով չարը կդարձնի բարի: . . . Այս հավատը, կարծում եմ, աղետաբեր սխալ է: . . . Մենք չենք ապրում մի աշխարհում, որտեղ բոլոր ճանապարհները մի շրջանակի շառավիղներ են, և որտեղ, եթե բոլորին բավականաչափ երկար են հետևում, պետք է, հետևաբար, աստիճանաբար ավելի մոտենան և ի վերջո հանդիպեն կենտրոնում: . . .

   Չեմ կարծում, որ բոլորը, ովքեր սխալ ճանապարհներ են ընտրում կործանվում են, բայց նրանց ազատումը կայանում է նրանում, որ ետ են դրվում ճիշտ ճանապարհի վրա: . . . Չարը կարելի է անվավեր դարձնել, բայց այն հնարավոր չէ «զարգացնել» դարձնելով բարի: Ժամանակը այն չի բուժում: Հմայագիրը կա՛մ պետք է բացվի տառ առ տառ . . . կա՛մ չի բացվի» (5–6):
7. Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Ապաշխարություն»:
8. Եզեկիել 33.14–15:
9. 2015 թվականի ապրիլյան համաժողովի հետ կապված ղեկավարության ժողովում Նախագահ Բոյդ Ք. Փաքերի վկայությունը լրիվ չի հրատարակվել: Մեջբերումներն իմ անձնական գրառումներից են, որոնք կատարել եմ այդ ժամանակ:
10. Բոյդ Ք. Փաքեր «Երջանկության ծրագիրը » *Լիահոնա,* մայիս 2015:
11. 2 Նեփի 2.5:
13. 2 Նեփի 2.27:
13. Տես 2 Նեփի 2.26:
14. Ալմա 1.4: Նեռոն ու նրա հետևորդները չէին հավատում ապաշխարությանը (տես Ալմա 15.15):
15. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Աստվածային սեր», *Լիահոնա,* փետ. 2003, 12–17:
16. Տես Ղուկաս 15.17, տես նաև հատվածներ 11–24:
17. William Shakespeare, *"The Rape of Lucrece,"* lines 211–14:
18. Վարդապետություն և Ուխտեր 18.11:
19. Տես Եսայիա 53.5:
20. Տես Ղուկաս 15.4–7, Վարդապետություն և Ուխտեր 18.10–13:
21. Ճշմարիտ ապաշխարությունը ներառում է «Աստուծոյ ուզած կերպով տրտմություն» (2 Կորնթացիս 7.10): Երեց Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է. «Քանզի նրանց համար, ովքեր մոլորվել են, Փրկիչն ապահովել է ետ գալու մի ուղի: Բայց դա առանց ցավի չէ: Ապաշխարությունը հեշտ չէ, այն ժամանակ է պահանջում՝ ցավոտ ժամանակ» ("Keeping Covenants," *Ensign,* May 1993, 7). Երեց Ռիչարդ Գ. Սքոթը նույնպես ուսուցանել է. «Երբեմն ապաշխարության քայլերը սկզբում դժվար են և ցավոտ» ("Finding Forgiveness," *Ensign,* May 1995). Չնայած Աստծո ուզած կերպով տրտմությունը և ցավը միախառնված են ապաշխարության գործընթացի հետ, վերջնական արդյունքն ուրախալի է, երբ զգացվում է մեղքի ներումը:
22. Ալմա 34.31, շեշտադրումն ավելացված է:
23. Տես Bible Dictionary, "Gospels":
24. Ենովս 1.6:
25. Մոսիա 4.3:
26. Մոսիա 27.29:
27. Եսայիա 12.3:
28. Տես Մոսիա 26.29–30: Չնայած Աստված խոստանում է շռայլորեն ներել, բայց միտումնավոր մեղանչելը և ակնակալել Փրկիչի ողորմածությունը, որ թույլ տա հեշտությամբապաշխարել, Աստծո համար նողկալի է: (տես Եբրայեցիս 6.4–6, 10.26–27): Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Ուրախալի լուրը ամեն մեկի համար, ով ցանկանում է ազատվել անցյալի վատ ընտրություններից այն է, որ Տերը տարբեր ձևով է նայում թուլություններին, համեմատած ապստամբության հետ: Մինչդեռ Տերը նախազգուշացնում է, որ չապաշխարած ապստամբությունը կբերի պատիժ, երբ Տերը խոսում է թուլությունների մասին, դա միշտ ողորմածությամբ է»: («Անձնական զորություն՝ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով», *Լիահոնա,* նոյ. 2013, 83):

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փորձառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

Խոսնակ	Պատմություն
Նիլ Լ. Անդերսեն	(35) Մարդիկ դարձի են գալիս, երբ Եկեղեցու անդամները օգնում են նրանց որպես Աստծո վկաներ:
Մ. Ռասսել Բալլարդ	(90) Սուրբ Երկրում իր ընտանիքին Հովհաննես 17 կարդալիս, Մ. Ռասսել Բալլարդը աղոթում է, որ մեկ լինի նրանց, Հոր և Որդու հետ:
Վ. Մարկ Բասեթ	(52) Երբ փոքր տղաներ էին, Վ. Մարկ Բասեթը և նրա եղբայրը փորձում էին բացել ոսկե թիթեղների մանրապատկերի մետաղներով ամրացված կնքված մասը:
Ջին Բ. Բինգհեմ	(6) Քամու դեմ նավարկելուց հետո Ջին Բ. Բինգհեմը և երիտասարդ կանանց խումբը կարողանում են նավարկելու ձև ստեղծել, երբ քանի փոխում է ուղղությունը: Աղջիկը, որը վարում է իր հեծանիվը դեպի ոսկեգույն պատուհաններով տունը, տեսնում է, որ իրենց տան պատուհանները նույնպես ոսկեգույն են: Մարդիկ չեն ցանկանում ընդունել հաջողակ երիտասարդ տղամարդու աճը:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(48) Հելեն Քելլերը մեծ ուրախություն է զգում, երբ ուսուցիչն օգնում է իրեն հասկանալ բառերի իմաստը:
Քարլ Բ. Քուք	(110) Խորհելով հանձնարարության մասին, որն իր նախա-նախապապը ստացել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթից, Քարլ Բ. Քուքը հաստատում է ստանում, որ Եկեղեցու իր նոր հանձնարարությունը Աստծուց է: Նոր անդամը մեծացնում է իր հավատքը և հաղթահարում Երեխաների խմբում ուսուցանելու հետ կապված իր վախերը:
Քվենթին Լ. Քուք	(40) Քվենթին Լ. Քուքը հասկանում է, թե ինչու է իր հայրը հոսանքի սյունը համարում օրհնություն, այլ ոչ թե տեսարանը փակող խանգարող հանգամանք:
Ջ. Դեվն Քորնիշ	(32) Հիվանդանոցի տարեց հիվանդներից մեկը փոխում է Ջ. Դեվն Քորնիշի կյանքը, ասելով, որ նա հիանալի բժիշկ կդառնա:
Լեգռան Ռ. Քըրթիզ Կրտս.	(68) Փարլի Փ. Փրատը և այլ չոր տղամարդ վկայություն են ստանում Մորմոնի Գրքի մասին: Լեգռան Ռ. Քըրտիզ Կրտսերը այդ մասին վկայություն է ստանում դեռահաս տարիքում:
Դին Մ. Դեյվիս	(93) Դին Մ. Դեյվիսը Սուրբ Հոգու շնորհիվ իմանում է, որ ծխի անդամները, որտեղ նա այցելում է, եկել են հաղորդության ժողովին անկեղծ երկրպագելու նպատակով:
Հենրի Բ. Այրինգ	(75) Երիտասարդ Հենրի Բ. Այրինգի հայրը և քահանայության ղեկավարները օգնեցին նրան ավելի լավ պատկերացում ունենալ և ավելի վստահ լինել: (99) Պատանի Հենրի Բ. Այրինգը չէր կարողանում տեսնել Իր արքայությունը կառուցելու Տիրոջ ժամանակացույցը:
Ռոբերտ Դ. Հեյլս	(22) Մինչ Էլի Վիզելը վերականգնվում էր սրտի բաց վիրահատությունից, նրա ծոռնիկը հարցնում է, թե արդյոք նրա ցավը կմեղմվի, եթե իր ծոռնիկն իրեն ավելի շատ սիրի: Կիրակի օրերին սիրող ամուսինը օգնում է իր հիվանդ կնոջը հագնվել և պատրաստվել եկեղեցու համար:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(61) Տնային ուսուցիչները կորցնում են հնարավորությունը օգնելու մի քրոջ, որի նկուղը ջուր է լցվել: Տնային ուսուցիչը ծառայում է հորը, որի որդին մահացել է վթարի հետևանքով:
Պիտեր Ֆ. Մըրս	(85) Հինգամյա Պիտեր Ֆ. Մըրսը զգում է Սուրբ Հոգու հանգստացնող ազդեցությունը, երբ հայրը օրհնում է հաղորդությունը:
Թոմաս Ս. Մոնսոն	(78) Եկեղեցու անդամը, որը պահում է Իմաստությունը Խոսքը, աղոթում է և նավի վրա պարանով մագլցելու ուժ ստանում: (80) Երիտասարդ տղամարդը 1964 Համաշխարհային տոնավաճառին հասկանում է փրկության ծրագրի ճշմարտությունը Մարդու երջանկության որոնումները Եկեղեցու ֆիլմը նայելուց հետո:
Կ. Բրեթ Նաթրես	(119) Ք. Բրեթ Նաթրեսը սովորում է իր մորից, որ չնայած իր թերություններին որպես երեխա, Երկնային Հայրը սիրում է իրեն:
Ռասսել Մ. Նելսոն	(81) Նրանից հետո, երբ մի խումբ աքսորված Սրբեր «ուրախ գիշեր» անցկացրեցին սառնամանիքին, Էլիզա Ռ. Սնոուն նկատում է, որ «Սրբերը կարող են ուրախ լինել բոլոր իրավիճակներում»: Եկեղեցու անդամները հաղթահարում են փորձությունները, գայթակղությունները և բնական մարդուն, կենտրոնանալով ավետարանից եկող ուրախության վրա:
Բոննի Լ. Օսկարսոն	(12) Մեքսիկայում քույրը բարելավում է կիրակնօրյա դասերին իր հաճախելիությունը: Մայրը պատվաստում է իր երեխաներին տանից դուրս բացասական ազդեցությունների դեմ:
Ռոնալդ Ա. Ռասբենդ	(113) Ռոնալդ Ա. Ռասբենդը խորհրդակցում է իր ընկերոջ հետ, ով հավատքի ճգնաժամ է ապրում: Ռոնալդ Ա. Ռասբենդի նախնիների հավատքը ամուր է մնում չնայած դժվարությունների և ցավալի զգացումների: Ռոնալդ Ա. Ռասբենդը դանդաղ է արձագանքում պատասխան ստացված աղոթքին, մինչև չի ստանում հոգևոր հուշում:
Լինդա Շ. Ռիվս	(88) Բոյդ Ք. Փաքերը վկայում է, որ ապաշխարության և Փրկչի Քավության շնորհիվ իր մեղքերը մաքրվել են: Անկեղծ ապաշխարության միջոցով անդամը, միսիոները և նորադարձը ուրախություն և խաղաղություն են գտնում:
Դեյլ Գ. Ռենլանդ	(121) Երիտասարդ Դեյլ Գ. Ռենլանդը ուրախություն է ապրում, երբ խոստովանում է իր ճյուղի նախագահին, որ պայթուցիկ է գցել եկեղեցում:
Էվան Ա. Շմուց	(116) Եկեղեցու մի անդամ, որի ընտանիքը զոհվում է հրդեհի ժամանակ, շարունակում է պահել իր ուխտերը և հավատալ, որ կմիանա նրանց:
Քերոլ Մ. Սթեֆենս	(9) Երկբևեռ խանգարումով տառապող երիտասարդ կինը ուժ է հավաքում, որպեսզի վկայի Փրկչի և Նրա Քավության մասին:
Գարի Ի. Սթիվենսոն	(44) Տասներկուամյա Մերի Էլիզաբեթ Ռոլինսը կարդում է Մորմոնի Գիրքը և վկայություն ստանում գրքի մասին: Վկայելով Մորմոնի Գրքի մասին, միսիոներ Գարի Ի. Սթիվենսոնը ստանում է վկայության գրքի ճշմարիր լինելու մասին:
Խուան Ա. Ուսեդա	(30) Երկնային Հայրը պատասխանում է Խուան Ա. Ուսեդայի հուսահատ աղոթքին, փրկելով նրան, երբ նա իր միսիայի ժամանակ շեղվում է լեռնային ճանապարհից:
Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(15) Պատանի աղջիկը խրախուսում է իր տատիկին ավելի ուշադիր լսել: Մայրը աղոթում է, որ իր մոլորված դուստրը վերադառնա դեպի Տերը: Երկու միսիոներ հաջողության են հասնում, թակելով չորս հարկանի շենքի բոլոր բնակարանների դռները: (19) Ժամանակի, համբերատարության, հույսի, հավատքի, կնոջ կողմից խրախուսման և դիետիկ սոդայի լիտրերի արդյունքում Դիտեր Ֆ. Ուխդորֆը սովորում է օգտվել անձնական համակարգչից: (71) Եկեղեցու նախկին անդամը վերադառնում է հավատքի՝ ի շնորհիվ ընկերների, Սուրբ Հոգու և Բարի Հովիվի:
Կազուհիկո Յամաշիտա	(55) Որպես միսիայի նախագահ Կազուհիկո Յամաշիտան օրհնվում է, հանդիպելով մի միսիոների, ով «պատվասեր է Քրիստոսի համար»:

Մարգարեներն ու Առաքյալները ծառայում են

Վերևում, սկսած վերևից. Նախագահ Դիթեր Ֆ. Ուխդորֆն ու նրա կինը՝ Հերիեթը ողջունում են Վերջին Օրերի Սրբերին Գերմանիայի Ֆրայբերգ Տաճարի վերանվիրագործման ժամանակ; Երեց Գարի Ի. Սթիվենսոնը և Եկեղեցու այլ ղեկավարներ հանդիպում են Վիետնամի կառավարության պաշտոնյաների հետ; Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ու Երեց Մ. Ռասսել Բալլարդը քաջալերում են Լուիզիանայում ջրհեղեղից տուժածներին ու կամավորներին:

Մարգարեներն ու առաքյալները շարունակում են ծառայել ողջ աշխարհում (տես ՎԵՈՒ 107.23): Ահա մի համառոտագրություն վերջին համաժողովից ի վեր նրանց իրականացրած որոշ գործունեությունների մասին.

Նախագահ Դիթեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, 2016թ.-ի մայիս ամսվա ընթացքում **Անգլիայի, Ֆրանսիայի**ն **Բելգիայի** քաղաքներ կատարած իր այցելության ընթացքում հույսի ուղերձ հղեց ահաբեկչությունից տուժած անդամներին: Նա այցելեց փախստականներին, եղավ Ֆրանսիայի Փարիզ Տաճարի շինհրապարակում (որի կառուցումը մոտենում է ավարտին), ինչպես նաև մասնակցեց **Չեխիայի Հանրապետության** առաջին ցցի կազմավորմանը: Հուլիսին նա ճամփորդեց **Իտալիա՝** Եկեղեցու հիմնադրամից 3 միլիոն դոլար արժողությամբ անդորրագիր տրամադրելով ի աջակցություն փախստականների կարիքները հոգալուն, ինչպես նաև այցելեց փախստականների ճամբարներ **Հունաստանում:** Սեպտեմբերին նա այցելեց **Ռումինիայի, Մոլդովիայի, Սլովակիայի, Նորվեգիայի** և **Գերմանիայի** անդամներին, որտեղ էլ վերանվիրագործեց Գերմանիայի Ֆրայբերգ Տաճարը: Նա ասաց, որ ավետարանը հույս է բերում մարդկանց, որտեղ էլ որ նրանք լինեն, և որ անդամների մեջ «Եկեղեցական եղբայրներ ու քույրեր լինելու իրական զգացում կա»:

Երեց Քվենթին Լ. Քուքը հանդիպում է Էլ Սալվադոր Հանրապետության նախագահի հետ; Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը Անգլիայի Ուինդսոր ամրոցում տեղի ունեցած կրոնական հալածանքների մասին համաժողովին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը հունիսին նախագահեց Ռուսաստանի Մոսկվա Ցցի համաժողովին, մինչ մյուս ցցերը հավաքվեցին **Ռուսաստանի** Սարատով և Սանկտ Պետերբուրգ քաղաքներում: Նա նաև հանդիպեց **Լատվիայի, Էստոնիայի** և **Ուկրաինայի** անդամների հետ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը հունիս ամսին **Անգլիայում** Բրիտանական խորհրդարանի անդամներին ասաց, որ կրոնական ազատությունը թույլ է տալիս եկեղեցիներին բարիք գործել աշխարհով մեկ: «Մենք ուզում ենք, որ այս երկրի բոլոր բնակիչները հետամուտ լինեն կրոնական ազատության օրինություններին, սակայն ներկայումս դեռ հեռու ենք դրան հասնելուց»,- ասել է նա:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը

սեպտեմբերին **Անգլիայի** Ուինդսոր ամրոցում կրոնական հալածանքների և հարկադիր արտագաղթի վերաբերյալ համաժողովի ընթացքում ասաց, որ սովորելու շատ բան կա վաղ շրջանի ՎՕՍ ռահվիրաների փորձառություններից, որը կարող է օգնել մեր օրերի փախստականներին դուրս գալ իրենց ներկայիս վիճակից: «Հնարավորության դեպքում մենք պետք է աջակցենք և հավերժացնենք փախստականների եզակի ինքնությունը և ընդգծենք նրանց անցյալի պատմությունները»,- ասել է նա:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը **Իսպանիայում,** ներառյալ **Կանարյան կղզիներում,** և **Պորտուգալիայում** հրավիրեց անդամներին, միսիոներներին և ղեկավարներին խրախուսել ոչ ակտիվ անդամներին վերադառնալ լիարժեք ակտիվության Եկեղեցում:

Քանի որ **Վիետնամը** Եկեղեցուն լիիրավ և պաշտոնական ճանաչում շնորհեց հունիսին, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը և Երեց Գարի Ի. Սթիվենսոնը հանդիպեցին կառավարության պաշտոնյաների հետ և քննարկեցին Եկեղեցու պատմությունն ու զարգացումը: Նրանք նաև քննարկեցին, թե ինչպես է Եկեղեցին աջակցում սոցիալական ու բարեգործական ծրագրերին և օգնում աղքատներին ու անբարենպաստ պայմաններում գտնվողներին: Նրանք նաև նախագահեցին **Գուամում, Միկրոնեզիայում** և **Ճապոնիայում** տեղի ունեցած ժողովներին:

Հունիսին **Ավստրալիայի** Բրիսբան քաղաքն ու **Քուք կղզիներն** օրհնվեցին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի այցելությամբ: Երեց Անդերսենն այցելեց նաև **Ռարոտոնգա** կղզի և դարձավ առաջին Առաքյալը, ով երբևէ ոտք է դրել **Մանգայա** կղզու վրա:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը հունիսին **Կոլումբիայում, Պերուում,** և **Էկուադորում** վերադասավորեց իր գրաֆիկը զանգվածային երկրաշարժից հետո ապաքինվողներին այցելելու համար: Նա Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի անունից սիրո ուղերձ հղեց և երկրաշարժից հյուծված անդամներին հավաստիացրեց, որ ոչ ոք չի մոռացել նրանց:

Օգոստոսին **Գվատեմալայում** Երեց Քվենթին Լ. Քուքը կայուն աճ նկատեց ընտանեկան պատմության հետազոտության ու տաճարային աշխատանքի մեջ և ասաց, որ դա ցույց է տալիս անդամների հավատքը:

Երբ հունիսին Տոնգայի թագավորն ու թագուհին հյուրընկալվեցին ԱՄՆ-ի **Հավայան կղզիներում** տեղի ունեցող Եկեղեցու պոլինեզիական մշակութային կենտրոնում, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյլ Ջ. Ռենլանդը որպես ներածական մաս նշեց ընտանեկան կապերի կարևորության մասին:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը, և Երեց Մ. Ռասել Բալլարդը **ԱՄՆ-ի Լուիզիանա** նահանգում այցելեցին ջրհեղեղից տուժածներին, մինչ Մորմոնական օգնող ձեռքեր ծրագրի կամավորներն օգոստոս և սեպտեմբեր ամիսներին օգնեցին կարգի բերել վնաս կրած տները: Երեց Բալլարդը նշեց, որ ավելի քան 11000 կամավորներ էին եկել 13 նահանգներից:

Իսկ սեպտեմբերին, երիտասարդ ամուրիների հոգևոր հավատքի համաշխարհային հեռարձակման ընթացքում, որը տեղի ունեցավ **ԱՄՆ-ի Վաշինգտոն ԿՇ-ում,** Երեց Քուքն ասաց, որ «Մենք չպետք է վախենանք, նույնիսկ երբ ապրում ենք վտանգավոր ու տագնապալի աշխարհում»: Նա երիտասարդ ամուրիներին խորհուրդ տվեց արդար նպատակներ սահմանել ու ծրագիր կազմել դրանք նվաճելու համար և չթերագնահատել իրենց սեփական տաղանդներն ու ունակությունները: Նա նաև հորդորեց նրանց գնահատել հասարակական կայքերից օգտվելու իրենց չափաբաժինը: «Շատ ենք լսում հասարակական կայքերը կիրառելիս հաստատուն լինելու մասին»,- ասաց նա, - սակայն «անկեղծորեն Քրիստոսանման լինելը նույնիսկ ավելի կարևոր նպատակ է, քան հաստատուն լինելը»:

Եկեղեցու այս ղեկավարների ծառայության մասին թարմ տեղեկություններ կարելի է տեսնել իրենց Ֆեյսբուքյան էջերում և **prophets.lds.org** կայքում: ■

152 գործող տաճար

Եկեղեցին ներկայումս ունի 152 գործող տաճար աշխարհի բոլոր մասերում: Վերջերս նվիրագործված և վերանվիրագործված տաճարների թվում են **Փենսիլվանիայի Ֆիլադելֆիա Տաճարը** [ԱՄՆ], որը նվիրագործվել է 2016թ.-ի սեպտեմբերի 18-ին; **Գերմանիայի Ֆրայբերգ Տաճարը,** որը վերանվիրագործվել է 2016թ.-ի սեպտեմբերի 4-ին; և **Ճապոնիայի Սապորո Տաճարը,** որը նվիրագործվել է 2016թ.-ի օգոստոսի 21-ին:

Եվս քսանինը տաճար գտնվում են կառուցման կամ վերանորոգման փուլում, կամ էլ հայտարարված են: Մոտակա ժամանակահատվածում նախատեսված նվիրագործումների թվում են **Կոլորադոյի Ֆորթ Քոլինս Տաճարը** (2016թ.-ի հոկտեմբերի 16-ին), **Վայոմինգի Սթար Վելի Տաճարը** (2016թ.-ի հոկտեմբերի 30-ին) և **Կոնեկտիկուտի Հարթֆորդ Տաճարը** (2016թ.-ի նոյեմբերի 20-ին), բոլորը գտնվում են ԱՄՆ-ում: ■

Պաշտպանել կրոնական ազատությունը

Վերջին Օրերի Սրբերը պետք է «կառուցողականորեն [ներգրավված լինեն] կրոնական ազատության կարևոր պայքարում»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսը 2016թ.-ի սեպտեմբերին ԱՄՆ-ի Տեխաս նահանգում տեղի ունեցած կրոնական ազատություն թեմայով համաժողովի ժամանակ: «Բառացիորեն յուրաքանչյուր անձ՝ սկսած մանկապարտեզի տարիքում գտնվող երեխաներից մինչև մասնագիտական կոչումներ ունեցող անձինք, մայրերն ու հայրերը, ընկերներն ու մերձավորները կարող են և պետք է հասկանան, թե ինչ է իրենից ներկայացնում կրոնական ազատությունն ու ինչու է այն կարևոր»:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը հունիսին ԱՄՆ-ի Յուտա նահանգում տեղի ունեցած հայրենասիրական սպասավորման ժամանակ նույնպես խոսեց ի պաշտպանություն կրոնական ազատության: «Վերջերս, — ասաց նա, — շատերը վիճաբանում են այն մասին, որ կրոնական ազատությունը միայն երկրպագելու, այլ ոչ թե առօրյայում մեր հավատքը ազատորեն գործադրելու իրավունքն է»: Նա հորդորեց հավատքի տեր մարդկանց պաշտպանել կրոնական ազատությունը տեղեկացված լինելու, բարձրաձայնելու և մշակութային, քաղաքացիական և քաղաքական կազմակերպություններին ու իրադարձություններին մասնակից լինելու միջոցով:

Եկեղեցու ղեկավարները պարբերաբար նշել են կրոնական ազատության մասին իրենց ելույթների միջոցով և Ավստրալիայում, Բրազիլիայում, Մեքսիկոյում, Միացյալ Թագավորությունում և ԱՄՆ-ի զանազան վայրերում համաժողովների մասնակցելու միջոցով: Գտեք նրանց ելույթներն ու ավելին իմացեք կրոնական ազատության մասին և թե ինչ կարող եք անել այն պաշտպանելու համար՝ այցելելով **religiousfreedom.lds.org** կայքը: Դրա բովանդակության որոշակի մասը հատուկ է Միացյալ Նահանգներին, սակայն սկզբունքները կարող են հարմարեցվել այլ երկրներին: ■



Վարդապետության սերտում

Համացանցի վայրկենական տեղեկատվության փոխանցման ժամանակաշրջանում երիտասարդները պաշտպանված չեն այն մարդկանցից, ովքեր գրոհում են Եկեղեցին: Սակայն նոր նախաձեռնությունը, որը կոչվում է Վարդապետության սերտում, օգնում է սեմինարիայի ուսանողներին զարգացնել ավետարանի վարդապետության ավելի խորը ըմբռնում և մեծացնում է նրանց հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ:

Ուսանողները նաև սովորում են ինչպես արձագանքել դժվար հարցերին և խնդիրներին՝ գործադրելով հավատք, քննելով հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից և ձգտելով մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը վարդապետության սերտման վերաբերյալ սեմինարիայի և ինստիտուտի խորհրդի անդամներին ուղղված իր խոսքում ասել է. «Այս նախաձեռնությունը ոգեշնչված է և ժամանակին է: Այն հրաշալի ազդեցություն կունենա մեր երիտասարդների վրա»:

Վարդապետության սերտման հիմնական նպատակն է օգնել ուսանողներին.

1. Ձեռք բերել հոգևոր գիտելիք:
2. Սերտել ավետարանի վարդապետությունը և սուրբ գրությունների հատվածները, որտեղ ուսուցանվում է այդ վարդապետությունը:

Կառուցելով այն ամենի վրա, ինչ նախկինում ձեռք էր բերվել սուրբ գրությունների սերտման միջոցով, այս մեծ ջանքերը հնարավորություն են տալիս ուսանողներին ամրացնել իրենց դարձի գալն ու նվիրվածությունը որպես Հիսուս Քրիստոսի առաքյալներ, գտնել պաշտպանություն հակառակորդի ազդեցության դեմ և օրհնել ուրիշների կյանքը:

Վարդապետության սերտման նյութերը կարող եք գտնել **lds.org/si/seminary/manuals** կայքում: ■

© BEN HAMMOND, ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՀԱՅՈՒՄԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀԱԾ, ՉԵԿՈՒՄԱԳՈՒԵԼ

«Ծրագրում կարևորը մեր Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը: Առանց Նրա քավող զոհաբերության, բոլորը կկորչեին: Այնուամենայնիվ, բավական չէ պարզապես հավատալ Նրան և Նրա առաքելությանը: Մենք պետք է աշխատենք ու սովորենք, հետազոտենք և աղոթենք, ապաշխարենք և բարելավվենք: Մենք պետք է իմանանք Աստծո օրենքները և ապրենք դրանցով: Մենք պետք է ստանանք Նրա փրկարար արարողությունները»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Կատարյալ ուղին դեպի երջանկություն», *Լիահոնա,* նոյ. 2016, 80–81:

Նայեք և ապրեք, Բեն Համմոնդ

Տես Թվոց 21.4-9, Ալմա 33.18-22: Նրանք, ովքեր նայեցին Մովսեսին և պղնձե օձին՝ Աստծո Որդու խորհրդանիշին, բժշկվեցին:

«Մենք օրհնված ենք ճշմարտությունն *ունենալու* համար: Մենք ունենք մանդատ *կիսվելու* ճշմարտությամբ», -ասաց Նախագահ Թոմաս Ս.Մոնսոնը Եկեղեցու 186-րդ կիսամյա գերագույն համաժողովում: «Եկեք *ապրենք* ճշմարտությամբ, որպեսզի մենք արժանանանք այն ամենին, ինչ Հայրն ունի մեզ համար: Նա ոչինչ չի անում, բացառությամբ, դա լինի մեր օգտի համար: Նա մեզ ասել է. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021329 91201 3